Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8427

Բ. Իշխանյան

Բաքուի 561 ապրումներս

1920թ.

Գ(47 925)
Ի-68

O- 98

1440

05 SEP 2011

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

ԲԱԳՈՒԻ ՄԵԾ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

ԱՆԿԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ ԱՆՑՔԵՐԻ 1918 Թ.

Հրատարակութիւն

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԿԵՏԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Զուտ արդիւնքը յատկացւում է Բագուի հայ որբերին

Թիֆլիս ——— 1920 թ.

Տպարան Մամուլ—տնօրէններ՝ Մ. Էփրիկեան եւ Ց. Մայիլեան։

842x

323.1(91.5474):312
Ի. 60
9(47.925)
Ի-68
300
1696-ԻՇ
19 AUG 2006
493

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

ԲԱԳՈՒԻ ՄԵԾ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

ԱՆԿԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ ԱՆՑՔԵՐԻ 1918 Թ.

ՀԱՅ. Հ. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հրատարակութիւն

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԿԵՏԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Զուտ արդիւնքը յատկացւում է Բագուի հայ որբերին

1440

Թիֆլիս —— 1920 թ.
Տպարան Մամուլ—ձեռնարկներ՝ Մ. Էֆրիկեան եւ Ց. Մայիլեան:

26 APR 2013

20982

Բագուի Հայ Անմեղ
զոհերի յիշատակին

Նուիրում է

ՀԵՂԻՆԱԿԸ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

Այսօր, 1919 թ. Սեպտեմբերի 15-ին, լրանում է ուղիղ մի տարի այն օրից 'ի վեր, երբ ընկաւ Բագու քաղաքը։ 1918 թ. Սեպտեմբերի 15-ը — հայկական անօրինակ ողբերգութեան սկիզբը — կմնայ միշտ ամենասեւ էջերից *մէկը այն բազմադարեան արիւնաներկ պատմութեան, որ ապրել, մաշել է հայկական տարրը թիւրքական բռնակալութեան ներքոյ։*

Այսօր, տարեդարձի տխուր ժամին, տպագրութեան ենք յանձնում Բագուի հայութեան ապրած սարսափների, տուած զոհերի, կրած վնասների ու կորուստների նկարագիրը։

Այս գիրքը այլ բան չէ, բայց եթէ պերճախօս փաստերով օժտուած մի կենդանի վկայ երեքօրեայ հայկական կոտորածների և երկամսեայ թիւրք թաթարական վայրագութիւնների։

Այս գիրքը հայկական ողբերգութեան սգամատեանն *է։*

Եւ գլուխ խոնարհելով բազմահազար անմեղ զոհերի աճիւնի առաջ, այս սգամատեանը նուիրաբերում ենք նրանց անջինջ յիշատակին։

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

Թիֆլիս,
1919 թ., Սեպտեմբերի 15-ին

Ց. Գ. Ընթերցողների յատուկ ուշադրութիւնն ենք հրաւիրում գրքի մէջ սպրդուած մի քանի ցաւալի վրիպակների (մանաւանդ թուական ու տոկոսական սխալների) վրայ, որոնք ուղղագրուած են գրքի վերջում։ Առանձնապէս խնդրում ենք ուշադրութիւն դարձնել 168 երեսի ընդհանուր աղիւսակի վրայ, ուր I, II *և* III *շարքերում մոռացուած է տոկոսների սիւնեակներում տոկոսանիշը (,), և տոկոսները դուրս են եկել ընդհանուր թուերի ձեւով։ Ցաւում ենք, որ մեր բացակայութեան պատճառով սպրդուել են այդպիսի կոպիտ սխալներ։*

Բ. Ի.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Նա, ով ուզում է հանգամանօրէն և պատճառական հիմքերով ու փաստերով պարզել իրան հայկական սեպտեմբերեան անօրինակ ողբերգութեան բնոյթն ու ծաւալը Բագու քաղաքում, պէտք է մի քանի գէթ շատ համառօտ շտրիխներով ծանօթանայ այն բացառիկ պայմանների և մոմենտների հետ, որոնք գործօն նշանակութիւն են ունեցել Բագուի պատերազմական պաշտպանութեան և նրա անկման համար։

Բագուի շուրջը և Բագուի համար տեղի ունեցած կռիւը կազմում է համաշխարհային պատերազմի նշանաւոր էջերից մէկը։ Որոշ տեսակէտներով—իր ինքնապաշտպանութեան եղանակով, ազգաբնակութեան հատուածների քաղաքական փոխյարաբերութեամբ և պատերազմին մասնակցող ուժերի դասաւորութեամբ Բագուի ռազմաճակատը բացառիկ տեղ է բռնում պատերազմական բոլոր ֆրոնտների մէջ։

Այստեղ յիշելու ենք երեք գլխաւոր մոմենտներ, որոնց շնորհիւ Բագուի ճակատը, յիրաւի, մի առանձնայատուկ տեղ է բռնում պատերազմական միւս բոլոր անցքերի մէջ։

Բագու քաղաքը միակն է իր տեսակում, որ իր պատերազմական գործողութիւնների սկզբնական շրջանում, ունենալով բոլշեւիկ-սովետական իշխանութիւն, ընդունեց արտաքին թշնամու նետած ձեռնոցները և որոշեց պաշտպանել քաղաքը արշաւող հակառակորդի առաջ։ Մինչդեռ սովետական Ռուսիայի միւս ճակատներում բոլշեւիկեան իշխանութիւնը և զօրքը սովորաբար առանց որեւէ յամառ դիմադրութեան նահանջում էին շարունակ արեւմուտքից արշաւող աւստրո-գերմանական զօրքերի առաջ։ Բագուի ճակատի վերոյիշեալ առանձնայատկութիւնը պէտք է բացատրել նրանով, որ կռւող ուժերի մեծագոյն մասը բաղկացած էր հայերից, որոնք գերազանցապէս տրամադրուած էին պաշտպանել քաղաքը մի այնպիսի պատմական թշնամու արշաւանքի դէմ, ինչպիսին Թիւրքիան է, որի հասցրած մահացու հարուածները—նրա յաղթութեան դէպքում—ամենամեծ չափով և ամենից առաջ պիտի տեղային հայ ժողովրդի գլխին։

Դա Բագուի ճակատի առաջին առանձնայատուկ մոմենտն է։

Երկրորդ բացառիկ մոմենտը կայանում է նրանում, որ Բագուն միակն էր իր տեսակում, որ դիմադրում էր մի այնպիսի արտաքին թշնամու, որին ամեն կողմից աջակցում և նպաստում էր տեղական ազգաբնակութեան բացարձակ մեծամասնութիւնը Բագուի նահանգի և քաղաքաբնակութեան մէջ։ Բագուի նահանգի ողջ ազգաբնակութեան մէջ մուսուլմանութիւնը կազ-

մում է մօտ 72%, իսկ Բագուի քաղաքապետութեան մէջ մուսուլմանութեան տոկոսը հաւասար է մօտ 45%-ի։ Տեղական այդ հոծ մասսաները կազմում էին Ռուս պետականութեան և քաղաքի պատերազմական պաշտպանութեան տեսակէտից ներքին թշնամիներ այն իմաստով, որ մուսուլմանութեան մէջ տիրապետող քաղաքական օրիենտացիան թիւրքական էր և մուսուլման ազգաբնակութիւնը, մանաւանդ նրա առաջնորդող խաւերը, կազմակերպած ոյժերով և լարած ճիգերով ամէն կողմից—թէ զուտ ռազմական, թէ պարենաւորման տեսակէտից և թէ տեղական-տեխնիքական յարմարութիւններ ստեղծելու տեսակէտից—աջակցել և օժանդակել են Բագուն պաշարած տաճկական զօրքին։

Այդ ներքին թշնամիները իրանց հաւատարիմ ծառայութիւնն էին մատուցանում թէ թիկունքում՝ քաղաքի ներսում, թէ ճակատում՝ տաճկական բանակում և թէ ողջ շրջապատում՝ Ապշերոնեան թերակղզու բոլոր անկիւններում։

Եղե՞լ է մի վայր, մի քաղաք՝ պատերազմի ընթացքում, որևէ ճակատում, Ռուսիայում կամ դուրսը, որ այնպիսի աննպաստ պայմաններում և բացասական ոյժերով շրջապատուած լինէր, ինչպէս պատերազմող Բագուն է եղել։

Բայց նոյն այդ երկրորդ բացառիկ մօմենտին անմիջապէս յարակցուած է մի կարևոր հանգամանք։

Որքան յամառ էր ու տևական Բագուի պատերազմական դիմադրութիւնը արտաքին թշնամու դէմ, այնքան աւելի ու աւելի էին զայրանում ու թունաւորւում ներքին թշնամիները քաղաքի յամառ ու տոկուն պաշտպանների դէմ։ Եւ որովհետև այդ պաշտպանների մեծագոյն տոկոսը և քաջաբար մարտնչողները կազմում էր, ինչպէս շեշտեցինք վերև, քաղաքի փրկութեամբ ամենից շատ շահագրգռուած հայկական տարրը, ուստի ներքին թշնամիների կուտակուած զայրոյթն ու թոյնը ուղղուած էր գրեթէ բացառապէս հայութեան դէմ։

Բագուի ֆրոնտի երրորդ բացառիկ մօմենտը կայանում է հետևեալում։ Միակ վայրը Ռուսիայի բոլոր ներքին ֆրոնտներում, որ դարձաւ օտար ոյժերի—միջազգային թշնամական բանակների—արիւնահեղ բախումների արենա, դա Բագուի ֆրոնտն էր։ Չի եղել մի ճակատ Ռուսիայի սահմաններում, ուր գերմանական և դաշնակիցների կոալիցիաների այս կամ այն անդամները կռուի բռնուէին, ինչպէս անգլօ-թիւրքական ընդհարումներն էին Բագուի շուրջը։

Այդ առանձնայատուկ մօմենտը մի կողմից Բագուի ֆրոնտին տուաւ համաշխարհային-պատերազմական էպիզոդի բնոյթ, միւս կողմից աւելի ծանրացրեց տեղական պաշտպաններից հայկական հատուածի պատասխանատուութեան հարցը արտաքին և ներքին թշնամիների (Թիւրքիայի և մուսուլմանութեան) առաջ։

Մենք ասացինք, որ հայկական տարրը աւելի, քան որևէ մի ուրիշը Բագւում, գերազանցապէս շահագրգռուած էր քաղաքի պաշտպանութեամբ. գա[illegible]հայութեան համար կեանքի և մահուան հարց էր։ Բագուի փրկութեան

մէջ նա որոնում էր իր ֆիզիքական «եսն»-ի, իր ազգային-ցեղային տուեալ հատուածի գոյութեան փրկութիւնը։ Դա տարրական ճշմարտութիւն էր բոլոր նրանց համար, որոնք գիտեն, թէ ինչպէս էին դասաւորուել պատերազմի ընթացքում հայ-տաճկական յարաբերութիւնները սահմանից անդին եւ հայ-մուսուլմանական յարաբերութիւնները սահմանից ասդին։

Եթէ այդ այդպէս էր, բնական էր միանգամայն սպասել, որ Բագուի հայութիւնը աւելի, քան որեւէ այլ ժողովրդական գրուպպա, պիտի սրտատրոփ ակնկալէր եւ ամբողջ հոգով ողջունէր օգնութիւնը այս դրսի ույժերի, որոնք կը կազմակերպէին եւ կը նպաստէին քաղաքի պաշտպանութեան գործին ընդդէմ տաճիկների։ Ռուսական կենտրոնից կամ բոլշեւիկեան Ռուսիայից այլեւս օգնութեան ոչ մի յոյս չը կար։ Բայց բոլշեւիկեան անզօր իշխանութիւնը միաժամանակ հակառակ էր արտաքին—անգլիական որեւէ օգնութեան։ Բոլշեւիկների այդ դիրքը միանգամայն ձեռնտու էր քաղաքի պաշտպանութեան թէ արտաքին (տաճիկներին) եւ թէ ներքին (մուսուլմաններին) թշնամիներին։

Քանի հասունանում էր անգլիացիների գալու հարցը, այնքան աւելի ու աւելի էր ուժեղանում այդ ներքին ու արտաքին թշնամիների հակառակութիւնն ու վրէժառութեան զգացմունքն ընդդէմ հայկական տարրի։ Նրանք շատ լաւ գիտէին, որ տաճիկներին դիմադրելու համար հայերը կարիք ունէին զինակիցների։ Եթէ այդ զինակցութիւնը այս կամ այն պատճառով չի տալիս կամ չի կարողանում տալ Ռուսիան, ապա անհրաժեշտ էր ապաւինել դրսի ույժերի—դաշնակից Անգլիայի—զինակցութեան։ Այդ է պատճառը, որ ողջ հայ ժողովուրդը, մեծ թէ փոքր, առանց կուսակցական խտրութեան, ողջունեցին անգլիացիների Բագու գալը օգոստոսի սկզբներին եւ խանդավառ ոգեւորութեամբ ընդունեցին նրանց զինակցական օգնութիւնը Բագուի ճակատում։

Ահա Բագուի պատերազմի այդ երեք առանձնայատուկ մոմենտները ունեցան իրանց առանձնապէս ծանր ու ճակատագրական անդրադարձումը հայկական տարրի վրայ։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Բագուի պաշտպանութեան գործում ամենից յամառ դիմադրող եւ ամենաշատ շահագրգռուած հայութիւնը պիտի նաեւ ենթարկուէր ամենամեծ ողբերգութեան՝ քաղաքը ընկնելու դէպքում։

Ահա այդ տխուր ու դժբաղդ օրը վրայ է հասնում 1918 թւի Սեպտեմբերի 14 ին (ն. տ.)։ Բագու քաղաքի պատերազմական պաշտպանութեան վերջին անհաւասար օրն էր դա։

Նման կրիտիկական օրեր մի քանի անգամ տեսել ու ապրել էր Բագուի ազգաբնակութիւնը՝ պաշարուած քաղաքի կարճատեւ պաշտպանութեան շրջանում. Յուլիսի 31-ին, օգոստոսի 4—5-ին, ապա օգոստոսի 31-ին այնպիսի մահասարսուռ օրեր էին Բագուի պատերազմի տարեգրութեան մէջ, որ ահաբեկումների բովից անցած ու ընտելացած ժողովուրդը Սեպտեմբերի 14-ին համեմատաբար հանգիստ եւ անտարբեր էր վերաբերւում դէպի յանդուգն թշնամու անխնայ եւ անդադար ռմբակոծումները, վերահաս վտանգը։

Առաջին ճգնաժամի օրը՝ յուլիսի 31-ին՝ ազգաբնակութիւնը ամենայն արագութեամբ և մասսաներով թափուել էր նաւամատոյցներ, տեղաւորուել նաւերում՝ քաղաքից փախչելու համար։ Ընդհակառակը, Սեպտեմբերի 14-ին, կամ վերջին ճգնաժամի օրը, բուռն յամառութեամբ և նայիւ լաւատեսութեամբ ժողովուրդը չէր շարժւում տեղից։ Նա դատում էր այսպէս. եթէ նախկին կրիտիկական օրերին քաղաքը փրկուել է սոսկ տեղական ուժերի պաշտպանութեամբ, ինչպէս կարող էր ընկնել Բագուն այդ օրը, երբ տեղացիների հետ միասին կռւում են նաև անգլիացիք, երբ Բիչերախովը հետզհետէ օգնութիւն է հասցնում Պետրովսկից։

Աւա՜ղ. ապարդիւն անցան բոլոր յոյսերը. Սեպտեմբերի 14-ը քաղաքի պաշտպանութեան վերջին ճակատագրական օրն էր և նրա յետագայ անօրինակ ողբերգութեան նախօրեակը։

Ժամը 4—5-ին, կէսօրից յետոյ, երբ անգլիական շտաբը տեղափոխւում է նաւ և անգլիական զօրամասերից առանձին խմբեր յետ են քաշւում ճակատից և դէպի նաւամատոյց ուղևորւում, ժողովրդի մէջ խրառանցում է ընկնում։ Պանիկան տարածւում է ամենուրեք։ Շատերը զգում են, որ քաղաքի վիճակը արդէն որոշուած էր. դրութիւնը չէր կարելի ոչ մի կերպ փոխել։

Թիւրք-գերմանական բլօկի հարուածներից ընկնում էր յեղափոխական դեմօկրատիայի վերջին օջախը Անդրկովկասում։ Վերջնիս բոլոր մասերը՝ Արեւմուտքում և Արևելքում՝ նուաճուած էին արդէն այդ բլօկից։ Միակ բացառութիւնը կազմում էր Ապշերոնեան Թերակղզին իր կենտրոնով Բագուով։ Եւ այժմ յեղափոխութեան և ռուսական պետականութեան այդ Nochburg-ը ևս ընկնում էր վայրագ թշնամու ոտքերի տակ։

Քաղաքի բոլոր ծայրերից ժողովուրդը, գրեթէ բացառապէս հայ բնակչութիւնը անվերջ քարաւաններով հաւաքւում և կուտակւում է նաւամատոյցներում։ Էւակուացիան, բնականաբար, շատ անկանոն էր կազմակերպուած։ Եւ ինչ կարելի էր անել մի քանի ժամուայ ընթացքում, նաւերի անբաւարար թւով, երբ, բացի մի քանի տասնեակ հազարաւոր փախչող ազգաբնակութիւնից, նոյն նաւերով պիտի տեղափոխէին նաև զօրքը, ռազմամթերքը և պետական զանազան գոյքեր, որքան այդ հնարաւոր էր անել մի քանի ժամուայ ընթացքում։

Մի կողմից էւակուացիայի սուղ ժամանակը և շտապողականութիւնը, միւս կողմից անցեալի փորձը, որ գուցէ այդ ճգնաժամը ևս յաջողութեամբ անցնէ և նաւ նստած բազմութիւնը նորից տուն վերադառնայ մի քանի օրից յետոյ, պատճառ են լինում այն դժբաղդ դրութեան, որ փախչող ժողովուրդը գրեթէ ոչինչ չի վերց[illegible] իր հետ իր ընտանեկան ունեցուածքից. շատերը չեն վերցնում ի[illegible] նոյն իսկ հասարակ փոխնորդ և հագուստ, ուտելեղէն և դրամ, [illegible] յանկարծակի է կատարւում փախուստի գործը։ Իսկ նրանք, որոնք մի փոքր ծանրաբեռնուել էին իրանց հագուստեղէնով և իրեղէններով, չարաչար պատժուել են նրանով, որ չեն կարողացել ազատ տեղ գտնել նաւերում. կամ անկարագրելի զրկանքների են ենթարկել իրանց և կամ ծովն են նետել իրանց իրերը՝ գոնէ իրանց համար տեղ գտնելու համար։

Սրտաճմլիկ տեսարաններ են տեղի ունեցել այդ տեսակէտից ծովի ափերին։ Փախչել ցանկացողների հոյակական բազմութիւնը և նաւերի անբաւարար սակաւութիւնը ստեղծել է այն աղիողորմ շփոթը, որ կոչւում է ճանապարհորդական, կամ աւելի շուտ գաղթականական տրագեդիա։ Հարազատները կորցնում էին իրար, ծնողները որդիներին, եղբայրը քրոջը, ամուսինը ամուսնուն. մէկը ճանապարհւում էր, միւսը մնում՝ նաւում տեղ չըգտնելու պատճառով։ Պատահել են ոչ սակաւ դէպքեր, երբ մայրը ծովն է նետել իր կրծքի երեխան՝ նաւ մտնելու, նաւում տեղ գտնելու համար։ Կարող էք երեւակայել հոգեկան դրութիւնը այն բնակիչների, որոնք, օրհասական վտանգի մահացու երկիւղը իրանց սրտում, գիտեն, որ եթէ իրանք չկարողանան նաւ նստել, այլեւ յետոյ ոչ ժամանակ և ոչ էլ ուրիշ նաւ է լինելու՝ փախչելու համար և իրանց սպասում է միայն յաղթանակող թշնամու շողացող սուրը և հրանիւթ զէնքը։ Եղել են այնպիսի դժբաղդներ, որոնք մինչև վաղ առաւօտ, լոյս կիրակի (Սեպտ. 15-ին), թափառել են մի նաւամատոյցից միւսը և չյաջողուելով նրանց նաւ նստել, կամ տեղն ու տեղը զոհ են գնացել քաղաքին հետզհետէ մօտեցող թշնամու անխնայ ռմբակոծումներին և կամ տուն վերադառնալու ժամանակ արդէն գլուխ բարձրացրած տեղական սպառազէն մուսուլման բանդաների ձեռքն են ընկել և սպանուել։

Սեպտեմբերի 15-ին առաւօտեանից քաղաքը անտէր աւարի նման փռուած էր արդէն թշնամու ոտքերի տակ։ Տեղական իշխանութիւն ասածը՝ «հռչակաւոր» Ցենտրօկասպիի դիկտատուրայի գլխաւորութեամբ՝ հեռացել էր դեռ գիշերը՝ իր բոլոր ադմինիստրատիւ և զինուորական ֆունկցիաներով ու ապարատներով։ Ճակատը բոլորովին կազմալուծուած ու մերկացած էր դեռ գիշերուայ ընթացքում։ Բացի աջ թեւում մնացած և անզօր ու օրհասական դիմադրութիւն ցոյց տուող մի բուռը զօրախմբից՝ մօտ 3000 հոգուց բաղկացած՝ մնացած զօրքը նաւերով հեռացել էր իշխանութեան հետ միասին։

Նշանակում է քաղաքը փաստօրէն անտէր էր. հեռացած իշխանութեան պիտի փոխարինէին դրութեան նոր տէրերը:

Ովքե՞ր էին և ովքե՞ր կարող էին լինել այդ նոր տէրերը։ Այդ հարցի նկատմամբ ես Բագուի ճակատը և ինքը քաղաքը առանձնայատուկ վիճակի մէջ էին գտնւում։

Սովորաբար պատերազմի վայրում պարտուող կողմի իշխանութիւնը— դրութեան հին տէրը—հեռանում կամ վերանում է և նրա տեղը բռնում է յաղթող կողմի իշխանութիւնը (զինուորական), դրութեան նոր տէրը։

Բնական էր սպասել, որ Բագուն ընկնելուց յետոյ քաղաքի ռուս պետական իշխանութեան փոխարինէր յաղթող Թիւրքիայի զինուորական իշխանութիւնը։

Բայց մենք ասացինք, որ Բագուի դէմ սերտ դաշնակցած կռւում էին երկու—ներքին և արտաքին—թշնամիներ, տաճկական զօրքը և կազմակերպուած մուսուլմանութիւնը։ Այդ երկու պատերազմական դաշնակիցները տիրապետեցին Բագուի քաղաքական կեանքին, որպէս պետական իշխանութիւններ։

Սակայն այդ իշխանություններից և ոչ մեկը — ոչ Թուրքական զորահրամանատարությունը և ոչ էլ Ադրբեջանի կառավարությունը — հարկ չհամարեցին իր ժամանակին, Բաքուն ընկնելուց հետո, մտնել քաղաք և օրինական ու կարգապահ իշխանության պատասխանատվություն ստանձնել իրանց վրա։ Նրանք քաղաքը հանձնեցին վրիժառու, արյունարբու և ավազակային հարուստ ինստինկտներով օժտված բանդաների քմահաճույքին։ Նուրի փաշայի և Ֆաթալի Խան-Խոյսկու իշխանությունները չմտան քաղաք, այլ լուռ հանդիսատես էին քաղաքի արվարձանից, թե ինչպես իրենց իսկ համաձայնությամբ և կարգադրությամբ ոտից գլուխ զինված, գազանացած ամբոխը, ասկյարների հետ միասին և առանձին-առանձին, օր ու գիշեր անդադար ավերում ու կործանում են շեն քաղաքը՝ կոտորելով և մինչև վերջին ծայր կողոպտելով ու Թալանելով բնակիչներին։

Չնայելով նրան, որ կիրակի վաղ առավոտյան Թուրքական շտաբը գնացած Բաքվի խաղաղարար պատգամավորությունը՝ օտար պետությունների հետ միասին՝ բազմիցս խնդրում է Թուրքական հրամանատարին՝ չուշանալ քաղաք մտնել, որովհետև անխուսափելի կը լինեն մասսայական սրածությունն ու ավերումները, Թուրքական հրամանատարությունը բարեհաճում է Բաքու գալ միայն երկու օր անցնելուց հետո՝ սեպտեմբերի 16-ի երեկոյան։ Իսկ Ադրբեջանի կառավարությունը տեղափոխվում է իր մայրաքաղաք Բաքուն միայն սեպտեմբերի 18-ին։

Երեք օր շարունակ՝ սեպտեմբերի 15-ից (առավոտյանից) մինչև 17-ը (երեկոյան), կիրակի, երկուշաբթի և չորեքշաբթի օրերը, քաղաքի դրութեան նոր տէրերը համարվում էին կազմակերպված մարդասպանների, ավազակների, Թալանչիների բազմաթիվ և բազմատեսակ բանդաները, բաղկացած տաճկական կանոնավոր զորքից և Բաքվի ու շրջակա գյուղերի Թաթարական տարրից։ Չնայելով որ տաճիկ զորքի բարձր հրամանատարները՝ Նուրի և Մուրսել փաշաները, դեռ սեպտ. 16-ի երեկոյան քաղաք էին մտել և բազմած քաղաքի առաջնակարգ հյուրանոցում («Մետրոպոլ») զվարճանում և իրանց հաղթությունն էին տոնում, այնուամենայնիվ քաղաքի տերերը սանձակոծ և արյունարբու պոգրոմշչիկներն էին։ Նուրի և Մուրսել փաշաներին մի կողմից, Խոյսկի և Ջիվանշիր խաներին մյուս կողմից հաճելի է եղել չափած-ձևած նախահաշիվներով, որ երեք օր շարունակ և անդադար Բաքու քաղաքի և նրա շրջանի ողջ հայկական էլեմենտի կյանքն ու գույքը յանձնուի բանդաների և պոգրոմշչիկների խնամքին։

Որքան կարող են Թող կոտորեն ու ջարդեն, յափշտակեն ու բռնաբարեն, կողոպտեն ու թալանեն՝ դա Թույլատրվում է նրանց. դա Թողնվում է նրանց ույժին, եռանդին և ընդունակության։

Այն անցքերը, որոնք տեղի են ունեցել Բաքվում երեք օրուայ ընթացքում (սեպտ. 15—17) և այն ռեժիմը, որ հաստատվել էր քաղաքում ուղիղ երկու ամսուայ ընթացքում (սեպտեմբ. 18-ից մինչև նոյեմբերի 17-ը, մինչև անգլիացիների հաղթական մուտքը Բաքվում), դարձյալ առանձնայատուկ տեղ են բռնում պատերազմական տարեգրության մեջ իրանց ծավալով, ուղղությամբ և բնույթով։

Եթէ յաղթող թշնամին այս կամ այն վնասը՝ մարդկային զոհերով թէ նիւթական կորուստներով՝ հասցնում է պարտուող հակառակորդից նուաճած քաղաքին, ապա, կասկած չկայ, այդ վնասից տուժում է ընդհանրապէս քաղաքը, նրա բնակիչները առհասարակ և անխտիր։ Նուաճուած Բագուի ազգաբնակութիւնը, ընդհակառակը, փաստօրէն բաժանուեց երեք կաթեգորիաների։

Առաջին կաթեգորիան մուսուլմանական տարրն էր։ Դա իբրև ցեղակից, հաւատակից, զինակից ու դաշնակից արտաքին թշնամու կամ տաճիկների,—իր այդ յատկութեամբ արդէն պարտուած կողմ չէր, այլ յաղթող կողմ. իբրև այդպիսին՝ Բագուի մուսուլմանութիւնը ոչ միայն մազաչափ չտուժեց, այլ հազարաչափ օգտուեց ուրիշներից. ոչ միայն զոհեր չտուեց, այլև ամենաակտիւ մասնակցութեամբ հազարաւոր զոհեր պատճառեց ուրիշներին և հարստութիւններ կլանեց նրացից։

Երկրորդ կաթեգորիան եկուոր տարրերն էին առհասարակ. բոլոր բնակիչները, բացի՝ մի կոմից մուսուլմանութիւնը, միւս կողմից հայութիւնը, մնացածները—ռուսներ, հրէաներ, վրացիներ և սլաւոնական ու եւրոպական բազմաթիւ գրուպպաներ։ Դրանք՝ այսպէս կոչուած՝ չէզօք էլեմենտներն էին երկու ծայրերի—մուսուլմանութեան և հայութեան միջև։ Իբրև չեզօք տարրեր, չէր ուղղուած նրանց դէմ որևէ կազմակերպուած հարուած, որևէ գիտակցական քաղաքականութիւն։ Եթէ նրանք տուժել են՝ մարդկային զոհերով կամ նիւթական կորուստներով, դա եղել է պատահմամբ կամ տարերային եղանակով։

Երրորդ կաթեգորիան—հայ բնակչութիւնն էր։ Սա էր պատերազմող և պաշտպանուող Բագու քաղաքի քաւութեան նոխազը։ Սա էր այն դժբաղդ զոհը, որի դէմ ուղղուած էին արտաքին և ներքին թշնամիների—տաճիկների և թաթարների—բոլոր սլաքներն ու նետերը։ Միայն հայ անպաշտպան և անզէն ժողովուրդն էր Բագու քաղաքում, որ բիւրաւոր զոհեր տուեց իրենից՝ առանց սեռի ու հասակի խտրութեան—տղամարդիք ու կանայք, ծերունիներ ու երեխաներ, առողջներ ու հիւանդներ, անգամ ծծկեր մանուկներ. հայ ժողովուրդն էր միայն, որ մինչև վերջին թելը կողոպտուեց ու թալանուեց, բռնաբարուեց ու ոտնահարուեց իր ընտանեկան սրբութեան և մարդկային տարրական իրաւունքների սահմաններում, գերուեց, անյայտութեան մէջ հազարաւոր մարդիկ կորցրեց, բռնատարկուեց, ստրուկի նման աշխատեցրուեց, գրաստի նման սայլերին լծուեց, մահամերձ ծեծուեց մարդ-հրէշների ձեռքով, հայհոյուեց, թքուեց ու մրոտուեց, սովալլուկ մեռցրուեց, որպէս իլոտներ, որպէս անբան արարածներ։

Բագուի սեպտեմբերեան ողբերգութիւնը—հայկական ողբերգութիւն էր՝ իր ողջ ծաւալով ու խորութեամբ։ Հայ լինելը ինքնին վերցրած յանցանք էր տաճկի և թաթարի աչքում. և, իր ցեղային պատկանելութեան համար, «յանցագործ» հայը արժանի էր վիրաւորանքների, զրկանքների, տանջանքների այն բոլոր տեսակներին, որոնց յղացման ընդունակ է եղել երբևիցէ արևելեան բռնակալութիւնը և որոնց ամենայն հետևողականութեամբ ու սիստեմատիկօրէն գործադրել են հայերի դէմ Սուլթանների ու Ջինգիզխանների հազարերորդ շառաւիղները 20-րդ դարում։

Ահա Բագուի ազգաբնակութեան երրորդ կաթեգորիայի—հայ. ժողովրդի—վիճակը թիւրք-թաթարական տիրապետութեան օրով։ Հայկական ողբերգութիւնը չվերջացաւ միայն երեք օրուայ կոտորածներով ու կողոպուտներով։ Այդ ողբերգութիւնը շարունակուեց անընդհատ ամբողջ երկու ամիս։ Այսինքն այնքան ժամանակ, որքան թիւրքական հրամանատարութիւնը բազմած էր Բագւում և որքան նրա հովանաւորութեան տակ գտնուող Ազերբէյջանի կառավարութիւնը ազատ ու անարգել շարունակում էր իր բռնութիւնների և հալածանքների քաղաքականութիւնը։

Երկու ամսուայ «օրինական» ռէժիմը նոյնքան աղէտաբեր ու զարհուրելի էր հայկական տարրի համար, որքան երեքօրեայ պոգրոմներն ու վանդալիզմը գազանացած և աւազակաբարոյ ամբոխների։

Կոտորածներից երկու օր անցած, սեպտեմբերի 19-ին, հինգշաբթի օրը, Ազերբէյջանի հասարակութեան մինիստր-նախագահը հանդիսաւորապէս յայտարարում է հրապարակով, որ «Ազերբէյջանում ապրող բոլոր քաղաքացիները, առանց ազգութիւնների և դաւանանքների խտրութեան, պիտի օգտուեն կառավարութեան միօրինակ վերաբերմունքով, որը պիտի ապահովէ և պաշտպանէ բոլոր քաղաքացիների կեանքը, գոյքը և իրաւունքները։ Նման յայտարարութիւն արել է տաճկական զօրահրամանատարը իր Բագու մտնելուց անմիջապէս յետոյ։

Սակայն իշխանութեան անունից արուած այդ պաշտօնական հանդիսաւոր յայտարարութիւնը մազաչափ անգամ չէր տարածւում հայ ժողովրդի վրայ։ Բագուի ազգաբնակութեան այդ երրորդ դժբախտ կաթեգորիան շարունակում էր մնալ նոյն դժոխային-բացառիկ պայմանների մէջ։ Հակառակ հրապարակային բոլոր հաւաստիացումների, Բագուի հայութիւնը դրուեց և պահուեց օրէնքից և մարդկային տարրական պաշտպանութեան սահմաններից դուրս։ Երկամսեայ ռէժիմը այլ բան չէր, բայց եթէ արճախում վրէժխնդրութեան, ասիմանական բնաջնջման եւ տնտեսական կործանման ու խեղճացման *մի ղրագունական քաղաքականութիւն հայութեան դէմ ուղղած։ Երկամսեայ ռէժիմը ուրիշ բան չէր, բայց եթէ* երեքօրեայ վանդալիզմի դաժան սիստեմի *վերածուած մի կառավարական հաստատուն, ամուր կուրս։ Երկու ամսուայ ընթացքում թիւրք-թաթարական «օրինական» իշխանութիւնը բոլոր պրիոմներով ճիգ ու ջանք էր թափում լրացնել այն պակասը, որ թողել են թիւրք-թաթարական սանձակոծ բանդաները բարդուղիմէոսեան երեք անիծուած օրերին։*

Օրինական կարգ ու կանոնի և ազգային-դաւանական անխտրականութեան սկզբունքի անունից արուած հրապարակային հաւաստիացումները սոսկ խաբուսիկ մանեօվրներ էին՝ օտարներին և դրսի աշխարհին իրաւակարգի պետութեան ապացոյցներ տալու համար Ազերբէյջանի վերաբերեալ։

Այն կառավարութիւնը, որ ոչ հայ ընտանիքից գողացուած որևէ հասարակ իրի համար խստագոյն պատիժ էր տալիս (մինչև անգամ կախաղան էր հանում) գողացող մուսուլմանին, այդ նոյն կառավարութիւնը ոչ միայն լռում էր, այլ և ներում էր և թոյլատրում, որ հայ ընտանիքների ճոխ կահ-կարասիքը օրը ցերեկով յափշտակեն ու իւրացնեն տաճիկները

կամ մուսուլմանները, կամ ամեն քայլափոխման կամայական խուզարկութիւններ կատարեն հայերի բնակարաններում։ Մի կողմից հրապարակով յայտարարում են անձի և գոյքի անձեռնմխելիութիւն անխտիր բոլոր քաղաքացիների համար, միւս կողմից չէր յարգւում ամենատարրական օրէնքն ու կանոնը հայերի նկատմամբ. մասսայական շուրջկալութիւնը, բանտարկութիւնը, պաշտօնական և անպաշտօն ընկվիզիցիան, անասնի նման սայլերին լծելը փողոցներում, մահամերձ ծեծելը ու քաղցից ծարաւից տանջելը, մարդ գերելը, անյայտացնելը և սպանելը—ամենասովորական և քրոնիկական երևոյթներն էին Բագւում հայերի դէմ ուղղուած։

Եւ մինչդեռ խաբուսիկ խոստումներն ու յայտարարութիւնները և ոչ հայ բնակարաններից հասարակ գողութեան համար մի քանի մարդ կախելու փաստերը հրապարակով արձանագրւում և շեշտւում էին Ազերբէյջանի օրգաններում, ընդհակառակը, հայերի դէմ գործադրուած երկինք աղաղակող անարդարութիւնները, անօրինակ բռնութիւնները, հալածանքները, գազանութիւնները մազաչափ անգամ լոյս աշխարհ չէին մտնում։ Թիւրք-Թաթարական տիրապետութիւնը իր արեւելայատուկ հինաւուրց դեսպոտիզմին աւելացրել էր ժամանակակից դիպլոմատիայի ցինիկ հնարքութիւններ։

Մի փոքր գաղափար տալու համար ընթերցողներին, թէ ինչ դժոխային մեքենայութիւններ էր գործադրում Ազերբէյջանի օրինական իշխանութիւնը հայ ժողովրդի դէմ, բերենք այստեղ հետևեալ պերճախօս դոկումենտը։

Բագուի Հայոց Ազգային Խորհրդի անդամները Թեմական առաջնորդ և Խորհրդի անդամ Բագրատ եպիսկոպոսի անունից և նրա միջոցով ներկայացնում են Թիւրքական զօրքի գլխաւոր հրամանատար Նուրի փաշային և Ազերբէյջանի հասարակապետութեան մինիստր-նախագահ Ֆաթալի խան Խան-Խոյսկուն հետևեալ զեկուցագիրը հայ ժողովրդի դրութեան և կառավարութեան վարած քաղաքականութեան մասին։ Զեկուցագիրը գրուած է հոկտեմբերի 18-ին և ներկայացրուած 23-ին։ Մենք բերում ենք ստորև այդ դոկումենտի ամենաբնորոշ կէտերը.

«Ահա արդէն երրորդ ամիսն է, երբ օսմանեան զօրքը վերցրել է Բագու քաղաքը և հռչակել այն, որպէս Ազերբէյջանի նորակազմ հասարակապետութեան մայրաքաղաք։ Թւում էր, թէ առաջին օրերի արիւնահեղ անցքերից յետոյ՝ քաղաքը յանձնելու ժամանակ, երբ տեղական հայ ազգաբնակութիւնը կրել է չափազանց կորուստներ՝ թէ մարդկային զոհերով և թէ ունեցուածքով, պէտք է ստեղծուէր այնպիսի իրաւակարգ, որով ազգաբնակութեան բոլոր առանձին հատուածները անխտիր օգտուէին կառավարութեան կողմից երաշխաւորուած և օրէնքով հիմնաւորուած պաշտպանութեամբ։ Մենք իրաւունք ունէինք այդպիսի յոյսեր տածելու մանաւանդ այն պատճառով, որովհետև, Բագուն վերցնելուց յետոյ, դեռ առաջին շաբաթը, սեպտեմբ. 19-ին (ն. տ.) պարոն մինիստր-նախագահը իր դիմումի մէջ հանդիսաւորապէս յայտարարել էր, որ «Ազերբէյջանում ապրող քաղաքացիները, առանց ազգութիւնների և դաւանանքի խտրութեան, պիտի օգտուեն կառավարութեան միատեսակ վերաբերմունքով, որը հաւասարաչափ պիտի պաշտպանէ բոլոր քաղաքացիների կեանքը, գոյքը և իրա-

ունքները…» Նոյնպիսի յայտարարութիւն արել է Թիւրքական հրամանատարը։ Թող Թոյլ տրուի ինձ ասել, որ, դժբախտաբար, ամեն մի կուլտուրական պետութեան համար ընդունուած վերոյիշեալ տարրական սկզբունքը չի իրականանում հայերի նկատմամբ։

Մեր կողմից չափազանցութիւն չպիտի լինի, այլ դառը իրականութիւն, եթէ ասենք, որ Բագու քաղաքի և նրա շրջանի հայ բնակչութիւնը չի նկատւում, որպէս քաղաքացիական իրաւազոր կաթեգօրիա, այլ դրուած է բացառիկ պայմանների մէջ և գտնւում է օրէնքից ու պաշտպանութիւնից դուրս։

Մեր ասածները ապացուցելու համար բաւական է թւել այստեղ մի քանի ցայտուն փաստեր, որոնք ստացել են քրօնիքական բնոյթ։

1. Մինչև այժմ անդադար շարունակւում են հայերի ձերբակալութիւնները, հասցնելով յաճախ մինչև մասսայական շուրջկալութիւնները։ Բանտերը լիքն են հայերով, ուր նրանք տառապում են անտանելի պայմանների մէջ և որոնց դէմ ամբողջ շաբաթներով ոչ մի մեղադրանք չի յարուցւում։ Նրանցից շատերը տարագրուել են այստեղից և չնայելով նրանց հարազատների բազմիցս դիմումներին ու ջանքերին, անյայտ է, թէ ուր են գտնւում նրանք և ինչ պայմաններում են ապրում։

2. Ձերբակալութիւնների հետ միաժամանակ հայկական բնակարաններում կատարւում են խուզարկութիւններ, շատ յաճախ կառավարութեան ստորին ծառայողների և անպատասխանատու անձանց միջոցով, որոնք օգտւում են միշտ դէպքից, որպէսզի նորից կողոպտեն առանց այն էլ արդէն կողոպտուած և անաբեկուած բնակիչներին և որպէսզի նորից վիրաւորեն և ոտնահարեն նրանց ընտանեկան պատիւը։ Րէկվիզիցայի անունով վերցնում են միայն հայ բնակարաններից կարասիներ և ընտանեկան զանազան իրեր։

3. Գերուած հայ զինւորները գտնւում են բոլորովին բացառիկ պայմանների մէջ։ Հայ զինւորները՝ նման ռուս, վրացի, հրէայ և այլ զինւորների միացած ազգութիւններից՝ մտել էին ռուս պետական զօրքի զօրամասերի մէջ։ Ուստի հարկ էր սպասել, որ հայերը ևս պիտի գտնուէին միատեսակ պայմանների մէջ միւս պատերազմական գերիների հետ միասին։ Մինչդեռ իրապէս նրանց մէջ խտրութիւններ են անւում։ Բացի հայերից, միւս ազգութիւններին պատկանող բոլոր զինւոր-գերիները ազատւում են. հայ գերուած զինւորները պահւում են տակաւին և նրանց հարկադրում են աշխատելու աղաղակիչ պայմանների մէջ, որպէս ստրուկների։ Գերուած հայ զինւորների հետ միասին բռնուել ու գերուել են փողոցներում անհագին քանակով հայ քաղաքացիներ, որոնք ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել պատերազմական գործողութիւնների մէջ։

4. Բագու քաղաքի և նրա շրջանի նաւթային արդիւնաբերութեան մէջ հայ բանւորները և ինտելիգենտ ծառայողները կազմել են բաւական մեծ տոկոս։ Այժմ, չնայելով էվակուացիային, կոտորածներին, գերութեան ու բանտարկութեան, այնուամենայնիւ կան բաւականաչափ բանւորական ձեռքեր և ինտելիգենտ ույժեր, որոնք աշխատանք են որոնում և ցանկանում

են գործադրել իրանց մասնագիտութիւնը և աշխատանքը համապատասխան պրոֆեսիաներում։ Սակայն, դժբախտաբար, այդ հարցում ևս նկատւում են անսովոր խտրութիւններ. մի կողմից կրճատուող շտատների մէջ մշտապէս արձակւում և տուժում են հայերը, իսկ միւս կողմից նաւթային րայոններում տիրում են այժմ հայերի ֆիզիքական գոյութեան համար այնպիսի անտանելի պայմաններ, որ հայ բանւորը փաստօրէն չունի ոչ մի հնարաւորութիւն անվտանգ աշխատանքի դուրս գալու։

5. Յայտարարուած էր, որպէս ընդհանուր կանոն, որ Բագուի բնակիչները անխտիր իրաւունք ունեն ազատօրէն երթևեկելու։ Բագւում գտնւում են այժմ Թիֆլիսից, Երևանից, Գանձակից և Ղարաբաղից շատ հայ ընտանիքներ, որոնք ցանկանում են վերադառնալ իրանց հայրենիքը, բայց, չըգիտենք թէ ինչու, այդ ընտանիքների դէմ յարուցւում են անհասկանալի և անբացատրելի խոչընդոտներ։ Եղաւ տղամարդ թէ կին, երեխայ, նա իրաւունք չունի երթևեկութեան ազատութեամբ՝ քաղաքացու այդ տարրական մարդկային իրաւունքով՝ օգտւելու հէնց այն պատճառով, որովհետև նա հայ է։

6. Բագուի հայ ազգաբնակութիւնից մի քանի հազար հայ ընտանիքներ փախել են և ապաստարան գտել Էնզելի, Պետրովսկ և Կասպիական զանազան ծովափնեայ քաղաքներում։ Համաձայն քաղաքացիական իրաւահաւասարութեան յայտարարուած սկզբունքի, նրանք, որպէս Ազերբէյջանի քաղաքացիներ, թւում էր, պէտք է օգտւէին կառավարութեան պաշտպանութեամբ։ Սակայն, դժբաղդաբար, կառավարութիւնը հարկաւոր ուշադրութիւնը չի դարձնում նրանց վրայ և չի ձեռնարկում որևէ միջոցի հայ քաղաքացիների վերադարձը դիւրացնելու համար, չնայելով որ այդ առիթով փախստականների կողմից յատուկ պատգամաւորների միջոցով եղել են մի քանի անգամ համոզեցուցիչ դիմումներ և խնդիրներ։

7. Ինչպէս յայտնի է, Բագուի ողջ ազգաբնակութեան մէջ հայերը թւապէս բռնում են երրորդ տեղը՝ մուսուլմաններից և ռուսներից յետոյ։ Բնական էր սպասել, որ Բագու քաղաքում ապրող ժողովուրդներին տրուած հասարակական-ազգային իրաւունքները պիտի տարածւէին նաև հայերի վրայ։ Տարաբաղդաբար այդպիսի կարևոր հարցում այլ վերաբերմունք է նկատւում իշխանութեան կողմից դէպի հայերը։ Մինչդեռ Բագւում ապրող բոլոր ժողովուրդներն ու համայնքները—ռուսները, վրացիները, հրէաները, ուկրայնացիները, լեհերը և անգամ սակաւաթիւ լիտովցիները—ունեն իրանց ազգային-կոլլեգիալ օրգանները՝ յանձին խորհուրդների, կոմիտէների և ընկերութիւնների, հայերին արգելւում է ունենալ գոնէ բարեգործական ֆունկցիաներով օժտուած մի օրգան, թէև նրանք աւելի, քան միւս ազգութիւնները, կենսապէս շահագրգռուած էին այդ օրերին կեանքի կոչելու հասարակական յատուկ օրգաններ՝ մասսայական դժբաղդութիւնների դէմ մաքառելու, քաղցած ընտանիքներին օգնելու և ճակատագրի խնամքին թողնուած անթիւ որբ երեխաներին խնամելու համար։

Զեկուցագիրը վերջանում է այս խօսքերով.

«Ողբերգական հարուածների ենթարկուած և ճզմուած հայ ազգաբնա-

կութիւնը ցանկանում է, վերջապէս, պարզել իր դրութիւնը Ադրբէյջանի հասարակապետութեան մէջ։ Նա ցանկանում է իմանալ, արդեօք տարածւում են նրա վրայ ազգային փոքրամասնութիւններին վերապահուած պետական-քաղաքացիական իրաւունքները, թէ հայերը պիտի շարունակեն մնալ «բացառիկ» պայմանների մէջ՝ օրէնքից և պաշտպանութիւնից դուրս…

Այս զեկուցագիրը, ինքն իրան վերցրած, մի փաստական դօկումենտ է այն դժոխային կացութեան վերաբերեալ, որ բաժին էր ընկել հայկական տարրին երկու ամիս շարունակ թիւրք-թաթարական տիրապետութեան օրով։ Սակայն վերոյիշեալ դօկումենտը միայն թոյլ արձագանքը և գժգոյն նկարագիրն է այն շարունակական սարսափների և սոսկումների, որոնց անկարող է պատմել մարդկային լեզուն իրենց բովանդակ ճշտութեամբ և մանրամասներով։ Բաւական է միայն ասել, որ երեքօրեայ զարհուրելի ողբերգութիւնը վերածուել էր երեքամսեայ մի տևական դժնդակ սիստեմի։ Բանդաների «տարերային» վանդալիզմը վերածուել էր չափած-ձևած քաղաքական կուրսի՝ օրինաւոր իշխանութեան օրով։ Տարբերութիւնը ձևի մէջ էր և ոչ բուն էութեան։ Երեք օրուայ թերին լրացրուել է երկու ամսուայ ընթացքում։

Գուցէ կարելի լինի ասել, որ այդ կարճ ժամանակամիջոցում Բագուի հայութեան գլխին կինեմատօգրաֆիական արագութեամբ կրկնուեցին բռնութիւնների, ճնշումների և հալածանքների այն անօրինակ պատմութեան էջերը, որ դարեր շարունակ կրել է թիւրքահայ ժողովուրդը օսմանեան իշխանութեան ստրկական լծի տակ։ Մենք հիմա միայն զգացինք ու հասկացանք տաճկահայերի դարաւոր տառապանքի խորութիւնը, գիտակցեցինք նրանց անվերջ գանգատների և կսկծոտ հառաչանքների կատարեալ իրաւացիութիւնը։ Բայց այն, ինչ կրել է թիւրքահայութիւնը միայն տաճկական տարրից ու «կարգերից», Բագուի հայութիւնը կրել է իր մարտիրոսագրութիւնը և՛ տաճկական և՛ թաթարական տարրերից ու «կարգերից»։

Հարուածներն ու վիրաւորանքները, բռնութիւններն ու ճնշումները կրկնակի էին։ Այն, ինչ խաւար Արևելքը իր բարբարոս ներկայացուցիչներով տեսել ու ժառանգել է պատմութեան, դա ճաշակեց Բագուի հայութիւնը թունոտ դեղատոմսերով։

Չկայ ուրիշ ոչ մի աւելի նպատակայարմար և համոզեցուցիչ եղանակ, հայկական ողբերգութեան ռէալ պատկերը ուրուագծելու համար, քան փաստական տուեալների վերլուծութեան և օպերացիաների մեթոդը։ Գիտակցելով Բագուի Սեպտեմբերեան անցքերի մասին շօշափելի նիւթեր ժողովելու կարևորութիւնն ու անհրաժեշտութիւնը, կեանքի է կոչւում մի անկետային յանձնաժողով, որ պիտի գործէր Բագուի Հայոց Ազգային Խորհրդի (սկզբում Հայկական Ինքնօգնութեան Կոմիտէի) կից։ Հայ անկետային յանձնաժողովը աւելի վաղ է սկսում (հոկտեմբերի վերջերից. նախ քան անգլիացիների գալը գործում էր նա գաղտնի) իր աշխատանքները, քան ցենտրօդումին կից հիմնուած այն մարմինը (որ յետոյ կոչուեց „Контропьная Комиссія Союзныхъ Державъ"), որ կեանքի կոչուեց դաշնակիցների հրամանատարութեան կարգադրութեամբ՝ Բագուի բնակիչների կրած վնասների չափը որոշելու համար։

Անկետային յանձնաժողովի առաջին գործն էր հարցաթղթերով (անկետային թերթիկներով) փաստական տեղեկութիւններ հաւաքել հայ ազգաբնակութիւնից՝ նրա ունեցած մարդկային զոհերի և կրած վնասների ու կորուստների (կողոպտած, թալանած իրերի և արժէքների) մասին։ Անկետային թերթիկը բաղկացած էր հետևեալ 26 հարցերից.

ԱՆԿԵՏԱ

I. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԻ ՄԱՍԻՆ.

1. Քանի՞ հոգուց էր բաղկացած ընտանիքը կոտորածից առաջ։

2. Ո՞ւր են ընտանիքի պակասող անդամները. քանի՞ հոգի են սպանուել, քանի՞սն են փախել, քանի՞սն են անյայտացել և քանի՞սն են մնացել (գրել սպանուածների և անյայտացածների անունները, ազգանունները, սեռն ու հասակը)։

3. Առհասարակ քանի՞ հայ բնակիչներ կային ամբողջ տանը կոտորածից առաջ և քանի՞սն է մնացել այժմ (հարցնել տնային կոմիտէներին)։

II. ԴՐԱՄԻ ԵՒ ԳՈՅՔԻ ԿՈՂՈՊՈՒՏ ԵՒ ԹԱԼԱՆ.

4. Որքա՞ն և ի՞նչ են կողոպտել ամէն մի ընտանիքից (գրել իրերի թիւը և տեսակը՝ հագուստեղէնից, անկողնից, տան սպիտակեղէնից և զանազան իրերից՝ ամանեղէնից, արծաթեղէնից, ոսկեղէնից և ուրիշ թանկարժէք իրերից, ինչպէս և թալանած կանխիկ փողի գումարը)։

5. Որքա՞ն և ի՞նչ իրեր են կողոպտուել փախած և կոտորուած ընտանիքների բնակարաններից (իմանալ կենդանի մնացած հարևաններից գոնէ մօտաւոր տեղեկութիւններ, հարցնելով սպանուածների և փախածների պրոֆեսիայի և սոցիալական դիրքի մասին)։

III. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՌՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒԱՆԳՄԱՆ ԴԷՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ.

6. Եղե՞լ են բռնաբարութեան և առևանգման դէպքեր տուեալ ընտանիքում և ամբողջ տանը. քանի՞ հոգի են ենթարկուել դրան։

7. Քանի՞սն են եղել նրանցից օրիորդներ և քանի՞սը տիկիններ։

8. Որքա՞ն է օրիորդների ամենափոքր և տիկինների ամենամեծ հասակը։

9. Վերադարձուե՞լ են առևանգուած հայուհիները և որքա՞ն ժամանակից յետոյ։

10. Եղե՞լ են սպանութեան դէպքեր բռնաբարութիւնից և առևանգումից յետոյ։

IV. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՏՈՐՈՂ ԵՒ ԿՈՂՈՊՏՈՂ ՏԱՐՐԵՐԻ ՄԱՍԻՆ.

11. Ովքե՞ր են եղել կոտորողներն ու կողոպտողները. տեղական թուրքե՞ր, թէ՞ տաճիկ ասկեարներ. քաղաքացինե՞ր, թէ՞ զինուորների հագուստով։

12. Այդ տարրերից որո՞նք էին գլխաւորապէս կոտորում, որո՞նք գլխաւորապէս կողոպտում և որո՞նք գլխաւորապէս փող պահանջում։

13. Քանի՞ խումբ և քանի՞ անգամ են եկել միևնոյն տունը կողոպտելու։

14. Տեղեկութիւններ տեղական Թուրքերի և տաճիկների վերաբերմունքի մասին դէպի հայ բնակչութիւնը։

V. ՍՊԱՆՈՒԹԵԱՆ, ԱՆՅԱՅՏԱՑՄԱՆ, ԲՌՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՌԵՒԱՆԳՄԱՆ, ԳԵՐՈՒԹԵԱՆ, ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ, ԿՈՂՈՊՈՒՏԻ ԵՒ ՌԷԿՎԻԶԻՑԻԱՅԻ ԴԷՊՔԵՐ ԿՈՏՈՐԱԾԻՑ ՅԵՏՈՅ ԿԱՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5—18-ԻՑ 'Ի ՎԵՐ.

15. Կոտորածներից յետոյ եղե՞լ են սպանութեան դէպքեր՝ քանի՞ հոգու,

16. Անյայտացման դէպքեր՝ քանի՞ հոգու։

17. Վերադարձե՞լ են անյայտացածները, թէ՞ կորել են անհետ։

18. Բռնաբարութեան և առևանգման դէպքեր՝ քանի՞ հոգու։

19. Եղե՞լ են առևանգուածներից վերադարձողներ։

20. Գերութեան դէպքեր՝ քանի՞ հոգու և որքա՞ն ժամանակով։

21. Բանտարկութեան դէպքեր՝ քանի՞ հոգու և որքա՞ն ժամանակով։

22. Ձերբակալուել են փողոցո՞ւմ, թէ՞ տանը։

23. Կողոպուտի դէպքեր՝ քանի՞ անգամ և ի՞նչ իրեր (թուել իրերի անուններն ու տեսակները)։

24. Ռեկվիզիցիայի դէպքեր՝ քանի՞ անգամ, ի՞նչ իրեր, ո՞ւմ համար, ո՞ւմ անունից։

25. Եղե՞լ են իշխանութիւնից անկախ ռէկվիզիցիայի դէպքեր և արդեօք արգելուե՞լ են վերջիններս իշխանութեան կողմից՝ սրան իմաց տալուց յետոյ։

VI. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

26. Քանի՞ հոգի են վերադարձել Բագուի փախստականներից (կոտորածի նախընթաց օրը փախածներից)։

(Բոլոր տեղեկութիւնները հաղորդել առանձին-առանձին, թուերով աւելացնելով քաղաքամասի, փողոցի անունները, տան համարը, ընտանիքի կամ առանձին անհատների ազգանուններով)։ [1]

Այս գործը, իր թւական տուալներով, կազմում է անկետային աշխատանքի արդիւնքները։ Մենք հեռու ենք, 'ի հարկէ, այդ արդիւնքները լրիւ ու կատարեալ համարելու մտքից։ Անկետան, նոյն իսկ առաջաւոր կուլտուրական երկրներում, անխուսափելիօրէն ունենում է իր որոշ թերութիւնները, ուր մնաց, որ մեր երկրում, այն էլ Ադրբէյջանի բոլորին յայտնի պայմաններում, հնարաւոր լինէր կատարեալ գործ տալու։ Գոյութիւն ունեցող անյարմարութիւններին աւելացրէք ժողովրդի կուլտուրական ըմբռնումների ստոր մակարդակը, նրա անսովոր լինելը, նահապետական վերաբերմունքը դէպի անկետային հարց ու փորձը և վիճակագրական հաւաքումների գործը, որպէսզի հասկանալի լինի, թէ որքան դժուար է մասսա-

[1]) Անկետային այս հարցաթերթը մենք կազմել պատրաստել ենք դեռ նոյեմբերի 10-ին, 25 օր անցած տաճիկների մուտքից, և մի շաբաթ անցած կարդացուել և ընդունուել է Բագուի Ազգային Խորհրդի Բագու մնացած անդամների կողմից։ Մինչև անգլիացիների մուտքը (Նոյեմբերի 17-ին) անկետային հաւաքումներ տեղի էին ունենում կամաց-կամաց, մասնաւոր եղանակով, ծանօթների շրջանում և գաղտագողի կերպով։ Դաշնակիցների գալուց յետոյ արդէն ձեռնարկուած է աշխատանքը լայն հիմքերով և հրապարակային ձևով։

յական տեղեկութիւններ և թւեր հաւաքելու աշխատանքը մեր երկրում։

Բայց և այնպէս արել ենք, ինչ առհասարակ հնարաւոր էր անել, մաքառելով շատ խոչընդոտների դէմ։ Բացի սկզբնական րեգիստրացիայից, կատարել ենք նաեւ երկրորդ և երրորդ վերստուգիչ (կօնտրօլ) աշխատանքը րայօնից րայօն, փողոցից փողոց, տնից տուն։ Եղած ու նկատուած բացերը աշխատել ենք աւելի ու աւելի լրացնել նորանոր տուեալներով։

Մեր աշխատանքը բաղկացած է երկու հիմնական մասերից. առաջին մասը ամփոփում է իր մէջ մարդկային զոհերի (բացառապէս հայերից) վերաբերեալ թւական տուեալները. երկրորդ մասը պարունակում է իր մէջ նիւթական կորուստների և վնասների (կողոպուտի, թալանի) վերաբերեալ թւական տուեալներ։ Այդ երկու մասերն էլ մենք ձեռնարկել և ի կատար ենք ածել միանգամայն անկախօրէն մեր սեփական ինիցիատիւով և պաշարներով։ Միայն աշխատանքը վերջացնելուց յետոյ երկրորդ մասի կամ վնասների վերաբերեալ թւական տուեալները մենք համեմատել ենք դաշնակից պետութիւնների վերստուգիչ յանձնաժողովի ստացած թւերի հետ և պակասը լրացրել նրանից։ Այդ մասում մենք գործել ենք կօնտակտ յիշեալ յանձնաժողովի հետ։ Եւ որպէսզի հնարաւոր լինէր Բագուի ոչ միայն հայ տարրի, այլև անխտիր ամբողջ ազգաբնակութեան կրած վնասների լրիւ ստատիստիկական պատկերը տալ, վերստուգիչ յանձնաժողովը դրել էր մեր տրամադրութեան տակ ամբողջ նիւթերը ստատիստիկօրէն օգտագործելու համար։ Յայտնում ենք հրապարակով մեր խորին շնորհակալութիւնը այդ սիրալիրութեան համար։

Մեր հաւաքած նիւթերը դասաւորել և մշակել ենք ըստ թաղամասերի (ուչաստկաների) և փողոցների։ Աշխատանքի շտապողականութիւնը և ժամանակի սղութիւնը ստիպեցին մեզ առ այժմ բաւականանալ նիւթերի մշակման այդ համառօտ նախագծով։ Այնքան հսկայական և թանկագին նիւթեր են կուտակուել մեր տրամադրութեան տակ, որ արժէր աւելի ընդարձակ հիմքերով և գիտական խստապահանջութեամբ մշակման ու վերլուծութեան ենթարկել նրանց։ Դա թողնում ենք ապագային, եթէ միայն կը ներեն մեզ ժամանակն ու հանգամանքները։

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

(Նախագահ Բագուի Հայոց Ազգային Խորհրդի Անկետային Յանձնաժողովի)

1919 թ. Մայիս ամսին
Բագու

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI – 1922
ИМЕНИ А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
20980

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐԸ

I ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ ԲԱԳՒՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԱՆԿՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հիմնական հարցը, որ մեզ ամենից առաջ հետաքրքրում էր և պէտք է պարզէինք այն առաջին հերթին, վերաբերում էր Բագուի հայ ազգաբնակութեան թուական յարաբերութիւններին. Ինչ մեծութեան էր հասնում հայ բնակիչների թիւը քաղաքի անկման նախօրեակին կամ կոտորածներից անմիջապէս առաջ՝ վերցրած ընտանիքների թւով և նրանց անդամների (կամ հայ բնակիչների) թուական կազմով,—դա էր մեր անկետային թերթիկի առաջին հարցը։

Ստացուած տուեալները դասաւորելով ըստ թաղամասերի և հանելով նրանց տոկոսները, կստանանք հետևեալ աղիւսակը։

Ա. ԱՂԻՒՍԱԿ

Հայ ընտանիքների եւ նրանց անդամների թիւը ու տոկոսները ըստ թաղամասերի

Թաղամասեր	Հայ ընտանիք. թիւը	Հայ ընտանիքն. անդամն. թիւը	Ընտանիքների տոկոսը	Ընտանիքների անդամների տոկոսը
I թաղամ.	606	2224	2,66	2,50
II „	50	152	0,22	0,17
III „	86	323	0,38	0,37
IV „	97	395	0,43	0,44
V „	1267	5122	5,59	5,78
VI „	1890	7219	8,34	8,14
VII „	4214	16670	18,58	18,80
VIII „	8599	33393	38,00	37,67
IX „	4789	19112	21,13	21,55
X „	519	2019	2,30	2,28
Բալախանի	415	1535	1,82	1,73
Խառը փող.	130	,509	0,56	0,57
Ընդամենը.	**22662**	**88673**	**100,00**	**100,00**

Ինչպէս տեսնում ենք, Բագուի հայկական կոտորածներից անմիջապէս առաջ կամ քաղաքի անկման նախօրեակին—1918 թ. սեպտ. 14-ին—հայ բնակչութիւնը բաւական պատկառելի թիւ է կազմել Բագւում. նա ունեցել է 22662 ընտանիք՝ 88673 անդամներով. իւրաքանչիւր ընտանիքին գալիս էր 3,9 կամ մօտ 4 հոգի։

Ընտանիքի անդամների միջին թուի այդ անսովոր ցածր նորման իր բացատրութիւնը գտնում է մի քանի հանգամանքների մէջ։ Ամենից առաջ պէտք է շեշտել այն վաղուց յայտնի մասսայական երևոյթի վրայ, որ Բագուաբնակ հայ գաւառական ժողովրդի (գլխաւորապէս բանւորների և ծառաների) մէջ կայ մի պատկառելի տոկոս մենակեացների, որոնք կամ ամուրի են և կամ իրանց ընտանիքները պահում են գիւղերում։

Երկրորդ՝ Բագւում կուտակուել էին մի քանի ամիսների ընթացքում ռուսական արևմտեան ճակատից վերադարձած բազմաթիւ հայ զինւորներ իրանց ծննդավայրը մեկնելու համար. Ճանապարհների հաղորդակցութեան արգելքները ստիպեցին նրանց մնալ Բագւում և կազմակերպուել ու պաշտպանել քաղաքը. Երրորդ՝ կային հազարաւոր հայ ընտանիքներ, որոնց անդամների մի մասը (գլխաւորապէս կանայք և երեխաներ) հեռացել էին քաղաքից (մեծ մասամբ Աստրախանի ուղղութեամբ) Բագուի պաշարումից առաջ կամ պաշարման ընթացքում։ Ահա կոնկրետ պատճառները այն փաստի, թէ ինչու հայ ընտանիքի անդամների միջին թիւը կանգնած է անսովոր ցածր նորմայի վրայ

Ինչ վերաբերում է հայ բնակիչների ընդհանուր թւին—88673 հոգուն—ապա նրանք աւելի են եղել, քան հաշուած են մեր անկետայի հարցաթերթի միջոցով։ Նախ այդ թուի մէջ չեն մտնում հայկական զօրախմբերից որոշ մասեր, որոնք դեռ չէին վերադարձել փախստավայրից մինչև փետրուարի վերջերը, երբ փակել էինք մեր ռեգիստրացիան (անկետային հաւաքումները). երկրորդ՝ չեն մտնում նոյն թուի մէջ նաև քաղաքի բնակիչներից այն փախստականները, որոնք դեռ չէին վերադարձել մինչև վերոյիշեալ ժամանակամիջոցը, և երրորդ՝ նոյն թուի մէջ հաշուած չեն Բագւում մնացած այն Շամախեցի և Գեօկչայցի գաղթականները, թւով մօտ 5000—6000 հոգի, որոնք տաճիկ հրամանատարութեան և Ադրբէջանի կառավարութեան կարգադրութեամբ դեռ հոկտեմբերի կէսերին քշուեցին իրանց հայրենիքը։

Հիմք ընդունելով մեր ստացած թիւը և ի նկատի ունենալով յիշեալ բացերը կարելի է ենթադրել, որ Բագուի անկման նախօրեակին հայ ազգաբնակութեան թիւը հաւասար է եղել մօտ 100000—110000 հոգու։ Դա ամենամեծ թիւն է, որ հայկական տարրը երբևիցէ ունեցել է Բագւում։ 1917 թ. հոկտ. տուեալներով հայերի թիւը Բագւում (հաշուելով նաև նաւթային շրջանները) եղել է մօտ 70000 հոգի

Ամենամեծ կամ աւելի ճիշտ՝ ամենահայաշատ քաղաքամասը, ինչպէս երևում է A աղիւսակից, կազմում* է VIII թաղամասը, որի հայ բնակչութիւնը կազմել է 33393 հ. (1917 թ. 19064 հ.) կամ 37,67% քաղաքի ողջ հայ բնակչութեան։ Այնպիսի համարեա զուտ հայկական փողոցներ, ինչպէս

են բոլոր Կանիտապլինսկի փողոցները, Նիժնէ-Պրիւտսկի, Վերխնէ-Պրիւտսկի և Ստանիսլաւսկի փողոցները՝ իրանց խոշորագոյն մասերով, մտնում են VIII թաղամասի մէջ։ Երկրորդ հայաշատ թաղամասը կազմում է IX թաղամասը, որի հայ բնակչութիւնը հաւասար է եղել 19112 հոգու (1917 թ. 8 98 հ.) կամ 21,55% քաղաքի ողջ հայութեան։ Այնուհետև յաջորդում է VII թաղամասը, իր 16670 հ. (1917 թ. 8437 հ.) կամ 18,80% ով։ Յիշեալ երեք թաղամասերի բնակչութիւնը կազմել է ճնշող մեծամասնութիւնը—69177 հ. (1917 թ. 36699 հ.) կամ 78,12%—Բագուի ողջ հայութեան։ Ամենափոքր քաղաքամասերը համարւում են II, III և IV, ուր խմբուած հայ բնակիչները չեն կազմում անգամ մի տոկոսը քաղաքի հայ ազգաբնակութեան։

Առանձնապէս աչքի է ընկնում Բալախանիում եղած հայ բնակչութեան սակաւութիւնը՝ 1535 հոգի կամ 1,73% մինչդեռ մի տարի առաջ 1917 թ. հոկտ. տուեալներով. Բալախանու բոլոր րայոններում եղել են 35 հազարից աւելի հայ բնակիչներ։ Ինչպէս յայտնի է, 1918 թ. մարտի անցքերից յետոյ հայ բնակիչները հեռանալէ նաւթային շրջաններից տեղափոխուեցին քաղաք։ Հայ բանւորներն ու ծառայողները շարունակում էին իրանց ծառայութիւնը նախկին վայրերում, բայց նրանց մեծագոյն մասը, մանաւանդ ազգ. պաշտպանութեան օրերին, տեղափոխել էին քաղաք իրանց ընտանիքները։ Դրանով է բացատրւում հայ բնակիչների այն անսովոր սակաւութիւնը, որ եղել է Բալախանի սեպտեմբերեան անցքերից առաջ։

«Խառը փողոցներ»-ի տակ պիտի հասկանալ ցուցակագրումը այն բնակիչների, որոնց ցուցակների վրայ նշանակուած չեն եղել փողոցների անուանները կամ տան համարները։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած վերոյիշեալ թուականի բաժանումները ըստ փողոցների

B. ԱՂԻՒՍԱԿ

Հայ ընտանիքների եւ նրանց անդամների թիւ ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ ընտանիքների թիւը	Հայ ընտանիքների անդամների թիւը
1	Արմեանսկայա փողոց	17	52
2	Ազիատսկայա » . . .	85	375
3	Բեյվլիւ հրապարակ	38	140
4	Բալախանսկայա փող. և շոսէ	1201	4630
5	Բախլովսկայա » I-ին . .	182	720
6	» » II . . .	28	110

№№	Փողոցներ		Հայ ընտանիքների թիւը	Հայ ընտանիքների անդամների թիւը
7	Բաիլովսկայա փողոց	III . . .	179	948
8	Բարեատինսկայա փողոց	. . .	35	111
9	Բիրժևայա »	. . .	512	2259
10	Բոնդարնայա »	. . .	274	1153
11	Բուդագովսկայա »	. . .	308	1029
12	Բոլշայա Մորսկայա »	. . .	791	2807
13	Գորչակովսկայա »	. . .	50	152
14	Գիմնազիչեսկայա »	. . .	309	1017
15	Գոգոլևսկայա »	. . .	76	229
16	Գուբերնսկայա »	. . .	41	164
17	Եարմորոչնայա »	. . .	71	232
18	Զավոկզալնայա »	I-ին	79	216
19	Զավոկզալնայա »	II .	620	2821
20	» »	III .	40	122
21	» »	IV .	394	1430
22	» »	V .	104	413
23	» »	VI .	145	622
24	» »	VII .	18	79
25	» »	VIII	109	416
26	» »	IX .	31	109
27	Լենքորանսկի միջափողոց	. . . .	27	77
28	Կանիտապինսկայա փողոց	I . .	800	3023
29	» »	II .	363	1356
30	» »	III .	396	1802
31	» »	IV .	825	3462
32	» »	V .	647	2535
33	» »	VI .	319	1364
34	» »	VII .	388	1005
35	» »	VIII	203	894
36	» »	IX .	188	765
37	» »	X .	137	628
38	» »	XI .	41	168
39	Կարանտիննայա »	. .	85	315
40	Կոլիւբակինսկայա »	. .	26	85
41	Կրասնովոդսկայա »	. .	146	456
42	Կամենիստայա »	. .	79	279
43	Կիրպիչնայա »	. .	2	11

№№	Փողոցներ	Հայ ընտանիքների թիւ	Հայ ընտանիքների անդամների թիւ
44	Մերկուրեսկայա փողոց . .	152	525
45	Մարիինսկայա » . .	80	315
46	Միխայլովսկայա » . .	8	31
47	Միլիոննայա » . .	252	1081
48	Մագազիննայա » . .	213	744
49	Մոլոկանսկայա » . .	361	1575
50	Մալո-Մորսկայա » . .	289	1082
51	Նաբերեժնայա » . .	4	20
52	Նիկոլաեսկայա » . .	29	87
53	Նիժնէ Պրիուտսկայա » . .	528	2352
54	Ջաղրովայա » . .	153	508
55	Պորոխովայա » . .	797	3292
56	Պարալելնայա փողոց III-դ . .	6	23
57	Պերսիդսկայա »	6	34
58	Ռեմեսլեննայա »	583	2176
59	Սադովայա »	3	11
60	Ստարո-Պոչտովայա փողոց . .	1	1
61	Ստարո-Պոլիցեյսկայա » . .	38	152
62	Սլաբոդսկայա I-ին փողոց . .	551	2199
63	» II » . .	567	2499
64	» III » . .	313	1047
65	Սուրախանսկայա » . .	202	758
66	Ստանիսլաւսկայա » . .	1393	4988
67	Վոդովոզնայա » . .	10	32
68	Վոկզալնայա » . .	144	580
69	Վրանգելսկայա » . .	28	88
70	Վորոնցովսկայա » . .	15	59
71	Վերխնէ-Պրիուտսկայա փողոց .	823	3867
72	Տելեֆոննայա » .	1208	4275
73	Տորգովայա » .	971	4196
74	Տրամվայնայա » .	8	25
75	Տատեանինսկայա » .	156	538
76	Տատարսկայա » .	21	70
77	Ցիցիանովսկայա » .	7	26
78	Ցերկովնայա » .	60	208
79	Օլգինսկայա » .	18	60

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Հայ ըն-տանիքների թիւը	Հայ ըն-տանիքների անդամների թիւը
80	Ցարիցինայա փողոց .	7	31
81	Ուրիշ փողոցներ	130	509
	Ընդամենը .	**20544**	**806,5**
	Արուարձաններ		
1	Բալախանի	415	1535
2	Բիբի-Հէյբաթ	224	446
3	Հայկաւան	851	3193
4	Հայոց-Քիշլի	211	836
5	Սև-Քաղաք	372	1503
6	Սպիտակ-Քաղաք	147	516
	Ընդամենը .	**2220**	**8029**
	Բոլորը միասին .	**22662**	**88673**

Մենք դիտաւորութեամբ դասաւորեցինք հայ բնակիչները ըստ փողոցների (B աղիւսակ), որպէսզի յետոյ աւելի պարզ ու շօշափելի լինի մեզ համար մարդկային զոհերի քանակի չափը ամեն մի փողոցի բնակչութեան ընդհանուր թուի մէջ։

Աղիւսակի մէջ յիշատակուած են ընդամենը 81 փողոցներ՝ 80644 բնակիչներով (20442 ընտանիքներով) և 6 արուարձաններ 8029 բնակիչներով (2220 ընտան.). ընդամենը 88673 բնակ (22662 ընտ.)։

Բագուի ամենամեծ հայաշատ փողոցը, ինչպէս տեսնում ենք վերցրեալ աղիւսակից, կազմում է Ստանիսլաւսկի փողոցը, ուր բնակուած հայերի թիւը կոտորածից առաջ հաւասար էր 4988 հոգու (ընտանիքների թիւը՝ 1393. դա կազմում էր քաղաքի (առանց արուարձանների) ողջ հայութեան 6,18% (ընտանիքներինը՝ 6,81%) կամ աւելի քան 1/20 մասը։ Ամենահայաշատ փողոցների շարքին են պատկանում նաև՝ Բալախանսկի փող. և շուկէն՝ 4630 բնակիչներով (ընտ. 1201), Տելեֆօննի փող. 4275 բնակ. (ընտ. 1208), Տօրգովի փող. 4196 բնակ. (971 ընտ.), Վերխնէ-Պրիուտսկի

*փող. **3853** բնակ. (**816** ընտ.). **4**-րդ Խանիտապինսկի փող. **3462** բնակ. (**825** ըն.), Գորոխովոյ փող. **3292** բնակ. (**797** ընտ.), **1**-ին Կանիտապինսկի փող. **3023** բնակ. (**800** ընտ.) և այլն։ Այդ վերջին ութ հայաշատ փողոցների թիւը միասին վերցրած հաւասար է **31719** հոգու (ընտանիքների թիւը՝ **7991**)։ Դա կազմում է քաղաքի (**81** փողոցների, չհաշուած արուարձանները) ողջ հայ բնակչութեան խիստ պատկառելի բաժինը՝ **39,33**%, ընտանիքներինը՝ **39,10**%)։*

*Արուարձանների մէջ աչքի է ընկնում Հայկաւանը իր **3193** բնակիչներով (ընտանիքների թիւը՝ **851**), որը կազմում է բոլոր արուարձանների բնակիչների ընդհանուր թուի **39,78**% (ընտանիքներինը՝ **38,80**%)։ Ի հարկէ, Հայկաւանում հայերի թիւը աւելի է եղել, քան մեր անկետան է տալիս։ Բայց մենք բացատրեցինք, որ գաղթականների մի որոշ մասը դեռ չէր վերադարձել, իսկ այնտեղ բնակւող և կոտորածների ժամանակ մնացած շամախեցի գաղթականներին տաճիկ հրամանատարութիւնը հեռացրել էր Բագուից դեռ հոկտեմբեր ամսին։ Բալախանու հայ բնակչութեան սակաւութեան պատճառները մենք արդէն իր տեղում բացատրեցինք։*

II ԳԼՈՒԽ

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ

Այժմ անցնենք յաջորդ հարցին. ի՞նչ փոփոխութիւն է կատարուել արդեօք հայ բնակչութեան թուի մէջ և ամենից առաջ ի՞նչ եղանակով է արտայայտուել այդ փոփոխութիւնը. Նախ քան քաղաքի անկումը բնակիչների մի մասը, ինչպէս յայտնի է, էվակուացիայի է ենթարկուել. Նշանակում է՝ Բագուի հայ բնակչութեան թուի առաջին փոփոխութիւնը արտայայտուել է նրա մի մասի գաղթով կամ փախուստով։ Փոփոխութեան այդ պատկերը գտնում ենք մենք հետևեալ աղիւսակի մէջ։

Գ. ԱՂԻՒՍԱԿ

Փախածների թիւը և տոկոսը ըստ թաղամասերի

Թաղ	Հայ բնակիչների թիւը	Փախածների թիւը	Մնացածների թիւը	Փախածների տոկոսը	Մնացածների տոկոսը
I քաղաքամ.	2224	885	1339	39,08	60,92
II »	152	41	111	26,98	73,02
III »	323	75	248	23,22	76,78

Թաղ	Հայ բնակիչների թիւը	Փախածների թիւը	Մնացածների թիւը	Փախածների տոկոսը	Մնացածների տոկոսը
IV քաղաքամ.	395	153	242	38,73	61,27
V »	5122	1888	3,234	36,86	63,14
VI »	7219	2983	4,236	41,32	58,68
VII »	16670	5934	10736	35,66	64,34
VIII »	33393	11100	22293	33,24	66,76
IX »	19112	6348	12764	33,11	66,89
X »	2019	1057	962	52,35	47,65
Բալախանի .	1535	708	827	46,12	53,88
Խառը փողց.	509	121	388	23,77	76,23
Ընդամենը	**88673**	**31293**	**57380**	**35,29**	**64,71**

Ուշադրութիւն դարձրէք C աղիւսակի վրայ։ 88673 հայ բնակիչներից փախել են սեպտեմբերի 14-ին ոչ պակաս քան 31543[1]) հոգի կամ ամբողջի 35,29%, աւել է՝ $^1/_3$ մասից աւելին։ Մնացել են քաղաքում 57380 հոգի կամ 64,43%-ը։ Բայց, ինչպէս իր տեղում յիշեցինք, փախստականների թիւը աւելի է եղել, դեռ բոլորը չէին վերադարձել։ Փախստականների ամենամեծ թիւ, բացարձակ յարաբերութեամբ վերցրած, տուել է, բնականաբար, ամենահայաշատ քաղաքամասը՝ VIII-ը, որի 33393 հայ բնակիչներից փախել էին 11100 հոգին, ուղիղ $^1/_3$ մասը կամ 33,24%-ը։ Իսկ յարաբերաբար վերցրած՝ փախստականների ամենամեծ տոկոս տուել է X քաղաքամասը՝ 52,35%, այնուհետև Բալախանին՝ 46,12%, VI քաղաքամասը՝ 41,32%։ Փախստականների ամենափոքր տոկոս տուել են՝ II և III քաղաքամասերը 26,98% և 23,22%։ Ամենահայաշատ թաղամասերը՝ VI, VII, VIII և IX, միասին վերցրած, տուել են 26265 հոգուց բաղկացած մի գաղթականութիւն, որ ոչ պակաս, քան 83,93% են կազմում Բագուից պոկուած բոլոր հայ փախստականների ընդհանուր թուի մէջ։ Ընդհակառակը, նոյն չորս թաղամասերում էվակուացիայից յետոյ մնացած հայ ազգաբնակութիւնը իր թւով հաւասար էր 50029 հոգու, որը, իր հերթին, կազմում է 87,18% քաղաքում մնացած ամբողջ հայ ազգաբնակութեան մէջ։ Քաղաքում մնացած (այսինքն չփախած) հայերի ամենամեծ տոկոսը տալիս է III թաղամասը՝ 76,78%-ով,

---

[1]) Ինչպէս ներածութեան մէջ ասացինք, դա հայ փախստականների ամբողջ թիւը չէ։ Դրանց մէջ բացակայում են ոչ միայն նրանք, որոնք դեռ չեն վերադարձել, այլև այն ամուրի ֆրոնտովիկները, որոնք փախստավայրից կամ ուրիշ ուղղութեամբ և կամ Բագուի վրայով մեկնել են իրենց հայրենիքը և անհնար է եղել նրանց ցուցակագրելը։

որտեղից փախչողների թիւը եղել է ամենափոքր տոկոսը՝ 23,22%-ով։ Ընդհակառակը, մնացած հայերի ամենափոքր և փախածների ամենամեծ տոկոս տալիս է X թաղամասը. առաջինը՝ 47,65%, երկրորդը՝ 52,35%։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս է դասաւորուած փախստականների թիւը ըստ փողոցների։

D. ԱՂԻԽՍԱԿ

Փախստականների թիւը ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Փախածներ	Մնացածներ
1	Ազիատսկի փողոց	375	128	247
2	Արմեանսկի »	52	14	38
3	Բեյվիւ հրապարակ . . .	140	77	63
4	Բալախանսկի փող. և շօսսէ	4630	1844	2786
5	Բաիլովսկի փողոց I-ին . .	720	261	459
6	» » II . . .	110	39	71
7	» » III . .	948	329	619
8	Բարեատինսկի փողոց . .	111	38	73
9	Բիրժևոյ » . .	2259	721	1538
10	Բոնդարնի » . .	1153	429	724
11	Բուդագովսկի » . .	1029	386	643
12	Բոլշոյ-Մորսկոյ » . .	2807	1082	1725
13	Գորչակովսկի » . .	152	38	114
14	Գիմնազիչեսկի » . .	1017	476	541
15	Գօգոլևսկի » . .	229	59	170
16	Գուբերնսկի » . .	164	78	86
17	Եարմորոչնի » . .	232	88	144
18	Ջավոկզալնի փողոց I-ին .	216	81	135
19	» » II . . .	2821	694	2127
20	» » III . .	122	21	101
21	» » IV . .	1430	443	987
22	» » V . .	413	172	241
23	» » VI . .	622	227	395
24	» » VII .	79	17	62
25	» » VIII .	416	139	277
26	» » IX . .	109	29	80
27	Լենցովսկի միջափողոց . .	77	23	54

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Փախածներ	Մնացածներ
28	Կանիտապինսկի փողոց I-ին	3023	973	2050
29	» » II .	1356	420	936
30	» » III .	1802	784	1018
31	» » IV .	3462	1052	2410
32	» » V .	2535	1023	1512
33	» » VI .	1364	433	931
34	» » VII	1005	417	588
35	» » VIII	894	244	650
36	» » IX .	765	306	459
37	» » X .	628	286	342
38	» » XI .	168	17	151
39	Կարանտինի փողոց . . .	315	104	211
40	Կոլիւբակինսկի փողոց . .	85	35	50
41	Կրասնովոդսկի » . .	456	184	272
42	Կամոնիստի » . .	279	90	189
43	Կիրպիչնի » . .	11	3	8
44	Մերկուրևսկի » . .	525	177	348
45	Մարինսկի » . .	315	109	206
46	Միխայլովսկի » . .	31	6	25
47	Միլլիօնի » . .	1081	430	651
48	Մագազինի » . .	744	364	380
49	Մոլոկանսկի » . .	1575	626	949
50	Մալօ-Մորսկայա » . .	1082	444	638
51	Նաբերեժնի » . .	20	5	15
52	Նիկոլաևսկի » . .	87	27	60
53	Նիժնէ Պրիուտսկի փողոց .	2352	468	1884
54	Զադրովի » .	508	158	359
55	Գորոխովոյ :	3292	855	2437
56	Գարոյեննի » III	23	—	23
57	Պերսիդսկի » .	34	2	32
58	Ռեմեսլեննի » .	2176	869	1307
59	Սադովոյ » .	11	—	11
60	Ստարո-Պոչտովի » .	1	1	—
61	Ստարո-Պոլիցեյսկի » .	152	20	132
62	Սլաբոդսկոյ փողոց I . . .	2199	726	1473
63	» » II . .	2499	843	1656
64	» » III . .	1047	491	556

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Փախածների	Մնացածներ
65	Սուրախանսկի փողոց . .	758	179	579
66	Ստանիսլաւսկի » . .	4988	1842	3146
67	Վողովոգնի » . .	32	10	22
68	Վոկզալնի » . .	580	225	355
69	Վրանգելսկի » . .	88	13	75
70	Վորոնցովսկի » . .	59	7	52
71	Վերխնէ-Պրիւտսկի փողոց	3876	802	3074
72	Տելեֆոննի »	4275	1612	2663
73	Տորգովի »	4196	1442	2754
74	Տրամվայնի »	25	7	18
75	Տատեանինսկի »	538	248	290
76	Տատարսկի »	70	37	33
77	Ցիցիանովսկի »	26	—	26
78	Ցերկովնի »	208	91	117
79	Օլգինսկի »	60	19	41
80	Ֆարբիչնայա »	31	24	7
81	Խառը փողոցներ . . .	509	121	388
	Արուարձաններ			
1	Բալախանի	1535	708	827
2	Բիբի-Հէյբաթ	446	256	190
3	Հայկաւան	3193	1302	1891
4	Հայոց-Քեշլի	836	366	470
5	Սև-Քաղաք	1503	675	828
6	Սպիտակ-Քաղաք . . .	516	382	134
	Ընդամենը .	**88673**	**31293**	**57380**

D աղիւսակը տալիս է մեզ C աղիւսակի թուական պատկերը աւելի մանրամասնօրէն և շօշափելի կերպով: Որքան է եղել սեպտեմբերի 14-ի գիշերը՝ էվակուացիայի շտապ ու ահաբեկուած ժամերին՝ Բագուի ամեն մի փողոցից փախած հայ բնակիչների թիւը: 81 փողոցներից և 6 արուարձաններից հաւաքած և այբուբենական շարքով դասաւորած մեր փաստական

տեղեկութիւնները տալիս են հայ լեղապատառ փախստականների թուական պատկերը։

Բացարձակ յարաբերութեամբ վերցրած՝ ամենամեծ թիւը փախստականների տուել են, բնականօրէն, ամենահայաշատ փողոցները։ Ստանիսլաւսկի փող. 4988 հայ բնակիչներից փախել են 1842 հոգի կամ 36,92$^0/_0$-ը. Բալախանսկայա փող. և շօսսէի 4630 բնակիչներից, ընդհակառակը, փախել են 1844 հոգի կամ 39,73$^0/_0$, թէ բացարձակ և թէ մանաւանդ յարաբերաբար աւելի, քան Ստանիսլաւսկի փողոցից են փախել։

Եթէ թուենք իրար յետեւից հայկական թաղերից մի քանի հայաշատ փողոցների հայ փախած և մնացած բնակիչների տոկոսները, կստանանք հետեւեալը.

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Փախածների տոկոսը	Մնացածների տոկոսը
1	Ստանիսլաւսկայա փողոց . .	36,92	63,08
2	Բալախանսկայա փողոց և շօսսէ	39,83	60,17
3	Տելեֆոննի փողոց	37,71	62,29
4	Տորգովի »	34,36	65,64
5	Վերխնէ-Պրիուտսկի փողոց . .	20,70	79,30
6	Նիժնէ-Պրիուտսկի » . .	20,00	80,00
7	I Կանիտապինսկի » . .	32,18	67,82
8	IV Կանիտապինսկի » . .	30,38	69,62
9	Հայկաւան	40,77	59,23
10	II Զավոկզալնի փողոց . . .	24,60	75,40
11	IV Զավոկզալնի » . . .	30,28	69,72
12	I Սլոբոդսկի » . . .	33,01	66,99
13	II Սլոբոդսկի » . . .	33,73	66,27

Այս փողոցները թուով 13 (դրանցից մէկը Հայկաւանը), հայկական թաղամասերի ամենահայաշատ փողոցներն են, որտեղից եղած հայ բնակչութեան էվակուացիան կամ տեղի ունեցած փախուստը իր թուական չափերով պարզ արտայայտւում է վերոյիշեալ տոկոսներով։ Փախստականների ամենանուազ տոկոսը իջնում է մինչև 20,00$^0/_0$ (Վերխնէ-Պրիուտսկի փող.), ուր մնացած հայ բնակչութեան թիւը, ընդհակառակը, ամենամեծ տոկոսն է կազմում։ Փախստականների ամենաբարձր տոկոսը հասնում է 40,77$^0/_0$-ի (Հայկաւանում)։ Եւ դա շատ բնական է։ Հայկաւանը ռազմաճակատի աջ թեւի ամենից մօտ ընկած և հետեւապէս ամենից շատ վտանգուած վայրն էր, որտեղից գրեթէ ամբողջ ազգաբնակութիւնը պոկուել էր և քա-

ղաք Թափուել․ բացի 40,77$^0/_0$-ի հասնող փախստականներից, Հայկաւանի մնացած հայ բնակչութիւնը թողել էր իր տուն ու տեղը և տեղաւորուել քաղաքի զանազան մասերում։

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ միևնոյն շրջանում (րայոնում) գտնուող փողոցների հայ բնակիչները մօտաւորապէս կամ ոչ մեծ տարբերութեամբ միևնոյն տոկոսն են ունեցել փախստականների։ Համեմատեցէք Վերինէ-Պրիւտսկի և Նիժնէ-Պրիւտսկի փողոցների փախստականների տոկոսները (20,70$^0/_0$ և 20,00$^0/_0$) կամ երկու Կանիտապինսկի փող. փախստականների տոկոսները (32,18$^0/_0$ և 30,38$^0/_0$) և կամ երկու Սլոբոդսկի փող. փախստականների տոկ. (33,01$^0/_0$ և 33,73$^0/_0$)։ Վերջապէս Ստանիսլաւսկի և Տելեֆոննի փողոց. փախստակ. տոկ. (36,92$^0/_0$ և 37,71$^0/_0$)։

Այդ փաստը բացատրւում է, կարծում ենք, նրանով, որ նայած որ րայոնում ինչ չափով և եղանակով է արտայայտուել պանիկան և որքան իրազեկ են եղել բնակիչները քաղաքի անկման և ազգաբնակութեան էվակուացիայի մասին։

Մենք գիտենք արդէն, որ հայ փախստականների ընդհանուր թիւը կազմում է քաղաքի ողջ հայ ազգաբնակութեան 35,29$^0/_0$, մինչդեռ վերոյիշեալ 13 ամենահայաշատ փողոցներից փախածների միջին տոկոսը նոյն փողոցների հայ բնակիչների ընդհանուր թուից հաւասար է 32,70$^0/_0$-ի։ Դա ցոյց է տալիս, որ քաղաքի միւս մասերից՝ խառը կամ առաւելապէս թուրքական ազգաբնակութիւն ունեցող փողոցներից. յարաբերաբար աւելի շատ հայ բնակիչներ են փախել, քան զուտ հայկական մասերից։ Հետևեալ փողոցների և արուարձանների տոկոսական տուեալները հաստատում են մեր ասածը։

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Փախածների տոկոսը	Մնացածների տոկոսը
1	Մոլոկանսկի փողոց	40,00	60,00
2	Կրասնովոդսկի "	40,35	59,65
3	Ցերկովնի "	43,75	56,25
4	Տատեանինսկի "	46,10	53,90
5	Գիմնազիչեսկի "	46,80	53,20
6	Գուբերնսկի "	47,56	52,44
7	Մագազիննի "	48,92	51,08
8	Տատարսկի "	52,85	47,15
9	Բելվիւ հրապարակ	55,00	45,00
10	Հայոց Քիշլի	43,78	56,22
11	Սև-Քաղաք	44,85	55,15
12	Բալախանի	46,12	53,88
13	Բիբի-Հէյբաթ	57,40	42,60
14	Սպիտակ-Քաղաք	74,03	25,97

Ինչպէս տեսնում ենք, այս աղիւսակում բոլորովին ուրիշ տոկոսներ ենք ստանում։ Այստեղ ամենանուազ տոկոսը (40% Մոլոկանսկի փող.) հաւասար է նախընթաց աղիւսակի ամենաբարձր տոկոսին (40,7 % Հայկաւանում)․ իսկ այս աղիւսակի ամենաբարձր տոկոսը հասնում է 74,03% (Սպիտակ-Բաղ.)։ Չորս վայրերի փախստականների թիւը անցնում է տեղական ազգաբնակութեան կէսից։ Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ առհասարակ ստորաբաժանները տուել են փախստականների շատ բարձր տոկոսներ։ Այնտեղ, ուր հայ բնակիչները եղել են մեկուսացած, հայաշատ թաղերից հեռու և անվստահելի օտարներով շրջապատուած, այնտեղ հայ բնակչութիւնը տուել է, բնականօրէն, ամենամեծ գաղթականութիւնը։

III ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

(Սպանուածների թիւը)

Բագուի անկման ամենաողբերգական էջը կազմում են այն զոհերը, որ տուել է հայ ազգաբնակութիւնը։ Այդ զոհերի առաջին կաթեգորիան արտայայտուեց հայկական կոտորածով [1]*։ Եւ երկրորդ փոփոխութիւնը, որ տեղի ունեցաւ Բագուի հայ ազգաբնակութեան հետ էվակուացիայից յետոյ, դա կոտորածի միջոցով էր։*

Այստեղ մենք պիտի պարզենք երկու կարգի թուական յարաբերութիւններ։ Բանը նրանումն է, որ սեպտեմբերեան հայկական կոտորածով անմիջապէս նուազել է հայ բնակչութեան այն թուական քանակը, որ մնացել էր Բագւում էվակուացիայից յետոյ։

Ուրեմն կարևոր է մեզ իմանալ սպանուածների թուի տոկոսական յարաբերութիւնները ոչ միայն ամբողջ հայ ազգաբնակութեան թուի նկատմամբ, ինչպէս սա եղել է քաղաքի անկումից (կամ էվակուացիայից) առաջ, այլև հայ բնակչութեան այն թուի վերաբերմամբ, որ մնացել էր քաղաքում էվակուացիայից կամ գաղթից յետոյ։

Թուական այդ երկկարգի յարաբերութիւնների յստակ պատկերն է տալիս հետևեալ աղիւսակը։

---

[1]) Մեր թեմայի սահմաններից դուրս է մանրամասնօրէն նկարագրել այստեղ երեք օր ու գիշեր տեւող կոտորածների արտաքին պատկերը։ Մեր խնդիրն է փաստական տուեալների հիման վրայ ցոյց տալ թուական գործողութիւններով և լուսաբանութիւններով, թէ ինչ չափերի են հասել հայ ժողովրդի տուած զոհերը նրա կացութեան ամենաողբերգական ժամանակին։

Ե. ԱՂԻՒՍԱԿ

Հայ սպանուածների թիւը (Սեպտեմբերի 15—17-ին) ըստ թաղամասերի

Թաղամասեր	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	III Սպանուածների թիւը	IV Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	V Սպանուածների տոկոսը բոլոր հայ բնակիչների թւի մինչև կոտորածը	VI Սպանուածների տոկոսը մնացած հայ բնակիչների թւի էվակուացիայից յետոյ
I թաղամ.	2224	1339	96	1243	4,31	7,16
II »	152	111	15	96	9,86	13,51
III »	323	248	36	212	11,14	14,51
IV »	395	242	99	143	25,06	41,32
V »	5122	3234	150	3084	2,92	4,63
VI »	7219	4236	467	3769	6,46	11,02
VII »	16670	10736	808	9928	4,84	7,52
VIII »	33393	22293	1990	20323	5,89	8,83
IX »	19112	12764	741	12023	3,87	5,80
X »	2019	962	496	466	24,57	51,55
Բալախանի	1535	827	166	661	10,81	20,07
Խառը փողոց	509	388	204	184	40,07	52,57
Ընդամենը	88673	57380	5248	52132	5.90	9,14

Այս աղիւսակը կարիք ունի մի շարք բացատրութիւնների։ Այս աղիւսակի մէջ բերուած է հայ բնակիչների թուերը երեք դրութեան մէջ. 1-ին շարքում բերուած է թաղամասերով հայ բնակիչների թիւը իր սկզբնական մեծութեան մէջ. 2-րդ շարքում հայերի թիւը՝ գաղթից կամ էվակուացիայից յետոյ. 3-րդ շարքում բերուած է Սեպտեմբերի 15—17-ին տեղի ունեցած սպանութեան դէպքերի քանակը. 4-րդ շարքում արդէն դասաւորուած է հայ բնակչութեան թիւը կոտորածից յետոյ, այնքան, որքան մնացել է երեք օրուայ սրածութիւնից յետոյ։ 5-րդ և 6-րդ շարքերում արդէն դասաւորուած են սպանուածների տոկոսները հայ ազգաբնակութիւնից՝ քաղաքի անկումից կամ հայկ. կոտորածից առաջ և էվակուացիայից յետոյ։

Սպանուածների ամենամեծ թիւը, բացարձակ իմաստով վերցրած,

բնականաբար տուել են հայկական թաղամասերը. VIII-րդ թաղամասում սպանուած հայերի թիւը հասնում է 1970 հոգու, որը կազմում է ոչ պակաս քան 5,89$^0/_0$ հայ բնակիչների ամբողջ թուի մինչև քաղաքի անկումը և 8,83$^0/_0$ —էվակուացիայից յետոյ մնացած բնակչութեան թուի։ Միւս երկու հայաշատ թաղամասերը՝ VII և մանաւանդ IX-ը, թէ բացարձակօրէն և թէ յարաբերաբար աւելի քիչ զոհեր են տուել. VII թաղ. 808 սպանուածներ կամ 4,84$^0/_0$ և 7,52$^0/_0$, իսկ IX թաղ.—741 սպան. կամ 3,87$^0/_0$ և 5,80$^0/_0$։ Բացարձակ թւով վերցրած ամենասակաւաթիւ զոհեր տուել են՝ II թաղ.—15 հոգի, III թաղ.—36 հոգ., I թաղ.—96 հ., վերջապէս IV թաղ.—99 հ.։ Դրանք հայ ազգաբնակութեամբ ամենանօսրաբնակ թաղամասերն են։ Յարաբերական թուերով վերցրած, ընդհակառակը, ամենամեծ տոկոսները տալիս են խառն փողոցները՝ 40,07$^0/_0$ (էվակուացիայից յետոյ 52,57$^0/_0$). այնուհետև յաջորդում են IV թաղ.—25,06$^0/_0$ (էվակուացիայից յետոյ 41,32$^0/_0$), X թաղ.—24,57$^0/_0$ (51,55$^0/_0$), Բալախանին—10,81$^0/_0$ (20,07$^0/_0$) և III թաղ.—11,14$^0/_0$ (14,51$^0/_0$)։ Մնացած թաղամասերում տոկոսները իջնում են տասից։ Մենք յաջորդ աղիւսակում կտեսնենք, թէ առանձնապէս որ փողոցներն են տուժել մարդկային զոհերով։

Վերոյիշեալ աղիւսակի ընդհանուր գումարները ստացուել են այսպէս. ըստ անկետային տուեալների հայ բնակիչների թիւը մինչև քաղաքի անկումը եղել է 88673 հոգի, էվակուացիայից յետոյ մնացել են 57380 հոգի կամ նուազել են 35,30$^0/_0$-ով, սպանուածների թիւը հաւասար է 5248 հոգու, որ կազմում է, միջին թւով, 5,90 ամբողջ հայ ազգաբնակութեան (մինչև քաղաքի անկումը) և 9,14$^0/_0$ էվակուացիայից յետոյ քաղաքում մնացած հայ բնակիչների թուի։ Կոտորածից յետոյ Բագու քաղաքում մնում են 52132 հոգի հայեր (այստեղ դեռ չենք յիշում մարդկային զոհերի միւս կաթեգորիաների մասին, որոնք աւելի են նուազեցրել հայերի թիւը. դրանց մասին կխօսենք առանձին-առանձին)։

Սպանուած հայերի թիւը, ըստ մեր ռեգիստրացիայի, հասնում է 5248 հոգու, ինչպէս երևում է վերոյիշեալ աղիւսակից։ Սակայն դրանք բոլորը չեն։ Դրանք միայն անուններով, ըստ սեռի և հասակի ցուցակագրուած զոհերն են։ Դրանց վրայ պիտի աւելացնել նաև այն զոհերը, որ տուել են Շամախու և Գեօկչայի Բագւում ապաստանած գաղթականները, որոնցից քաղաքում մնացած մասը (էվակուացիայից յետոյ) յետ են ուղարկուել իրանց հայրենիքը դեռ տաճիկների Բագւում եղած ժամանակ։ Ահա այդ նոյն գաղթականների շարքերից սպանուածների թիւը հասնում է առնուազը 1500 հոգու։ Վերոյիշեալ թուի հետ միասին ստանում ենք 6748 հոգի սպանուածներ։

Բայց դրանով հաշիւը դեռ չի փակւում։ Բագւում եղել են այնպիսի հայ բնակիչներ, մանաւանդ զինուորներից (գլխաւորապէս հեռաւոր ռազմաճակատներից եկած և Բագւում կենտրոնացած ֆրոնտովիկներից) և բանւորներից, որոնք ամուրիներ են կամ չունեին այստեղ հարազատներ։ Այդպիսիների թիւը հազարների է հասնում։ Միանգամայն բնական է, որ այդպիսիների սպանութեան մասին,—մանաւանդ եթէ սպանութեան դէպքը տեղի է ունեցել փողոցներում կամ քաղաքի շրջակայքում, արուարձաններում (նաւթաշրջաններում),—ոչ ոք չէր կարող տեղեկութիւններ տալ

մեր ցուցակագրութեան ժամանակ։ Անյայտ կամ մեր ցուցակագրութիւնից դուրս մնացած սպանուածների թիւը հաշւում ենք մենք ոչ պակաս քան 25%, ասել է մօտ 2240 հոգի։ Այսպիսով բոլոր սպանուածների ընդհանուր թիւը (6748+2240) հասնում է 8988 հոգու կամ շուրջ ինն հազարի։ Սպանուածների այդ պատկառելի թիւը արդէն ուրիշ տոկոս է կազմում հայ բնակիչների ամբողջութեան հանդէպ։ 8988 սպանուածները կազմում են հայ բնակիչների ընդհանուր թուի—քաղաքի անկումից կամ էվակուացիայից առաջ—10,14%, իսկ էվակուացիայից յետոյ մնացած բնակչութեան 15,68%։

Նախ քան սպանուածների մասին այլ լրացուցիչ բացատրութիւններ տալը, մենք բերենք ստորև սպանուած հայերի թուական դասաւորութիւնը ըստ փողոցների։

F. ԱՂԻՒՍԱԿ

Հայ սպանուածների թիւը (Սեպտեմբերի 15—17-ին) ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Սպանուածներ	Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ
1	Աղիստակի փողոց . . .	375	247	9	238
2	Արմենանկի » . . .	52	38	18	20
3	Բելվիւ հրապարակ	140	63	—	63
4	Բալախանսկի փողոց և շոսսէ .	4630	2786	210	2576
5	Բախիլովսկի փողոց I-ին . ,	720	459	20	439
6	» » II . . .	110	71	17	54
7	» » III . . .	948	619	10	609
8	Բարեատինսկի փողոց . . .	111	73	3	70
9	Բիրժևոյ » . . .	2259	1538	78	1460
10	Բոնդարնի » . . .	1153	724	81	643
11	Բուդապովսկի » . . .	1029	643	216	427
12	Բոլշոյ-Մորսկոյ » . . .	2807	1725	126	1599
13	Գորչակովսկի » . . .	152	114		114
14	Գիմնազիչեսկի » . . .	1017	541	41	500
15	Գոգոլևսկի » . . .	229	170	29	141
16	Գուբերնսկի » . . .	164	86	10	76
17	Եարմորոչնի » . . .	232	144	14	130
18	Զավոկզալնի փողոց I-ին . .	216	135	Ընդամենը 276	Ընդամենը 4129
19	» » II . . .	2821	2127		
20	» » III . .	122	101		
21	» » IV . .	1430	987		
22	» » V . . .	413	241		
23	» » VI . .	622	395		
24	» » VII . .	79	62		
25	» » VIII . .	416	277		

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Հայ բնակիչների թիւը մինչև պատերազմը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Սպանուածներ	Հայ բնակիչների թիւը ներկայումս
26	Զավոկզալնի փողոց IX . . .	109	80	—	—
27	Լենցովսկի միջափողոց . . .	77	54	4	50
28	Կանիտապինսկի փող. I-ին	3023	2050	267	1783
29	» » II .	1356	936	78	858
30	» » III .	1802	1018	114	904
31	» » IV .	3462	2410	190	2220
32	» » V .	2535	1512	103	1409
33	» » VI .	1464	931	58	873
34	» » VII .	1005	588	72	516
35	» » VIII .	894	650	23	627
36	» » IX .	765	459	6	453
37	» » X .	628	342	18	324
38	» » XI .	168	151	64	87
39	Կամենիստի փողոց	279	189	26	163
40	Կոլիւբակինսկի »	85	50	8	42
41	Կրասնովոդսկի »	456	272	38	234
42	Կարանտիննի »	315	211	23	188
43	Կիրպիչնի »	11	8	—	8
44	Մերկուրևսկի »	525	346	7	339
45	Մարիինսկի »	315	206	36	170
46	Միխայլովսկի »	31	25	—	25
47	Միլլիոննի »	1081	615	26	625
48	Մագազիննի »	744	380	38	342
49	Մոլոկանսկի »	1575	949	49	900
50	Մալօ-Մորսկոյ »	1082	638	18	620
51	Նաբերեժնի »	20	15	5	10
52	Նիկոլաևսկի »	87	60	4	56
53	Նիժնէ-Պրիստանսկի փողոց . .	2352	1884	108	1776
54	Զադրովի » . .	508	350	153	197
55	Գորոխովոյ » . .	3292	2437	231	2206
56	Պարալելնի » III .	23	23	2	21
57	Պերսիդսկի » . .	34	32	—	32
58	Բեժեմեննի » . .	2176	1307	98	1209
59	Սադովի » . .	11	11	—	11
60	Ստարօ-Պոչտովի » . .	1	—	—	—
61	Ստարօ-Պոլիցէյսկի » . .	152	132	—	132
62	Սլոբոդսկոյ փողոց I-ին .	2199	1473	48	1425
63	» » II . .	2499	1656	127	1529
64	» » III . .	1047	556	61	495
65	Սուրախանսկի փողոց . . .	758	579	105	474
66	Ստանիսլավսկի » . . .	4988	3146	153	2993
67	Վոդովոդնի » . . .	32	22	-	22
68	Վոկզալնի » . . .	580	355	11	344
69	Վորոնցովսկի » . . .	59	52	4	48
70	Վրանգելևսկի » . . .	88	75	13	62

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Սպանուածներ	Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ
71	Վերխնէ-Պրիստակի փողոց .	3876	3074	136	2938
72	Տելեֆոննի » .	4275	2663	138	2525
73	Տորգովի » .	4196	2754	142	2612
74	Տրամվայնի » .	25	18	—	18
75	Տատեանինսկի » .	538	290	28	262
76	Տատարսկի » .	70	33	4	29
77	Ցիցիանովսկի » .	26	26	--	26
78	Ցերկովնի » .	208	117	17	100
79	Օլգինսկի » .	60	41	—	41
80	Ծարրիցինի » .	31	7	—	7
81	Խառը փողոցներ	509	388	204	184
	Արուարձաններ				
1	Բալախանի.	1535	827	166	661
2	Բիբի-Հէյբաթ	446	190	49	141
3	Հայկաւան	3193	1891	291	1600
4	Հայոց-Քիշլի	836	470	30	440
5	Սև-Քաղաք	1503	828	318	510
6	Սպիտակ-Քաղաք	516	134	178	204
	Ընդամենը	88673	57380	5248	52132

Այստեղ ևս՝ F աղիւսակում, 81 փողոցների և 6 արուարձանների ցուցակագրած տուեալներով, ստանում ենք սպանուածների նոյն թիւը՝ անուններով սեռով ու տարիքով մեզ յայտնի 5248 հոգին։

Առանձին յիշատակութեան արժանի են այստեղ այն փողոցները, որոնք համեմատաբար ամենամեծ թւով զոհեր են տուել։ Սպանուածների քացարձակ թուերով վերցրած, հետևեալ փողոցները (կամ վայրերը) տուել են ամենաշատ զոհերը.

№№	Փողոցներ կամ վայրեր	Բնակիչների թիւը	Սպանուածների թիւը	Սպանուածների տոկոսը
1	Սև-Քաղաք	1,503	318	21,15
2	Հայկաւան	3,193	291	9,11
3	Զավոկզալնի շրջան	4,219	276	6,70

№№	Փողոցներ կամ վայրեր	Բնակիչների թիւը	Սպանուածների թիւը	Սպանուածների տոկոսը
4	I Կանիտապլինսկի փողոց . .	3023	267	8,83
5	Գորոխովայա » . .	3292	231	7,02
6	Բուդագովսկայա » . .	1029	216	21,00
7	Բալախանսկայա փող. և շոսսէ	4630	210	4,53
8	Խառը փողոցներ	509	204	40,00
9	IV Կանիտապլինսկայա փողոց	3460	190	5,50
10	Սպիտակ-Քաղաք	516	178	34,50
11	Բալախանի.	1535	166	10,81
12	Ստանիսլաւսկայա	4988	153	3,07
13	Ջաղրովայա	508	¹53	30,10
	Ընդամենը	32315	2853	8,83

Մնացած փողոցներում սպանուած հայերի թիւը շարունակ իջնում է մինչև վերջ, մինչև չնչին մինիմում։

Վերոյիշեալ թուերը ուշագրաւ են մի քանի կողմերից։ Նախ պէտք է շեշտել, որ սպանութեան դէպքերի մաքսիմում թիւը հասնում է 318 հոգու (Սև-Քաղաքում)։ Սև-Քաղաքը այն վայրերից մէկն է, ուր զոհերի թիւը շատ աւելի է եղել, քան ցուցակագրուած է մեզ մօտ։ Թէ ընդհանուր բնակիչների և թէ սպանուածների թիւը ցուցակագրուածից անհամեմատ աւելի է եղել. տեղի հեռաւորութիւնը և գլխաւորապէս անապահովութիւնը հնարաւորութիւն չեն տուել մեր աշխատակիցներին աւելի մանրամասն ցուցակագրելու թէ բնակիչների և թէ մարդկային զոհերի թիւը։ Ճիշտ նոյն բացատրութիւնները վերաբերում են նաև Սպիտակ-Քաղաքին, Բալախանուն և Հայկաւանին։ Յարաբերաբար վերցրած, սպանուածների ամենամեծ տոկոս տալիս են Խառը փողոցները՝ 40%-ով, Սպիտակ-Քաղաքը՝ 34,50%-ով, Ջաղրովայա փողոցը 30,10%-ով, Սև-Քաղաքը՝ 21,15%-ով, Բուդագովսկի փող. 21%-ով, Բալախանին՝ 10,81%-ով և այլն։ Միջին թւով վերցրած վերոյիշեալ 13 վայրերի սպանուածների տոկոսական յարաբերութիւնը արտայայտւում է 8,83%-ով։ Բնորոշ է այն հանգամանքը, որ այդ միջին թիւը աւելի բարձր է, քան բոլոր փողոցներում սպանուածների միջին թիւը՝ 5,90%, աւելի ցածր է, քան 13 փողոցների սպանուածների միջին տոկոսը (8,83%)։ Դա շատ բնական է, որովհետև 13 փողոցների սպանուածների թիւը—2853 հոգի—կազմում է կէսից աւելին կամ 54,40% քաղաքի բոլոր սպանուածների ընդհանուր թուի (ցուցակագրուածների), մինչդեռ նոյն 13 փողոցներում բնակւող հայերի ընդհանուր թիւը—32315 հոգի—կազմում է միայն 8644% քաղաքի ողջ հայութեան։

Վերոյիշեալ աղիւսակի մէջ աչքի է ընկնում և՛ մի ուրիշ հանգամանք։

Մի փողոցի հայ բնակչութեան բազմամարդութիւնը դեռ ապացոյց չէ, որ այդ փողոցում սպանուածների թիւը ևս համապատասխան չափերի պիտի հասնէր։ Այդ փաստը, ճիշտ է, որոշ չափով նկատւում է միայն փախըստականների թուական դասաւորութեան մէջ։ Մինչդեռ սպանուածների նըկատմամբ այլ յարաբերութիւններ ենք գտնում։ Բագուի ամենամեծ հայաշատ փողոցը՝ Ստանիսլաւսկին, օրինակ, իր 4988 հայ բնակիչներով տուել է միայն 153 հոգի սպանուածներ, այսինքն ճիշտ այնքան, որքան տուել է Զաղրովայա փող. իր 508 հայ բնակիչներով. առաջինի սպանուածների տոկոսը հասնում է $3,07^{0}/_{0}$-ի—ամենանուազ տոկոսը ամբողջ աղիւսակում (13 փող.),—իսկ երկրորդի տոկոսը հասնում է $30,10^{0}/_{0}$-ի, այսինքն աւելի քան տասն անգամ աւելի։ Նոյն անհամաչափութիւնը—բնակիչների ընդհանուր թուի և սպանուածների թուի—պարզ երևում է աղիւսակում թուած միւս փողոցների տուեալներից։

Հայերով նօսրաբնակ կամ երկրորդական մի շարք փողոցներ կան, որոնք համեմատաբար բարձր տոկոսներով զոհեր են տուել. այսպէս օրինակ՝ Արմեանսկի փող. սպանուածների տոկոսը հասել է $34,61^{0}/_{0}$-ի, 11-րդ Կանիտապինսկի փող.—$38,10^{0}/_{0}$-ի, 2-րդ Բայիլովսկի փող.—$15,45^{0}/_{0}$-ի, Մարիինսկի փող. $11,43^{0}/_{0}$-ի, Բիբի-Հէյբաթում—$11,00^{0}/_{0}$-ի, Կամենիստի փող.—$9,32^{0}/_{0}$ ի, Կրասնովոդսկի փող.—$8,33^{0}/_{0}$-ի, Կարանտիննի փող.—$7,30^{0}/_{0}$-ի, և այսպէս շարունակ։

Կոտորածների համար, իբրև երևոյթի, մի ընդհանուր կշռաչափ, մի բնորոշող գիծ կամ տենդենց գտնել դժուար է, որովհետև երևոյթը եղել է տարերային, բանդաների միջոցով կատարուած։ Չի կարելի ասել, որ յատկապէս հայաշատ փողոցները ամենից շատ են տուժել, երբ մենք օրինակներով տեսանք, որ կոտորածների բարձր տոկոսներ տուել են անխտիր և՛ հայախիտ, և՛ հայանօսր փողոցներ։ Նայած թէ ինչ բանդաներ են պտտել այս կամ այն փողոցը և ինչ մտադրութիւններ ու տրամադրութիւններ են ունեցել նրանք, ըստ այնմ էլ արտայայտուել է կոտորածների այս կամ այն չափը։ Եղել են բակեր, ուր սրի են անցուել խմբուած ահագին բազմութիւններ (օր. Զաղրովայա փողոց № 245, ուր սպանուել են 70-ից աւելի մարդիկ) և այնպիսի բակեր (Ստանիսլաւսկի, Տելեֆոննի, Բոնդարնի և այլ փող.ցներ), ուր մի քանի հարիւրի հասնող և նոյն իսկ դրսից ապաստան գտած մեծաթիւ հայ բնակիչների հետ չի պատահել սպանութեան ոչ մի դէպք։ Կրկնում ենք, նայած ինչ կազմ են ունեցել կողոպտող եւ կոտորող բանդաները և ինչ կողմ է գրաւել նրանց ուշադրութիւնը պոգրոմի րոպէներին, ըստ այնմ էլ այս կամ այն վիճակին են ենթարկուել թալանւող զոհերը։ Մեր աշխատակիցների տուած հարցերի բազմաթիւ պատասխաններից երևում է, որ այնտեղ, ուր առատ թալան է եղել կամ դրամական խոշոր տուգանք, մարդկային զոհեր կամ չեն եղել կամ սակաւ են պատահել։ Մանաւանդ այն բանդաները, որոնք ուղեկցել են տաճիկ ասկեարներին կամ բաղկացած են եղել առաւելապէս ասկեարներից, այնտեղ մեծագոյն մասով եղել են թալան, կողոպուտ, դրամական փրկանք։

Մեր այս դիտողութիւնները աւելի են ամրապնդւում, երբ ի նկատի ենք ունենում նաև այն փաստը, թէ ինչպիսի տարբեր վիճակի են ենթար-

կուել ոչ միայն ամբողջ թաղամասեր, փողոցներ և բակեր իրանց հայ բնակչութեամբ, այլև առանձին-առանձին հայ ընտանիքներ։ Եղել են ընտանիքներ, որոնք միայն թալանուել են, առանց մարդկային զոհ տալու։ Եղել են ընտանիքներ, որոնց միայն տան տղամարդն է սպանուել, իսկ կին ու երեխաներ փրկուել են։ Եղել են ընտանիքներ, որոնց արական սեռը՝ հասակաւոր թէ փոքրահասակ, սրի են անցրած ամբողջապէս, իսկ կանայք թէ օրիորդներ բռնաբարուել են անգթաբար (սրանց մասին աւելի մանրամասն յետոյ)։ Բայց պակաս չեն եղել նաև այնպիսի ընտանիքներ, որոնք կամ ամբողջապէս սրի են անցուել և կամ ընտանիքի անդամներից միայն մէկը կամ երկուսը փրկուել են հրաշքով։ Ստորև բերում ենք այդպիսի ընտանիքներից մի քանի համոզեցուցիչ օրինակներ, յիշելով փողոցի, տան համարը, ընտանիքի անդամների և սպանուածների թիւը[1])։

№№	Փողոցներ	Տան համարը	Ընտանիքի անդամների թիւը	Սպանուածների թիւը
1	Գոգոլի փողոց	—	7	7
2	4-րդ Կանիտապլինսկի փող.	5	5	5
3	7 րդ " " .	37	4	4
4	" " " .	45	5	5
5	Ստանիսլաւսկի " .	55	5	5
6	Նիժնէ Պրիւտսկի " .	146	8	7
7	11-րդ Կանիտապլինսկի " .	55	10	9
8	" " " .	"	7	6
9	" " " .	"	6	5
10	" " " .	"	5	4
11	Բուդագովսկի " .	72	6	5
12	Տելեֆոննի " .	64	7	6
13	Նիժնէ-Պրիւտսկի " .	179	8	6
14	" " " .	174	9	6
15	4-րդ Զավոկզալնի " .	22	10	8
16	4 րդ Կանիտապլինսկի " .	23	8	6
17	7 րդ " " .	50	8	6
18	3-րդ Զավոկզալնի " .	14	6	4
	Ընդամենը		124	104

[1]) Այդ բոլոր ընտանիքների ազգանունները և նրանց զոհերի անունները ցուցակագրուած են և պահւում են մեզ մօտ։

Այս 18 օրինակն էլ բաւական է—մենք կարող էինք 18 անգամ 18 օրինակներ բերել—ցոյց տալու համար, թէ ինչպիսի զարհուրելի սրածութեան են ենթարկուել բազմաթիւ հայ ընտանիքներ՝ ոչնչացուելով կամ ամբողջապէս և կամ ընտանիքների անդամների բացարձակ մեծամասնութիւնը։ 18 ընտանիքները ունեցել են 124 անդամներ, ասել է միջին թւով իւրաքանչիւր ընտանիք ունեցել է 6,8 անդամներ։ 18 ընտանիքները զոհ են տուել 104 հոգի, իւրաքանչիւր ընտանիքին գալիս է մօտ 5,8 հոգի։ Իսկ 104 սպանուածների տոկոսը 124 ընտանիքի անդամներից՝ հսկայական է. դա հաւասար է 83,87%-ի։ Վերև թուածս օրինակներից ամենից շատ տուժել է, ինչպէս պարզ երևում է, 2-րդ Կանիտապինսկի փողոցի № 55 տունը, ուր բնակւող ընտանիքները և սրանց տուած զոհերը աւելի շատ են, քան թուել ենք մեր օրինակներում։ Այդ տանը ապրում էին 9 հայ ընտանիքներ, որոնց անդամների ընդհանուր թիւը հասնում էր 51 հոգու (իւրաք. ընտ. միջին թւով 5,7 հոգի)։ Բոլոր ընտանիքները անխտիր զոհեր են տուել, որոնց ընդհ. թիւը հասնում է 42 հոգու (իւրաք. ընտ. միջին թւով 4,7 հոգի)։ Մի դժբաղդ զուգադիպութեամբ ամեն մի ընտանիքից փրկուել է միայն մի հոգի։

Բայց կան նաև փողոցներ—մի քանի բաղդաւոր բացառութիւններ—ուր սպանութեան դէպք չի եղել, ուր, այսպէս ասած՝ անզէն ժողովրդի անմեղ արիւն չի թափուել։ Այդ փողոցներն են՝ Բեյվիւ հրապարակ, Գորչակովսկի, Կիրպիչնի, Միխայլովսկի[1]), Պերսիդսկի, Սադովի, Ստարո-Պոչտովի, Ստարո-Պոլիցէյսկի, Վոդովոզնի, Տրամվայնի, Ցիցիանովսկի, Օլգինսկի և Ֆաբրիչնի փողոցները։ Հայաբնակութեան տեսակէտից միանգամայն երկրորդական նշանակութիւն ունին այդ 13 փողոցները, ուր մինչև քաղաքի անկումը բնակւում էին 706 հոգի հայեր, որոնցից էվակուացիայից յետոյ մնացել էին ընդամենը 499 հոգի (207 հոգի փախել էին)։ Նրանց «փրկուելը» պիտի բացատրել նրանով, որ այդ փողոցները իբրև գերառաւելապէս ոչ հայաբնակ շրջաններ կամ չեն ենթարկուել խիստ չափերով բանդաների արշաւանքին և կամ այնտեղ ապրող հայերը ապաստան են գտել հարևանների (ռուսների, հրէաների և եւրոպացիների մօտ) և այդպիսով ազատուել։ Իրաւ, պէտք է վերյիշել այն անուրանալի փաստը, որ ինչպէս այդ, այնպէս էլ ուրիշ շատ փողոցներում հազարաւոր հայեր են փրկուել սրածութիւնից շնորհիւ հարևանների կարեկից և բարեացակամ վերաբերմունքի։

Այժմ անցնենք կոտորածների փաստի մի այլ կողմի լուսաբանութեան։

Կասկած չկայ, որ կոտորածի ժամանակ ամենամեծ չափով զոհեր տուել է արական սեռը։ Մեզ, ինչպէս յիշել ենք իր տեղում, անուն-ազգանուններով յայտնի են երկու սեռի տուած զոհերի թուերը. ուստի հետաքրքրական է իմանալ նրանց տոկոսական մասնակցութեան չափը ըստ թաղամասերի։

---

[1]) Մենք չենք մոռանում, որ Միքայէլեան փողոցում, իր սեփական բնակարանում, հիւանդ պառկած, սպանուել է դժբաղդ բժիշկ Աղամիրզայեանը։ Բայց մեր անկետային հարցի ու փորձի ժամանակ այդ բնակարանում այլևս ոչ ոք չկար նրա հարազատներից և բժշկի սպանութեան փաստը հաղորդուել է մեզ ուրիշ փողոցի տուեալների մէջ։

Սպանուած կին եւ տղամարդ սեռի տոկոսները

Թաղամասեր	Արական սեռի տոկոսը	Իգական սեռի տոկոսը
I Թաղամաս	68,33	31,67
II "	63,64	36,36
III "	73,08	26,92
IV "	66,67	33,33
V "	65,89	34,11
VI "	61,65	38,35
VII "	71,45	28,55
VIII "	72,26	27,74
IX "	70,04	29,96
X "	76,77	23,23
Բալախանի .	92,48	7,52
Խառը փողոց.	78,14	21,86
Ընդամենը	**71,71**	**28,29**

Արական սեռից սպանուածների տոկոսը, միջին թւով վերցրած, հասնում է 71,71$^0/_0$-ի, իսկ իգական սեռինը՝ 28.29$^0/_0$-ի։ Բնականաբար, թէ դուրսը՝ փողոցներում և թէ բնակարաններում տղամարդիկ են սրի ու հրի զոհ գնացել. մարդասպան բանդաները իրանց զոհերը առաջին հերթին որոնել են տղամարդկանց շարքերում։ Սպանուած տղամարդկանց մաքսիմում տոկոսը, ինչպէս տեսնում ենք աղիւսակից, հասնում է 92,48$^0/_0$-ի։ Բնական է, որ այդպիսի մեծ քանակով տղամարդ զոհեր պիտի տար Բալախանին, որտեղից հայ բանւորներն ու ծառայողները վաղուց էին իրանց ընտանիքները քաղաք փոխադրել և այնտեղ մնացած հայ բնակիչները սակաւ բացառութեամբ գրեթէ բոլորը տղամարդիկ էին։ Զոհերի ամենանուազ տոկոս տուել են տղամարդիկ VI-րդ թաղամասում—61,65$^0/_0$,—ուր կանանց տոկոսը՝ 38,35$^0/_0$, կազմում է մաքսիմում։ Ամենահայաշատ թաղամասերը՝ VII և VIII-րդը, մօտ են կանգնած միջին տոկոսին. առաջինը մի փոքր պակաս միջինից, 71,45$^0/_0$-ով, իսկ երկրորդը մի փոքր աւելի 72,26$^0/_0$-ով։ Անշուշտ, նոյն յարաբերութիւնները յիշեալ թաղամասերում վերաբերում են նաև իգական սեռին համապատասխան չափերով։ Առանձնապէս տուժել է արական սեռը նաև X-րդ թաղամասում և Խառը փողոցներում, ուր նրա զոհերի տոկոսները հաւասար են 76,77-ի և 78,14-ի։ Մնացած թաղամասերում արական սեռի տոկոսը կանգնած է միջին թւից ցածր, բացառութեամբ III թաղամասի, ուր տոկոսը հասնում է 73,08-ի։

Հետաքրքրական է յիշատակել այստեղ մի քանի փաստեր. թէ ինչպէս են դասաւորուած երկսեռ զոհերի տոկոսները ըստ փողոցների։ Մենք կը-

բերենք այստեղ երկու կաթեգորիայի տոկոսներ՝ արական սեռի զոհերի վերաբերեալ,—70 տոկոսից բարձր և ցածր, ուրիշ խօսքով՝ տոկոսների միջին թուից աւելի և պակաս տարբերութիւններով։

ԱՌԱՋԻՆ ԿԱԹԵԳՈՐԻԱՅԻ ՏՈԿՈՍՆԵՐՆ ԵՆ.

1) Պորոխովայա փողոց . . . 70,85%
2) Բալախանսկայա փող. և շօսսէ 72,00 »
3) Բուղագովսկայա փողոց . . 72,60 »
4) 4-րդ Կանիտապինսկայա . . 75,26 »
5) Սպիտակ-Քաղաք . . . . 76 30 »
6) Ստանիսլաւսկայա . . . . 76,92 »
7) Բոլշայա-Մորսկայա . . . 78,70 »
8) Վերխնէ-Պրիուտսկայա . . 80,00 »
9) Նիժնէ-Պրիուտսկայա . . . 84,21 »
10) 4-րդ Զավոկզալնայա . . . 95,12 »

Միջին թուով 81,68%

ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹԵԳՈՐԻԱՅԻ ՏՈԿՈՍՆԵՐՆ ԵՆ.

1) 3-րդ Սլոբոդսկայա փող. . . 54,71%
2) Հայկաւան . . . . 59 00 »
3) Սուրախանսկայա փող. . . 60,00 »
4) 2-րդ Սլոբոդսկայա փող. . . 60,57 »
5) 10-րդ Կանիտապինսկայա . 61,10 »
6) 2-րդ Զավոկզալնայա . . . 64,80 »
7) Զաղրովայա . . . . . . 65,30 »
8) 1-ին Կանիտապինսկայա . . 66,66 »
9) 6-րդ Կանիտապինսկայա . . 66,66 »
10) Գիմնազիչեսկայա . . . . 67,74 »
11) Տորգովայա . . . . . . 68,80 »

Միջին թուով 63,19%

Տոկոսների այս երկու կաթեգորիաների միջև, ինչպէս տեսնում ենք, տարբերութիւնը խիստ զգալի է։ Առաջին կաթեգորիայի մէջ արական սեռին պատկանող սպանուածների մինիմում տոկոսը հաւասար է 70,85%-ի

(Գորոխովայա փող.), իսկ մաքսիմումը՝ $95,12^{0}/_{0}$-ի (4-րդ Զավոկզալ՛նայա փող.), աւելի քան Բալախանիում սպանուածների տոկոսն էր։ Մինիմումի և մաքսիմումի տարբերութիւնը ևս մեծ է՝ մօտ $25^{0}/_{0}$։

Երկրորդ կաթեգորիայում գտնում ենք հակառակ պատկերը. այնտեղ տոկոսական մինիմումը իջնում է մինչև $54,71^{0}/_{0}$-ի իսկ մաքսիմումը հասնում է $68,80^{0}/_{0}$-ի. տարբերութիւնը—մօտ $14^{0}/_{0}$—աւելի նուազ է, քան առաջին կաթեգորիայում։ Այնուհետև նկատելու է, որ առաջին և երկրորդ կաթեգորիաների մինիմում տոկոսների տարբերութիւնը—$16,14^{0}/_{0}$—աւելի նուազ է, քան մաքսիմում տոկոսների տարբերութիւնը—$26,32^{0}/_{0}$։

Ինչ վերաբերում է երկու կաթեգորիաների միջին թւերին, ապա առաջնի միջին թիւը կազմում է $81,68^{0}/_{0}$, երկրորդինը՝ $63,19^{0}/_{0}$. երկուսի տարբերութիւնը—$18,49^{0}/_{0}$—բռնում է միջին տեղը երկու կաթեգորիաների մինիմում և մաքսիմում տոկոսների տարբերութիւնների միջև։ Մենք գիտենք, որ ամբողջ քաղաքում արական սեռի տուած զոհերի միջին տոկոսը, ըստ թաղամասերի հաշուած, կազմում է $71,71^{0}/_{0}$։ Այս վերջինը, ինչպէս տեսնում ենք, նահանջում է առաջին կաթեգորիայի տոկոսների միջին թւից ($81,68^{0}/_{0}$) գրեթէ ամբողջ $10^{0}/_{0}$-ով, իսկ երկրորդ կաթեգորիայի տոկոսների միջին թւից ($62,19^{0}/_{0}$) նա գերազանցում է $8,52^{0}/_{0}$-ով։

Այս երկու կաթեգորիաներում խմբուած փողոցների կրած զոհերի տոկոսները աւելորդ փաստերով ապացուցում են մի հիմնական միտք ևս։ Միևնոյն ռայոնի փողոցների արական սեռը (և առհասարակ հայ ազգաբնակութիւնը) տուել է սպանուածներ տարբեր չափերով։ Առաջին կաթեգորիայում 4-րդ Կանիտապինսկի փող. արական սեռի զոհերի տոկոսը կազմում է $75,26^{0}/_{0}$, երկրորդ կաթեգորիայում նոյն Կանիտապինսկի (1-ին) տոկոսը հաւասար է $66,66^{0}/_{0}$ կամ 10-րդ. Կանիտ. անգամ $61,10^{0}/_{0}$։ Այնուհետև, առաջին կաթեգորիայում 4-րդ Զավոկզալնի փող. արական սեռը տուել է զոհերի մաքսիմում տոկոսը, այն է $15,12^{0}/_{0}$, մինչդեռ 2-րդ Զավոկզալնի փող. (երկրորդ կաթեգոր.), նոյն սեռը տուել է $64,80^{0}/_{0}$, աւելի քան $30^{0}/_{0}$ պակաս։ Նման փաստեր շատ կան, որոնք գալիս են ապացուցելու այն հիմնական միտքը, որ սպանութեան եւ աւերումների ընթացքը տարբեր է եղել ոչ միայն միևնոյն թաղամասում, այլև միևնոյն փողոցում, միևնոյն փողոցամասերում, նայած ինչ բանդա է եղել՝ ինչ բաղկացուցիչ կազմով և ինչ մտադրութիւններով տարուած։

Անցնենք այժմ մի ուրիշ հարցի պարզաբանութեան։

Երևոյթի հետաքրքրական կողմերից մէկն է կազմում այն հանգամանքը, թէ ինչ հասակների են բաժանւում եւ հասակների ինչ խմբաւորումներ են կազմում Բագւում ընկած հայ զոհերը։

Սպանուածների մէջ եղել են բոլոր հասակների անձինք՝ սկսած մի քանի ամսական ծծկեր մանուկներից մինչև խորին ծերութեան հասնող—85 տարեկան—ծերունիներ ու պառաւներ։ Հասակները բաժանելով մի քանի կաթեգորիաների—ինչպէս են՝ 1—15 տարեկան, 15—25 տար., 25—40 տար., 40—60 տար. և 60—85 տ., մենք ստանում ենք այդ հասակներին վերաբերեալ հետևեալ տոկոսները ըստ թաղամասերի.

Սպանուածների տոկոսները ըստ հասակների

Թաղամասեր	Արական սեռ					Իգական սեռ				
	1—15 տ. հասակում	15—25 տ. հասակում	25—40 տ. հասակում	40—60 տ. հասակում	60—85 տ. հասակում	1—15 տ. հասակում	15—25 տ. հասակում	25—40 տ. հասակում	40—60 տ. հասակում	60—85 տ. հասակում
I Թաղ.	9,09	21,21	42,42	18,18	9,10	—	31,25	43,75	18,75	6,25
II »	25,00	—	75,00		—	—	—	33,33	66,66	—
III »	9,10	45,45	27,27	18,18	—	—	40,00	—	40 00	20,00
IV »	11,76	29,42	35,29	14,70	8,82	10,53	26,32	42,10	15,79	5,79
V »	15,94	27,50	41,54	13,04	5,86	17,14	22,86	37,14	14,28	8,57
VI »	8,00	20,66	44,60	20,18	6,57	20,22	25,84	34,83	15,73	3,37
VII »	19,76	31,65	34,31	13,10	1,21	32,06	37,40	21,37	7,63	1,52
VIII »	14,22	22,79	32,31	26,91	3,76	34,33	14,12	26,18	22,32	3,00
IX »	7,44	26,19	45,53	16,71	4,76	35,79	7,37	24,21	24,21	8,42
X »	29,27	26,06	30,66	14,98	4,18	43,00	16,07	30,60	3,60	7,14
Բալախանի	12,90	16,13	38,71	29,03	3,22	71,43	—	14,28	14,30	—
Սառը փողոց.	17,00	27,12	30,51	23,73	1,70	45,84	12,50	30,00	4,50	8,34

Այս հետաքրքրական աղիւսակը պարզում է մեր առաջ մի չափազանց ուշագրաւ էջ սպանութեան դէպքերի, որպէս մասսայական երևոյթի, նկատամամբ ի՞նչ յարաբերական մասնակցութիւն է ունեցել մասսայական սպանութիւնների մէջ հինգ կաթեգորեաների բաժանուած հասակներից ամէն մի պերիոդը՝ իր ունեցած զոհերի չափով։ Ահա ինչ է ցոյց տալիս մեզ այդ աղիւսակը։

Նախ և առաջ մենք տեսնում ենք այդ աղիւսակից այն ընդհանուր ճնշող տպաւորութիւնը, որ թուած հինգ կաթեգորիաներից չի եղել հասակի մի շրջան, որ իր այս կամ այն թւով զոհերը տուած չլինի (շատ աննշան բացառութիւն գտնում ենք I, II և III հայերով չափազանց սակաւաթիւ թաղամասերում)։ Հասակի ամէն մի պերիոդ, սկսած ծծկեր մանուկներից (որոնց մէջ եղել են նաև մի քանի ամսականներ, որոնք հաշուած են մի տարեկան հասակի վրայ) մինչև 85 տարեկան խորին ծերութիւնը, տուել է իր ողբալի զոհերը մասսայական սրածութեան։

Ուշադրութիւն դարձնենք ամենից առաջ արական սեռի զոհերի վրայ։ Բոլոր թաղամասերում, բացառութեամբ միայն III-ի, աչքի է ընկնում մի տիրապետող գիծ. սպանուածների ամենամեծ տոկոս տուել են 25—40 տարեկան հասակ ունեցողները, այսինքն երիտասարդ, կենսալից, զէնքի ընդունակ, առնական հասակի հասած տղամարդիկ։ Հասակի այդ շրջանի տուած զոհերի ամենաբարձր տոկոսը հասնում է 75,00-ի (II-րդ թաղամասում), իսկ ամենանուազ տոկոսը իջնում է մինչև 27,27$^0/_0$-ի (III թաղ.)։ Մնացած բոլոր թաղամասերում այդ շրջանի տոկոսները անցնում են 30-ից և հասնում են 45 53$^0/_0$ (IX թաղ.)։

Իր տուած զոհերի տոկոսական չափերով 25—40 տար. հասակին ան-

միջապէս յաջորդում է 15—25 տար. հասակը, այսինքն տղամարդու պատանեկան և երիտասարդական շրջանը. տարաբաղդաբար այդ հասակը ևս մեծաթիւ զոհեր է տուել։ Բոլոր թաղամասերում, բացի Բալախանիից, այդ հասակի տոկոսներն անցնում են 20-ի սահմաններից բարձր։ Այդ հասակի զոհերի մաքսիմում տոկոսը հասնում է 45,45$^0/_0$-ի (III թաղ.), իսկ մինիմումը իջնում է մինչև 16,13$^0/_0$-ի (Բալախանիում)։ 15—25 տար. և 25—45 տար. հասակի շրջանների տոկոսները միասին վերցրած մեծ մասամբ անցնում են 60 տոկոսի սահմաններից բարձր և գերակշռող մեծամասնութիւն կազմում բոլոր թաղամասերում։ Պատկառելի է հասակի այդ երկու շրջանների տոկոսների մեծութիւնը մանաւանդ VI-րդ (65,26$^0/_0$), VII-րդ (65,96$^0/_0$), VIII-րդ (55,10$^0/_0$) և IX-րդ (71,72$^0/_0$) թաղամասերում։ Հայ ազգաբնակութիւնը իր բնակութեան ամենախիտ վայրերում տուել է այդքան մեծաթիւ զոհեր իր ամենակենսունակ տարրերից։

Երրորդ տեղը՝ իր տոկոսի մեծութեամբ, բռնում է 40—60 տար. հասակը, ասել է առնական հասակից մինչև ծերութեան շրջանը։ Բնորոշ է, որ այդ հասակի պերիոդի տուած զոհերի ամենամեծ տոկոսը ցոյց է տալիս Բալախանին՝ 29,03$^0/_0$-ով, հայերի այդ սակաւամարդ մասերից մէկը կոտորածների օրերին, և VIII-րդ թաղամասը՝ իր 26,91$^0/_0$-ով, հայերի այդ ամենաբազմամարդ մասը։ Այդ հասակի մինիմում տոկոսը կազմում են 13,04$^0/_0$ (V-րդ թաղամասում) և 13,10$^0/_0$ (VII-րդ թաղ.)։ Կան թաղամասեր, որտեղ 40—60 տ. հասակ ունեցողները երկու անգամ աւելի նուազ տոկոսներ են տուել, քան 25—40 տար. հասակ ունեցողները. այդպէս են օրինակ I, IV, V (այստեղ նոյն իսկ երեք անգամ աւելի նուազ), VI, VII, IX, X թաղամասերում։

Այնուհետև յաջորդում են հասակների երկու մնացած կաթեգորիաները՝ սկզբինը - 1—15 տար. հասակ ունեցողները — և ամենից վերջինը՝ 60—85 տարեկ. հասակաւորները, ուրիշ խօսքով՝ երեխաների և ծերունիների կաթեգորիաները։ Ի հարկէ, երեխաների տուած զոհերի տոկոսները գերազանցում են ծերունիների տոկոսներից բոլոր մասերում, բացառութեամբ I թաղամասի, ուր երկու կարգի հասակների տոկոսները՝ 9,09$^0/_0$ և 9,10$^0/_0$, կանգնած են միևնոյն քանակական աստիճանի վրայ։ Կան տեղեր, ուր սպանուած երեխաների տոկոսները շատ պատկառելի մեծութեան են հասնում. այսպէս օրինակ II թաղամասում նրանց տոկոսը կազմում է 25,00, իսկ X-րդ թաղ. անգամ 29,27. վերջինս նահանջում է միայն 25—40 տարեքաւորների տոկոսից (30,66$^0/_0$), իսկ մնացած բոլորից (նոյն թաղամասում) նա գերազանցում է։ Աչքի են զարնում սպանուած երեխաների տոկոսները նաև զուտ հայկական թաղերում, ինչպէս են՝ VII-րդ (19,76$^0/_0$) և VIII-րդ (14,22$^0/_0$) թաղերում, ինչպէս նաև Խառն փողոցներում (17$^0/_0$)։ Այդ շրջանի հասակների մինիմում տոկոսը իջնում է մինչև 8,00-ի (VI թաղ.), իսկ մաքսիմումը հասնում է 29,27-ի (X-րդ թաղ.)։ Համեմատաբար համեստ տեղ են բռնում ծերութեան շրջանի հասակների տոկոսները. սրանց մաքսիմումը հասնում է 9,10$^0/_0$-ի (I-րդ թաղ.), իսկ մինիմումը՝ 1,21$^0/_0$-ի (VII-րդ թաղ.)։ VIII-րդ ամենահայաշատ թաղամասում սպանուած ծերունիների տոկոսը միջին տեղն է բռնում—3 76$^0/_0$-ով, IX-րդում—4,76$^0/_0$։ Աւելի բարձր է նրանց տոկոսը VI-րդ (6,57), IV-րդ (8,82$^0/_0$) և I-ին (9,10) թաղամասերում։

Ճապէս այլ պատկեր ենք գտնում իգական սեռի տակ ամփոփուած տոկոսների աղիւսակի մէջ։ Նախ աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այդտեղ հասակների զանազան կաթեգորիաների տոկոսական յարաբերութիւնները դասաւորուած են տարբեր կերպով, և այնուհետև այն հանգամանքը, որ իգական սեռի ամեն մի տոկոսաշարք չի պահպանում այն համաչափութիւնը, որը յատուկ է արական սեռի տոկոսների աղիւսակին։

Ցոյց տանք այդ տարբերութիւնները օրինակներով։

*Իգական սեռի նկատմամբ չենք գտնում 25—40 տարեկան հասակ ունեցողների տուած զոհերի տոկոսական գերակշռութիւնը բոլոր թաղամասերում, ինչպէս տեսանք ու հաստատեցինք այդ փաստը արական սեռի նկատմամբ։ Իգական սեռի վերաբերեալ տոկոսների մէջ այդ փաստը գտնում ենք միայն մի քանի (*I-*ին.* IV-*րդ,* V-*րդ և* VI-*րդ) թաղամասերում։ Մնացած թաղամասերում, սկսած* VII-*ից մինչև Խառն փողոցները, զգալի չափերով գերակշռում է տոկոսը այն հասակների կաթեգորիայի, որը, առաջին հայեացքից, շատ տարօրինակ է թւում։ Դա աղջիկ երեխաների և մանկահասակ օրիորդների հասակն է 1—15 տարիք ունեցողների։ Սրանց տոկոսները այնպիսի թաղամասերում, ինչպէս են՝* VII *(32,06 $^0/_0$),* VIII *(34,33 $^0/_0$),* IX *(35,79 $^0/_0$),* X *(43,00 $^0/_0$), Բալախանիում (71,43 $^0/_0$) և վերջապէս Խառն փողոցներում (45,84 $^0/_0$)—իրանց թւական մեծութեամբ մի քանի անգամ գերազանցում են արական նոյն հասակների տոկոսներից միևնոյն թաղամասերում։*

Ինչո՞վ բացատրել, որ յարաբերաբար վերցրած 1--15 տարեկան մանկահասակ աղջիկներ աւելի շատ են սպանուել, քան նոյն հասակի մանկահասակ տղաներ։

Մեր կարծիքով, չկայ ուրիշ ոչ մի հաւանական բացատրութիւն այդ փաստի, բայց եթէ այն, որ երեքօրեայ կոտորածի ժամանակ մուսուլման բանդաներն ու տաճիկ ասկեարները բացի սովորական սպանութիւններից առանձին «եռանդով» ընկել, բռնաբարել են մանկահասակ աղջիկներին (այդ դէպքերի մասին կխօսենք առանձին) և ապա կամ սպանել և կամ իրենք զոհերը չկարողանալով դիմանալ ու տանել—մեռել են։ Այլ բացատրութիւն մենք չենք գտնում այդ փաստի համար։

Իգական սեռի միւս հասակների տոկոսները դասաւորուած են անհամաչափ կերպով։ Զանազան թաղամասերում սպանութեան դէպքերը՝ այս կամ այն տարիք ունեցողների նկատմամբ, արտայայտուել են տարբեր չափերով։ 15—25 տարիք ունեցող կանանց (սպանուածների) տոկոսը գերազանցում է մնացածներից միայն VII *թաղ. (37,40 $^0/_0$)։ 25—40 տարիք ունեցողները գերազանցում են չորս թաղամասերում՝* I *թաղամ. (43,75 $^0/_0$),* IV *թաղ. (42,10 $^0/_0$),* V-*ում (37,14 $^0/_0$) և* VI-*ում (34,83 $^0/_0$-ով)։ 40—60 տար. հասակ ունեցողները՝ միայն* II-*րդ թաղամ. (66,66 $^0/_0$), իսկ* III-*րդ թաղ. 25—40 և 40—60 տար. հասակ ունեցողները տուել են զոհեր միաչափ տոկոսով՝ 40,00 $^0/_0$-ով։ Ինչ վերաբերում է վերջին կաթեգորիային՝ 60—85 տար. պառաւներին, այդտեղ սեռը ևս համեմատաբար քիչ է տուժել, թէև մի քանի թաղամասերում նրա կրած այդ հասակի զոհերը, յարաբերաբար վերցրած, գերազանցում են արական սեռի համապատասխան կաթեգորիայի*

տոկոսներից։ Այդպէս են, օրինակ, II-րդ Թաղ. (արական՝ ոչինչ, իգական՝ 20,00%), V-րդ Թաղ. (արակ. 5,80%, իգակ. 8,57%), IX-ում (արական 4,76%, իգակ. 8,42%), X-ում (արակ. 4,18%, իգակ. 7,14%), Խառն փողոցներում (արակ. 1,70%, իգակ. 8,34%)։ Մնացած Թաղամասերում, ընդհակառակը, գերազանցում է յիշածս հասակ ունեցողներից արական սեռը։

Նայելով տոկոսական տուեալներին ըստ փողոցների և առանձին վայրերի, գտնում ենք, որ վերև շօշափուած աչքի ընկնող գծերը այս կամ այն չափով անդրադառնում են առանձին փողոցների վրայ։ Արական սեռի 25—40 տար. հասակը ամենուրեք, չնչին բացառութեամբ, տուժել է ամենամեծ տոկոսով։ Այնպիսի հայաշատ փողոցներ կամ վայրեր, ինչպէս են՝ Ստանիսլաւսկի փող., Նիժնէ-Պրիուտսկի և Վերխնէ-Պրիուտսկի, Կանիտապինսկի փողոցները, Սլոբոդսկի և Պորոխովոյ փողոցները, ինչպէս և Հայկաւանը, տալիս են վերոյիշեալ հասակից զոհերի մեծ տոկոսներ։ Բայց այստեղ ևս մենք գտնում ենք մեր իր տեղում չեշտած հիմնական մտքի հաստատումը։ Քաղաքի միևնոյն րայօնի հարևան փողոցներում վերոյիշեալ հասակի (25—40 տար.) կամ ուրիշ հասակների տոկոսական յարաբերութիւնները տարբեր են իրարից մեծ չափերով, մինչդեռ իրարից հեռու ընկած փողոցներում այդ նոյն տոկոսական յարաբերութիւնները շատ յաճախ նման են իրար։ Վերցրէք, օրինակ, մի կողմից Նիժնէ-Պրիուտսկի փող. իր 37,66%-ով (25—40 տար. սպան.) և Պորոխովոյ փող. 37,69%-ով, միւս կողմից Վերխնէ-Պրիուտսկի փ. իր 32,52%-ով, և I-ին Սլոբոդսկի փող. իր 32,84%-ով։ Այնուհետև I-ին Կանիտապինսկի փող. իր 22,58%-ով զոհերի տոկոսական յարաբերութեամբ աւելի մօտ է կանգնած տարածութեամբ իրանից հեռու ընկած Տելեֆոննի փող. իր 22,04%-ով կամ Տորգովի փ. իր 25,88%-ով, քան միևնոյն րայօնի փողոցներին, օրինակ՝ Ստանիսլաւսկի փող. իր 31,[illegible]2%-ով կամ 4-րդ Կանիտապինսկ. փող. իր 36,17%-ով։ Նոյն յարաբերութիւնները առաւել կամ պակաս տարբերութեամբ գտնում ենք նաև միւս հասակների նկատմամբ։ Եւ դրանով, ինչպէս ասացինք, բազմիցս անգամ արդարանում է այն հիմնական միտքը, որ նայած որտեղ՝ ինչ բանդաներ և ինչ մտադրութիւններով են մուտք գործել։

Նոյն կերպ դասաւորուած են տոկոսական յարաբերութիւնները յիշեալ փողոցներում նաև իգական սեռի նկատմամբ։ Այստեղ աչքի է ընկնում մի ուրիշ հանգամանք։ Մենք արդէն գիտենք, որ ինչպէս արական սեռի 25—40 տար. հասակը, այնպէս էլ իգական սեռի 1—15 տար. հասակը ընդհանուր առմամբ և յարաբերաբար վերցրած տուել են զոհեր ամենամեծ տոկոսներով։ Այդ փաստը ցայտուն կերպով աչքի է ընկնում, մանաւանդ իգական սեռի նկատմամբ, նաև մեզ յայտնի փողոցներում։ 25—40 տարեկան արակ. սեռի ամենամեծ տոկոսը հասնում է 39,34%-ի (2-րդ Սլոբոդսկի փող.), ասել է՝ չի հասնում քառասուն տոկոսի, մինչդեռ իգական սեռի 1—15 տար. հասակի տոկոսը անցնում է քառասուն տոկոսի սահմաններից՝ օր. 44,45% (նոյն 2-րդ Սլոբոդսկ. փող.) և անգամ 49,00% (IV-րդ Կանիտապինսկ. փող.)։ Տարօրինակ զուգադիպութեամբ, սեռով ու տարիքով տարբեր այդ երկու կարգի հասակները տուել են զոհերի միևնոյն տոկոսը

հայկական ամենամեծ փողոցում՝ Ստանիսլաւսկում. արական սեռից (25—40 տար.) 31,52$^0/_0$, իգական սեռից (1—15 տար.) 31,02$^0/_0$։

Երկու սեռերի միւս հասակները, ինչպէս Թաղամասերում տեսանք, նոյնը և առանձին փողոցներում, իրանց տոկոսներով նահանջում են վերոյիշեալ երկու կարգի հասակի տուած զոհերի տոկոսներից։

IV ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԱՆՅԱՅՏԱՅԱԾՆԵՐԸ (կամ անյայտ կորածները)

Մարդկային զոհերի երկրորդ կաթեգորիան, որ ունեցաւ Բագուի հայ ազգաբնակութիւնը քաղաքի անկումից յետոյ, դա անյայտացածները կամ անյայտ կորածներն էին։

Ինչ ենք հասկանում այդ կաթեգորիայի տակ, կամ ո՞ր տեսակ զոհերն են, որոնց դասել ենք անյայտացածների շարքը։

Դրանք այն զոհերն են, որոնց ուր տանելը, ինչ վիճակի մէջ լինելը եւ ինչ վախճան ունենալը կատարելապէս անյայտ են մնացել նրանց հարազատներին, բարեկամներին կամ հարեւաններին։ Այդ կաթեգորիայի մի շատ չնչին մասն է անյայտացել կոտորածների երեք օրերին (սեպտ. 15—17-ին)։ Ընդհակառակը նրանց մեծագոյն մասը անյայտ կորել է կոտորածներից յետոյ, սեպտեմբերի 17-ից ի վեր, այն ժամանակից սկսած, երբ Ադրբէյջանի «հանրապետութեան» մինիստր-նախագահը հանդիսաւորապէս յայտարարել էր (սեպտ. 19-ին), որ «երկրի բոլոր քաղաքացիները առանց ազգի և դաւանանքի խտրութեան, հաւասարապէս պիտի վայելեն կառավարութեան պաշտպանութիւնն ու հովանաւորութիւնը իրանց շահերի և իրաւունքների սահմաններում»։

Երեքօրեայ կոտորածների նկատմամբ Ադրբէյջանի քաղաքագէտներն ու գաղափարախօսները ուրիշ ոչ մի «արդարացում» չեն գտնում հասարակական դատափետող կարծիքի առաջ, բայց եթէ այն կեղծ ու անճարակ առարկութիւնը, որ իբր դա սոսկ վրէժխնդիր ամբոխի տարերային մի գործողութիւն է, անխուսափելիօրէն պայմանաւորուած քաղաքի անկման առաջին օրերով։ Հապա ինչ կարող են ասել նրանք տարերային կարճատեւ վանդալիզմը տեւական սիստեմի վերածած այն պաշտօնական կուրսի մասին, որով Ադրբէյջանի կառավարութիւնը արտաքին իրաւակարգի քօղարկող շիրմայի տակ երկու ամիս շարունակ չխնայեց իր հայաջինջ քաղաքականութեան հարուածները հայ ժողովրդի դէմ՝ երեքօրեայ զոհերի պակասը լրացնելու համար։

Այդ քաղաքականութեան ցայտուն փաստերից մէկը տալիս է մեզ հետեւեալ պատկերը։

G. ԱՂԻՒՍԱԿ

Հայ անյայտացածների թիւը ըստ թաղամասերի

Թաղամասեր	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	III Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	IV Անյայտացածներ	V Անյայտացածները տոկոսով մինչև կոտորածը եղած հայ բնակչութեան	VI Անյայտացածները տոկոսով էվակուացիայից յետոյ մնացած հայ բնակչութեան	VII Անյայտացածները տոկոսով կոտորածից յետոյ մնացած հայ բնակչութեան
I Թաղամաս	2224	1339	1243	97	4,36	7,24	7,79
II »	152	111	96	13	8,55	11,71	13,54
III »	323	248	212	12	3,71	4,83	5,66
IV »	395	242	143	16	4,05	6,61	11,18
V »	5122	3234	3084	95	1,85	2,93	3,08
VI »	7219	4236	3769	193	2,67	4,55	5,12
VII »	16670	10736	9928	469	2,81	4,36	4,72
VIII »	33393	22293	20323	1409	4,21	6,32	6,93
IX »	19112	12764	12023	903	4,72	7,07	7,51
X »	2019	962	466	230	11,39	23,9	49,35
Բալախանի	1535	827	661	27	1,75	3,26	4,08
Սաբունչի	509	388	184	108	21,21	27,83	58,69
Ընդամենը	88673	57380	52132	3572	4,02	6,22	6,85

G աղիւսակի մէջ ամենից առաջ, առաջին շարքում, դասաւորուած է Թաղամասերով հայ բնակիչների մեզ արդէն յայտնի թիւը կոտորածներից առաջ. այնուհետև նրանց թիւը էվակուացիայից անմիջապէս յետոյ։ Երրորդ տեղը բռնում է հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ, այսինքն այն թիւը, որ մնացել է սպանուածների թիւը հանելուց յետոյ։ Չորրորդ տեղն արդէն դասաւորուած է անյայտացածների թիւը։ Յաջորդ երեք կոլոններում հետևում են այն տոկոսները, որ ունեն անյայտացածները հայ ազգաբնակութեան նախընթաց երեք կարգի թուերի նկատմամբ։

Ցուցակագրուած անյայտացածների թիւը ամբողջ քաղաքում հասնում է 3572 հոգու։ Այդ թիւը կազմում է ամբողջ հայ ազգաբնակութեան 4,02%, քաղաքում մնացած (էվակուացիայից յետոյ) հայերի 6,22% և կոտորածից յետոյ մնացած հայութեան 6,85%։ Ըստ Թաղամասերի ամենից շատ տուժել է՝ բացարձակ իմաստով վերցրած, VIII Թաղամասը, այսինքն հայկական ամենամեծ բայոնը, ուր անյայտացածների թիւը հասնում է 1409 հոգու կամ 4,21% նոյն Թաղամասի հայ բնակչութեան ընդհանուր թուի, այսինքն աւելի բարձր տոկոս, քան միջին թիւն է (4,02%)։ Այնուհետև յաջորդում է երկրորդ հայկական մեծ բայոնը՝ IX Թաղամասը՝ 903 անյայտացածներով, որոնք կազմում են նոյն Թաղամասի հայերի ընդհանուր

թուի 4,72⁰/₀, այսինքն աւելի մեծ բաժինը, քան VIII թաղամասն էր։ Երրորդ տեղը բռնում է VII թաղամասը, որի անյայտացածների թիւը՝ 469 հոգին, համեմատաբար փոքր տոկոսն է կազմում նոյն թաղամասի բնակչութեան, ընդամենը 2,81⁰/₀։ Քանակով վերցրած անյայտացածների ամենանուազ թիւ տուել են հայկական ամենանոսրաբնակ թաղամասերը՝ II թաղ. 13 անյայտացած. և III թաղ. 12 անյայտացածներով։ Ցարաբերաբար վերցրած, անյայտացածների ամենամեծ տոկոս տալիս են խառը փողոցները՝ 21,21⁰/₀ խառը փողոցների ամբողջ ազգաբնակութեան, 27,83⁰/₀ էվակուացիայից յետոյ, 58,69⁰/₀ կոտորածից յետոյ մնացած հայերի թուի։ Տոկոսի մեծութեամբ երկրորդ տեղը բռնում է X թաղամասը իր 11,39⁰/₀-ով (23,90⁰/₀ և 49,35⁰/₀), իսկ երրորդ տեղը II թաղամասը՝ 8,55⁰/₀ (11,71⁰/₀ և 13,54⁰/₀)։ Անյայտացածների նուազագոյն տոկոսը տալիս է Բալախանին՝ 1,75⁰/₀-ով (3,26⁰/₀ և 4,08⁰/₀)։ Եւ դա հասկանալի է, որովհետև կոտորածից յետոյ Բալախանիում այլևս ոչ մի հայ սասծդ մնալ չէր կարող և այնտեղ ցուցակագրուած 27 հոգին անշուշտ անյայտացել են կոտորածների օրերին։ Միայն երեք հայախիտ թաղամասերը՝ VII, VIII և IX, տուել են անյայտացածների ճնշող մեծամասնութիւնը՝ 2821 հոգի, որ կազմում է բոլոր անյայտացածների ընդհանուր թուի 78,97⁰/₀-ը։

Աւելի յստակ կլինի կպատկերը, եթէ մենք անյայտացածների թիւը ներկայացնենք փողոցների դասաւորութեամբ. դա տեսնում ենք հետևեալ աղիւսակից.

N. ԱՂԻՒՍԱԿ

Հայ անյայտացածների թիւը ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	Անյայտացածներ	Հայ բնակիչների թիւը հանած անյայտացածն.
1	Աղիստակի փողոց . .	375	247	238	8	230
2	Արմիանսկի » . .	52	38	20	2	18
3	Բելվիւ հրապարակ . .	140	63	63	—	63
4	Բալախանսկի փ. և շոսսէ	4630	2786	2576	194	2382
5	Բաիլովսկի փողոց I-ին .	720	459	439	25	414
6	» » II . .	110	71	54	13	41
7	» » III .	948	619	609	33	576
8	Բարեատինսկի փողոց .	111	73	70	1	69
9	Բիրժևայա » .	2259	1538	1460	35	1425
10	Բոնդարնի » .	1153	724	643	84	609
11	Բուդագովսկի » .	1029	643	427	117	310
12	Բոլշոյ-Մորսկոյ » .	2807	1725	1599	79	1520
13	Գորչակովսկի » .	152	114	114	1	113
14	Դիմիտրիևսկի » .	1017	541	500	43	457

№№	Փողոցներ	Հայ ընտրիչների թիվը մինչև պատերազմը	Հայ ընտրիչների թիվը էվակուացիայից հետո	Հայ ընտրիչների թիվը ցուցակագրության	Անհայտացածներ	Հայ ընտրիչների թիվը քաղաքային ցուցակն.
15	Գոզոլևսկի փողոց . .	229	170	141	22	119
16	Գուբերնսկի » . .	164	86	76	7	69
17	Եարմորոչնի » . .	232	144	130	19	111
18	Զավոկզալնի » I-ին	216	135	Ընդամենը 4219	Ընդամենը 262	Ընդամենը 3957
19	» » II	2821	2127			
20	» » III	122	101			
21	» » IV	1430	987			
22	» » V	413	241			
23	» » VI	622	395			
24	» » VII	79	62			
25	» » VIII	416	277			
26	» » IX	109	80			
27	Լենցովսկի միջափողոց .	77	54	50	3	47
28	Կանիտապ. փ. I-ին	3023	2050	1783	104	1679
29	» » II	1356	936	858	65	793
30	» » III	1802	1018	904	109	795
31	» » IV	3462	2410	2220	163	2057
32	» » V	2535	1512	1409	71	1338
33	» » VI	1364	931	873	23	850
34	» » VII	1005	588	516	55	461
35	» » VIII	894	650	627	4	623
36	» » IX	765	459	453	10	443
37	» » X	628	342	324	18	306
38	» » XI	168	151	87	10	77
39	Կամենիստի փողոց . .	279	189	163	27	136
40	Կոլիուբակինսկի » . .	85	50	42	4	38
41	Կրասնովոդսկի » . .	456	272	234	29	205
42	Կարանտիննի » . .	315	211	188	11	177
43	Կիրպիչնի » . .	11	8	8	—	8
44	Մերկուրևսկի » . .	525	346	339	5	334
45	Մարիինսկի » . .	315	206	170	6	164
46	Միխայլովսկի » . .	31	25	25	—	25
47	Միլլիոննի » . .	1081	651	625	22	603
48	Մագազիննի » . .	744	380	342	28	314
49	Մոլոկանսկի » . .	1575	949	900	24	876
50	Մալօ-Մորսկոյ » . .	1082	638	620	4	616
51	Նաբերեժնայա » . .	20	15	10	4	6
52	Նիկոլաևսկի » . .	87	60	56	3	53
53	Նիժնէ-Պրիուտ. » . .	2352	1884	1776	53	1723
54	Զագրովի » . .	508	350	197	38	159
55	Պորոխովոյ » . .	3292	2437	2206	216	1990
56	Պարալելնի » III-րդ	23	23	21	—	21
57	Պերսիդսկի » . .	34	32	32	—	32
58	Րեմեսլեննի » . .	2176	1307	1209	65	1144
59	Սադովոյ » . .	11	11	11	—	11

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	Անյայտացածներ	Հայ բնակիչների թիւը հանած անյայտացածն.
60	Ստարո-Պոչտովի փողոց .	1	—	—	—	—
61	Ստարո-Պոլիցէյսկի » .	152	132	132	—	132
62	Սլոբոդսկոյ փողոց I-ին .	2199	1473	1425	36	1389
63	» » II .	2499	1656	1529	103	1426
64	» » III .	1047	556	495	55	440
65	Սուրախանսկի փողոց .	758	579	474	27	447
66	Ստանիսլաւսկի » .	4988	3146	2993	116	2877
67	Վոդովոզնի » .	32	22	22	—	22
68	Վոկզալնայա » .	580	355	344	15	329
69	Վորոնցովսկայա փողոց .	59	52	48	2	46
70	Վրանգելսկի » .	88	75	62	4	58
71	Վերխնէ-Պրիուտսկի փող.	3876	3074	2938	105	2833
72	Տելեֆոննի »	4275	2663	2525	109	2416
73	Տորգովի »	4196	2754	2612	93	2519
74	Տրամվայնի »	25	18	18	—	18
75	Տատիանինսկի »	538	290	262	14	248
76	Տատարսկի »	70	33	29	4	25
77	Ցիցիանովսկի »	26	26	26	—	26
78	Ցերկովնի »	208	117	100	3	97
79	Օլգինսկի »	60	41	41	—	41
80	Ֆաբրի[illegible] »	31	7	7	—	7
81	Խառը փողոցներ . . .	509	388	184	108	76
	Արուարձաններ					
1	Բալախանի	1535	827	661	27	634
2	Բիբի-Հէյբաթ	446	190	141	26	115
3	Հայկաւան	3193	1891	1600	115	1415
4	Հայոց Քիշլի	836	470	440	241	199
5	Սև-Քաղաք	1503	828	510	206	304
6	Սպիտակ-Քաղաք . . .	516	134	?	24	?
	Ընդամենը .	88673	57380	52132	3572	48560

Մի հիմնական փաստի նկատմամբ այստեղ մենք ստանում ենք ճիշտ նոյն պատկերը, ինչ տեսանք ցուցակագրուած սպանուածների ըստ փողոցների դասաւորուած աղիւսակից։ Ինչպէս սպանուածների, այնպէս էլ անյայտացածների թիւերը՝ ըստ փողոցների, քանակով անհամաչափ յարաբերութեամբ են դասաւորուած։ Կան փոքր, սակաւահայ փողոցներ, որոնք տուել են մեծ թւով ասել է՝ անհամապատասխան չափերով անյայտացածներ. կան մեծ, հայաշատ փողոցներ, որոնց անյայտացածների թիւը համեմատաբար փոքր է, անհամաչափ է։

Թուապէս վերցրած անյայտացածների ամենամեծ թիւը—ոչ պակաս քան 262 հոգի—տուել է այսպէս կոչուած Զավոկզալնի բայոնը՝ իր ինը փողոցներով միասին և 6218 բնակիչներով. անյայտացածների տոկոսը այդ թւից հաւասար է 4,21-ի։ Երկրորդ տեղը բռնում է Հայոց-Բիչլին, որ իր բնակչութեան շատ համեստ թւով (836 հոգի) տուել է 241 անյայտացած ներ կամ 28,83$^0/_0$ իր բնակիչների թւի։ Դա անյայտացածների ամենամեծ տոկոսն է, որ ունեցել է որևէ փողոց կամ թաղամաս։ Այնուհետև յաջորդում են իրար՝ Պորոխովոյ փողոց՝ 216 անյայտացածներով կամ մօտ 6,60$^0/_0$-ով, Բալախանսկի փող. և շոսսէ 194 անյայտացած. կամ 4,20$^0/_0$ ով, Սև-Քաղաք՝ 206 անյայտ. կամ 13,70$^0/_0$-ով, Հայկաւան 185 անյայտ. կամ 5,80$^0/_0$-ով, և այսպէս անվերջ։ Սոանխալաւսկի ամենահայաշատ փողոցը տուել է, համեմատաբար, նուազ քանակով անյայտացածներ, ընդամենը 116 հոգի կամ 2,33$^0/_0$։

Համադրենք սպանուածների և անյայտացածների թւերը մի քանի յայտնի փողոցներում և վայրերում, որոնք թւապէս ամենաշատ զոհերն են տուել։ Հետևեալ օրինակները ցոյց են տալիս այդ փաստը.

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Սպանուածներ	Անյայտացածներ	Երկուսը միասին	Երկուսի տոկոսը
1	Սև-Քաղաք	318	206	524	34,86
2	Հայկաւան	291	185	476	14,91
3	Զավոկզալնի շրջան . . .	276	262	538	12,75
4	I-ին Կանիտապինսկի փ.	267	104	371	12,27
5	Պորոխովայա փողոց . .	231	216	447	13,60
6	Բուդագովսկի փողոց . .	216	117	333	32,36
7	Բալախանսկի փ. և շոսսէ .	210	194	404	8,72
8	Խառը փողոցներ. . . .	204	108	312	61,30
9	IV Կանիտապինսկի փողոց.	190	163	353	10,21
10	Սպիտակ-Քաղաք . . .	178	24	202	39,14
11	Բալախանի	116	27	193	12,57
12	Սոանխալաւսկի փողոց . .	153	116	269	5,37
13	Չադրովայա	153	38	191	37,60
14	Հայոց-Բիչլի	30	241	271	32,41
	Ընդամենը .	**2883**	**2001**	**4884**	**14,73**

81 փողոցներից և արուարձաններից դասաւորուած են այստեղ 14 այնպիսի վայրեր, որոնք ամենից շատ են տուժել երկու կարգի զոհերով։ Ցիշածս բոլոր վայրերում, բացի մէկից, սպանուածները առաւել կամ պակաս տարբերութեամբ քանակով գերազանցում են անյայտացածներից։ Բա-

ցառութիւն կազմում է միայն Հայոց-Բիչլին, ուր սպանուածների թիւր նոյնքան համեստ է—30 հոգի,—որքան մեծ է անյայտացածների թիւը—241 հոգի։ [1])։

Թուապէս կամ բացարձակ իմաստով վերցրած ամենամեծ քանակով զոհեր (երկու կաթեգորիայից) տուել է Զավոկզալնի շրջանը—ընդամենը 53 հոգի իր բոլոր փողոցներով։ Այնուհետև յաջորդում են Սև-Քաղաքը՝ 524 հոգով, Հայկաւանը՝ 476 հոգ., Պորոխովոյ փ. 447 հ., Բալախանսկի փող. և շոսէն՝ 404 հ. և այլն։ Մինչդեռ յարաբերաբար վերցրած զոհերի ամենամեծ տոկոսը տալիս են խառը փողոցները՝ 61,30 $^0/_0$-ով, Սպիտակ-Քաղաքը՝ 39,14 $^0/_0$-ով, Զաղրովի փ.՝ 37,60 $^0/_0$ Սև-Քաղաքը՝ 34,86 $^0/_0$, Հայոց-Բիչլին՝ 32,41 $^0/_0$, Բուղադովսկի փողոցը՝ 32,36 $^0/_0$ և այլն։ Ամենանուազ տոկոսով զոհեր ունեցել է Ստանիսլաւսկի փող. (5,37 $^0/_0$-ով), իսկ թուական բացարձակ տուեալով զոհերի ամենանուազ քանակ (191 հ.) տուել է Զաղրովի փողոցը։ Թէ սպանուածները և թէ անյայտացածները, որոնք տեղի են ունեցել վերոյիշեալ 14 փողոցներում և վայրերում, թուապէս. կազմում են բացարձակ մեծամասնութիւնը ամբողջ քաղաքում տեղի ունեցած երկու կարգի զոհերի ընդհանուր թուերի։ 5248 միայն ցուցակագրուած սպանուածներից [2]) 2883 հոգին, կամ մօտ 55,00 $^0/_0$ և 3572 անյայտացածներից 2001 հոգին կամ մօտ 56,00 $^0/_0$ սպանուել և անյայտացել են վերոյիշեալ 14 փողոցներում և վայրերում։ Այդ վայրերի երկու կարգի զոհերի (4884 հոգի) տոկոսը նոյն տեղերի ընդհանուր ազգաբնակութիւնից հաւասար է 14,73 $^0/_0$-ի, մինչդեռ բոլոր սպանուածների (ցուցակագրուած) և անյայտացածների ընդհանուր թիւը ամբողջ քաղաքում կազմում է ողջ հայ ազգաբնակութեան 9,94 $^0/_0$։ Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ վերոյիշեալ 14 փողոցների ու վայրերի հայկական տարրը թէ բացարձակ իմաստով և թէ յարաբերաբար մարդկային զոհերով տուժել է ամենամեծ չափով։

Եղել են փողոցներ, որոնց տուած զոհերի մինիմումը՝ անյայտացածների նկատմամբ, հասնում է 1 հոգու (Բարեատինսկ. և Գորչակովսկի փող.), իսկ սպանուածների նկատմամբ հասնում է 2 հոգու (III-րդ Պարալելնի փող.)։ Եղել են միայն 12 փողոցներ (շատ փոքր ու աննշան փողոցներից), ուր չեն եղել սպանութեան և անյայտացման դէպքեր։

Նախ քան անյայտացածների, որպէս մարդկային զոհերի որոշ կաթեգորիայի մասին խօսելը, ստորև ծանօթանանք նրանց սեռերի և հասակների տոկոսների փոխյարաբերութիւնների հետ։

---

[1]) Անյայտացածների այդքան մեծ թիւը (241 հ.) պիտի բացատրել նրանով, որ նրանց մեծագոյն մասը փաստօրէն սպանուել է կոտորածների օրերին, բայց որովհետև սպանութիւնը եղել է տանից դուրս և տանը մնացածները պատասխանել են մեր աշխատակիցներին այդ զոհերի նկատմամբ, որ նրանք կիրակի օրը (սեպտ. 15-ին) դուրս են գնացել և չեն վերադարձել, ուստի մենք համարում ենք նրանց իբրև կորածներ և հաշւում ենք անյայտացածների շարքում։

[2]) Յիշեցնում ենք ընթերցողներին, որ 5248 սպանուածները միայն ցուցակագրուածներն են. իսկ բոլոր սպանուածների ընդհանուր թիւը հասնում է 8988 հոգու։

Անյայտացածների տոկոսները ըստ սեռերի

Թաղամասեր	Արական սեռի տոկոսը	Իգական սեռի տոկոսը	
I Թաղամ.	87,67	12,33	
II »	75,00	25,00	
III »	71,43	28,57	
IV »	66,66	33,34	
V »	91,04	8,96	
VI »	75,56	24,44	
VII »	73,67	26,33	
VIII »	75,66	24,34	
IX »	91,94	8,06	
X »	87,60	12,40	
Բալախանի	90,00	10,00	
Խառը փողոց.	92,31	7,69	
Միջին թուով	**82,06**	**17,94**	

Առաջին իսկ հայեացքից պարզ երևում է, որ ըստ սեռերի անյայտացածների տոկոսական յարաբերութիւնները Թաղամասերում դասաւորուած են այլապէս, քան սպանուածները։ Ընդհանուր առմամբ սպանուածներից 71,71$^0/_0$ պատկանում են արական սեռին, իսկ 28,29$^0/_0$ իգական սեռին։ Մինչդեռ անյայտացածների նկատմամբ արական սեռի տոկոսը շատ աւելի մեծ է, ոչ պակաս, քան 82,06$^0/_0$, իսկ իգականը աւելի փոքր՝ 17,94$^0/_0$։ Սպանուածներից (արական սեռից) մաքսիմում տոկոսը հասնում է 92,48-ի (Բալախանիում), մինիմումը 61,65-ի (VI-րդ Թաղամասում), իսկ անյայտացածների մաքսիմում տոկոսը հաւասար է 92,31-ի (խառն փողոցներ), մինիմումը՝ 71,43-ի (III-րդ Թաղամասում)։ Հայաշատ Թաղամասերում ամենուրեք անյայտացած արականների Թիւը գերազանցում է սպանուած արականների տոկոսներից. VII-րդ Թաղ. անյայտացածների տոկոսը կազմում է 73,67$^0/_0$, սպանուածներինը՝ 71,45$^0/_0$, VIII-րդ Թաղամասի առաջինի տոկոսը հաւասար է 75,66$^0/_0$, երկրորդինը՝ 72,26$^0/_0$. IX-րդ Թաղամասում անյայտացածների տոկոսը կազմում է շատ աւելի՝ 91,94$^0/_0$, իսկ սպանուածների տոկոսը՝ 70,04։

Շատ բնական է, որ արական սեռից անյայտացածների տոկոսը աւելի մեծ է, քան սպանուածներինը։ Մենք տեսանք, որ անյայտացածների գերագոյն մեծամասնութիւնը տեղի է ունեցել կոտորածներից յետոյ՝ «խաղաղութիւնը» վերականգնելուց և Ազերբէյջանի իշխանութիւնը հաստատուելուց յետոյ։ Եթէ կոտորածների և կողոպուտների խառը, անարխիական և

շտապ անցքերի օրերին բաւականաչափ զոհեր եղել են նաև կին սեռից, ապա յետոյ, իշխանութեան րեժիմի օրով, պէտք է անյայտացածների մէջ կին սեռից զոհեր անհամեմատ քիչ լինէին, որովհետև տիրող նպատակադիտակից կուրսը յատուկ դիտաւորութեամբ հետևում էր հայ տղամարդ սեռին. Թող հայութիւնը վերածուի ու դառնայ կանանց ու երեխաների մի ժողովուրդ, ինչ փոյթ. գլխաւոր հարուածներն ուղղուած էին հայ տղամարդկանց դէմ. և այդ հարուածները աւելի ուժեղ ու զգալի էին «տևական խաղաղութեան»—զոհերի ազատ ընտրութեան-օրերին, քան կոտորածների երեքօրեայ շփոթի ժամանակ[1]։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են դասաւորուած անյայտացածներն ըստ հասակների՝ մեզ յայտնի կաթեգորիաներով.

Անյայտացածների տոկոսներ ըստ հասակների

Թաղամ.	Արական սեռ					Իգական սեռ				
	1—15 տ. տոկոսը	15—25 տ. տոկոսը	25—40 տ. տոկոսը	40—60 տ. տոկոսը	60—85 տ. տոկոսը	1—15 տ. տոկոսը	15—25 տ. տոկոսը	25—40 տ. տոկոսը	40—60 տ. տոկոսը	60—85 տ. տոկոսը
I Թաղ. .	5,17	13,79	48,27	25,86	6,90	12,50	37,50	37,50	12,50	—
II » .	—	20,00	60,00	—	20,00		100,00	—	—	—
III » .	20,00	—	40,00	20,00	20,00	50,00		50,00	—	—
IV » .	—	50,00	50,00	—	—	—	—	66,66	33,33	—
V » .	7,14	28,64	37,70	24,99	3,57	—	25,00	75,00		—
VI » .	7,74	33,82	41,79	13,48	3,37	19,35	28,94	37,39	12,90	3,23
VII » .	6,63	26,02	43,37	18,37	5,61	18,52	33,75	35 80	9,88	2,47
VIII » .	4,61	21,25	55,57	13,69	6,39	6,78	55,62	33,33	3,23	0,80
IX » .	4,17	42,48	41,09	8,99	3,25	22,03	44,06	23,01	6,95	1,69
X » .	14,45	26,32	24,37	22,43	11,11	39,13	30,43	17,39	13,04	—
Բալախանի	11,11	33 33	55,55	—	—	—	—	—	—	—
Սառն փող.	11,37	29,54	38,63	18,18	2,27	—	—	100.00	—	—

Այս աղիւսակի մէջ ևս գտնում ենք նոյն հիմնական փաստը, ինչ նկատեցինք սպանուածների ըստ հասակների կազմած աղիւսակում։ Ամենամեծ չափով զոհերի տոկոսներ գտնում ենք միջին սիւնակում արական սեռից 25—40 տարեկան հասակում։ Եւ այստեղ ևս պահպանում են իրանց ար-

[1]) Արնախում բանդաների առաջին հարցը՝ բակից ներս մտնելուց, եղել է. «կա՞ն այստեղ հայ տղամարդիկ»։ Իրանց առաջին և գլխաւոր զոհերը որոնել են նրանք արական սեռի մէջ առհասարակ։ Իսկ կոտորածներից յետոյ, «խաղաղ» ժամանակ, հայ տղամարդիկ արդէն թաքնուած չէին այլևս. հեշտ էր ցանկացած թւով զոհեր ընտրել ամեն տեղ՝ տանը թէ խանութում, փողոցում թէ բազարում, գրասենեակում թէ այլ աշխատավայրում։ Բռնում, անյայտացնում էին իսպառ, ոչ բանտում կարելի էր գտնել և ոչ դիերները բանակած տեղում. ուր էին տանում, ինչ պայմաններում էին թնում, ինչպէս էին վարւում և ինչպէս սպանում անյայտացածներ կոչուած դժբաղդ զոհերին—յայտնի չէր ոչ ոքի։

ժէքը այն բացատրութիւնները, որ մենք տուինք սպանուածների նոյն կաթեգորիայի վերաբերեալ։ Տղամարդ սեռի արական հասակը բնականաբար աւելի մեծ չափերով պիտի տուժէր այն թշնամու հարուածներից, որը յատուկ դրդապատճառներ ունէր իր հայաջինջ և հայահալած քաղաքականութեան մէջ։ 25—40 տար. հասակի տուած զոհերի մաքսիմումը հաւասար է՝ անյայտացածներից 60,00$^{0}/_{0}$-ի (II թաղ.), սպանուածներից 75,00$^{0}/_{0}$ (դարձեալ II թաղ.). մինիմումը հաւասար է՝ անյայտացածներից 24,37$^{0}/_{0}$ (X թաղ.), սպանուածներից 27,27$^{0}/_{0}$ (III թաղ.)։ Յատկապէս հայկական գլխաւոր թաղամասերում յիշածս հասակի տոկոսները դասաւորուած են այսպէս. VII-րդ թաղ. անյայտ. 43,37$^{0}/_{0}$, սպան. 34,31$^{0}/_{0}$, VII թաղ. անյայտ. 55,57$^{0}/_{0}$, սպան. 32,31$^{0}/_{0}$, IX թաղ. անյայտաց. 41,09$^{0}/_{0}$, սպան. 45,53$^{0}/_{0}$։ Միայն վերջին թաղ. սպանուածների տոկոսը գերազանցում է անյայտացածների տոկոսից. միւս երկու թաղ., մանաւանդ VIII-ում, գտնում ենք հակառակ յարաբերութիւնը։ Միջին թւով ստանում ենք այդ երեք թաղամասերում հետևեալ տոկոսները՝ անյայտացածներից 46,67$^{0}/_{0}$, սպանուածներից 37,38$^{0}/_{0}$։

Արական սեռի միւս հասակներից աչքի են ընկնում որոշ թաղամասերում 15—25 տարեկանների տոկոսները. օրինակ՝ IV թաղ. 50,00$^{0}/_{0}$, VI թաղ. 33,82$^{0}/_{0}$, IX-ում 42,48$^{0}/_{0}$, Բալախանիում՝ 33,33$^{0}/_{0}$։ Միջին թւով վերցրած, այդ հասակի անյայտացածների տոկոսը ևս, այն է՝ 27,10$^{0}/_{0}$, գերազանցում է նոյն հասակի սպանուածների միջին տոկոսից—23,93$^{0}/_{0}$։

Ինչ վերաբերում է իգական սեռի տոկոսներին, այդտեղ յարաբերութիւնները՝ մեր դիտողութեան ենթակայ գլխաւոր կէտի նկատմամբ, էապէս այլակերպ են դասաւորուած։ Մենք տեսանք, որ սպանուածների աղիւսակում խոշոր տոկոսներով աչքի է ընկնում 1—15 տար. մանկահասակ աղջիկների սպանութեան փաստը։ Այնտեղ տոկոսների մաքսիմումը հասնում էր 72,43-ի (Բալախանի), մինիմումը՝ 10,53-ի (IV թաղ.), մինչդեռ անյայտացածների աղիւսակում իգական սեռի յիշեալ հասակը համեմատաբար փոքր տոկոսներ է տալիս. սրանց մաքսիմումը հասնում է 50.00$^{0}/_{0}$-ի (III թաղ.), մինիմումը 6,78$^{0}/_{0}$-ի (VIII թաղ.)։ Միջին թւով վերցրած իգական սեռի այդ հասակի անյայտացածների տոկոսը հաւասար է 24,04-ի, իսկ սպանուածներինը՝ 34,48-ի, այսինքն տասը տոկոսով աւելի։ Անյայտացած կանանց մէջ գերակշռող տեղ բռնում են 15—25 տ. և 25—40 տ. հասակաւորների տոկոսները. սրանք մրցում են մէկը միւսի դէմ. կան թաղամասեր, ուր գերազանցում են մէկի տոկոսները, և թաղամասեր, ուր գերազանցում են միւս հասակի տոկոսները։ Միջին թւով վերցրած, բոլոր թաղամասերում, 15—25 տարեկանների տոկոսը կազմում է 44,46$^{0}/_{0}$, իսկ 25—40 տարեկաններինը՝ 47,61$^{0}/_{0}$։ Յաջորդ, աւելի բարձր հասակաւորները համեմատաբար չնչին տոկոսներ են տալիս, մանաւանդ 60—85 տարեկանները։

Այժմ մի էական հարց. արդեօք ինչ վիճակի են ենթարկուել և ինչ վախճան ունեցել այսպէս կոչուած անյայտացածները՝ զոհերի այդ բացառիկ կաթեգորիան։

Անյայտացածների բացարձակ մեծագոյն մասը, և իրաւ ոչ պակաս քան 90$^{0}/_{0}$-ը, նոյնքան ոչնչացուած է, որքան երեք օրուայ կոտորածներին անմիջապէս զոհ գնացածները։ Տարբերութիւնը միայն այն է, որ վերջինները

«բաղդ» են ունեցել իրանց մահկանացուն կնքելու անմիջական հարուածներից, առանց Թիւրք-Թաթարական գեհենի տանջանքներն ու չարչարանքները կրելու, որոնց ենթարկուել են «անյայտացածներ» կոչուած դժբաղդ զոհերը։

Մենք հիմք ունենք ընդունելու, որ անյայտ կորածների $80^{0}/_{0}$-ը ոչընչացուած են։ Մեր անկետան սկսուել է նոյեմբերի կէսերին և տևել մինչև 1919 Թ. մարտի վերջերը։ Չորս ամիս ու կէսի ընթացքում երեք անգամ լրացուցիչ և վերստուգիչ աշխատանք է կատարուած բոլոր Թաղամասերում և փողոցներում, այնպէս որ սկզբնական Թուերը անյայտացածների վերաբերեալ շարունակ ստուգուել են։ Միայն չնչին մասը, հազիւ $10^{0}/_{0}$ է յայտնուել կամ գտնուել հազարաւոր կորածներից։ Նշանակում է անյայտացածների ընդհանուր Թուից՝ 3572 հոգուց, պէտք է անհետ կորած կամ անյայտ պայմաններում սպանուած համարել 3215 հոգին կամ $90^{0}/_{0}$-ը։

Այսպէս ուրեմն երկու կաթեգորիայի—սպանուածների և անյայտացածների—զոհերը միասին վերցրած ստանում ենք (8988 հոգ. սպան. և 3572 հ. անյայտաց.) մի պատկառելի Թիւ—12,560 հոգի։ Միայն ցուցակագրուած սպանուածները կազմում են՝ 5248 հ. անմիջապէս սպանուածներ (կոտորածի ժամանակ) և 3215 հ. անյայտութեան մէջ սպանուած (կոտորածից յետոյ)—ընդամենը 8463 հոգի։ Իսկ չցուցակագրուած սպանուածների հետ միասին (հանելով անյայտացածների Թուից $10^{0}/_{0}$ կամ 357 հոգի գտնուածները) ստանում ենք 12,203 հոգի, իբրև զուտ սպանուածների մի Թիւ։

V. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԸ

Բագուի անկման կամ ողբերգութեան զոհերի մի յատուկ կաթեգորիան—և իրաւ, երրորդ կաթեգորիան—են կազմում այսպէս անուանուած գերիները։ Գերիների կաթեգորիան, իր հերթին վերցրած, բաղկացած էր երկու մասից՝ զինուորներից կամ պատերազմական գերիներից—բոլորը բացառապէս հայեր[1])—և քաղաքացիներից։

Պատերազմական գերիների հարցը պարզ էր և հասկանալի։ Քաղաքն ընկնելուց յետոյ Թշնամին պիտի առաջին հերթին զինաթափ անէր և գերի վերցնէր հակառակորդի զինուած ուժերը։ Տարբեր է, անշուշտ, այն հարցը, Թէ ինչպէս է վերաբերուել յաղթող Թշնամին դէպի իր ձեռքն ընկած գոհերը։ 'Ի հարկ է, ոչ այնպէս, ինչպէս սովորաբար վարւում են նման դէպ-

---

1) Էվակուացիան շատ և անկազմակերպ լինելու պատճառով, Բագուի ճակատում մօտ մի քանի հազար զօրք էր մնացել և գերի ընկել տաճիկների ձեռքը. դրանց մէջ եղել են հայեր, ռուսներ և շատ սակաւաթիւ անգլիացիներ։ Բայց առաջին իսկ շաբաթներում տաճիկ հրամանատարութիւնը բանակցելով Բիչերախովի և Ցենտրոկասպիի ներկայացուցիչների հետ, ազատում է ռուս և անգլ. գերիներին, փոխանակելով նրանց Նարգին կղզում գտնուող Թիւրք գերիների հետ։ Հայ գերիները պահւում են մինչև վերջ։

քերում՝ պատերազմական գերիներին վերաբերող կանոնների և իրաւունքների շրջանակներում, այլ այնպէս, ինչպէս աւանդաբար թիւրքերը վարւում են հայերի հետ՝ վրիժառութեան գերաստիճան զգացման բոպէներին։

Աւելի բարդ էր հայ գերիների հարցը։

Ի՞նչն էր ստիպում թիւրք հրամանատարութեան և թաթար կառավարութեան իրանց «մայրաքաղաքի» հայ բնակիչներից գերիներ վերցնելու։ Պատերազմական ժամանակի հարկադրողական պահանջ էր դա, թէ՞ քաղաքականօրէն վնասակար եւ թշնամի գրուպպաների դէմ ուղղուած մի անհրաժեշտ նախազգուշացուցիչ միջոց։ Ոչ մէկը և ոչ միւսը։ Գերիները—դրանք տներից դուրս քաշած եւ փողոցներում մասսայական շուրջկալութեամբ հաւաքած հայ խաղաղ ու անզէն քաղաքացիներ էին՝ ամեն հասակի, դիրքի ու սեռի, որոնց «մեղքը» նրանց հայ լինելու փաստն էր, իսկ գերելու դրդապատճառները հայկական տարրը ճնշելու և խեղդելու քաղաքականութեան մէջ պիտի որոնել։ Գերութիւնը—հալածանքի եւ բնաջնջման քաղաքականութեան մեթոդներից մէկն էր, որ սիստեմատիկօրէն կիրառւում էր Բագուի հայութեան դէմ երկու ամսուայ ընթացքում։

Նախ քան այդ երրորդ կաթեգորիայի զոհերի վիճակի մասին խօսելը, անցնենք մեր անկետային տուեալներին և որոշենք նրանց թուական մեծութիւնն ու դասաւորութիւնը։

I. ԱՂԻՒՍԱԿ

Հայ գերիների թիւը ըստ թաղամասերի

Թաղամ.	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	III Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	IV Գերուածներ	V Գերուածների %-ը ըստ հայ բնակիչն. թւի մինչև կոտոր.	VI Գերուածների %-ը ըստ հայ բնակ. թւի էվակ. յետոյ	VII Գերուածների %-ը ըստ հայ բնակիչն. թւի կոտոր. յետոյ
I Թաղ. . .	2224	1339	1243	127	5,71	9,47	10,23
II » . .	152	111	96	10	6,58	9,01	10,42
III » . .	323	248	212	6	1,85	2,42	2,83
IV » . .	395	242	143	15	3,80	6,20	10,48
V » . .	5122	3234	3084	149	3,00	4,64	4,83
VI » . .	7219	4236	3769	254	3,52	5,99	6,76
VII » . .	16670	10736	9928	668	4,00	6,22	6,92
VIII » . .	33393	22293	20323	1349	4,04	6,05	6,64
IX » . .	19112	12764	12023	745	3,89	5,83	6,20
X » . .	2019	962	466	27	1,33	2,81	5,89
Բալախանի	1535	827	661	28	1,82	3.39	4 24
Խառը փողոց.	509	388	184	18	3,53	4,64	9,67
Ընդամենը	88673	57380	52132	3,396	3,82	5,90	6,51

Ինչպէս սպանուածների և անյայտացածների, այնպէս էլ գերիների նկատմամբ, ինչ կասկած, Թուական բացարձակ տուեալներով ամենից շատ տուժել են մեզ յայտնի հայաշատ Թաղամասերը։ VIII-րդ Թաղ. հայ բնակչութիւնից վերցրել են 1349 գերիներ, որոնք կազմում են 4,04% Թաղամասի ողջ հայ բնակչութեան Թւի և 6,05% քաղաքում մնացած (էվակուացիայից յետոյ) հայ բնակիչների Թւի։ IX-րդ Թաղ. հայ գերիների Թիւը հասնում էր 745 հոգու (կամ 3,89% և 5,83%). վերջապէս VII-րդ Թաղ. հայ գերիները կազմում էին 668 հոգի (կամ 4,00% և 6,22%)։ Ամենանուազ Թւով գերիներ, բացարձակ իմաստով վերցրած, տուել է III-րդ Թաղ. (ընդամենը 6 հոգի), իսկ յարաբերաբար վերցրած՝ ամենափոքր տոկոսը գերիների տուել է X-րդ Թաղ. (1,33%-ով)։ Ընդհակառակը գերիների ամենամեծ տոկոսը գտնում ենք II-րդ Թաղ. (6,58%-ով)։ Հանելով հայ ազգաբնակութեան սկզբնական Թւից փախածների (էվակուացիայից յետոյ) և սպանուածների (կոտորածից յետոյ) Թիւը, քաղաքում կենդանի մնացած հայ բնակիչների Թւի նկատմամբ՝ գերիների տոկոսը բարձրանում է մեծ չափերով, մաքսիմումը հասնելով 10,48%-ի (IV-րդ Թաղ.), իսկ մինիմումը 2,83%-ի (III-րդ Թաղ.)։

Հայ գերիների ընդհանուր Թիւը բոլոր Թաղամասերում, միասին վերցրած, կամ ամբողջ քաղաքում հասնում էր ոչ պակաս քան 3396 հոգու կամ ամբողջ հայ ազգաբնակութեան Թւի 3,82% նախ քան քաղաքի անկումը, 5,90% էվակուացիայից յետոյ և 6,51% կոտորածից յետոյ մնացած բնակիչների Թւի։ 3396 հոգին ցուցակագրուած գերիների Թիւն է, որը շատ աւելի համեստ է, քան, իրապէս, գերիների ընդհանուր Թիւը կարող է եղած լինել, ի նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ գերիների մէջ պատկառելի տոկոսը եղել են ճակատից վերցրած պատերազմական գերիներ (զինուորներ), որոնց մէջ եղել են ուրիշ վայրերից եկած ֆրոնտովիկներ կամ այնպիսի ամուրիներ ու մենակեացներ, որոնց գերի վերցնելու մասին ոչ ոք որևէ բան իմանալ և մեր անկետային հարցերին պատասխանել չէր կարող։ Նշանակում է մեր ցուցակագրութիւնից դուրս են մնացել բազմաթիւ գերիներ, և բնական կլինէր, եթէ մենք այդ դուրս մնացածները – հաշուելով նրանց առնուազը 20%—գումարէինք ստացած Թւի հետ։ Այդ հաշւով կստանանք 4246 հոգի հայ գերիներ, որոնցից 3396 հոգին ցուցակագրուած են, իսկ մօտ 850 հոգին ցուցակագրութիւնից դուրս մնացած։

Եթէ երեք յայտնի կաթեգորիաների ցուցակագրուած զոհերի Թիւը համադրենք իրար մի քանի գլխաւոր Թաղամասերում, կստանանք հետևեալը.

Թաղամաս.	Սպանուածներ	Անյայտացածներ	Գերուածներ	Միասին	Բոլորի տոկոսը
V Թաղամ.	150	95	149	394	7,70
VI »	467	193	254	914	12,66
VII »	808	469	668	1945	11,6[illegible]
VIII »	1970	1409	1349	4728	14,20
IX »	741	903	745	2389	12,50
X »	496	230	27	753	37,29
Ընդամենը	4632	3299	3192	11123	13,31

Ընդհանուր առմամբ, այս վեց թաղամասերի մէջ ամենից շատ տուժել է, անշուշտ, VIII րդ հայկական թաղամասը՝ իր բոլոր կարգի զոհերով. ցուցակագրուած սպանուածների, անյայտացածների և գերիների թիւը միասին վերցրած հասնում է 4728 հոգու, որը իր հերթին կազմում է ոչ պակաս քան 14,20$^{0}/_{0}$ այդ թաղամասի ամբողջ հայ բնակչութեան ընդհանուր թուի։ Այդ տոկոսը գերազանցում է իր մեծութեամբ մնացած թաղամասերի տոկոսներին, եթէ չհաշուենք X-րդ համեմատաբար աննշան թաղամասը իր բարձր տոկոսով (37,29$^{0}/_{0}$)։ Յամենայն դէպս բոլոր թաղամասերի կրած զոհերի միջին տոկոսական թիւը՝ 13,31$^{0}/_{0}$, ամենից մօտ է VIII-րդ թաղամասի զոհերի տոկոսին, իբրև հետևանք այդ թաղամասի զոհերի թուական գերակշռութեան։ Յաջորդ զոհաշատ թաղամասն է IX-ը՝ 2389 զոհերով կամ 12,50$^{0}/_{0}$-ով, ապա VII-ը 1945 զոհերով կամ 11,67$^{0}/_{0}$-ով։ Զոհերի ամենափոքր թիւը և տոկոսը ունեցել է V թաղամասը՝ 394 հոգով կամ 7,70$^{0}/_{0}$-ով։

Բնորոշ է այն հանգամանքը, որ զոհերի զանազան կաթեգորիաներն ունեցել են թուական խիստ տարբեր արտայայտութիւն զանազան թաղամասերում։ Առաջին երեք (V, VI և VII) թաղամասերում գերուածները թուապէս գերազանցում են անյայտացածներին. IX թաղ. նրանք գերազանցում են նոյն իսկ սպանուածներից, մինչդեռ այդ նոյն թաղ. անյայտացածները թուապէս բռնում են առաջին տեղը, գերազանցելով նաև գերուածներից։ Վերջիններս ամենափոքր թիւ տուել են X թաղամասում, ընդամենը՝ 27 հոգի։ Բացի IX թաղամասից, մնացած բոլոր մասերում սպանուածները՝ թուապէս բռնում են առաջին տեղը։ Թուապէս ամենամեծ չափով գերազանցում են նրանք VIII-րդ թաղամասում, և իրաւ անյայտացածներից՝ 561 հոգով, իսկ գերուածներից՝ 621 հոգով։ Այդ թաղամասի բոլոր զոհերի (միայն երեք մեզ արդէն յայտնի կաթեգորիաներից) ընդհանուր թուի մէջ սպանուածների տոկոսը հաւասար է 41,70-ի, անյայտացածներինը՝ 29,80-ի և գերուածներինը՝ 28,53-ի։ Իսկ տոկոսաբար սպանուածները ամենամեծ չափով գերազանցում են X-րդ թաղամասում, ուր նրանց տոկոսը հաւասար է 65,87-ի, անյայտացածներինը՝ 30,54-ի, իսկ գերուածներինը միայն 3,60-ի։

Ինչպէս ընդհանուր գումարներից պարզ երևում է, զոհերի ամեն մի կաթեգորիայի թուական մեծութիւնը՝ վեց թաղամասերում միասին առած, կազմում է բացարձակ մեծամասնութիւնը քաղաքի բոլոր զոհերի ընդհանուր թուի։ Սպանուածների թիւը վեց թաղ. հաւասար է 4632 հոգու, կամ 88,26$^{0}/_{0}$-ի Բագւում եղած բոլոր սպանուածների ընդհանուր թուի։ Անյայտացածների թիւը հաւասար է 3299 հոգու կամ 92,36$^{0}/_{0}$-ի, իսկ գերուածներինը հաւասար է 3192 հոգու կամ 94,00$^{0}/_{0}$-ի։ Ինչպէս տեսնում ենք, յարաբերաբար վերցրած գերուածների տոկոսը՝ քաղաքի բոլոր հայ գերիների ընդհանուր թուի նկատմամբ, առաջին տեղն է բռնում իր մեծութեամբ։ Ինչ վերաբերում է երեք կարգի զոհերի ընդհանուր թուին՝ վերոյիշեալ վեց թաղամասերում, դա հաւասար է 11123 հոգու, որի մէջ սպանուածների տոկոսը կազմում է 41,64$^{0}/_{0}$, անյայտացածներինը՝ 29,66$^{0}/_{0}$, գերուածներինը՝ 28,70$^{0}/_{0}$.

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած գերուածների թուերը ըստ փողոցների։

Ժ. ԱՂԻՒՍԱԿ

Հայ գերուածների թւերը ըստ փողոցների

№№	Փողոցներ	I Հայ ընտանիքների թիվը մինչև պատերազմը	II Հայ ընտանիքների թիվը էվակուացիոն ժամանակ	III Հայ ընտանիքների թիվը կոտորածի ժամանակ	IV Հայ ընտանիքների թիվը ապաստանելու ժամանակ	V Գերեվարված	VI Հայ ընտանիքների թիվը ներկայումս գրանց.
1	Ազիատսկի փողոց	375	247	238	230	10	220
2	Արմեանսկի »	52	38	20	18	—	18
3	Բելվիւ հրապարակ	140	63	63	63	10	53
4	Բալախանսկի փ. և շոսսէ . .	4630	2786	2576	2382	388	1994
5	Բախլովսկի փողոց I-ին . .	720	459	439	414	35	379
6	» » II . .	110	71	54	41	27	14
7	» » III . .	948	619	609	576	63	513
8	Բարեատինսկի փողոց . . .	111	73	70	69	3	66
9	Բիրժևայա » . . .	2259	1538	1460	1425	29	1396
10	Բոնդարնի » . . .	1153	724	643	609	43	566
11	Բուդագովսկի » . . .	1029	643	427	310	205	105
12	Բոլշոյ-Մորսկոյ » . . .	2807	1725	1599	1520	51	1469
13	Գորչակովսկի » . . .	152	144	114	113	2	111
14	Գիմնազիչեսկի » . . .	1017	541	500	457	103	354
15	Գոգոլեսկի » . . .	229	170	141	119	11	108
16	Գուբերնսկի » . . .	164	86	76	69	2	67
17	Եարմորոչնի » . . .	232	144	130	111	18	93
18	Զավոկզալնի » I-ին	216	135	Ընդամենը 4219	Ընդամենը 3957	Ընդամենը 164	Ընդամենը 3793
19	» » II	2821	2127				
20	» » III	122	101				
21	» » IV	1430	987				
22	» » V	413	241				
23	» » VI	622	395				
24	» » VII	79	62				
25	» » VIII	416	277				
26	» » IX	109	80				
27	Լենցովսկի միջափողոց . . .	77	54	50	47	5	42
28	Կանխտապլինսկի փ. I-ին	3023	2050	1783	1679	193	1486
29	» » II	1356	936	858	793	17	776
30	» » III	1802	1018	904	795	93	702
31	» » IV	3462	2410	2220	2057	133	1924
32	» » V	2535	1512	1409	1338	132	1206
33	» » VI	1364	931	873	850	10	840
34	» » VII	1005	588	516	461	13	448
35	» » VIII	894	650	627	623	6	617
36	» » IX	765	459	453	443	15	428
37	» » X	628	342	324	306	2	304
38	» » XI	168	151	87	77	10	67
39	Կամենխտի փողոց	279	189	168	136	10	126

№№	Փողոցներ	I Հայ բնակչ. թիվը մինչև պատերազմը	II Հայ բնակչ. թիվը [illegible]	III Հայ բնակչ. թիվը [illegible]	IV Հայ բնակչ. թիվը [illegible]	V Գերուածք	VI Հայ բնակչ. թիվը [illegible]
40	Կոլխուրակինսկի փողոց . . .	85	50	42	38	3	35
41	Կրասնովոդսկի » . . .	456	272	234	205	52	153
42	Կարանտիննի » . . .	315	211	188	177	20	157
43	Կիրպիչնի » . . .	11	8	8	8	—	8
44	Մերկուրեսկի » . . .	525	346	339	334	15	319
45	Մարիինսկի » . . .	315	206	170	164	12	152
46	Միխայլովսկի » . . .	31	25	25	25	7	18
47	Միլիոննայա » . . .	1081	651	625	603	8	595
48	Մագազիննի » . . .	744	380	342	314	26	288
49	Մոլոկանսկի » . . .	1579	949	900	876	47	829
50	Մալօ-Մորսկոյ » . . .	1082	638	620	616	91	525
51	Նաբերեժնի » . . .	20	15	10	6	-	6
52	Նիկոլաեսկի » . . .	87	60	56	53	7	46
53	Նիժնէ Պրիուտսկ. » . . .	2352	1884	1776	1723	46	1677
54	Ձագրովի » . . .	508	350	197	159	12	147
55	Պորոխովոյ » . . .	3292	2437	2206	1990	173	1817
56	Պարալելնի » III րդ . .	23	23	21	21	—	21
57	Պերսիդսկի » . . .	34	32	32	32		32
58	Ըումելեննի » . . .	2176	1307	1209	1144	47	1097
59	Սադովի » . . .	11	11	11	11	—	11
60	Ստարօ-Պոչտովի » . . .	1	—	—	—	—	—
61	Ստարօ-Պոլից. » . . .	152	132	132	132	—	132
62	Սլոբոդսկայա » I-ին. .	2199	1473	1425	1389	53	1336
63	» » II . .	2499	1656	1529	1426	57	1369
64	» » III . .	1047	556	495	440	17	423
65	Սուրօ խանսկի » . . .	758	579	474	447	26	421
66	Ստանիսլաւսկի » . . .	4988	3146	2993	2877	189	2688
67	Վոդովոզնի » . . .	32	22	22	22	—	22
68	Վոկզալնի » . . .	580	355	344	329	13	316
69	Վորոնցովսկի » . . .	59	52	48	46	—	46
70	Վրանգելսկի » . . .	88	75	62	58	3	55
71	Վերխնէ Պրիուտ. » . . .	3876	3074	2938	2833	87	2746
72	Տելեֆոննի » . . .	4275	2663	2525	2416	276	2140
73	Տորգովի » . . .	4196	2754	2612	2519	86	2433
74	Տրամվայնի » . . .	25	18	18	18	—	18
75	Տատեանինսկի » . . .	538	290	262	248	66	182
76	Տատարսկի » . . .	70	33	29	25	—	25
77	Ցիցիանովսկի » . . .	26	26	26	26	—	26
78	Ցերկովնի » . . .	208	117	100	97	—	97
79	Օլգինսկի » . . .	60	41	41	41	—	41
80	Ֆաբրիչնի » . . .	31	7	7	7	—	7
81	Խառը փողոցներ » . . .	509	388	184	76	18	58

№№	Արուարձաններ	I Հայ բնակիչ. թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչ. թիւը էվակուաց. յետոյ	III Հայ բնակիչ. թիւր կոտորածից յետոյ	IV Հայ բնակիչ. թիւը անյայտ. յետոյ	V Գերուածներ	VI Հայ բնակիչ. թիւը հանած գերուած.
1	Բալախանի.	1535	827	661	634	28	606
2	Բիբի-Հէյբաթ	446	190	141	115	2	113
3	Հայկաւան	3193	1891	1600	1415	54	1361
4	Հայոց-Քիշլի	836	470	440	199	25	174
5	Սև-Քաղաք	1503	828	510	304	16	288
6	Սպիտակ-Քաղաք	516	134	?	?	11	?
	Ընդամենը	88673	57380	52132	48560	3396	45164

Թուապէս վերցրած գերուածների ամենամեծ քանակ տուել է Բալախանսկի փող. և շուսէն ոչ պակաս, քան 388 հոգի կամ 8,40% ընդհանուր թուի։ Ջոհերի այդպիսի մեծ թիւ չեն տուել որևէ փողոցում ոչ սպանուածները և ոչ անյայտացածները։ Գերուածների ամենանուազ թիւ տուել են Բիբի-Հէյբաթը՝ 2 հոգի և Վրանգելսկի փող.՝ 3 հոգի. մօտաւորապէս այն միջինումը, ինչ նկատեցինք մենք սպանուածների և անյայտացածների աղիւսակներում։ 16 փողոցներում չեն եղել գերութեան դէպքեր, մինչդեռ սպանուածների և անյայտացածների աղիւսակներում, ինչպէս տեսանք, զոհերի դէպքեր չեն եղել միայն 12 փողոցներում։ Համեմատելու համար երեք կաթեգորիաների տուած զոհերը առանձնապէս տուժած վայրերում, համադրենք ստորև մի շարք գլխաւոր փողոցների զոհերի թուերը։

№№	Փողոցներ	Սպանուածներ	Անյայտացածներ	Գերուածներ	Բոլորը միասին	Բոլորի տոկոսը
1	Սև-Քաղաք	318	206	16	540	35,93
2	Հայկաւան	291	185	54	530	16,91
3	Զավոկզալնի շրջան	276	262	164	702	11,27
4	I Կանիտաային փ.	267	104	193	564	18,65
5	Պարախոդնայա փողոց	231	216	173	620	19,00
6	Բուդագովսկի »	216	117	205	538	52,28
7	Բալախանսկի փ. .	210	194	388	792	17,11

№№	Փողոցներ	Սպանուածներ	Անյայտացածներ	Գերուածներ	Բոլորը միասին	Բոլորի տոկոսը
8	Խառը փողոցներ .	204	108	18	330	64,83
9	IV Կանխտապլին. փ.	190	163	133	486	14,04
10	Սպիտակ-Քաղաք .	178	24	11	213	41,30
11	Բալախանի	166	27	28	221	14,40
12	Ստանիսլաւսկի փ.	153	116	189	458	9,18
13	Ջագրովի	153	37	12	202	39,76
14	Հայոց-Քիշլի . . .	30	241	25	296	35,41
15	Տելեֆոննի փողոց .	138	109	276	523	12,23
	Ընդամենը .	**3021**	**2110**	**1985**	**7116**	**18,04**

Այս 15 փողոցներում և վայրերում եղած զոհերի թուերը՝ առանձին-առանձին վերցրած, կազմում են բացարձակ մեծամասնութիւն քաղաքի և (շրջանների) բոլոր հայ զոհերի (միայն երեք կաթեգորիաներից)։ Սպանուածների թիւը (3021 հոգի) կազմում է 57,56% Բագուի բոլոր (ցուցակագրուած) սպանուածների ընդհանուր քանակի (5248 հոգի)։ Անյայտացածների թիւը՝ յիշեալ 15 վայրերում և փող. (2110 հ.), կազմում է 59,07% բոլոր անյայտացածների ընդհանուր թուի (3572 հ.), վերջապէս գերուածների թիւը (1985 հոգի) կազմում է 58,45% բոլոր գերուածների (3396 հ.)։ Զոհերի երեք կաթեգորիաներից ամենամեծ տոկոսը տալիս են անյայտացածները, այնուհետև գերուածները յիշեալ 15 վայրերում և փողոցներում։ Երեք կաթեգորիաները միասին վերցրած (7116 հ.) կազմում են 58,25% այդ կաթեգորիաների ընդհանուր թուի (12216 հոգի)։

Ուշադրութիւն դարձրէք վերոյիշեալ փողոցների վրայ առանձին-առանձին։ Զոհերի ամենամեծ թիւը տուել են Բալախանսկի փող. և շոսէն, ուր սպանուածների, անյայտացածների և գերուածների քանակը հասնում է 792 հոգու, որոնց մէջ գերուածները կազմում են ամենամեծ թիւը՝ 388 հոգի կամ 48,98%, սպանուած 210 հ. կամ 26,51% և անյայտացած 194 հ. կամ 24,50%։

Երկրորդ տեղը՝ զոհերի ընդհանուր թուի մեծութեամբ, բռնում է Ջավոկզալնի շրջ.՝ 702 զոհ., որոնց մէջ սպանուածները կազմում են ամենամեծ թիւը՝ 276 հ. կամ 39,32%, իսկ անյայտաց. 262 հ. կամ 37,32%, գերուածները՝ 164 հ. կամ 23,36%։ Երրորդ տեղը բռնում է՝ իր տուած զոհերի թւով Պորոխովոյ փող.՝ 620 հոգով, որոնց մէջ սպանուածների թիւն է 231 հոգի կամ 37,26%, անյայտացած. 216 հոգի կամ 34,84%, գերուածների թիւը 173 հոգի կամ 28,00%։ Այնուհետև յաջորդում են I-ին Կանխտապլինսկի 564 հոգով (սպան. 267 հ. կամ 47,34%, անյայտաց. 104 հ.

կամ 18,44$^0/_0$, գեր. 193 հ. կամ 32,45$^0/_0$, Սև-Քաղաք 540 հ. (սպան. 318 հ. կամ 59,00$^0/_0$, անյայտաց. 206 հ. կամ 38,15$^0/_0$, գեր. 16 հ. կամ 3,00$^0/_0$)։ Զոհերի ամենափոքր թիւ տուել են՝ Զաղրովի փողոցը՝ 202 հ., որոնցից 153 հ. կամ 75,74$^0/_0$ սպանուածներ, 37 հ. կամ 18,31$^0/_0$ անյայտացածներ, 12 հոգի կամ 6,00$^0/_0$ գերուածներ, այնուհետև յաջորդում է Սպիտակ-Քաղաքը 213 հոգով (որոնցից սպան. 178 հ. կամ 83,60$^0/_0$, անյայտ. 24 հ. կամ 11,27$^0/_0$, գեր. 11 հ. կամ 5,11$^0/_0$) և այսպէս շարունակ։ Ընդհակառակը, յարաբերական իմաստով կամ տոկոսներով վերցրած զոհերի ամենամեծ տոկոսը տուել են՝ խառը փողոցները 64,83$^0/_0$, Բուդագովսկի փող. 52,28$^0/_0$ փողոցում ապրող բնակիչների ընդհանուր թուի, այնուհետև Զաղրովի փողոց՝ 39,76$^0/_0$, Սև-Քաղաք 35,93$^0/_0$ և այլն։

Բնորոշ է վերոյիշեալ փողոցների և վայրերի տուած զոհերի թուական յարաբերութիւնների մէջ մի հանգամանք. նկատելի է, որ քաղաքից դուրս, արուարձաններում, համեմատաբար փոքր քանակով են եղել անյայտացման և մանաւանդ գերութեան դէպքեր. ընդհակառակը, սպանութեան դէպքեր նոյն վայրերում եղել են մեծ քանակով։ Օրինակ՝ Սև-Քաղաքում սպանութեան դէպքերի թիւը հասնում է 318 հոգու, անյայտացածներինը 206 հ., իսկ գերուածներինը 16 հոգու, Հայկաւանում սպան. 291 հ., անյայտ. 185 հ., գեր. 54., Բալախանիում՝ սպան. 166 հ., անյայտ. 27 հ., գեր. 28 հ., Սպիտակ-Քաղ. սպան. 178 հ., անյայտ. 24 հ., գեր. 11 հ. [1])։ Նոյն փաստը նկատելի է նաև շատ թուրքաբնակ փողոցներում, որոնց մէջ առանձնապէս աչքի է զարնում Զաղրովի փողոցը, ուր 153 հ. սպանուածների կողքին եղել են 37 հ. անյայտացածներ և 12 հ. գերիներ։

Այդ բնորոշ փաստը, մէկ թէ միւս դէպքում, բացատրւում է նրանով, որ մի կողմից կոտորածների օրերին սպանութիւնները եղել են աւելի անխնայ՝ հեռու ընկած վայրերում կամ անյայտ անկիւններում, իսկ միւս կողմից կոտորածներից յետոյ այդ անապահով վայրերում մնացած հայ ահաբեկուած բնակիչների մեծագոյն մասը տեղափոխուել է հայկական թաղերը, հետևապէս մնացած բեկորներից անյայտացման և մանաւանդ գերութեան դէպքեր բնականօրէն կարող էին միայն սակաւաթիւ լինել։ Երրորդ կողմից չպիտի մոռանալ այն հանգամանքը, որ անյայտացման և մանաւանդ գերութեան զոհերը, իբրև թիւրք-թաթարական ռէժիմի արդիւնքներից մէկը, սիստեմատիկօրէն որոնում էին հայ բնակչութեան կենտրոններում՝ հայկական թաղամասերում։ Իբրև ապացոյց այդ փաստի կարող է ծառայել այն հանգամանքը, որ հայկական ամենամեծ, ամենահայաշատ փողոցներում գերութեան դէպքերը պատկառելի թուերի են հասնում, աւելի մեծ քանակի, քան սպանութեան դէպքերը։ Այսպէս, օրինակ, Ստանիսլաւսկի փող., այդ ամենահայաշատ մասում, սպանուածների թիւը հաւասար է 153 հ., իսկ գերուածներինը՝ 189 հոգու։ Երկրորդ մեծ փողոցը՝ Բալախանսկին տուել է

[1]) Միակ բացառութիւնը այդ տեսակէտից կազմում է Հայոց-Քիշլին (գիւղ), ուր, ինչպէս գիտենք, սպան. թիւը հաւասար է 30 հոգու, իսկ անյայտ. 241 հ., գեր. 25 հ.։ Մենք բացատրեցինք իր տեղում, որ Հայոց-Քիշլիից անյայտացածների մեծագոյն մասը դուրս են եկել անից կոտորածների օրերին և նրանք նոյնպէս սպանուած են. եթէ մենք, այնուամենայնիւ, դասել ենք նրանց անյայտացածների շարքը, այդ միայն այն պատճառով, որովհետև մեր անկետային հարցերին պատասխանողները ականատես չեն եղել սպանութեան ակտի։

210 սպանուած, բայց 388 գերիներ։ Վերջապէս երրորդ մեծ փողոցը՝ Տելեֆոննին, ունեցել է 138 սպանուած, բայց 276 գերիներ։ Հէնց այդ մեծ փողոցներումն էին յաճախ տեղի ունենում մասսայական շուրջկալներ և ձերբակալութիւնները։

Ինչու էին ձերբակալւում և ու՞ր էին տանում այդ դժբաղդ զոհերին։

Բագուի հայկական ողբերգության ամենատխուր էջերին է պատկանում այն գլուխը, որ վերաբերում է հայ գերիների դրութեան։ Տեղը չէ և վեր է մեր գրչի զօրութիւնից՝ այդ սրտաճմլիկ մանրամասների վրայ կանգ առնելու։

Հայ գերիները՝ զինուորներից թէ քաղաքացիներից միեւնոյն է, տեղաւորուած էին Բագւում և Բագուի շրջանից դուրս՝ գրեթէ բոլոր կայարաններում և կայարանների շրջակայքում։ Միայն քաղաքում և նրա շրջակայքում գերիները ամփոփուած էին մօտ երեսուն տեղերում [1]։ Ամենից մեծ և ամենից զարհուրելի կենտրոնը համարւում էին այսպէս կոչուած Սալեանսկի կազարմաները։

Հայ գերիները պահւում և աշխատեցւում էին աւելի քան բացառիկ պայմանների մէջ՝ դուրս որևէ օրէնքի, կանոնի եւ նորմայի սահմաններից։ Եթէ սրունքն ու գրաստը համարւում են սև աշխատանքի և անողորմ շահագործութեան միշտ ենթակայ անխուսափելի զոհեր, ապա հայ գերիները կատարեալ հիմք ու առիթ ունէին մի քանի կողմերից նախանձելու և՛ սրունքին և՛ գրաստին։ Եթէ սրունքին օգտագործում ու շահագործում են ամեն կերպ և բոլոր եղանակներով, բռնում են ամեն կարգի ծանրութիւններ, ապա մի բանում նրա դրութիւնը անհամեմատ նախանձելի է հայ գերիների դրութիւնից. միշտ և ռացիոնալ կերպով շահագործելու համար սրունքի ֆիզիքականը, սորկատէրը սնում, պահում ու պահպանում է իր իսկ շահերի տեսակէտից, իր շահագործութեան օբիեկտի ֆիզիքական գոյութիւնը։ Սրունքը ենթակայ չէր այն սիստեմատիկ չարչարանքներին, մահամերձ բրածեծի և սովամահութեան ճիրաններում գալարուելու դրութեան, որոնց ենթակայ էին հայ գերիները տիրապետող կուրսի յատուկ կարգադրութեամբ։ Եթէ մէկը որոշ վճարով գնում էր սրունքին, իբրև աւարի ենթակայ օբիեկտի, ապա միայն նրա համար, որպէսզի աշխատեցնէ և շահագործէ այդ «մարդ—ապրանքը»։ Իսկ երբ հայ գերիին գնում և դուրս էին տանում կազարմայից՝ վճարելով դրա համար մի քանի հարիւր րուբլի պահապան ասկեարներին, ապա միայն նրա համար, որպէսզի տանեն նրան մի խուլ ու մութ անկիւն և մորթեն, սպանեն։ Եթէ գրաստին բռնում են կամ լծում սայլին, ապա ոչ այն պատճառով, որ նրան ծեծեն, չարչարեն, բարոյապէս տանջեն ու վիրաւորեն, այլ որոշ իր տեղափոխելու, ծառայութիւն մատուցանելու համար։ Իսկ հայ գերիներին—սաս և կրկնիր՝ մարդ արարածին—ասկեարները օր ցերեկով մարդկանց ներկայութեամբ լծում էին ծանրաբեռ սայլերին և անգութ հարուածներով քշում, պտտեցնում փողոցներով, միայն նրա համար, որպէսզի դրանով հայերին չարչարեն, տանջեն և նրանց մարդկային արժանապատւութիւնը վիրաւորեն։

[1]) Այստեղ խօսքը վերաբերում է բացառապէս գերիներին. բանտարկուածների մասին, իբրև մի առանձին կատեգորիայի, կխօսենք մենք յետոյ։

Առանձնապէս ծանր էր կայարաններում պահուող հայ գերիների դրութիւնը։ Ալիաթից սկսած մինչև Փոյլի կայարանը (Վրաստանի սահմանը), Ադրբէյջանի ողջ երկաթուղային գծի վրայ հազարների հասնող անմեղ զոհերի բանակներ էին տեղաւորուած, որոնց կացութեան և աշխատեցնելու պայմանների զարհուրելիութեան պատկերացումը վեր է երևակայութեան բոլոր թռիչքներից։ Այդ մերկանդամ, մինչև սովամահութեան սահմանին քաղցած և ստրկական պայմաններում աշխատող դժբաղդների համար դիտաւորութեամբ ստեղծուել էր մի այնպիսի դժողք, որտեղ ընկած զոհերը դատապարտուած էին սկզբից և եթ ոչնչացման, համարւում էին մահուան ապահով թեկնածուներ։ Շաբաթների ընթացքում, ողջ-առողջ, առնական կենսալիր հասակում մարդիկ, հետզհետէ տառապելով, սովի ճիրաններում գալարուելով և հիւծուելով, մէկը միւսի յետևից գերեզման էին իջնում։

Կասկած չկայ, որ այդպիսի պայմաններում ամիսներ շարունակ[1]) իրանց ստրկական գոյութիւնը քարշ տուող զոհերից քիչ «բաղդաւորներին» էր վիճակուած «փրկուել» և «ողջ» տուն վերադառնալ։

Ողջ, բայց ոչ առողջ։ Այսպէս անուանուած «ազատուածները» կենդանի դիակների տպաւորութիւն էին թողնում։ Ծանր աշխատանքը, ծեծն ու պատիժները, չարչարանքները և, որ գլխաւորն է, քրոնիքական քաղցը մաշել, հիւծել և կատարեալ կմախքացրել էին շատերին։ Դրանք կենդանի մարդիկ չէին, այլ մարդկանց շուաքներ, ուրուականներ։ Գերութիւնից «ազատուած» այդ կենդանի դիակները մեռնում էին ոչ սակաւ թւով. բժշկական օգնութիւնը և հիւանդանոցային խնամքը չէին կարող փրկել այդ «ողջ» վերադարձողներին՝ այնքան քայքայուած էր նրանց առողջութիւնը։

Այժմ մի հարց. ո՞ր մասը գերիներից մահացել ու ոչնչացել է անհետ, եղաւ այդ գերութեան վայրերում, թէ ազատուելուց յետոյ՝ իրանց տներում կամ հիւանդանոցներում։

Մենք տեսանք, որ հայ գերիների ընդհանուր թիւն էր 4246 հ., որոնցից ցուցակագրուած են 3396 հոգի կամ 80%։

Բոլոր տուեալները ցոյց են տալիս, որ հայ գերիների մեծագոյն մասը մեռել է և միայն համեստ փոքրամասնութիւնն է ազատուել մահուան ճանկերից։ Այսպէս օրինակ Ալէաթ կայարանում եղած 131 գերիներից մեռել են 85 հոգի կամ մօտ 65%, նշանակում է ազատուել են միայն 46 հոգի կամ 35%։ Քիւրդամիրում և Լեաքի կայարաններում եղել են 1200 գերիներ, որոնցից մեռել են 886 հոգի կամ 72,16%, իսկ 334 հոգի կամ 27,84% ազատուել են։ Մենք հաշւում ենք, որ միջին թւով վերցրած հայ գերիներից մեռել են ոչ պակաս քան 70%։ Այդ հաշւով վերցրած գերիների ընդհանուր թւից (4246 հոգի) մեռել են 2972 հոգի՝ կամ 70%, իսկ 1274 հոգի կամ 30% ազատուել են մահացութիւնից։

---

[1]) Թէև տաճկական տիրապետութիւնը Բաքւում տևել է միայն երկու ամիս՝ Սեպտեմբերի 15-ից մինչև Նոյեմբերի 17-ը, բայց հայ գերիները, յատկապէս կայարաններում, մնացել են նոյն ստրկական զարհուրելի վիճակի մէջ շատ երկար՝ մօտ երեք ամիս ևս։ Ադրբէյջանի կառավարութիւնը ազատեց միայն՝ անգլիացիների գալու նախօրեակին, քաղաքում տեղաւորուած գերիների մի մասը. մնացածը՝ մօտ 460 հոգի, աւելի առողջ և երիտասարդ տարրը, քաղաքից ուղարկւում են դուրս, կայարաններ, Նոյեմբերի 16-ին։ Բաքուի Հայոց Ազգ. Խորհրդի բազմիցս դիմումները՝ դաշնակիցների հրամանատարութեան և Ադրբ. կառավարութեան, հայ գերիներին ազատելու համար, ապարդիւն են անցնում։

Ի մի հաշուելով երեք կաթեգորիաները՝ սպանուածներ, անյայտացածներ և գերիներ, իրանց ամբողջութեամբ, ստանում ենք հետևեալը. սպանուածներ՝ 8988 հոգի, անյայտացածներ՝ 3572 հոգի, գերիներ՝ 4246 հոգի. բոլոր զոհերը միասին կազմում են 16806 հոգի։ Դրանցից ոչնչացուել են, իբրև սպանուածներ և մեռածներ, 15175 հոգի, որոնցից սպանուածների թիւը հասնում է 12203 հոգու կամ 80,41%-ի, իսկ մեռածների թիւը հասնում է 2972 հոգու կամ 19,59%-ի։

Սպառելով զոհերի երրորդ կաթեգորիայի կամ գերիների բաժինը, մենք կուզենայինք այս գլխի վերջում վիճակագրական մի քանի հետաքրքքական տուեալներ հաղորդել լրացուցիչ հարցերով առանձնապէս ցուցակագրուած 576 հոգու վերաբերեալ, որոնց մէջ եղել են և՛ անյայտացածներ և՛ գերիներ։[1]

Այդ անկետային հարցաթղթի մէջ եղել են բացի սովորական՝ մեր անկետայից մեզ արդէն յայտնի կէտերից, նաև հետևեալ երեք հարցերը. 1) Ո՞րտեղացի են (որ գաւառից կամ նահանգից) բռնուածները. 2) Ո՞րտեղ են բռնուել նրանք՝ տանը, թէ փողոցում. 3) Ո՞վքեր են բռնել՝ ասկեարնե՞ր, թէ տեղական թուրքեր։ Այդ հարցերին ստացել ենք մենք հետևեալ պատասխանները.

1. ՀԱՐՑ. ՈՐՏԵՂԱՑԻ ԵՆ ԲՌՆՈՒԱԾՆԵՐԸ

Ծագման վայրը.	Բռնուածների թիւը.	
1. Բագու քաղաքից . . .	12 հոգի	
2. Գանձակ » . . .	23 »	Քաղաք և գաւառ միասին 52 հոգի։
3. Գանձակի գաւառից . .	29 »	
4. Շուշի քաղաքից . . .	74 »	Քաղաք և գաւառ միասին 154 հոգի։
5. Շուշու գաւառից . . .	80 »	
6. Ջանգեզուրի գաւառից .	118 »	
7. Գէօկչայ գիւղաքաղաքից	8 »	Քաղաք և գաւառ միասին 31 հոգի։
8. Գէօկչայի գաւառից . .	23 »	
9. Շամախի քաղաքից . .	28 »	Քաղաք և գաւառ միասին 54 հոգի։
10. Շամախու գաւառից . .	26 »	
11. Երևանի նահանգից . .	37 »	
12. Կարեագինի գաւառից .	10 »	
13. Ջեանշիրի » .	23 »	
14. Թիֆլիսից	4 »	
15. Նուխու գաւառից . . .	22 »	
16. Մոսկուայից	1 »	
17. Ղզլարից	7 »	
18. Ղուբայից	1 »	
19. Կաղզուանից	1 »	

[1]) Դրանք Ազգային Խորհրդի Անկետային Յանձնաժողովի կողմից յատուկ յայտարարութեամբ ժողոված տեղեկութիւններ են, որ վերաբերում են 1918 թ. Դեկտեմբեր ամսին։

20.	Թուրքահայեր	22	»
21.	Պարսկահայեր	22	»
22.	Անյայտներ	5	»
	Ընդամենը .	576	հոգի

Անյայտացնելու կամ գերելու նպատակով բռնուած 576 հայերից անյայտ են մեզ միայն 5 հոգու ծագման վայրերը։ Ընդհանուր թուի մէջ գերազանցում են՝ ինչպէս և պէտք էր սպասել, ողջ Շուշու գաւառից (քաղաք և գաւառ միասին վերցրած) ծագում ունեցողները, որոնց թիւը 154 հ., կազմում է աւելի քան 1/4 մասը կամ մօտ 27% ընդհանուր քանակի։ Այնուհետև հետեւում են զանգեզուրցիները՝ թւով 118 հոգի կամ ընդհանուրի 20,70%։ Երկու գաւառներին պատկանողները (Շուշու և Զանգեզ. գաւ.) միասին վերցրած կազմում են 272 հոգի կամ 47,70% ընդհանուր թուի։ Ղարաբաղցիներին հետեւում են շամախեցիները (քաղաք և գաւառ)՝ խիստ մեծ տարբերութեամբ, որոնց թիւն է 54 հոգի կամ ընդհանուրի 9,37%, ապա գանձակեցիները (քաղաք և գաւառ)՝ 52 հոգով կամ 9,03%-ով, այնուհետև Երեւանի նահանգից ծագում ունեցողները 37 հոգով կամ 6,42%-ով, գեօկչայցիները՝ 31 հոգով կամ 5,40%-ով և այսպէս անվերջ։ Այսպէս անուանուած Ազերբէյջանի հայութիւնից (դրա մէջ չհաշուած Շուշու և Զանգեզուրի գաւառացիները) եղել են զոհերի վերոյիշեալ թուի մէջ 195 հոգի կամ 33,86% ընդհանուր քանակի։

2-րդ հարցն էր՝ ո՞րտեղ են բռնուել։ Այդ հարցին ստացել ենք մենք հետեւեալ պատասխանը. 162 հոգի (կամ 28,11%) բռնուել են տանը կամ իրանց բնակարաններում, 232 հոգին (կամ 40,28%) բռնուել են փողոցում և 182 հոգին (կամ 31,55%) բռնուել են զանազան, այլ և այլ տեղերում։ Նշանակում է բացարձակ մեծամասնութիւնը՝ 414 հոգին կամ 71,87% բռնուել են տնից դուրս—փողոցներում, խանութներում և զանազան հաստատութիւնների մէջ։ Դա ցոյց է տալիս, թէ ինչպէս են որսել հայերին։ Ոչ թէ հետեւել և որոնել են որոշ մարդկանց՝ իշխանութեան կարծիքով մեղսակից կամ յանցաւոր այս կամ այն գործում, այլ բռնել են մէկին ու միւսին իբրև հայի, ուր պատահել են և ուր հնարաւոր է եղել այդ։

3-րդ հարցն էր՝ ովքեր են բռնել։ Այդ հարցին ստացել ենք մենք այս պատասխանը. 185 հոգու (կամ 32,12%-ի) բռնել են ասկեարները. 109 հոգու (կամ 18,92%) բռնել են տեղական թուրքերը. 39 հոգու (կամ 5,04%) բռնել են ասկեարները և տեղական թուրքերը միասին։ Անյայտ է, թէ ովքեր են բռնել մնացածներին՝ 243 հոգուն (կամ 42,19%-ին)։ Ի հարկէ, այս վերջինները ևս բռնուել են կամ ասկեարների և կամ տեղական թուրքերի միջոցով. տարբերութիւնը միայն նրանումն է, որ մեր հարցերին պատասխանողները անմիջապէս ականատես չեն եղել ձերբակալութեան ակտին, որպէսզի տարբերել կարողանային նրանք բռնողների ով լինելը։

Մենք անցնենք այժմ յաջորդաբար միւս զոհերի կաթեգորիաներին և առանձին-առանձին դիտողութիւնների նիւթ դարձնենք նրանց։

VI. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾՆԵՐԸ

Բանտարկուածները կազմում են մի առանձին կատեգորիա թիւրք—թաթարական տիրապետութեան և նրա վարած քաղաքականութեան պատճառած զոհերի։ Բանտարկութիւնները եւ տեղի են ունեցել երեքօրեայ կոտորածներից յետոյ՝ անյայտացումների և գերումների հետ զուգընթացաբար։ Ձերբակալում և բանտ էին նետեցնում գլխաւորապէս ինտելիգենտներին։ Նոյն կամայականութեամբ և բռնութեամբ ձերբակալում էին այս կամ այն հայ ինտելիգենտին, որպէս հայի, առանց որևէ մեղադրական յայտարարելու շաբաթների ընթացքում։ Ձերբակալում էին տանը, փողոցում, պաշտօնավայրում և նախ քան բանտ տանելը անգութ ու անողորմ ծեծում էին նրանց մութ ու խոնաւ նկուղներում, փողոցային զարշ լուտանքներով հայհոյում էին զոհի անձը և ազգութիւնը, չարչարում և սպառնում էին այս կամ այն քաղաքական ու հասարակական գործիչի ուր լինելը մատնել և այլն։

Բանտարկեալների դրութիւնը, մանաւանդ անտէրների և անճարակների, աւելի քան անտանելի էր։ Բանտային վարչութիւնը՝ կառավարական հրամանի համաձայն, չէր կրում իր վրայ պահպանութեան և հոգացողութեան ոչ մի պարտականութիւն ու պատասխանատուութիւն։ Մարդիկ կարող էին չորս պատերի արանքում քաղցից ու ծարաւից մեռնել, առանց որևէ օգնութիւն յուսալու և սպասելու։ [1] Ամեն մի բանտարկեալի հարազատներ պիտի հոգային դրսից նրա ապրուստի մասին, իսկ անտէրները պիտի փշրանքներ մուրային հարազատներ ունեցողներից։ Մենք դեռ չենք խօսում բարոյական տանջանքների մասին, որ ամեն մի հայ բանտարկեալ պիտի բնականաբար ունենար։ Կարելի՞ է պատկերացնել ողջ-առողջ փրկուել այն հրէշաւոր րէժիմի երկաթէ վանդակից, որ դեռ երեկ հազարաւոր անմեղ մարդկանց դիակներ է փռել Բագուի հրապարակներում։ Հոգեկան տհարեկուած վիճակում, ոչ ոք ապահով չէր զգում իրան, համարում էին իրանց ժամանակաւոր հիւրեր այս աշխարհում և կամաց ակամայ պիտի հաշտուէին մահուան մտքի հետ։ Ոչ ոքի դէմ կոնկրէտ մեղադրական չյայտարարուելու հանգամանքը բնականօրէն առիթ էր տալիս նրանց մտածելու, որ իրանք՝ բանտարկուածները նախապէս յանցաւոր են, իբրև հայեր, և, որպէս հայերի, ուրիշ պատիժ չի սպառնում նրանց, բայց եթէ մահապատիժ։ Եւ ամենայն հաւանականութեամբ այդպէս կլինէր, եթէ թիւրք-գերմանական բլոկի պատերազմական բաղդը արևմտեան ռազմաճակատներում չդաւաճանէր նրանց։

---

[1] Երբ հայ բանտարկեալների վիճակի մասին հաղորդել էին ներքին գործերի մինիստր Ջեանպոլատին, այդ մարդ-հրէշը պատասխանել է առանձին ինքնագոհութեամբ. «Թող սատկեն նրանք, որպէս շներ»։ Ոչ միայն պետական գանձարանը հրաժարւում էր կերակրել հայ բանտարկուածներին, այլ և սանձարձակ կարգադրութեամբ յափշտակում էին բանտարկուածների մօտ եղած դրամները և զանազան արժէքները, չտալով նրանց հնարաւորութիւն գոնէ իրանց սեփական հաշւով կերակրուելու։ Թիւրք ոստիկանական վերատեսուչը՝ Թեհակըզըին անունով, Նուրի փաշայի տխրահռչակ հերոսներից մէկը, խլացնում է բանտարկուածների դրամները՝ մօտ 30,000 րուբլի և անգլիացիների գալու նախօրեակին հեռանում Բագուից թիւրքական զօրքի հետ միասին։

Այժմ մի հարց. ինչ առանձնայատկութիւն ունեն բանտարկուածները, որպէս զոհերի մի յատուկ կաթեգորիա, որ մենք բաժանում ենք նրանց, օրինակ, գերիներից և զատում առանձին։ Ճիշտն ասած, որևէ հիմնական տարբերութիւն, որ բղխէր մի կամ միւս գրութեան ենթակայ զոհերի ներքին էութիւնից, գոյութիւն չունի։ Երկու դէպքումն էլ անմեղ քաղաքացիներ են նրանք՝ զոհ դարձած արևելեան բռնակալների վրիժառութեան և կամայականութեան։ Այդ երկու կաթեգորիաները տարբերւում են միմեանցից իրանց վիճակով։ Որքան էլ աննախանձելի լինէր բանտարկուածների ծանր վիճակը, յամենայն դէպս տանելի էին նրանց կեանքի պայմանները. օրն 'ի բուն նստած, մեխուած իրանց կամերներում, ստանում էին ուտելիք դրսից և որոշ, թէկուզ անուղղակի, կապ ու յարաբերութիւն պահպանում իրանց հարազատների հետ։ Գերիները, մանաւանդ քաղաքից դուրս տարուածները, դրանք—ինչպէս նկարագրեցինք իր տեղում—քաղցի ու ծարաւի, մերկութեան, ծեծի և ծանր աշխատանքի ենթակայ ստրուկներ էին, մահացութեան ապահով թեկնածուներ, դժոխային պայմաններում տառապող ու հիւծուող դժբաղդ զոհեր։ Ահա որն էր նրանց տարբերութիւնը։ Ուրեմն տարբերութիւնը ոչ թէ զոհերի ներքին էակի, նրանց «գործած յանցանքի» մէջ էր, այլ այն տարբեր ռէժիմների, կեանքի, գոյութեան պայմանների մէջ, ուր ընկել էին այդ զոհերը։

Ի՞նչպէս են դասաւորուած բանտարկուածների թուական յարաբերութիւնները։ Դա տեսնում ենք հետևեալ աղիւսակից.

Կ. ԱՂԻՒՍԱԿ

Հայ բանտարկուածների թիւը ըստ թաղամասերի

Թաղամասեր	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	III Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	IV Բանտարկուածներ	V Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի մինչև կոտորածը	VI Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի էվակուաց. յետոյ	VII Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի կոտորածից յետոյ
I Թաղամաս	2224	1339	1243	17	0,76	1,27	1,37
II »	152	111	96	—	—	—	—
III »	323	248	212	—	—	—	—
IV »	395	242	143	—	—	—	—
V »	5122	3234	3084	8	0,16	0,25	0,26
VI »	7219	4236	3769	9	0,12	0,21	0,22
VII »	16670	10736	9928	42	0,22	0,39	0,42
VIII »	33393	22293	20323	135	0,40	0,60	0,66
IX »	19112	12764	12023	20	0,10	0,16	0,17
X »	2019	962	466	4	0,20	0,43	0,86

Թաղամասեր	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	III Հայ բնակիչների թիւը կոտորածից յետոյ	IV Բանտարկուածներ	V Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի մինչև կոտորածը	VI Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի էվակուաց. յետոյ	VII Բանտարկուածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի կոտորածից յետոյ
Բալախանի	1535	827	661	12	0,78	1,45	1,82
Խառը փողոցն.	509	388	184	6	1,18	1,55	3,26
Ընդամենը	88673	57380	52132	253	0,29	0,44	0,49

Ինչպէս տեսնում ենք, շատ համեստ թիւ է տալիս բանտարկուածների կաթեգորիան։ Թուականն ոչ մի համեմատութիւն չի կարող լինել նրանց և գերիների կամ անյայտացածների թուերի միջև։ Բոլոր թաղամասերը և այլ վայրերը (Բալախանին, խառը փողոցները) միասին վերցրած տուել են ընդամենը 253 հոգի բանտարկուածներ, որոնք կազմում են միայն 0,29% ողջ ազգաբնակութեան (քաղաքի անկումից առաջ), 0,44% էվակուացիայից յետոյ մնացած բնակիչ. թուի և 0,49% կոտորածից յետոյ մնացած բնակչութեան։

Բանտարկուածների ամենամեծ թիւը տուել է, բնականաբար, հայկական ամենամեծ թաղամասը՝ VIII-րդը՝ 135 հոգի, այսինքն աւելի քան կէսը կամ 53,36% բանտարկուածների ընդհանուր թուի։ Սա առաջին դէպքն է՝ մինչ այժմ ունեցած մեր օրինակների մէջ, երբ միայն մի թաղամասի զոհերի թիւը լինի կէսից աւելին տուեալ զոհերի կաթեգորիայի ամբողջ քանակի։ Այսպէս օրինակ նոյն VIII-րդ թաղամասը սպանուածների կաթեգորիայում տուել է ընդհանուրի 37,54%, անյայտացածների կաթեգ. 39,45%, և գերիների կաթեգ. 39,72%—մօտաւորապէս նման տոկոսական մասնակցութիւն։ Ամենամեծ տոկոսը ունի յիշեալ թաղամասը բանտարկուածների կաթեգորիայում։

Միւս թաղամասերի բանտարկուածները համեմատաբար չնչին թուեր են տալիս. VII թաղ. նրանց թիւը հաւասար է 42 հոգու կամ 16,60%-ի, IX թաղ.—20 հոգի կամ 7,87%, I թաղ.—17 հ. կամ 6,72%։ II, III և IV թաղամասերը չեն տուել ոչ մի բանտարկեալ, իսկ մնացած, չյիշուած թաղամասերը շատ չնչին թուեր են տուել։

Պէտք է ասել, որ բանտարկուածների թիւը իրապէս փոքր ինչ աւելի է եղել, քան ցուցակագրուած են մեզ մօտ։ Բայիլովի բանտում, ուր խըմբուած են եղել բոլոր բանտարկեալները, նստած էին 450 հոգի բանտարկուածներ։ Դրանցից 150 հոգի ուղարկւում են դուրս, կայարանները, գերութեան։ Մնում են 300 հոգի, որոնք նստում և արձակւում են որպէս բանտարկուածներ։ Նշանակում է, բանտարկուածների ընդհանուր թիւը եղել է ոչ թէ 253 հոգի, այլ 300 հոգի։ Բայիլովի բանտը եղել է ձերբակալուածների այն կենտրոնատեղին, ուր բազմաթիւ խմբերով կուտակել են նորանոր բանտարկուածներ և այնտեղից որոշ ժամանակից յետոյ տեղափոխել

ու անդամաւորել զանազան բաժանմունքներում: Այդ իմաստով վերցրած բանտարկուածների թիւը շատ աւելի է եղել, հազարների չափ: Բայց սրանք արդէն իրանց կրած ռէժիմով և կացութեամբ դարձել են գերիներ, որոնց մասին խօսեցինք մենք իր տեղում: 300 հոգին եղել են զուտ բանտարկուածներ, սկզբից մինչև ազատուելու րոպէն նստել են բանտում և ենթակայ են եղել միայն բանտարկուածների վիճակին:

VII. ԳԼՈՒԽ

ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ

Դժբաղդ զոհերի մի առանձնայատուկ կաթեգորիա են ներկայացնում բռնաբարուած հայուհիները:

Կոտորած, բռնութիւն, գերութիւն, թալան ու կողոպուտ—երևոյթներ են, որոնք այս կամ այն չափով տեղի են ունենում պատերազմական գործողութիւնների վայրերում: Տարբերութիւնը զանազան վայրերում և զանազան տարրերի միջոցով կատարուած դաժանութիւնների, աւազակութիւնների և այլ բռնութիւնների միջև սոսկ յարաբերական է, այսինքն կայանում է նրանց չափի, ծաւալի և որակի մէջ: Սակայն մի այնպիսի երևոյթ, ինչպիսին է թոյլ սեռի անմեղ զոհերի բռնաբարութիւնը՝ այն էլ մասսայական դէպքերով, դա մի առանձնայատուկ գազանութիւն է, որով միշտ և ամեն տեղ գերազանցել է թիւրք-թաթար անորակելի բարբարոսութիւնը:

Եւ այդ բարբարոսութիւնը արտայայտուեց Սեպտեմբերեան սարսափների օրերին Բագւում շատ աւելի խոշոր չափերով և զարհուրելի եղանակով, քան երբ և իցէ և որևէ տեղ: Մեր անկետան ժողովել է քստմնելի փաստերի և սրտաճմլիկ տեսարանների վերաբերեալ մեծ քանակով հարուստ նիւթեր, և պերճախօս նկարագրութիւններ: Բայց մեր աշխատութեան խնդիրը չէ և ծաւալն էլ չի ներում փաստական նիւթերին և նկարագիրներին հարկաւոր տեղը տալու: Մենք, ինչպէս մինչև այժմ, նոյնը և այս դէպքում պիտի բաւականանանք մեր անկետային հարցերի անմիջական պատասխաններով:

Բռնաբարութեան բարբարոսական ակտերին անխնայ ենթարկուել է հայ կին սեռը առանց հասակի տարբերութեան, ի հարկէ մատաղահաս և գեղեցիկ օրիորդները ամենամեծ չափերով: Դժբաղդ զոհերի ամենափոքր հասակը եղել է 5—6 տարեկան, իսկ ամենամեծ հասակը հասել է 60—65 տարեկանի: Կարծես ծաղրելու, ֆիզիքական ցաւ և բարոյական տանջանք պատճառելու յատուկ դիտաւորութեամբ մարդ-գազանները ցանկացել են վիրաւորել ու տրորել ընտանեկան ամեն մի սրբութիւն, անհատական ամեն մի արժանապատուութիւն:

Բռնաբարուողներից շատերն են հիւանդացել վարակիչ ախտերով, իսկ փոքրահասակներից եղել են բաւական թւով աղջիկներ, որոնք չ՚կարողանալով տանել ֆիզիքական ցաւերը մեռել են: Ամենամեծ չափով տուժել են 10—20 տարեկան օրիորդները: Եղել են բազմաթիւ դէպքեր, երբ միևնոյն անձնաւորութիւնը (օրիորդ թէ կին) բռնաբարուել է մի քանի անգամ և

մի քանի մարդկանցից—կամ կողոպտիչների միևնոյն խմբի և կամ տարբեր խմբերի մարդկանց կողմից: Եղել են դէպքեր, երբ դեռահաս աղջիկներ —9, 12, 14 տարեկան բռնաբարուել են ծնողների ներկայութեամբ: Եղել են դէպքեր, երբ մօրը և աղջիկներին բռնաբարել են միաժամանակ և իրար ներկայութեամբ: Եղել են դէպքեր, երբ սրի են անցրել ընտանիքի տղամարդ անդամներին և նրանց դիակների կողքին բռնաբարել կին անդամներին. մօրը, դուստրներին, քոյրերին և այլն:

Անողոքելիօրէն լկտիացած բանդաները դիւային քրքիջով օրգիաներ էին սարքում արիւնաներկ դիակների վրայ:

Այդպիսի «դէպքեր» մենք կարող էինք շատ թուել՝ իրանց զարհուրելի առանձնայատկութիւններով: Չի խնայուել ոչ մի միջոց, կանգ չի առնուել ոչ մի գործողութեան առաջ, գործադրուել են մարդ-գազանի բոլոր հրէշային պրիոմները՝ ամեն կարգի ցաւ, վիրաւորանք, տանջանք, սարսափ, ծաղր ու արհամարհանք արտայայտելու և պատճառելու մի գիտակցօրէն դժբաղդ ազգաբնակութեան, անտէր, անզէն ու անպաշտպան ժողովրդին:

Թէ որքան է այդ անօրինակ ոճրագործութեան ենթարկուած զոհերի թիւը, դա երևում է հետևեալ աղիւսակից.

Լ. ԱՂԻՒՍԱԿ

Բռնաբարուած հայուհիների թիւը ըստ թաղամասերի

Թաղամաս.	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Բռնաբարուածներ	Բռնաբարուածների տոկոսը բստ հայ բնակ. թուի մինչև կոտորածը	Բռնաբարուածների տոկոսը բստ հայ բնակ. թուի էվակուացիայից յետոյ
I Թաղամաս	2224	1339	8	0,36	0,60
II „	152	111	—	—	—
III „	323	248	—	—	—
IV „	395	242	5	1,26	2,07
V „	5122	3234	6	0,12	0,19
VI „	7219	4236	13	0,18	0,31
VII „	16670	10736	26	0 16	0,24
VIII „	33393	22293	173	0,52	0,78
IX „	19112	12764	48	0,25	0,37
X „	2019	962	4	0,20	0,42
Բալախանի . .	1535	827	3	0,20	0,36
Սաբը փողոց.	509	388	2	0,39	0,52
Ընդամենը	**88673**	**57380**	**288**	**0,32**	**0,50**

Բռնաբարուած հայուհիների ընդհանուր թիւն է, ըստ մեր անկետային ցուցակագրութեան, 288 հոգի։ Սակայն եթէ կայ զոհերի մի կաթեգորիա, որ ամենից թերի ցուցակագրութիւն է ունեցել և առաւելին քանակով դէպքեր է բաց թողել, դա բռնաբարուածների կաթեգորիան է։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարելի։ Բռնաբարութեան դէպքը ընտանեկան պատուի, հասկանալի ամօթխածութեան հետ կապուած մի փափուկ հարց է։ Չէր կարելի սպասել, որ անկետային հարց ու փորձին առանց այլ և այլի ստացուէր դրական պատասխան այդ ցաւոտ դէպքի վերաբերեալ։ Շատ շատերն են քաշուել այդ հարցին պատասխանելուց և նոյն իսկ ամաչել, նեղացել են, երբ այդ հարցով դիմել են նրանց։ Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք հազիւ թէ չափազանցրած լինէինք, եթէ բռնաբարութեան ցուցակագրած դէպքերը համարէինք միայն կէսը իրապէս տեղի ունեցած դէպքերի և եթէ մենք առնուազը 50%-ով աւելացնէինք մեր ստացած թիւը։ Այդպիսով բռնաբարուած հայուհիների թիւը կլինէր ոչ թէ 288 հոգի, այլ 576 հոգի։

Գալով վերոյիշեալ աղիւսակին, նկատում ենք, որ VIII-րդ ամենամեծ հայկական թաղամասը առանձնապէս տուժել է, յարաբերաբար շատ աւելի մեծ չափերով, քան զոհերի որևէ կաթեգորիա՝ մինչև այստեղ մեզ յայտնիներից։ VIII-րդ թաղամասում բռնաբարուած հայուհիների թիւը, ըստ ցուցակագրութեան, հաւասար է 173-ի (եթէ մեր հաշւով 50 տոկոսով աւելացնենք՝ 346 հոգի) կամ 60,07%-ի բռնաբարուած հայուհիների (ցուցակագրուած) ընդհանուր թուի։ Այդպիսի խոշոր տոկոս, կրկնում ենք, չի տուել VIII-րդ թաղամասը զոհերի որևէ կաթեգորիայի նկատմամբ։ Միւս հայաշատ թաղամասերը՝ IX և VII-ը անհամեմատ նուազ տոկոսական մասնակցութիւն ունին—առաջինի տոկոսը հաւասար է 17%-ի, իսկ երկրորդինը՝ 9%-ի։ Մնացած թաղամասերը տալիս են բռնաբարուածների շատ չնչին թուեր։ Երկու թաղամասերում չեն եղել բռնաբարութեան դէպքեր։ Բռնաբարուածների տոկոս ըստ իւրաքանչիւր թաղամասի ազգաբնակութեան թուի տալիս է ամենամեծ չափով IV թաղամասը—1,26% կոտորածից առաջ եղած ազգաբնակութեան թուի։ Այնուհետև յաջորդում է VIII րդ թաղամասը՝ 0,52%-ով և 0,78%-ով։ Բռնաբարուածների մինիմում տոկոսը (ըստ ազգաբնակութեան թուի) հասնում է 0,12-ի։

VIII. ԳԼՈՒԽ

ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ

Բռնաբարուածներին յար ու նման կաթեգորիա են ներկայացնում առևանգուած հայուհիները։ Սրանք ևս պատկանում են այն դժբաղդ զոհերի շարքին, որոնք, անշուշտ, շատ աւելի և տևականօրէն տանջուել, չարչարուել

են, անասելի բռնութիւնների և բիրտ կամայականութիւնների ճանկերում մաշուել ու մաղուել են, քան անգամ իրանք բռնաբարուածները։ Եթէ բռնաբարուած հայուհին դժբաղդացել է տեղն ու տեղը, իրանց տանը կամ հարևանի ու ծանօթի մօտ (ուր նա պատսպարուել էր), ապա առևանգուած հայուհին կրկնակի դժբաղդութեան գիրկն էր մատնուել տևապէս։ Բռնաբարուած զոհը տանջուել է գոնէ ժամանակաւորապէս։ Առևանգուածը, ընդհակառակը, մշտապէս և անընդհատ ենթակայ է եղել բռնաբարութեան, բռնութեան և կամայականութեան գործողութիւններին։ Առևանգուած հայուհիները դարձել էին տեղական բանդիտների և աղաների կամ նրանց տէրերի կատարեալ և անկողոպտելի սեփականութիւնը այնքան ժամանակ, որքան դա հաճելի էր մարդ-գազաններին։

Ո՞ւր էին փախցնում և տեղաւորում առևանգուած հայուհիներին։

Սկզբում նրանց թաքցնում, պահում էին քաղաքի Թուրքական մասերում, խուլ անկիւններում և ապա մաս-մաս տեղափոխում էին նրանց շրջակայ գիւղերը և մանաւանդ Գանձակ։

Ի հարկէ, այդ անպաշտպան զոհերի մէջ, որպէս ընկած անտէր աւարի, ընտրութիւն էին անում և առանձնապէս գեղեցիկներին տանում պահում էին։

Եղել են դէպքեր, երբ առևանգուած հայուհիները մի քանի օր, մի շաբաթ մնալուց յետոյ որևէ հրաշքով փախել, ազատուել են գազանների ձեռքից։ Բայց եղել են նաև դէպքեր, երբ իրանք՝ գազաններն են իրանց զոհերին բաց թողել, ասել է, նրանց տեսակէտից, «դէն շպրտել», որպէս այլևս նրանց համար անպէտք իրեր։ Եղել են դէպքեր, երբ այդ «անպէտք իրեր» դարձրած զոհերը վերադարձնելու համար փրկանք են պահանջել և ստացել դժբաղդացածների հարազատներից։ Բայց եղել են նաև այնպիսի քստմնելի դէպքեր, երբ այդ «անպէտք իրերի» դիակներն են բերել յանձնել հարազատներին, կարծես դիտմամբ վերջիններիս աւելի մեծ ցաւ, կսկիծ, վիշտ պատճառելու համար։ Եղել են դէպքեր, երբ առևանգուած հայուհիները վերադարձել կամ վերադարձուել են տուն մի քանի ամիս անցնելուց յետոյ։ Բայց կան նաև բազմաթիւ դէպքեր, երբ հայուհիները մինչև օրս էլ պահւում են թուրքերի մօտ՝ գիւղերում, Գանձակում և նոյն իսկ Բագւում, որպէս հարճեր, բռնի կերպով թուրքացնելով նրանց։

Ցաւ է խոստովանել, որ դաշնակիցները (աւելի ճիշտ՝ անգլիական հրամանատարութիւնը) այդ վերջին հարցում ցոյց չտուին հայերին՝ սպասուած բնական օգնութիւնը։ Հայոց Ազգային Խորհրդի բազմաթիւ դիմումները՝ Բագուի շրջակայքի գիւղերում հարեմական պայմաններում տառապող բազմաթիւ հայուհիներին ազատելու համար, հարկաւոր ուշադրութեան չարժանացան հրամանատարութեան կողմից։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է դասաւորուած առևանգուած հայուհիների թիւը ըստ թաղամասերի. դա երևում է հետևեալ աղիւսակից.

Ժ. ԱՂԻՒՍԱԿ

Առեւանգուած հայուհիների թիւը ըստ թաղամասերի

Թաղամաս.	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Հայ բնակիչների թիւը էվակուացիայից յետոյ	Առևանգուածներ	Առևանգուածների տոկոսը ամբողջ հայ բնակիչների թւից մինչև կոտորածը	Առևանգուածների տոկոսը ամբողջ հայ բնակ. թւից էվակուացիայից յետոյ
I Թաղամաս	2224	1339	29	1,30	2.17
II „	152	111	—	—	—
III „	323	248	—	—	—
IV „	395	242	4	1,01	1,65
V „	5122	3234	17	0,33	0,52
VI „	7219	4236	35	0,48	0,83
VII „	16670	10736	29	0,17	0,27
VIII „	33393	22293	292	0,87	1,30
IX „	19112	12764	129	0,67	1,01
X „	2019	962	15	0,74	1,56
Բալախանի .	1535	827	11	0,72	1,33
Սար փողոց.	509	388	10	1,98	2,58
Ընդամենը	**88673**	**57380**	**571**	**0,65**	**0,93**

Առևանգուած հայուհիների ընդհանուր թիւը, ինչպէս տեսնում ենք վերոյիշեալ աղիւսակից, ըստ մեր ցուցակագրութեան հաւասար է 571 հոգու, որ կազմում է 0,65$^0/_0$ հայ ազգաբնակութեան ընդհանուր թուի (էվակուացիայից առաջ եղած) և 0,93$^0/_0$ էվակուացիայից յետոյ մնացած բնակիչների թուի։ Բայց առևանգուածների վերոյիշեալ քանակը նոյնքան թերի է, որքան թերի էր բռնաբարուածների թիւը ճիշտ նոյն պատճառներով։ Առևանգուածների խնդիրը նոյնքան փափուկ է և նրանց ցուցակագրութիւնը նոյնքան դժուարութիւնների ենթակայ, որքան բռնաբարուածների խնդիրն էր։ Ուստի բնական կլինէր, եթէ մենք առևանգուածների ցուցակագրուած թիւը ևս աւելացնենք 50$^0/_0$-ով։ Այդ հաշուով մենք կստանանք ոչ թէ 571, այլ 1142 հոգի առևանգուած հայուհիներ, որոնց տոկոսը ազգաբնակութեան ընդհանուր թուից կլինէր ոչ թէ 0,65$^0/_0$ (էվակուացիայից առաջ), այլ 1,30$^0/_0$ և ոչ թէ 0,93$^0/_0$ (էվակուացիայից յետոյ), այլ 2,00$^0/_0$։

Ինչ վերաբերում է վերոյիշեալ աղիւսակին, այնտեղ ևս նկատում ենք նոյն փաստը, ինչ տեսանք վերջին երկու կատեգորիաների (բանտարկուածների և բռնաբարուածների) մէջ. առևանգուածների ընդհանուր թուի մէջ VIII-րդ թաղամասը իր մասնակցութեամբ բացարձակ մեծամասնութիւն է

կազմում, տալով 292 հոգի առևանգուածներ, որոնք իրանց հերթին կազմում էին 51,14% բոլոր առևանգուածների, 0,87% ողջ ազգաբնակութեան (էվակուացիայից առաջ) և 1,30% մնացած ազգաբն. (էվակուացիայից յետոյ) ընդհանուր թւի։ Այնուհետև յաջորդում է IX թաղ, 129 հոգով կամ 22,60%-ով (առևանգուածների ընդհ. թւի). ապա VI թաղ. 35 հոգ. կամ 6,13%-ով։ VII և I թաղամասերը տուել են առևանգուածների միևնոյն թւերը՝ 29 հոգի և 5,07%։ Մնացած թաղամասերը տուել են առևանգուածների չնչին թւեր։ Ամենաչնչին թիւը տուել է IV թաղ.՝ 4 հոգի կամ 0,70%։ Ինչպէս բռնաբարուածների դէպքում էր, նոյնը և առևանգուածների նկատմամբ երկու թաղամասեր՝ II և III-ը (ճիշտ նոյն թաղամասերը) չեն տուել, 'ի հարկէ ըստ մեր ցուցակագրութեան, առևանգուածների ոչ մի դէպք։

IX. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ՓՈԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Սկզբում, մարդկային զոհերի բոլոր կաթեգորիաներից առաջ, մենք մի յատուկ գլուխ նուիրեցինք քաղաքի էվակուացիային, ցոյց տալով մանրամասն, թէ որքան հայ բնակիչներ են փախել Բագուից՝ սրա անկման նախօրեակին։

Սեպտեմբերեան աղէտի ամենացաւոտ էջերից մէկը կազմում է Բագուի հայ գաղթականութիւնը՝ իր տուած անթիւ զոհերով օտար երկնակամարի տակ, իր կրած անօրինակ զրկանքներով ու տառապանքներով, հսկայական ճամբաներով ու կորուստներով։

Մի առանձին հատորի նիւթ կարող է մատակարարել այն ողբերգական վիճակը, որ ունեցել է Բագուի հայ գաղթականութիւնը Պետրովսկում, Էնզէլիում և վերադարձից յետոյ Բագւում։ Եւ այդ հատորը պէտք է գրեն կամ գրելու հնարաւորութիւն տան նրանք, որոնք գաղթականական գործի գլուխ անցած անմիջապէս տեսել ու ապրել են այդ վիճակի դառնութիւնները։ Մենք կարող ենք այստեղ սահմանափակուել միայն մեր անկետային հարցերի շրջանակներում։

Բայց նախ մի փոքրիկ ներածական դիտողութիւն։

Փախստականների վերադարձը ենթակայ էր մեծ դժուարութիւնների և խոչընդոտների։ Ազերբէյջանի կառավարութեան առաջ յարուցած բոլոր միջնորդութիւնները՝ գաղթականների վերադարձի թոյլատւութեան համար, ապարդիւն են անցնում։ Կարծես գաղթականութիւնը ևս՝ սովի ու թշուառութեան ճիրաններում տառապելու և մասամբ մահանալու նրանց վիճակը՝ համարւում էր այն ցանկալի միջոցներից մէկը՝ Ազերբէյջանի քաղաքագէտների տեսակէտից, որով կարելի էր աւելի ու աւելի նուազեցնել հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը։ Որքան աւելի երկար մնան հայ փախստականներ Պետրովսկում, Էնզէլի և Ռաշտում, այնքան աւելի զոհեր պիտի տան նրանք. դա շատ լաւ յայտնի էր Խոյսկու—Ջևանշիրի կառավարու-

թեան։ Նոյն իսկ կանանց և երեխաներին—քաղաքական «յանցանքներից» զերծ այդ անմեղ արարածներին— չթոյլատրուեց վերադառնալ իրանց տները։

Հայ փախստականների առաջին խումբը՝ մօտ 50 հոգ. բաղկացած, Պետրովսկից գալիս է Բագու ռուսների հետ միասին, Հոկտեմբերի 21-ին, թիւրք-թաթարական տիրապետութեան երկրորդ ամսում։[1]) Այնուհետև երկար ընդմիջումներով և փոքրիկ խմբերով 2—3 անգամ հայ փախստականներ են վերադառնում Բագու Պետրովսկից։

Բայց փախստականների իսկական մասսայական վերադարձը Էնզելիից (ուր եկել ու կուտակուել էին նաև Պետրովսկի հայ փախստականները) Բագու սկսւում է Նոյեմբերի 17-ից 'ի վեր, անգլիացիների մուտք գործելուց յետոյ։ Փախստականները վերադառնում են մեծ բազմութեամբ, օրական մի քանի նաւերով։ Ծանր հիւանդները և որբերը պահւում են ժամանակաւորապէս Էնզելի։

Աննկարագրելի է դրութիւնը վերադարձած փախստականների։ Մերկ, քաղցած, հիւծուած ու տանջուած, իրանց հետ վերցրած միջոցները բոլորովին սպառած, շատերը հիւանդ—գալիս թափւում էին քաղաք։ Այստեղ ամեն բան կորցրած, բնակարանը կողոպտուած մինչև վերջին թելը—անճարակ և անօգնական դրութեան մէջ էին նրանք։ Եթէ Բագու մնացած բնակիչների բնակարանները կողոպտուել են, գոնէ փրկուել է նրանց կահ-կարասիքը և մնացել են իրանց ձեռքին բնակարանները։ Փախստականների դրութիւնը սոսկալի է այդ տեսակէտից։ Նրանց երկամսեայ բացակայութեան ժամանակ յափշտակել են շատերի կահ-կարասիքը, զբաղեցրել բնակարանները և իւրացրել խանութները։

Ահագին ճիգ ու ջանք և նիւթական միջոցներ էին պահանջւում տեղական Ազգային Խորհրդից այդ հսկայական կարիքներին բաւարարութիւն տալու համար։ Տարաբաղդաբար, մատուցած օգնութիւնը հարկաւոր չափերով չէր արտայայտւում, շնորհիւ, գլխաւորապէս, նիւթական միջոցների սղութեան, կառավարութեան անբարեացակամ, շատ անգամ թշնամական վերաբերմունքի և դաշնակիցների հրամանատարութեան սառն անտարբերութեան։ Կառավարութիւնը ոչ նիւթապէս օժանդակում էր վերադարձած գաղթականների պահպանութեան գործին, ոչ աջակցում էր նրանցից յափշտակուած և իւրացրած բնակարաններն ու խանութները վերադարձնելու և ոչ էլ հնարաւորութիւն էր տալիս գաւառացի գաղթականներին՝ հայրենիք վերադառնալու։ Այդպիսի մթնոլորտում, ինչ ասել կուզի, Ազգ. Խորհրդի գործունէութիւնը, որքան էլ եռանդ չխնայուէր նրա վրայ, չէր կարող ցանկալի չափերով արտայայտուել և սպասուած արդիւնքներն ունենալ։ Եւ Բագու թափուած փախստականները անխուսափելիօրէն պիտի տային մահացութեան հսկայաչափ զոհեր։ Մահացութեան այդ մասսայական դէպքերի մասին մենք կխօսենք յաջորդ բաժնում։ Այստեղ մեզ պիտի զբաղեցնէ այն հարցը, թէ որքան փախստականներ են վերադարձել Բագու՝ քաղաքի անկման նախօրեակին փախած հայերից։ Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս

---

[1]) Հայ փախստականները պահւում են նաւամատոյցում երկու օր, այնուհետև կանանց բաց են թողնում, իսկ տղամարդկանց ձերբակալում։

փախստականների թուական քանակը՝ 1918 թ. Նոյեմբերի վերջերից սկսած մինչև 1919 թ. Փետրուարի վերջերը—երեք ամսուայ ժամանակամիջոցում։

N. ԱՂԻՒՍԱԿ

Վերադարձած փախստականների թիւը ըստ թաղամասերի

Թաղամասեր	I Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	II Փախածներ	III Վերադարձածներ	IV Փախածների տոկոսը ըստ հայ բնակիչների թուի մինչև կոտորածը	V Վերադարձածն. տոկոսը ըստ հայ բնակիչն. թուի մինչև կոտորածը	VI Վերադարձածն. տոկոսը ըստ փախածների թուի
I Թաղամաս	2224	885	435	39,79	19,56	49,40
II „	152	41	4	26,97	2,63	9,75
III „	323	75	33	23,22	10,22	44,00
IV „	395	153	62	38,73	15,69	40,52
V „	5122	1888	970	26,13	18,92	51,38
VI „	7219	2983	1282	41,32	17,79	43,00
VII „	16670	5934	3390	35,69	20,33	57,13
VIII „	33393	11100	5499	33,24	16,49	49,54
IX „	19112	6348	3726	33,21	19,50	58,70
X „	2019	1057	564	52,40	27,93	53,35
Բալախանի . .	1535	708	471	46,12	30,67	67,09
Խառը փողոց . .	509	121	84	23,77	16,50	66,94
Ընդամենը .	88673	31293	16526	35,29	18,75	52,70

Մեզ արդէն յայտնի են փախածների թուական և տոկոսական յարաբերութիւնները ըստ թաղամասերի։ Վերոյիշեալ աղիւսակում այդ տուեալները բերուած են միայն՝ վերադարձած փախստականների թուական յարաբերութիւնների հետ համեմատելու համար։

Բոլոր թաղամասերի կամ ամբողջ Բագուի հայ փախստականների թիւը, ինչպէս գիտենք, հաւասար էր 31293 հոգու, որ կազմում է ոչ պակաս քան 35,29$^0/_0$ կամ աւելի քան $^1/_3$ մասը քաղաքի ողջ ազգաբնակութեան։ Վերադարձած փախստականների թիւը, ըստ մեր ցուցակագրութեան, հաւասար էր 16526 հոգու, որ կազմում է՝ մի կողմից 18,75$^0/_0$ քաղաքի ողջ ազգաբնակութեան, իսկ միւս կողմից 52,70$^0/_0$ կամ կէսից աւելին էվակուացիայի ժամանակ փախածների ընդհանուր թուի։

Հարց է ծագում, ուր են մնացած փախստականները՞ 14767 հոգին կամ 47,30$^0/_0$-ը։

Այդ հարցին կարելի է տալ մի քանի հաւասարազօր պատասխաններ։ Նախ՝ վերադարձած փախստականների մասսայօրէն ցուցակագրութիւնը, ինչպէս ասացինք, տեւել է մինչեւ Փետրուարի վերջերը. Մարտ ամսից 'ի վեր եկել են անհագին քանակով փախստականներ, որոնք մեծագոյն մասով չեն ցուցակագրուել։ Երկրորդ՝ փախստավայրերում մեռել, փչացել են մեծ քանակով մարդիկ Բագուի փախստականներից. Նրանց թուի մասին մենք մօտաւոր գաղափար կկազմենք յաջորդ գլխում։ Վերջապէս երրորդ՝ կան այնպիսի փախստականներ, որոնք դեռ չեն վերադարձել, մինչեւ այժմ էլ գտնւում են կամ Հիւսիսային Կովկասում եւ կամ Անդրկասպեան երկրում։

Ահա վերոյիշեալ հարցի պատասխանը։

Նայելով փախածների թուերին ըստ թաղամասերի, գտնում ենք, որ՝ բացարձակ թւով վերցրած, փախստականների ամենամեծ քանակ տուել է, բնականաբար, VIII-րդ թաղամասը, այն է՝ 11100 հոգի, որ կազմում է թաղամասի ամբողջ հայ ազգաբնակութեան ուղիղ 1/3 մասը կամ 33,24%, աւելի պակաս միջին տոկոսից (35,29%)։ Վերադարձածների նկատմամբ եւս նոյն VIII թաղ. տալիս է ամենամեծ թիւը՝ 5499 հոգի, որ կազմում է ողջ ազգաբնակութեան 16,49%, իսկ փախածների ընդհանուր թուի (նոյն թաղամասից) 49,54%։ Նշանակում է հայկական ամենամեծ թաղամասում փախածների հազիւ միայն կէս մասն էր վերադարձել Բագու մինչեւ Մարտ ամսի սկզբները։ Այդ տեսակէտից հայկական միւս երկու մեծ թաղամասերը՝ VII եւ IX, աւելի լաւ պայմանների մէջ էին։ VII թաղամասից փախել էին 5934 հոգի կամ տեղական բնակչութեան ընդհանուր թուի 35,69%։ Այդ թուից վերադարձել են 3390 հոգի, այսինքն փախածների կէսից աւելին կամ 57,13%, որ, իր հերթին, կազմում է տեղական բնակչութեան թուի 20,33%։ IX թաղամասից փախել էին 6348 հոգի կամ թաղամասի բնակչութեան 33,21%, մօտաւորապէս այնքան, որքան VIII թաղ. տոկոսն էր (33,24%)։ 6348 հոգուց վերադարձել էին 3726 հոգի կամ կէսից շատ աւելին՝ 58,70%, որ, իր հերթին, կազմում էր թաղամասի ողջ հայ բնակչութեան 19,50%։

Թէ փախչողների եւ թէ վերադարձողների ամենափոքր թիւ ու տոկոս տուել է հայկական ամենափոքր թաղամասը—II թաղ.—41 հ. փախածներ, 4 հ. վերադ., որ կազմում է 0,75% փախածների ընդհանուր թուի։ Յարաբերաբար վերցրած՝ փախչողների ամենամեծ տոկոս տուել է X թաղ.—2019 հոգուց փախել են 1057 հ. կամ 52,40%։ Այդ թուից վերադարձել են 564 հ. կամ 53,35%։ Ընդհակառակը, վերադարձողների ամենամեծ տոկոս տուել են Բալախանին եւ ապա խառը փողոցները։ Բալախանուց (ուր էվակուացիայի ժամանակին մնացել էին 1535 հայ բնակիչ) փախել էին 708 հոգի կամ 46,12%, որոնցից վերադարձել էին 471 հոգի կամ 67,09%, որոնք, իրանց հերթին, կազմում են Բալախանու տեղական հայ բնակչութեան 30,67%։ Վերադարձողների նոյնքան մեծ տոկոս տալիս են խառը փողոցները. այդ փողոցների բնակիչներից (թւով 509 հոգի) փախել են 121 հոգի կամ 23,77%, որոնցից վերադարձել են 84 հոգի կամ 66,94%։

Հետաքրքրական է այժմ իմանալ, թէ ինչպէս են դասաւորւած վերադարձողները ըստ փողոցների։ Դա տեսնում ենք հետեւեալ աղիւսակից.

Օ. ԱՂԻԻՍԱԿ

Վերադարձող փախստականների թիւը ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ բնակ. թիւը մինչև կոտորածը	Փախածներ	Վերադարձածներ
1	Արմենանսկայա փողոց . .	52	14	13
2	Ազիատսկայա " . .	375	128	53
3	Բեյլիի հրապարակ . . .	140	77	36
4	Բալախանսկայա փ. և շոսսէ	4630	1844	838
5	Բախլովսկայա փող. I-ին	720	261	96
6	" " II	110	39	14
7	" " III	948	329	155
8	Բարեաթինսկայա փողոց .	111	38	22
9	Բիրժևայա " .	2259	721	408
10	Բոնդարնայա " .	1153	429	164
11	Բուդագովսկայա " .	1029	386	225
12	Բոլշայա-Մորսկայա " .	2807	1082	730
13	Գորչակովսկայա " .	152	38	15
14	Գիմնազիչեսկայա " .	1017	476	224
15	Գոգոլևսկայա " .	229	59	31
16	Գուբերնսկայա " .	164	78	20
17	Եարմորոչնայա " .	232	88	62
18	Զավոկզալնայա փ. I-ին	216	81	23
19	" " II	2821	694	595
20	" " III	122	21	17
21	" " IV	1430	443	276
22	" " V	413	172	62
23	" " VI	622	227	135
24	" " VII	79	17	8
25	" " VIII	416	139	26
26	" " IX	109	29	12
27	Լենցովսկի միջափողոց. .	77	23	13
28	Կանիտապինսկ փ. I-ին .	3023	973	499
29	" " II .	1356	420	203
30	" " III .	1802	784	265
31	" " IV .	3462	1052	619
32	" " V .	2535	1023	311
33	" " VI .	1364	433	271
34	" " VII .	1005	417	157

№№	Փողոցներ		Հայ բնակ. թիւը մինչև կոտորածը	Փախածներ	Վերադարձածներ
35	Կանիտապինսկ. փ.	VIII .	894	244	65
36	” ”	IX .	765	306	102
37	” ”	X .	628	286	63
38	” ”	XI .	168	17	4
39	Կարանտիննայա փողոց	.	315	104	32
40	Կոլիւբակինսկայա	” .	85	35	8
41	Կրասնովոդսկայա	” .	456	184	92
42	Կամենիստայա	” .	279	90	34
43	Կիրպիչնայա	” .	11	3	3
44	Մերկուրևսկայա	” .	525	177	119
45	Մարիինսկայա	” .	315	109	34
46	Միխայլովսկայա	” .	31	6	1
47	Միլլիոննայա	” .	1081	430	292
48	Մագազիննայա	” .	744	364	163
49	Մոլոկանսկայա	” .	1575	626	250
50	Մալո-Մորսկայա	” .	1082	444	272
51	Նաբերեժնայա	” .	20	5	—
52	Նիկոլաևսկայա	” .	87	27	3
53	Նիժնէ-Պրիւտսկ.	” .	2352	468	179
54	Ձադըրովայա	” .	508	158	79
55	Պորոխովայա	” .	3292	855	523
56	Պարալելնայա	” .	23	—	—
57	Պերսիդսկայա	” .	34	2	2
58	Րեմեսլեննայա	” .	2176	869	320
59	Սադովայա	” .	11	—	—
60	Ստարո-Պոչտովայա	” .	1	1	—
61	Ստարո-Պոլիցէյսկ.	” .	152	20	10
62	Սլաբոդսկայա	” I-ին	2199	726	472
63	”	” II .	2499	843	552
64	”	” III .	1047	491	234
65	Սուրախանսկայա	” .	758	179	99
66	Ստանիսլաւսկայա	” .	4988	1842	1269
67	Վոդովոզնայա	” .	32	10	—
68	Վոկզալնայա	” .	580	225	99
69	Վրանգելսկայա	” .	88	13	—
70	Վորոնցովսկայա	” .	59	7	1
71	Վերխնէ-Պրիւտսկ.	” .	3876	802	424

№№	Փողոցներ	Հայ բնակ. թիւը մինչև կոտորածը	Փախածներ	Վերադարձածներ
72	Տելեֆոննայա փող. .	4275	1612	1014
73	Տորգովայա „ . .	4196	1442	695
74	Տրամվայնայա „ . .	25	7	—
75	Տատյանինսկայա „ . .	538	248	107
76	Տատարսկայա „ . .	70	37	12
77	Ցիցիանովսկայա „ . .	26	—	—
78	Ցերկովնայա „ . .	208	91	35
79	Օլգինսկայա „ . .	60	19	. 2
80	Ֆաբրիչնայա „ . .	31	24	14
81	Խառը փողոցներ „ . .	509	121	84
	Արուարձաններ			
1	Բալախանի	1535	708	471
2	Բիբի-Հէյբաթ	446	256	170
3	Հայկաւան	3193	1302	742
4	Հայոց-Քիշլի	836	366	216
5	Սև-Քաղաք	1503	675	329
6	Սպիտակ-Քաղաք . . .	516	382	235
	Ընդամենը .	**88673**	**31293**	**16524**

Փախստականների ամենամեծ թիւը, ինչպէս տեսնում ենք 0 աղիւսակից, տալիս է Բալախանսկի փող. և շատէն, այսինքն երկրորդ ամենամեծ հայկական փողոցը. այդտեղից փախել են 1844 հոգի, այսինքն 39,83% այդ փողոցի բոլոր բնակիչների ընդհանուր թուի. այդ փախստականներից վերադարձել են 838 հոգի, որոնք կազմում են փախածների թուի 45,44% կամ բնակիչների ընդհանուր թուի 18,10%։ Փախստականների երկրորդ ամենամեծ թիւը տալիս է Սուրախանսկի փող., կամ հայկական առաջին ամենամեծ փողոցը. այդտեղից փախել են 1842 հոգի, միայն երկու հոգով պակաս Բալախանսկի փողոցի փախածների թուից. բայց Սուրախանսկի փողոցի փախածներից վերադարձել են մեծագոյն մասը՝ 1269 հոգի կամ 68,89%։ Փախածների թիւը կազմում է նոյն փողոցի բնակիչների ընդհանուր թուի 36,92%, իսկ վերադարձածների թիւը՝ 25,44%։

Այդ երկու փողոցներից փախածների և վերադարձածների օրինակները

ցոյց են տալիս, որ ինչպէս փախուստի, այնպէս էլ վերադարձի հոսանքի չափն ու ծաւալը հաւասարապէս կամ համապատասխան եղանակով չեն եղել բոլոր փողոցների նկատմամբ։ Նայած ինչ չափերով է պանիկայի ենթարկուել այս կամ այն փողոցի բնակչութիւնը կամ որքան յաջող է եղել էվակուացիան մի կամ միւս տեղ, այդչափ էլ փախստականների թիւ է տուել տուեալ փողոցը։ Նոյնքան տարբեր թուերով է արտայայտուել փախստականների վերադարձը։

Եթէ վերոյիշեալ փողոցների հետ թուենք այստեղ նաև մի քանի ուրիշ օրինակներ, կստանանք հետևեալ պատկերը.

№№	Փողոցներ	Բնակիչների թիւը	Փախածների թիւը	Վերադարձողն. թիւը	Փախածների %-ը բնակիչ. թուից	Վերադարձ. %-ը փախածն. թուից
1	Ստանիսլաւսկի փ.	4988	1842	1269	36,92	68,89
2	Բալախան. փ. և շոս.	4630	1844	838	39,83	45,44
3	Կանիտապ. փ. I-ին	3023	973	499	32,18	51,20
4	Կանիտապ. փ. IV	3462	1052	619	30,38	58,80
5	Բոլշոյ-Մորսկոյ փ.	2807	1082	730	38,55	67,47
6	Գորոխովոյ »	3292	855	523	26,00	61,17
7	Սլոբոդսկոյ փ. I-ին	2199	726	472	33,01	65,00
8	Բեմեպլեննի » . .	2176	869	320	40,00	36,82
9	Տելեֆոննի » . .	4275	1612	1014	37,71	62,90
10	Տորգովի » . .	4196	1442	695	34,36	48,20
11	Հայկական » . .	3193	1302	742	40,77	57,00
12	Սև-Քաղաք » . .	1503	675	329	44,91	48,74
	Ընդամենը .	**39744**	**14274**	**8050**	**36,91**	**56,40**

Սրանք մի շարք հայաշատ փողոցներ են, որտեղից փախածների և վերադարձածների միջին տոկոսները (36.91% և 56,40%) աւելի բարձր են, քան ողջ քաղաքի բոլոր փախածների և վերադարձածների միջին տոկոսներն էին (35,29% և 52,70%)։ Թէ փախուստը և թէ վերադարձի հոսանքը տարբեր չափերով են արտայայտուել վերոյիշեալ բոլոր օրինակների մէջ։ Այդ փաստի բացատրութիւնը տուինք մենք արդէն վերևում։ Բնորոշ է այն հանգամանքը, որ արուարձանները տուել են, համեմատաբար, փախածների ամենամեծ տոկոսները (Հայկական 40,77%, Սև-Քաղաք 44,91%)։ Դա նշանակում է, որ ահաբեկումը և դրա հետևանքով էվակուացիան ամենամեծ չափով տեղի են ունեցել արուարձաններում։ Բայց նոյն տեղերից փախածների վերադարձը ևս տեղի է ունեցել խոշոր տոկոսներով. մեր արուարձաններից միայն Սև-Քաղաքի փախածներից վերադարձողներն են, որ տալիս են 48,74%. Մնացած տեղերից վերադարձողների տոկոսները անցնում են փախածների կէսից շատ աւելի։ Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ բոլոր հայաշատ փողոցների մէջ ամենամեծը (Ստանիսլաւսկի փող.) տուել է փախածներից

վերադարձողների ամենամեծ թիւը (1269 հոգի) և ամենամեծ տոկոսը (68,89%)։ Մի շարք ուրիշ հայաշատ փողոցներ ևս տալիս են փախուստից վերադարձողների խոշոր տոկոսներ (Տելեֆոննի փող. 62,90%, I Սլոբոդսկոյ փող. 65,00%, Բոլշոյ-Մորսկոյ փող. 67,47% և այլն։

Մենք տեսանք, որ ընդհանուր (0) աղյուսակի մեջ փախստականների ամենամեծ թիւը տալիս է Բալախանսկի փող. և շոսսէն, իսկ փախուստից վերադարձողների ամենամեծ թիւը տալիս է Սաանխոլաուսկի փողոցը։ Միւս կողմից փախստականների ամենանուազ թիւ տալիս է Ստարո-Պոչտովի փողոցը՝ ընդամենը 1 հոգի, իսկ վերադարձողների ամենանուազ թուեր տալիս են Միխայլովսկի փող՝. 1 հոգի (6 հ. փախածներից) և Վորոնցովսկի փող. 1 հ. (7 հ. փախածներից)։ Եղել են փողոցներ, որտեղից փախչողներ չեն եղել. սակաւաթիւ և հայաբնակութեան տեսակէտից բոլորովին աննշան են այդ՝ փողոցները (օր. III Պարալելնի, Սադովի, Ցիցիանովսկի փող.)։ Բայց եղել են նաև փողոցներ՝ դարձեալ սակաւաթիւ և աննշան, որտեղից խուճապած փախստականներից վերադարձողներ չեն եղել, դրանք են՝ Նաբերեժնի, Ստարո-Պոչտովի, Վոդովոզնի, Վրանգելսկի, Տրամվայնի փողոցները։

Նկատւում է այն փաստը, որ արուարձաններից փախած բնակիչներից աւելի շատ են վերադարձել, քան բուն քաղաքի փողոցներից։ Այսպէս օրինակ քաղաքի բոլոր փողոցներից (մեր աղիւսակում թւով 81) փախածների թիւն է 27614 հոգի, որոնցից վերադարձել են 14361 հոգի, այսինքն կէսից քիչ աւելին կամ 52,00%։ Բոլոր արուարձաններից (թւով վեց) փախածների ընդհանուր թիւն է 3689 հոգի, իսկ վերադարձողների թիւը 2163 հոգի կամ 58,63%, աւելի քան վեց տոկոսով աւելի բուն քաղաքի փախածների վերադարձողներից։ Տոկոսական նոյն գերադանցումն են պահպանում արուարձաններից փախածներն ու վերադարձողները տեղական ազգաբնակութեան ընդհանուր թուի նկատմամբ։ Այսպէս օրինակ բուն քաղաքի բոլոր փողոցներից փախածները և վերադարձողները կազմում են քաղաքի հայ ազգաբնակութեան 34,24% և 17,80%-ները, մինչդեռ արուարձաններում այդ յարաբերութիւնները արտայայտւում են 45,94% և 27,00%-ներով։

X. ԳԼՈՒԽ

ՀԱՅ ՄՆԱՑԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ

Մի առանձին կաթեգորիա են ներկայացնում հայ մնացածները Բագու քաղաքում։

Մինչև այստեղ մենք գործ ունէինք մարդկային զոհերի այն կաթեգորիաների հետ, որոնք անմիջապէս կապ ունէին Սեպտեմբերեան աղէտի հետ, որոնք Սեպտեմբերեան անցքերի բովանդակութիւնը և մի-մի օղակներ էին կազմում։

Այլ է մնացածների կաթեգորիան։ Դա ոչ թէ Սեպտեմբերեան անցքերի անմիջական շրջքին է պատկանում, այլ այդ անցքերով պայմանաւորուած հետևանքներից մէկն է կազմում։

Փախստականների վերադարձը՝ 1918 թ. Նոյեմբերի վերջերից և Դեկ-

տեմբերի սկզբներից սկսած, և մասսայական մահացութեան դէպքերը Բաքւում, մէկը միւսին պատճառ ու հետեւանք և խրարով պայմանաւորուած երեւոյթներ են՝ Բաքուի փախստականները, որ հազարներով վերադառնում էին Էնզէլիից, տարածեցին հայկական թաղամասերում տարափոխիկ հիւանդութիւնների մի համաճարակ ալիք, որ մասսաներով գերեզման էր իջեցնում ամէն հասակի ու սեռի բնակիչներ։ Անդրկովկասում ոչ մի քաղաք, քան Բաքուն, և Բաքւում ոչ մի ուրիշ ազգաբնակութիւն, քան հայութիւնը տուել է մահացութեամբ ահռելի քանակով զոհեր։ Տիֆի բոլոր տեսակները, դեզինտերիան և ուրիշ շատ հիւանդութիւններ մանգաղի նման հնձում էին կողոպտուած, մերկ, քաղցած, յաճախ նաև անտուն, անտէր, փողոցները նետուած, անկիւններում թափթփուած ժողովրդական մասսաների շարքերը։ Բնութիւնն իսկ խառնվել էր դժբաղդ ժողովրդի դէմ՝ Երկարատև խոնաւ և ցրտաշունչ եղանակները բացառիկ ձևեր էին պատրաստել ամէն ինչից զըրկուած և արեգակի ջերմացնող ճառագայթներին այնքան կարօտող բնակչութեան գլխին։

Ի նկատի ունենալով, որ հայերի մահացութեան դէպքերը մասսայական աղէտի բնոյթ էին կրում և որ այդ աղէտը Սեպտեմբերեան սարսափների անխուսափելի հետեւանքներից մէկն էր կազմում, մենք անկետային վերստուգիչ աշխատանքի ժամանակ մտցրինք հարցաթերթերի մէջ այսպիսի մի հարց. քանի հոգի են մեռել (ամէն մի ընտանիքում) տարափոխիկ հիւանդութիւններից,—հաշուելով մահացութեան դէպքերի սկիզբը 1918 թ. Դեկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. Մարտի 1-ը, այսինքն ձմեռուայ այն երեք ամիսներին, երբ կատաղի չափերի էին հասել տիֆի ճարակումները։ Բացի այն տուեալներից, որոնք ցուցակագրուել են հարցաթերթով, թուական առանձին տուեալներ վերցրել ենք նաև այն հիւանդանոցներից—10-րդ, 11-րդ և 19-րդ—ուր բազմաթիւ հայ հիւանդներ են տեղաւորուել։ Այնուհետև ունենք տուեալներ նաև հայկական որբանոցի (հայոց ուսումնարանում, Գիմնազիչեսկի փող.) մահացութեան դէպքերի վերաբերեալ, ինչպէս և տուեալներ Էնզէլիում մեռած հայ փախստականների (Բաքուից փախածների) մասին։

Մենք պիտի խօսենք այդ տուեալների մասին առանձին-առանձին։

Ամենից առաջ իմանանք, թէ մեր անկետային հարցաթերթով որքան մահացութեան դէպքեր են եղել Բաքւում երեք ամսուայ ընթացքում։ Հետեւեալ աղիւսակը ցոյց է տալիս այդ թուերը ըստ թաղամասերի.

Բ. ԱՂԻՒՍԱԿ

Մեռած հայերի թիւը ըստ թաղամասերի

№№	Թաղամասեր	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Մեռածներ	Մեռածների տոկոսը հայ բնակիչների թւից
1	I Թաղամաս	2224	62	2,78
2	II »	152	20	13,15
3	III »	323	11	3,40

№№	Թաղամասեր	Հայ բնակիչների թիւը մինչև կոտորածը	Մեռածներ	Մեռածների տոկոսը հայ բնակիչների թւից
4	IV Թաղամաս .	395	23	5,82
5	V » .	5122	48	0,94
6	VI » .	7219	83	1,15
7	VII » .	16670	440	2,64
8	VIII » .	33393	924	2,77
9	IX » .	19112	1374	7,19
10	X » .	2019	144	7,13
11	Բալախանի . . .	1535	92	6,00
12	Խառը փողոցներ .	509	42	8,25
	Ընդամենը .	**88673**	**3263**	**3,68**

Հայ մեռածների (միայն մեր հարցաթերթով ցուցակագրուածների) ընդհանուր թիւը երեք ամսուայ ընթացքում հաւասար է 3263 հոգու, իսկ դա կազմում է 3,68% ողջ հայ ազգաբնակութեան ընդհանուր թւի։ Նշանակում է երեք ամսուայ ընթացքում հայ ազգաբնակութիւնը միայն մահացութեամբ զոհ է տուել իր կազմից 3,68% (կրկնում ենք, միայն հարցաթերթերով ցուցակագրուած տուեալներով)։ Այդ հաշւով մեռնողների թիւը ամսական հաւասար էր 1087 հոգու, իսկ օրական 36,2 հոգու։

Մահացութեան դէպքերը բաժանելով ըստ թաղամասերի, ստանում ենք այսպիսի պատկեր։ Մինչև այստեղ, բոլոր կարգի զոհերի վերաբերեալ առհասարակ, VIII-րդ թաղամասը, իբրև ամենամեծ հայաշատ վայրը, իր տուած զոհերի քանակով բռնում էր անպայման առաջին տեղը։ Վերև բերուած Բ աղիւսակի մէջ, ընդհակառակը, գտնում ենք յարաբերութիւնների այլ դասաւորութիւն։ Այստեղ առաջին տեղը բռնում է IX-րդ թաղամասը, այսինքն երկրորդ մեծ հայաշատ վայրը, մահացութեան զոհ տուած իր բնակիչների թւով։ 19112 բնակիչներ ունեցող թաղամասը տուել է 1374 հոգի մեռածներ կամ 7,19%, ասել է երկու անգամ աւելի միջին տոկոսից։ VIII-րդ թաղամասը, ընդհակառակը, իր 33393 բնակչութեամբ մահացութեան զոհ է տուել միայն 924 հոգի կամ 2,77%, այսինքն միջին տոկոսից գրեթէ մի ամբողջով, իսկ IX-րդ թաղամասի տոկոսից համարեա $4^1/_2$ տոկոսով պակաս։

Դա մի երևոյթ է, անշուշտ, որ առաջին հերթին բացատրւում է տւեալ վայրի բնակիչների տնտեսական կացութեամբ և առողջապահական պայմաններով։ Բաւական է ասել, որ IX-րդ թաղամասի մէջ մտնում են ամբողջապէս այնպիսի վայրեր, ինչպէս են՝ Զաւոկզալնի շրջանը իր բոլոր 13 փողոցներով. կամ Սլոբոդկի փողոցները (թւով 11), Գորախովոյ փող. ամբողջապէս և ուրիշները. փողոցներ, ուր բուն էր դրել և ծուարուել հայկական չքաւորութիւնը ամենամեծ չափերով, ուր մերկութիւնն ու քաղցա-

ծութիւնը ծայր աստիճանի հասած քրոնիկական չարիք էր դարձել Սեպտեմբերեան մեծ արհաւիրքից յետոյ։ Բնական էր, ուստի, որ այդպիսի թաղամասում հիւանդութիւնները ամենից շատ հունձը պիտի ունենային։

Հետաքրքիր է այդ տեսակէտից ուշադրութեան առնել թուական յարաբերութիւնները միւս թաղամասերում։ Եթէ մի կողմ թողնենք II-րդ այնքան սակաւահայ և զուտ թուրքական թաղամասը, մնացածների մէջ IX-րդ թաղամասի նման մահացութեան պատկառելի տոկոսներ են տուել՝ X-րդ թաղամասը (Սև-Քաղաքում՝ Զաւոդսկի, Չերնոգորոդսկի փողոցները՝ բոլորը թւով 28 և ուրիշները) 7,13%, Բալախանին 6,00% և խառն փողոցները՝ 8,25%։ Այսինքն այնպիսի շրջաններ, ուր վերև շեշտուած աննպաստ պայմանների մէջ տառապում էր հայ բնակչութիւնը։ Միջին տոկոսից աւելի նուազ տոկոսներ են տալիս I (2,78%), III (3,40%), VII (2,64%) և VIII (2,77%) թաղամասերը, ուր, ըստ երևոյթին, համեմատաբար աւելի պայմանների մէջ են եղել հայ բնակիչները։ Ընդհակառակը V և VI թաղամասերը տուել են շատ չնչին թւով ու տոկոսով (0,94% և 1,15%) զոհեր։ Այդ թաղամասերը բռնում են քաղաքի կենտրոնական րայոնները, ուր բնակւում են գլխաւորապէս ունեւոր խաւերը՝ ազգային պատկանելիութեամբ խառը բնակչութիւնից։ Բնական է, որ նիւթական կացութեամբ և առողջապահական պայմաններով այդ ապահով ու նպաստաւոր շրջաններում հայկական տարրը (ինչպէս նրա հարևան միւս ազգային տարրը) աւելի նուազ չափերով պիտի զոհեր տար իր մահացութեան հարկին, քան վերոյիշեալ մեզ յայտնի թաղամասերը։

Որպէսզի աւելի շօշափելի ու համոզեցուցիչ լինեն մեր դիտողութիւնները այդ տեսակէտից, մենք կթուենք ստորև մահացութեան դէպքերն ըստ փողոցների։

Բ. ԱՂԻՒՍԱԿ

Հայ մեռածների թիւը ըստ փողոցների

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Մեռածներ
1	Ազիատսկայա փողոց	375	7
2	Արմեանսկայա »	52	3
3	Բեյվիւ հրապարակ. . . .	140	—
4	Բալախանսկայա փ. և շոսէ. .	4630	103
5	Բաիլովսկայա » I-ին . .	720	8
6	» » II . . .	110	2
7	» » III . . .	948	14
8	Բարեատինսկայա »	111	—

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Մեռածներ
9	Բէրժեան »	2259	22
10	Բոնդարնայա »	1153	5
11	Բուդագովսկայա »	1029	42
12	Բոլշայա-Մորսկ. »	2807	111
13	Գորչակովսկայա »	152	—
14	Գրիմապիչեսկայա » . . .	1017	22
15	Գոգոլեսկայա »	229	3
16	Գուբերնսկայա » . . .	164	—
17	Եարմարոչնայա »	232	—
18	Զավոկզալնայա » I-ին . .	216	30
19	» » II . .	2821	328
20	» » III . .	192	8
21	» » IV . .	1430	97
22	» » V . .	413	47
23	» » VI . .	622	50
24	» » VII . .	79	6
25	» » VIII . .	416	21
26	» » IX . .	109	—
27	Լենցովսկի միջափողոց . . .	77	—
28	Կանիտապինսկայա փ. I-ին .	3023	92
29	» » II . .	1356	21
30	» » III . .	1802	46
31	» » IV . .	3462	45
32	» » V . .	2535	20
33	» » VI . .	1364	28
34	» » VII . .	1005	7
35	» » VIII . .	894	5
36	» » IX . .	765	10
37	» » X . .	628	—
38	» » XI . .	168	—
39	Կարանտիննայա » . . .	315	3
40	Կոլիւբակինսկայա » . . .	85	—
41	Կրասնովոդսկայա » . . .	456	8
42	Կամենիստայա » . . .	279	—
43	Կիրպիչնայա » . . .	11	—
44	Մերկուրեսկայա » . . .	525	15
45	Մարիինսկայա » . . .	315	17

№№	Փողոցներ	Հայ բնակիչների թիւը	Մեռածներ
46	Միխայլովսկայա » . . .	31	—
47	Միլլիոննայա » . . .	1081	56
48	Մադաթիննայա » . . .	744	13
49	Մոլոկանսկայա » . . .	1575	12
50	Մալօ-Մորսկայա » . . .	1082	25
51	Նաբերեժնայա » . . .	20	—
52	Նիկոլաևսկայա » . . .	87	—
53	Նիժնի-Պրիուտսկ. » . . .	2352	24
54	Ջաղրովայա » . . .	508	9
55	Պորոխովայա » . . .	3292	186
56	Պարալելնայա » III . . .	23	—
57	Պերեսիպսկայա » . . .	34	—
58	Ռեմեսլեննայա » . . .	2176	37
59	Սադովայա » . . .	11	—
60	Ստարո-Պոչտովայա » . . .	1	—
61	Ստարո-Պոլիցեյսկ. » . . .	152	—
62	Սլոբոդսկայա » I-ին .	2199	181
63	» » II . .	2499	196
64	» » III . .	1047	89
65	Սուրախանսկայա » . . .	758	2
66	Ստանիսլաւսկայա » . . .	4988	199
67	Վոդովոզնայա » . . .	32	—
68	Վոկզալնայա » . . .	580	7
69	Վրանգելսկայա » . . .	88	—
70	Վորոնցովսկայա » . . .	59	—
71	Վերխնէ-Պրիուտսկ. » . . .	3876	80
72	Տելեֆոննայա » . . .	4275	129
73	Տորգովայա » . . .	4196	66
74	Տրամվայնայա » . . .	25	—
75	Տատեանինսկայա » . . .	538	20
76	Տատարսկայա » . . .	70	1
77	Ցիցիանովսկայա » . . .	26	—
78	Ցերկովնայա » . . .	208	7
79	Օզգինսկայա » . . .	60	—
80	Ֆաբրիչնայա » . . .	31	9
81	Խառն փողոցներ » . . .	509	42

№№	Արուարձաններ	Հայ բնակիչների թիւը	Մեռածներ
1	Բալախանի	1535	92
2	Բիբի-Հէյբաթ	446	38
3	Հայկական	3193	269
4	Հայոց-Քիշլի	836	85
5	Սև-Քաղաք	1503	107
6	Սպիտակ-Քաղաք	516	37
	Ընդամենը .	88673	3263

Մահացութեան դէպքերի ամենամեծ թիւը բոլոր փողոցների մէջ տալիս է II-րդ Զավոկզալնի փող. (IX-րդ թաղ.), այն է 328 հոգի մեռածներ, որ կազմում է նոյն փողոցի հայ բնակիչների ընդհանուր թուի (ընդամենը 2821 հոգի) 11,63%, այսինքն 4%-ով աւելի շատ, քան IX-րդ թաղամասի բոլոր մեռածների միջին տոկոսն էր: Նոյն թաղամասի մնացած փողոցները և տալիս են մահացութեան դէպքերի պատկառելի թուեր: Եթէ մենք ի մի համախմբենք հարիւրից աւելի մեռածներ տուած փողոցները, կստանանք հետևեալը.

№№	Փողոցներ	Բնակիչն. թիւը	Մեռածն. թիւը	Մեռածն. տոկոսը
1	Զավոկզալնի փող. II-րդ .	2821	328	11,63
2	Հայկական	3193	269	8,42
3	Ճանիխալուսկի փող. . .	4988	199	3,99
4	Սլոբոդսկոյ » II-րդ.	2499	196	7,84
5	Գորոխովոյ » . . .	3292	186	5,65
6	Սլոբոդսկոյ » I-ին.	2199	181	8,23
7	Տելեֆոննի » . . .	4275	129	3,02
8	Բոլշոյ-Մորսկոյ » . . .	2807	111	3,95
9	Սև-Քաղաք	1503	107	7,12
10	Բալախանսկի փող. և շոսէ	4630	103	2,23

Ինչպէս տեսնում ենք, առաջին տեղը՝ մահացութեան դէպքերի թէ բացարձակ թւով և թէ յարաբերական տոկոսով, բռնում է II-րդ Ջավախքալինի փողոցը ($11,63^0/_0$), երկրորդ տեղը՝ Հայկաւանը ($8,42^0/_0$)։ Այնուհետև յաջորդում են իրանց տոկոսական բարձրութեամբ այն փողոցները, որոնք մտնում են IX-րդ Թաղամասի մէջ (II և I Սլոբոդսկոյ փող. Գորոխովոյ փող.)։ Մեծ տոկոս տալիս է նաև Սև-Բաղաքը՝ $7,12^0/_0$։ Ընդհակառակը, միջին տոկոսի բարձրութեան վրայ են կանգնած՝ աւելի կամ պակաս տարբերութեամբ, Սոլանխալաւսկի փող. ($3,99^0/_0$), Բոլշոյ-Մորսկոյ (3,95) և մանաւանդ Տելեֆոննի ու Բալախանսկի փողոցները ($3,02^0/_0$ և $2,23^0/_0$) իրանց ցածր տոկոսներով։

Մահացութեան բոլոր վայրերում (81 փող. և 6 արուարձան) եղել են միայն 26 փողոցներ, ուր, ըստ մեր տուեալների, չի արձանագրուած ոչ մի մահացութեան դէպք։ Մեռածների ամենափոքր թիւը հասնում է 3 հոգու, որ տալիս են երկրորդական սակաւահայ փողոցները (Արմեանսկի, Գոգոլևսկի, Կարանտիննի փողոցները)։

Ահա այս է անկետային հարցաթերթով ցուցակագրուած մահացութեան դէպքերի թուական պատկերը իր պարզաբանութիւններով։

Ի՞նչ են ասում մեզ միւս տուեալները։

Տիփաւոր հիւանդներ ընդունող երեք հիւանդանոցներից—10,11 և 19-րդ—մենք ստացել ենք հետևեալ թուական տուեալները՝ այնտեղ մեռած հայերի մասին [1])։

Տարափոխիկ հիւանդութիւններից մեռած հայերի թիւը 10, 11 եւ 19 հիւանդանոցներում

Թուական	Ամիս	X-րդ հիւանդանոց	XI-րդ հիւանդանոց	XIX-րդ հիւանդանոց	Բոլորի ընդհանուր թիւը
1918 թ.	Դեկտեմբեր	58	—	125	183
1919 թ.	Յունուար .	84	—	92	176
„	Փետրուար .	46	14	50	110
„	Մարտ . .	23	23	32	78
„	Ապրիլ . .	10	7	—	17
	Ընդամենը .	221	44	299	564

Երեք հիւանդանոցներում հինգ ամսուայ ընթացքում մահացած հայերի թիւը—564 հոգի—ցոյց է տալիս, թէ որքան բազմաթիւ են եղել, մի քանի

[1]) Բաքուի Հայոց Ազգ. Խորհրդի անկետային յանձնաժողովը սրանով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը երեք հիւանդանոցների աւագ բժիշկներին, որոնք սիրալիրութեամբ գրեցին մեր տրամադրութեան տակ մեր ցանկացած թուական տեղեկութիւնները։

անգամ աւելի, այն հայերը—3263 հոգի—որոնք երեք ամսուայ ընթացքում մեռել են իրանց տանը՝ առանց հիւանդանոցային խնամատարութեան. Վերև բերուած թուերը ցոյց են տալիս, որ մեզ յայտնի երեք ամիսներին—Դեկտեմբեր, Յունուար և Փետրուար—մասնաւանդ առաջին երկու ամսուայ ընթացքում հիւանդանոցները, առաւել 19-րդը, ծայրէ ի ծայր լիքն են եղել հիւանդներով և անհամար քանակով զոհեր են տուել. Մարտից սկսած արդէն իջել է կամաց-կամաց հիւանդների և մահացութեան դէպքերի թիւը. ապրիլին անյայտանալու չափ նուազել է մեռնողների թիւը. Եթէ մեզ հետաքրքրող ամիսների (Դեկտ., Յուն. և Փետր.) մահացութեան դէպքերի թիւը—469 հոգի—գումարենք մեր անկետային հարցաթղթով ցուցակագրուած մեռածների թուին, կստանանք (3263+469) ընդամենը 3732 մեռածներ երեք ամսում կամ ամսական 1244 հոգի, իսկ օրական 41,5 հոգի.[1])

Մահացութեան դէպքերի վերաբերեալ տուեալների երրորդ աղբիւրը հանդիսանում է հայկական կենտրոնական որբանոցը՝ Մարդասիրական ընկերութեան շինութեան մէջ. Դա տաճիկների երկամեայ տիրապետութեան օրով կեանքի կոչուած առաջին որբանոցն է, ուր տեղաւորուած էին անխտիր բոլոր հայ երկսեռ երեխաները՝ սկսած 2 տարեկանից մինչև 15 տարեկանը. Փախուստից և կոտորածից յետոյ հրաշքով ազատուած, ծնողները կորցրած, փողոցներում կամ կիսաւեր տներում թափթփուած երեխաներն էին դրանք, որոնք խնամւում, պահպանւում էին դպրոցի շինութեան մէջ. Տարաբաղդաբար չափազանց կիսատ, թերի է պահպանուել այնտեղ մեռնող երեխաների ցուցակագրութիւնը. Մեր ստացած թուական տեղեկութիւնները հետեւեալներն են.

Հայկական որբանոցում մեռած որբերի թիւ

Թուական	Ամիս	Բոլոր որբերի ընդհանուր թիւը	Մեռած որբ տղաները	Մեռած որբ աղջիկները	Բոլորը միասին
1918 թ.	Հոկտեմբեր	510	41	46	87
„	Նոյեմբեր .	420	55	51	106
„	Դեկտեմբեր	374	5	7	12
1919 թ.	Յունուար .	327	7	6	13
„	Փետրուար .	330	6	3	9
„	Մարտ . .	390	2	1	3
„	Ապրիլ . .	452	1	1	2
	Ընդամենը .	—	117	113	230

1) 10-րդ և 11-րդ հիւանդանոցները կցել էին իրանց թուերին մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ մեռնողների տարիքի և ծագման վայրի վերաբերեալ. Այստեղ օր. 10-րդ լազարէթում [illegible]ռածներից 92 հոգին կամ 41,62% ծագում են Գանձակի նահանգից, 53 հո-

Նախ նկատելու է այն հանգամանքը, որ որբերի ընդհանուր թիւը ենթակայ է եղել մշտական փոփոխութիւնների, ոչ միայն մահացութեան դէպքերի շնորհիւ, այլև նրանով, որ կամ շարունակ նոր որբ երեխաներ են ընդունել, կամ գտնուել է մի կամ միւս ծնողը և վերցրել են որբանոցից իրանց երեխաներին։ Ինչ վերաբերում է մեռած երեխաների թւին, պէտք է նկատել, որ մահացութիւն զգալի չափերով եղել է որբանոցում Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներին (87 հոգի և 106 հոգի երկու սեռից), այսինքն այն ժամանակ, երբ Բագւում տիրապետում էր տակաւին Թիւրքական հրամանատարութիւնը։ Այդ ժամանակ չկար քաղաքում տիֆ հիւանդութիւնը լայն չափերով տարածուած. որբանոցում ճարակել է գլխաւորապէս դիզենտերիան։ Ցրտագայում, մեր հետաքրքրող ամիսներին, բաղդատաբար որբանոցը քիչ է տուժել տարափոխիկ հիւանդութիւններից։ Դեկտեմբեր, Յունուար և Փետրուար ամիսներին մեռել են որբանոցում ընդամենը 34 հ.։ Բայց դա շատ չնչին թիւ է, որ չի կարող որևէ հաւատ ներշնչել իր ստուգութեան նկատմամբ։ Մահացութեան դէպքերի ցուցակագրութիւնը, որբանոցի վարչութեան իսկ վկայութեամբ, կատարուել է շատ անկանոն։ Չի կարող պատահել, որ 7 ամսուայ ընթացքում՝ Հոկտեմբերից (1918 թ.) մինչև Ապրիլ (1919 թ.) որբանոցի մեռած երեխաների թիւը կազմէր միայն 230 հոգի։

Մահացութեան դէպքերի վերաբերեալ չորրորդ աղբիւրն արդէն գտնւում է Բագուի սահմաններից դուրս՝ Բագուից փախածների կամ աղէտեալների գաղթավայրում։ Այդ գաղթավայրից գլխաւորը՝ Էնզելին, բարեբաղդաբար տալիս է մեզ որոշ, թէև պակասաւոր տուեալներ մեռած փախստականների վերաբերեալ. իսկ Պետրովսկն ու Անդրկասպեան երկիրը՝ Կրասնովոդսկ, Աշխաբադ և այլն, տարաբաղդաբար, չի տալիս ցուցակագրուած տուեալներ (որովհետև ցուցակագրութիւն չի պահպանուել), այլ միայն սոսկ ենթադրութիւններ կարելի է անել։

Բուն Էնզելիում մեռնողների թիւը հասնում է 1382 հոգու[1]), և սկսած Հոկտեմբերի 18-ից մինչև Մարտի 10-ը, այն է մօտ հինգ ամսուայ ընթացքում, ամսական մեռնողների թիւը հասնում էր 276 հոգու, իսկ օրական 9,2 հոգու։ 1382 մեռածներից յայտնի են մեզ մեծագոյն մասի՝ 932 հոգու, սեռն ու տարիքը։ Իմանալու համար, թէ այդ թւից ինչ հասակի և որ քանակով մեռնողներ են եղել, պատկերացնենք տարիքները մեզ յայտնի դասաւորութեամբ։

դին կամ 23,53% Բագուի նահ., 16 հ. կամ 7,24% Երևանի նահանգից և այլն։ Մեռնողները ըստ տարիքի այսպէս են դասաւորուած. առանձին հասակը տուել է համեմատաբար ամենամեծ քանակով զոհեր։ Նոյն հիւանդանոցում, օր., 25—40 տարիքը ունեցողներից մեռել են 72 հոգ. կամ 32,60%, գրեթէ ½ մասը 40—60 տար. ունեցողներից մեռել են 47 հ. կամ 21,27%։ Այնուհետև յաջորդում են 15—25 տար. 38 հ. կամ 17,20, ապա 3—15 տար. 29 հ. կամ 13,12%։ 11-րդ հիւանդանոցում մեռնողների մեծ մասը եղել է 8—15 տար. և 25—40 տար. ունեցողները։

[1]) Յայտնում ենք խորին շնորհակալութիւն Էնզելիի հայ հիւանդ փախստականներին խնամող դ. բժ. Մելիք-Փարսադանեանին՝ վերոյիշեալ թւերը մեզ հաղորդելու համար։

Էնգելիում մեռած 932 հայ փախստականների սեռն ու տարիքը

Տարիքը	Արական սեռ	Իգական սեռ	Ընդամենը	Իւրաք. տարիքի տոկոսը ամբողջից
1—15	174	147	321	34,44
15—25	95	63	158	16,95
25—40	83	78	161	17,27
40—60	108	49	157	16,84
60—80	65	24	89	9,55
Անյ. տարիքի	27	19	46	4,95
Ընդամենը .	**552**	**380**	**932**	**100,00**

Այս աղիւսակի մէջ աչքի է ընկնում երկու հանգամանք։ Նախ այն, որ արական սեռը իր մահացութեամբ՝ 552 հոգով կամ 59,12$^0/_0$-ով, պատկառելի մեծամասնութիւն է կազմում, և ապա այն, որ մահացութեան ամենամեծ թիւը՝ 321 հոգի կամ 34,40$^0/_0$, տուել է ամենափոքր հասակը՝ 1—15 տարեկ ունեցողները։ Առաջին հանգամանքը կարելի է, գուցէ, բացատրել այն փաստով, որ փախստականների մէջ առհասարակ գերազանցել է արական սեռը իր քանակով և, հետևապէս, տուել է նաև աւելի մեծ թըւով մեռնողներ։ Երկրորդը պէտք բացատրել նրանով, որ երեխաները (դըրանց մէջ մտնում է նաև Էնգելի փոխադրած հայկական որբանոցում մեռած որբերի թիւը), ինչպէս և ընդհանրապէս դեռահասները (մինչև 15 տար. հասակը) չկարողանալով տանել գաղթականական կեանքին յատուկ զըրկանքներն ու դժուարութիւնները, բնականօրէն աւելի շատ զոհեր են տուել, քան բարձր տարիք ունեցողները։

Բայց յիշածս բոլոր աղբիւրներով չի սպառւում մեռածների ընդհանուր թիւը։ Այդ թուերի մէջ չկան Հասան-Կալէյի, Թաշտի, Պետրովսկի և Անդրկասպեան երկրի հայ գաղթականների (անշուշտ միայն Բագուից փախածների) մահացութեան դէպքերի վերաբերեալ տուեալներ։ Հաւանական ցուցմունքներով այդ վայրերում մահացութիւնը եղել է այսպէս. Հասան-Կալէում և Թաշտում 500 հոգի [1]), Պետրովսկում մինիմում 1500 հոգի, Անդրկասպեան երկրում մօտ 800 հոգի։

[1]) *Վերոյիշեալ տողերը գրել վերջացրել էինք, երբ մեր ձեռքը հասաւ Թաշտի գաղթականական մարմնի գործունէութեան պատրաստած տեղեկագիրը, որի վերջում ազգանուններով թուած էին Թաշտում ապաստան գտած Բագուի հայ փախստականներից մեռածները։ Միայն Թաշտում մեռել են 350 փախստականներ, որոնցից 192 արական, 142 իգական սեռից, իսկ 16 երկու սեռի երեխաներ։ Մահացուցակը վերաբերում է աւելի քան երկու ամսուայ ժամանակամիջոցի (Հոկտ. սկզբից մինչև Դեկտեմբ. վերջը)։ Ամիսը եղել են 175 մահացութեան դէպքեր կամ օրական մօտ 6 դէպքեր։ Բնորոշ է, որ Թաշտում մեռածներից աւելի քան ¼ մասը (125 հոգի) կամ 36$^0/_0$ եղել են Շամախեցիներ. այդպիսի մեծ տոկոս չեն տալիս*

Եւ այսպէս, եթէ մահացութեան դէպքերի վերաբերեալ բոլոր տուեալները ի մի համախմբենք, կստանանք հետեւեալը.

ՄԵՌԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ

Անկետային հարցաթղթով ցուցակագրուած—	3263 հոգի
Հիւանդանոցներում մեռածները	564 »
Հայկական որբանոցում մեռածները . . .	230 »
Ենգէլիում մեռածների թիւը	1382 »
Հասան-Կալէում և Ռաշտում մեռածները . .	500 »
Պետրովսկում մեռածների թիւը	1500 »
Անդրկասպեան երկրում մեռածների թիւը .	800 »
Ընդամենը .	8139 հոգի

Բոլոր մեռածների ընդհանուր թիւը՝ Բագւում և գաղթավայրերում (միայն Բագուի բնակիչներին վերաբերող), հասնում է 8139 հոգու։ Մահացութեան դէպքերի սկիզբը հաշուելով Հոկտեմբեր ամիսը (մի քանի կաթեգորիաների համար) և վերջը հաշուելով մինչև Ապրիլ ամիսը, ամսական ստանում ենք 1357 մահացութեան դէպքեր կամ օրական մեռածների թիւը հասնում էր մօտ 45,2 հոգու։

Այդ թիւը շատ համեստ է վերցուած։ Բագուի հայութեան մահացութեան դէպքերը յիշեալ ժամանակամիջոցում հասնում են առնուազը տասը հազարի (ի հարկէ բոլորը հաշուելով միասին՝ թէ Բագուի և թէ գաղթավայրի մեռածները)։ Եթէ մենք 20% աւելացնենք վերոյիշեալ մեր ստացած թուին (8139 հոգի), համարելով այն դուրս կամ անյայտ մնացած մեր ցուցակագրութեան սահմաններից, կստանանք 10173 հոգի մեռածներ կամ ամսական 1696 հոգի, իսկ օրական 56,5 հոգի։ Այս թիւը աւելի է համապատասխանում իրականութեան։

Մահացութեան հարուածը, ինչ ասել կուզէ, առաջին հերթին և ամենամեծ չափով հասնում էր գաղթականներին։ Փախստավայրում տալով իրանց հազարաւոր զոհերը, վերադառնալուց յետոյ էլի նրանք են եղել—այդ տառապած, սոված, հիւանդ ու կմախքացած, հիւանդութեան բացիլներով վարակուած մարմինները,—որ նոր հազարներ գերեզման իջեցրին։ Փախստականները ոչ միայն իրանք են տուժել չարաչար, այլ և իրանց բերած տարափոխիկ հիւանդութիւններով հազարաւոր զոհեր են պատճառել մնացած հայ ազգաբնակութեան։ Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, մենք տրամադիր ենք ենթադրելու, որ եթէ մասսայական փախուստը կամ էվակուացիան չլինէր, Բագուի հայ ազգաբնակութիւնը, en masse վերցրած, համեմատաբար աւելի քիչ կտուժէր, քան տուժել է։ Չի կարելի ասել և հիմք էլ չկայ ենթադրելու, որ եթէ հայերը չփախչէին, այլ մնային Բագ-

---

ուրիշ երկրացիներից ոչ մէկը։ Շամախեցիները յարաբերական մեծամասնութիւն են կազմում մեռածների մէջ։ Երկրորդ տեղը իրանց մեռածների թւով բռնում են Ղարաբաղցիները (որանց մէջ առած նաև Զանգեզուրցիները), մօտ 86 հոգով կամ 24,60%-ով։ Երկու գաւառացիները միասին վերցրած տալիս են մեռածների բացարձակ մեծամասնութիւնը կամ 60,60%։ Մնացածները ծագում են զանազան վայրերից՝ Բագուի, Գանձակի, Երևանի և այլ նահանգներից, ինչպէս և Ղարադաղից։ Ըստ տարիքի մեռածները դասաւորուած են այսպէս, զոհերի ամենամեծ թիւ տուել են մանկահասակները ու դեռահասները. 1—15 տարեկ. հասակ ունեցողներից մեռել են 138 հոգի կամ մօտ 40%. 15—30 տարեկաններից—62 հոգի կամ 17,70%. 30—45 տար.—75 հոգի կամ 21,43%, 45—60 տար.—46 հոգի կամ 13,14%։ Մնացած (60 տարեկանից ի վեր) մեռածների թիւն է 29 հոգի կամ 7,73%։

ուում (խօսքս չի վերաբերում ոչ զօրքին և ոչ կուսակցական ակնյայտնի գրուպպաներին), հայկական կոտորածը աւելի մեծ չափերի կհասնէր և աւելի մեծաքանակ կլինէին սպանուածները, քան եղել են իրապէս։ Երեք օրուայ մէջ Թիւրքն ու Թուրքը, տաճիկն ու ադրբէյջանցի մուսուլմանը, կանոնաւոր զօրքն ու խառնիճաղանճ ամբոխը կոտորել են հայերից այնքան, որքան ցանկացել և կարողացել են։ Հիմք չկայ պնդելու, որ եթէ տասնեակ հազարներով փախած հայերը մնային, սպանուածների թիւը աւելի կլինէր. կոտորելու համար զոհեր դեռ շատ էին մնացել քաղաքում. Եթէ ցանկութիւն կամ կարգադրութիւն լինէր, կարող էին շարունակել կոտորածը մնացած հայերի դէմ։ Սակայն ենթադրենք նոյն իսկ, որ ազգաբնակութիւնը չփախած կամ էվակուացիա չեղած դէպքում մի կամ երկու հազարով աւելի կլինէր սպանուածների թիւը, յամենայն դէպս անգամ այդ դէպքում հնարաւոր կը լինէր փրկել մի քանի հազար հայերի ֆիզիքական գոյութիւնը մասսայական մահացութեան գրկից։

Սա, անշուշտ, սոսկ մի պայմանական դիտողութիւն է՝ համապատասխան ժամանակի և դրութեան տուեալների։ Դրանով չի ասւում ամենևին, որ ժողովրդի էվակուացիան աւելորդ մի գործ է, երբ մանաւանդ քաղաքը պաշարուած է վրէժխնդրութեամբ գազանացած բարբարոսական թշնամու կողմից, որը մահ ու աւերածութիւն էր սպառնում խաղաղ ազգաբնակութեան։ Ներկայ դէպքում մենք ի նկատի ունենք այն վերին աստիճանի աննպաստ, դժնդակ պայմանները, որոնց մէջ կատարուել է էվակուացիան և, որ գլխաւորն է, որոնց ծոցում փախստականները քարշ են տուել իրանց գոյութիւնը։

XI ԳԼՈՒԽ

ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ ԵՒ ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Նախորդ 10 գլուխների մէջ մենք սպառեցինք մեր անկետային ուսումնասիրութեան առաջին մասը կամ մարդկային զոհերին վերաբերող բաժինը։ Այն չափով, որով ներել են մեզ օբյեկտիւ պայմանները և հնարաւորութիւն տուել փաստական տուեալները, մենք աշխատել ենք իրականացնել մեր առաջադրած նպատակը—Թուական պերճախօս փաստերով ու ապացոյցներով ուրուագծել Բագուի մեծ ու արհաւրալից սարսափների կամ հայկական ողբերգութեան ռէալ մեծութիւնը։ Այդ նպատակին յաջողուել է մեզ հասնել, կրկնում ենք, այն չափով, որով ներել են մեզ պայմանները, որով յաջողուել է մեզ դիմադրել արգելքներին և մաքառել շատ խոչընդոտների դէմ։

Այս գլխի մէջ, իբրև վերջին գլուխը առաջին բաժնի, կուզենայինք մենք ի մի ամփոփել և եզրափակել մեր ստատիստիքական գործողութիւնների և վերլուծումների արդիւնքները, որպէսզի աւելի շօշափելի գծերով պատկերանար Սեպտեմբերեան կոշմար անցքերի ռէալ մեծութիւնը։

Ամենից առաջ դասաւորենք ըստ թաղամասերի մի ընդհանուր աղիւսակի մէջ բոլոր մեզ յայտնի կաթեգորիաները՝ իրանց թուական բացարձակ տուեալներով և յարաբերական տոկոսներով։ Հետևեալ աղիւսակը տալիս է մեզ այդ պատկերը.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՍԱԿ

ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐԸ ԸՍՏ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ.

Թաղամ.	I Հայ բնակչ. թիւը	I Ամբողջ բնակչ. թւի նկատմամբ տոկոսը	II Փախստականներ	II Փախստ. տոկոսը բնակչութեան թւից	III Սովածներ. թիւը	III Սովածների տոկոսը բնակչութեան թւից	IV Մուրացկանների թիւը	IV Մուրացկան. տոկոսը բնակչութեան թւից	V Գործազուրկների թիւը	V Գործազուրկների տոկոսը բնակչութեան թւից	VI Բանտարկ. թիւը	VI Բանտարկ. տոկոսը բնակչութեան թւից	VII Թիւը	VII Տոկոսը	VIII Թիւը	VIII Տոկոսը	IX Թիւը	IX Տոկոսը	X Մեռածների թիւը	X Մեռածն. տոկոսը
I թաղամ.	2224	2,50	885	39,08	96	4,31	97	4,36	127	5,71	17	0,76	8	0,36	29	1,30	435	19,56	62	2,78
II „	152	0,17	41	26,98	15	9,86	13	8,55	10	6,58	—	—	—	—	—	—	4	2,63	25	13,15
III „	323	0,37	75	23,22	36	11,14	12	3,71	6	1,85	—	—	—	—	—	—	33	10,22	11	3,40
IV „	395	0,44	153	38,73	99	25,06	16	4,05	15	3,80	—	—	5	1,26	4	1,01	62	15,69	23	5,82
V „	5122	5,78	1888	36,86	150	2,92	95	1,85	149	3,00	8	0,16	6	0,12	17	0,33	970	18,92	48	0,94
VI „	7219	8,14	2983	41,32	467	6,46	193	2,67	254	3,52	9	0,12	13	0,18	35	0,48	1282	17,79	83	1,15
VII „	16670	18,80	5934	35,66	808	4,84	469	2,81	668	4,00	42	0,22	26	0,16	29	0,17	3390	20,33	440	2,64
VIII „	33393	37,67	11100	33,24	1970	5,89	1409	4,21	1349	4,04	135	0,40	173	0,52	292	0,87	5499	16,49	924	2,77
IX „	19112	21,55	6348	33,11	741	3,87	903	4,72	745	3,89	20	0,10	48	0,25	129	0,67	3726	19,50	1374	7,19
X „	2019	2,28	1057	52,35	496	24,57	230	11,39	27	1,33	4	0,20	4	0,20	15	0,74	564	27,93	144	7,13
Բալախանի	1535	1,73	708	46,12	166	10,81	27	1,75	28	1,82	12	0,78	3	0,20	11	0,72	471	30,67	92	6,00
Խառը փող.	509	0,57	121	23,77	204	40,07	108	21,21	18	3,53	6	1,18	2	0,39	10	1,98	84	16,50	42	8,25
	88673	100,00	31293	35,29	5248	5,90	3572	4,02	3396	3,82	253	0,29	288	0,32	571	0,65	16526	18,75	3263	3,68

Վերև բերուած ընդհանուր աղիւսակը համամփոփում է իր մէջ մարդկային զոհերի բոլոր կաթեգորիաների վերաբերեալ այն տուեալները, որոնց մենք աւելի մանրամասն պործողութիւնների և դիտողութիւնների նիւթ էինք դարձրել առանձին-առանձին գլուխների մէջ։

Բոլոր թաղամասերի մէջ VIII-ը—ամենամեծ հայաշատ թաղամասը—ինչպէս յայտնի է, գերազանցում է իր տուած զոհերի բացարձակ քանակով բոլոր կաթ[եգորիա]ների մէջ և բոլոր թաղամասերում՝ բացառութեամբ վերջին կամ մեռածների կաթեգորիայի, ուր նա իր առաջնութիւնը զիջում է IX թաղամասին. 33393 բնակիչներ ունեցող թաղ. (VIII) տուել է 924 մահացութեան դէպքեր կամ մեռածներ, այսինքն իր ամբողջի 2,77$^0/_0$, իսկ IX թաղ. իր 19112 բնակիչներից տուել է 1374 մեռածներ կամ ընդհանուր թուի 7,19$^0/_0$։ Թուական ու տոկոսական այս բացառիկ անհամապատասխանութիւնը հետևանք է այն փաստի, որ IX րդ թաղ. իր բնակիչների չքաւորութեան ծայրայեղ չափերով, տիրող քաղցածութիւնն ու մերկութիւնը աւելի «առատ հունձ» են մատակարարել մահուան մանգաղին, քան VIII-ը կամ մի այլ թաղամաս։ Սակայն եթէ իր տուած զոհերի բացարձակ թուերով VIII թաղ. գերազանցում է բոլորին, բացի չեշտուած բացառութիւնից, ապա իր զոհերի յարաբերական տոկոսներով նա նահանջում է անխտիր բոլոր թաղամասերի առաջ—բոլոր կաթեգորիաների նկատմամբ։ Եւ դա հասկանալի է. VIII թաղամասը իր 33393 բնակիչներով—համարեա մի ամբողջ գաւառական քաղաքի ժողովրդի հաւասար բնակչութեամբ—այնքան մեծ չափերով է գերազանցում միւս թաղամասերից (աւելի մեծ չափով, քան իր տուած զոհերի թուերով), որ նրա տուած զոհերի ամենամեծ թիւն անգամ յարաբերաբար կամ տոկոսով վերցրած (ըստ թաղամասի ընդհանուր հայ բնակչութեան թուի) աւելի փոքր է գալիս, քան որևէ այլ թաղամասի տուած զոհերի տոկոսը։ Ճիշտ նոյն դիրքն է պահպանում VIII թաղ. նաև էվակուացիայի ժամանակ փախածների և վերադարձածների նկատմամբ՝ բացարձակ թէ յարաբերաբար վերցրած։

Ըստ իրանց հայ ազգաբնակութեան թուի VIII թաղամասին հետևում են IX և VII թաղամասերը։ Չնայելով որ IX թաղամասի հայ բնակչութիւնը (19112 հոգի) գրեթէ երկու և կէս հազարով գերազանցում է VII թաղամասի բնակչութիւնից (16670 հոգի), այնուամենայնիւ կան զոհերի կաթեգորիաներ, որտեղ VII թաղամասը իր ազգաբնակչութեան փոքրամասնութեամբ գերազանցում է (աւելի շատ զոհեր տալով) IX թաղամասից։ Այդ գերազանցումը աչքի է ընկնում ամենից առաջ սպանուածների կաթեգորիայի մէջ. VII-րդ աւելի փոքր (հայերի քանակով) թաղամասը տուել է 808 սպանուածներ կամ 4,84$^0/_0$, իսկ IX-րդ աւելի մեծ թաղամասը տուել է 741 սպան. կամ 3,87$^0/_0$։ Նոյնպիսի գերազանցում գտնում ենք 6-րդ սիւնեակում կամ բանտարկուածների բաժնում։ Մնացած կաթեգորիաների մէջ (դրանց մէջ առած նաև փախածները և վերադարձածները) IX թաղ. գերազանցում է իր տուեալներով VII րդ թաղամասին։

Սակաւահայութեան տեսակէտից ամենափոքր Թաղամասը, ինչպէս երեւում է աղիւսակից, կազմում է II ը, որը ունի ընդամենը 152 բնակիչ։ Բոլոր կաթեգորիաների մէջ, բացի երեքից, այդ Թաղամասն ունի զոհերի ամենանուազ թիւը։ Անյայտացածների, գերիների և մեռածների կաթեգորիաների (4-րդ, 5-րդ և 10-րդ սիւնեակների) մէջ II-րդ Թաղամասը իր զոհերի բացարձակ Թուերով (աննշան տարբերութեամբ) գերազանցում է III-րդ Թաղամասի Թուերից։

Ինչ վերաբերում է յարաբերական տոկոսների մեծութեան կամ փոքրութեան, ապա նրանց դասաւորութիւնը միանգամայն տարբեր է զանազան Թաղամասերում և զանազան կաթեգորիաների մէջ։ Ընդհանուր առմամբ ամենամեծ տոկոսը տալիս են այսպէս կոչուած խառը փողոցները սպանուածների և անյայտացածների կաթեգորիաների մէջ՝ առաջինը 40,07$^{0}/_{0}$-ով, երկրորդը 21,21$^{0}/_{0}$ ով։ Այնուհետև յաջորդում են նոյն սպանուածների կաթեգորիայում՝ IV Թաղ. 25,06$^{0}/_{0}$-ով, X Թաղ. 24,57$^{0}/_{0}$-ով, III Թաղ. 11,14$^{0}/_{0}$-ով։ Նոյն X Թաղ. առաջին տեղն է բռնում անյայտացածների կաթեգորիայի մէջ՝ 11,39$^{0}/_{0}$-ով։ Ամենափոքր տոկոսը սպանուածների կաթեգոր. տալիս է V Թաղ.—2,92$^{0}/_{0}$-ով, անյայտացածների մէջ նոյնպէս V Թաղ. —1,85$^{0}/_{0}$-ով, գերիների մէջ—X Թաղ. 1,33$^{0}/_{0}$ ով, բանտարկուածների մէջ՝ VI Թաղ. 0,12$^{0}/_{0}$-ով, բռնաբարուածների մէջ V Թաղ. դարձեալ 0,12$^{0}/_{0}$-ով, առևանգուածների մէջ VII Թաղ. 0,17$^{0}/_{0}$-ով, վերջապէս մեռածների մէջ V Թաղ. 0 94$^{0}/_{0}$-ով։

Փախստականները և նրանցից որոշ մասերի վերադարձը՝ իրանց Թուական տուեալներով ու տոկոսներով, արդէն առանձին դիտողութիւնների նիւթ ենք դարձրել իր տեղում։ Թէ փախուստի և Թէ վերադարձի հարցում երեք հայաշատ Թաղամասերը՝ VIII, IX և VII, բռնում են առաջին տեղը իրանց Թուական բացարձակ տուեալներով։ Իսկ յարաբերական տոկոսներով առաջին տեղը բռնում են X-րդ Թաղամասը և Բալախանին, իրանց բարձր տոկոսներով (փախածները՝ 52,35$^{0}/_{0}$ և 46,12$^{0}/_{0}$) և վերադարձածները՝ 30,67$^{0}/_{0}$ և 27,93$^{0}/_{0}$-ով)։ Փախածների և վերադարձածների ամենանուազ Թիւը տալիս է II Թաղ. (41 և 4 հոգի), իսկ ամենանուազ տոկոսը տալիս է փախածների նկատմամբ III Թաղ. (23,22$^{0}/_{0}$), իսկ վերադարձածների նկատմամբ II Թաղ.։

Վերև բերուած աղիւսակի մէջ զոհերի մի շարք կաթեգորիաներ յիշատակուած են, ինչպէս մեզ յայտնի է, Թերի կերպով, առանց այն անհրաժեշտ լրացումների, որ մենք արել ենք իր տեղում։ Ուստի դասաւորենք ստորև բոլոր Թաղամասերի կամ ամբողջ քաղաքի զոհերի ցուցակագրուած կաթեգորիաները և նրանց անհրաժեշտ լրացումները. այդպիսով կստանանք հետևեալ տուեալները.

Մարդկային զոհերի բոլոր կաթեգորիաները Բագու քաղաքում

		Ցուցակա-գրուած	Լրացում-ներով	Ցուցակ. տոկոս	Լրացում-ներով %
1	Հայ բնակ. թիւը էվակ. առաջ	88673	—	—	—
2	Հայ փախստականների թիւը	31293	—	35,29	—
3	Հայ սպանուածների թիւը .	5248	8988	5,90	10,14
4	Հայ անյայտացածն. թիւը .	3572	—	4,02	—
5	Հայ գերիների թիւը. . .	3396	4246	3,82	4,78
6	Հայ բանտարկուածն. թիւը	253	—	0,29	—
7	Հայ բռնաբարուածն. թիւը	288	572	0,32	0,64
8	Հայ առեւանգուածն. թիւը .	571	1142	0,64	1,28
9	Վերադարձած փախստ. թիւը	16526	—	18,75	—
10	Մնացած հայերի թիւը . .	3263	10111[1]	3,68	11,40

Այստեղ համախմբուած են այն թուերն ու տոկոսները, որոնք յայտնի են արդէն ընթերցողներին մեր վերջին աղիւսակի խողից։

«Ցուցակագրուած» խորագրի տակ զետեղուած են այն թուերը, որոնք ժողովուել են մեր անկետային հարցաթղթերով։ Իսկ «Լրացումներ»-ի տակ բերուած են այն թուերն ու տոկոսները, որոնք մի քանի կաթեգորիաների համար անհրաժեշտ են համարուել և որոնց նկատմամբ անկետային ցուցակագրումները ունեցել են անխուսափելիօրէն իրանց բացերն ու թերութիւնները։

Բոլոր սպանուածների ընդհանուր թիւը՝ ցուցակագրուած և լրացուած, հաւասար է, ինչպէս մենք գիտենք, 8988 հոգու կամ հայ բնակիչների ընդհանուր թուի 10,14%-ի։ Բայց մենք գիտենք նաև, որ կայ զոհերի մի կաթեգորիա ևս, որի մեծագոյն մասը սպանուած են. դրանք անյայտացածները կամ անհետ կորածներն են, որոնց թիւը հասնում է ոչ պակաս քան 3572 հոգու կամ բնակիչների թուի 4,02%-ի և որոնցից 90% կամ 3215 հոգին կորել են արդէն ընդմիշտ ու անվերադարձ, այսինքն սպանուել են։ Այդպիսով մենք ստանում ենք փաստօրէն սպանուածների մի աւելի խոշոր թիւ, այն է 12203 հոգի կամ բոլոր հայ բնակիչների ընդհանուր թուի 13,76%։ Բոլոր մեռնողների թիւը՝ Բագւում թէ դուրսը (փախստավայրերում), ցուցակագրուած ու լրացումներով միասին հաւասար է 10111 հոգու կամ հայ բնակիչների ընդհանուր թուի 11,40%-ի։ Բայց մենք գիտենք զոհերի մի կաթեգորիա ևս, որի խոշոր մեծամասնութիւնը սովամահութեան

---

[1]) Նախընթաց գլխում մենք թուեցինք արդէն մի շարք լրացուցիչ տուեալներ մեռնողների մասին (1918 թ. Հոկտ. մինչև 1919 թ. Ապրիլը) դրանք են՝ բացի ցուցակագրուածներից. հիւանդանոցների, որբանոցի. Էնգէլի, Պետրովսկի, Հասան-Կալէի ու Ռաշտի և Անզրկասպեան երկրի տուեալները։

ճիրաններում, ծանր աշխատանքի ու տառապանքի Գողգոթայում գերեզմանն է իջել։ Դա գերիների կաթեգորիան է, որոնց թիւը հասնում է 4246 հոգու կամ 4,78%-ի։ Այդ թուից ոչ պակաս քան 70% կամ 2972 հոգին մեռել են։ Այսպիսով մենք ստանում ենք փաստօրէն մեռածների մի աւելի խոշոր թիւ, այն է 13083 հոգի կամ հայ բնակիչների ընդհանուր թուի 14,75%.

Ստանում ենք երկու ընդհանուր, կարեւորագոյն կաթեգորիաներ— սպանուածներ և մեռածներ. երկուսն էլ անմիջական զոհեր մեծ արհաւիրքի։ Նրանց տարբերութիւնը, որպէս զոհերի առանձին-առանձին կաթեգորիաների, կայանում է նրանում, որ մէկը (սպան.) զոհ է անմիջական սրածութեան կամ կոտորածի, իսկ միւսը (մեռ.) զոհ է կազմակերպուած աղէտի միջոցով և հետեւանքով ստեղծուած մահացու պայմանների։ Բայց այդ տարբերութիւնը երեւոյթի ձեւական կողմն է։ Այդ կաթեգորիաների նըմանութեան հիմք ծառայող էական կողմն այն է, որ նրանք երկուսն էլ, վերջին հաշուով, միեւնոյն բաղդն են ունեցել. նրանք երկուսն էլ փչացել, ոչնչացել են, որպէս ֆիզիքական գոյութիւններ, երկուսն էլ ենթարկուել են միեւնոյն վիճակին։

Բայց մենք ունենք մի ուրիշ ընդհանուր, համախմբուած կաթեգորիա ևս, որի առանձին-առանձին մասերը նոյնքան անմիջական զոհեր են համարւում մեծ արհաւիրքի. դրանք են՝ անյայտացածների կաթեգորիայից այն 10%-ը կամ 357 հոգին, որոնք ճարուել կամ գտնուել են յետոյ, և գերուածների կաթեգորիայից այն 30% կամ 1274 հոգին, որոնք «ողջ» տուն են վերադարձել. այնուհետեւ նոյն ընդհանուր կաթեգորիայի մէջ մտնում են բոլոր բանտարկուածները՝ 253 հոգի, բռնաբարուածները՝ 572 հոգի և առեւանգուածները՝ 1142 հոգի. Այդ հինգ զատ-զատ մասերից բաղկացած ընդհանուր կաթեգորիան տալիս է մի թիւ՝ 3598 հոգուց բաղկացած կամ 4,06% հայ բնակիչների ընդհանուր թուի։ Այդ զատ-զատ մասերի տարբերութիւնները դարձեալ ձեւական են. դրանք կայանում են մարդկանց այս կամ այն կերպ և այս կամ այն եղանակով զոհեր լինելու մէջ։ Բայց նրանք բոլորն էլ հաւասարապէս զոհեր են միեւնոյն գործողութեան, միեւնոյն երեւոյթի, այն է՝ տիրող ոյժերի գործադրած բռնութեան. հէնց այդ բռնութիւնն է, որ յիշեալ բոլոր մասերի նմանութեան էական հիմքն է ծառայում։

Այսպիսով եթէ մենք վերոյիշեալ բոլոր կարգի զոհերը համախմբենք երեք ընդհանուր կաթեգորիաների մէջ, կստանանք հետեւեալը.

	Ընդհանուր թիւը	%-ը բնակիչների թուից
1. Սրածութեան կամ կոտորածի զոհեր (բոլոր սպանուածները) . . .	12203 հոգի	13,76%
2. Մահացութեան զոհեր (բոլոր կարգի մեռածները	13083 »	14,75%
3. Բռնութեան զոհեր (բռնութեան բոլոր հարուածներին ենթարկածներ) . .	359[illegible] »	4,06%

Առաջին երկու ընդհանուր կաթեգորիաները կարող ենք աւելի ընդհանրացնել, այսպէս. ֆիզիքական գոյութեամբ ոչնչացած զոհեր (սպան. և

մեռածներ)։ Այս ընդհանուր գումարն է միասին վերցրած՝ 25286 հոգի կամ 28,5% (բոլոր հայ բնակիչների ընդհանուր թուից)։ Կարող ենք էլ աւելի ընդհանրացնել և առաջին երկու կաթեգորիաներին միացնելով երրորդը, բոլորը միասին անուանել՝ Բագուի մեծ արհաւիրքի կամ Թիւրք-Թաթարական բարբարոսութեան զոհեր, որոնք միասին առած կազմում են ոչ պակաս, քան 28884 հոգի կամ 32,57%, աւել է գրեթէ $^1/_3$ մասը Բագուի ողջ հայ ազգաբնակութեան։

Դա է Բագուի հայութեան տուած բոլոր կարգի զոհերի ընդհանուր թիւը՝ ըստ վերև բերուած դասաւորութեան և բացատրութիւնների։ Թող շեշտուի այստեղ մի անգամ ևս, որ այդ ընդհանուր թուից՝ 28884 հոգուց սոսկ բռնութեան զոհեր եղել են՝ ֆիզիքապէս մնալով ողջ, միայն 3598 հոգի (բաղկացած վերև թուած կաթեգորիաներից) կամ 12,45%։ Մնացածը՝ 25286 հոգին կամ 87,55%—սրածութեան և մահացութեան զոհերն են (սպանուածներն ու մեռածները), որոնք ֆիզիքական գոյութեամբ ոչնչացած են։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Մեր անկետային աշխատանքի հիմնական մասերը աւարտուած էին, երբ փախածներից վերադառնում էին նորանոր մարդիկ, (Մարտ—Ապրիլ ամիսներին) [1]) և իրանց վնասների ու կորուստների ցուցակները ներկայացնելով մեր յանձնաժողովին, հաղորդում էին տեղեկութիւններ իրանց ընտանիքների կազմի մասին, տալով պատասխաններ մեր անկետային հարցերին։

Այդ յաւելեալ տեղեկութիւնները, որոնք լրիւ լինել երբէք չէին կարող [2]), հետևեալ թուերից են բաղկացած.

Ընտանիքի թիւը	221
Բնակիչների թիւը . . .	868
Փախածների թիւը . . .	707
Սպանուածների թիւը . .	41
Անյայտացածների թիւը .	14
Վերադարձածների թիւը .	478
Մեռածների թիւը . . .	124

Փախածների թիւը կազմում է ահագին տոկոս, ոչ պակաս, քան 81,45%։ 221 ընտանիքների բնակիչներից (868 հոգուց) մնացել էին քա-

---

1) Վերադարձողների հոսանքը անդադար շարունակուել է ամբողջ ամառուայ ընթացքում. դժուար է ասել, թէ երբ կվերադառնայ վերջին մարդը Բագուի փախածներից։ Տարաբաղդաբար ուշ վերադարձողների մասին՝ թէ մարդկային զոհերի և թէ նրանց կրած կորուստների և վնասների վերաբերեալ, տեղեկութիւններ պակասում են մեր անկետային ուսումնասիրութեան մէջ։

2) Այդ տեղեկութիւնները չէին կարող լրիւ լինել, որովհետև յետագայ բոլոր վերադարձողներին հարց ու փորձ անելու հնարաւորութիւն չկար. մեր դրսի (անէ-տուն) ցուցակագրումը աւարտուել էր արդէն, իսկ վերադարձող փախստականներից միայն մի մասն էր դիմում Ազգ. Խորհուրդ և ցուցակագրւում։

զաքում չնչին թւով՝ 161 հոգի կամ 18,55%: Քաղաքում մնացած այդ փոքրաթիւ մարդկանցից, այնուամենայնիւ, սպանուել են 41 հոգի կամ 25,46%, ուրիշ խօսքով ¼ մասը, և անյայտացել են 14 հոգի կամ 8,70%: Շատ աւելի մեծ է մեռածների թիւը, որոնց մեծագոյն մասը մահացել է, անշուշտ, փախստավայրերում: Մեռածների թիւը հաւասար է 124 հոգու կամ 14,28% ընդհանուր թուից (868 հոգուց): Վերադարձողների թիւը եւս պատկառելի է. 707 փախածներից վերադարձել են 478 հոգի կամ 67,61%, իսկ բնակիչների ընդհանուր թուի (868 հ.) նկատմամբ՝ 55,07%:

Եթէ վերոյիշեալ յաւելուած-թուերը գումարենք մեր հիմնական թուերի հետ, կստանանք հետեւեալ պատկերը.

	Հայ ընտանիքն. թիւը	Հայ բնակիչ. թիւը էվակ. առաջ	Փախստականների թիւը	Սպանուածների թիւը	Անյայտացածների թիւը	Վերադարձածների թիւը	Մեռածների թիւը
Հիմն. թւերը	22662	88673	31293	8988	3572	16526	10111
Յաւել. թ-րը	221	868	707	41	14	478	124
Ընդամենը.	22883	89541	32000	9029	3586	17004	10235

Մեր հիմնական թուերը՝ ազգաբնակութեան քանակի և մարդկային զոհերի վերաբերեալ, փոփոխութեան ենթարկուեցին միայն շատ փոքր յաւելումներով: Մարդկային զոհերից տուեալներ ունինք յաւելուածի մէջ միայն երեք կաթեգորիաների վերաբերեալ՝ սպանուածների, անյայտացածների և մեռածների: Սրանց հիմնական թուերի քանակական աննշան փոփոխութիւնները համապատասխան չափերով անդրադառնում են այն ընդհանուր կամ համամփոփ կաթեգորիաների վրայ, որ մենք անուանեցինք սրածութեան (կոտորածի) և մահացութեան (մեռածների) կաթեգորիաներ. առաջնի թիւը յաւելուածով հասնում է (12203+55) 12258 հոգու, իսկ երկրորդինը (13083+124) 13207 հոգու: առաջնի տոկոսն է ընդհանուր ազգաբնակութեան թւից (յաւելուածով) 13,69%, իսկ երկրորդինը՝ 14,86%: Երկուսը միասին, որպէս ֆիզիքական գոյութեամբ ոչնչացած զոհերի կաթեգորիա, հաւասար են 25465 հոգու, որոնք կազմում են հայ բնակիչների ընդհանուր թուի 28,55%. համարեա ճիշտ նոյն յարաբերական տոկոսը, ինչ մեր հիմնական թիւն էր տուել (28,51%:

Սրանով ամբողջապէս աւարտեցինք մեր անկետային ուսումնասիրութեան առաջին մասը: Մենք խորապէս գիտակցում ենք այն մեծ պատասխանատուութիւնը, որի առաջ կանգնեցրել է մեզ նման մի աշխատանք և այն անուրանալի դժուարութիւններն ու խոչընդոտները, որոնց մենք պէտի յաղթահարէինք:

Մեր միակ և իսկական նպատակը եղել է պարզել ու տալ կատարուած անցքերի հարազատ պատկերը, անաղարտ հայելին. ասել է՝ գտնել ու ցուցակագրել փաստական ճշմարտութիւնը։ Իսկ այդ նպատակին կարող էինք մենք հասնել միայն և բացառապէս կիրառելով օբիեկտիւ գիտական վերլուծութեան մեթոդը։ Մենք հեռու ենք եղել քաղաքական էֆէկտի և հասարակական ագիտացիայի բոլոր նկատառումներից. հետևապէս սկզբից և եթ վտարուած է եղել մեր գործից միտումնաւոր գունաւորման և տենդենցիոզ վերաբերմունքի նշոյլն անգամ։ Մենք նայել ենք մեր գործին, որպէս զուտ գիտական ուսումնասիրութեան, և ստատիստիքական մեթոդը կամ թուերի լեզուն այն սուր զէնքն է և լուսաւոր ջահը, որով կարելի է լոյս սփռել մթապատ անկիւններին ու հարթել մացառոտ ուղիները՝ ճշմարտութիւնը որոնելու և ճշմարտութեանը հասնելու համար։ Այդ զէնքն ու ջահը գործածել իմացողը կարիք չունի ամենևին էֆէկտների և իրաւամբ արհամարհում է ամեն մի տենդենցիոզ գործ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐՆ ՈՒ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

(Թալանն ու կողոպուտը Բագու քաղաքում)

XII. ԳԼՈՒԽ

ԹԱԼԱՆԻ ՓԱՍՏՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ ծանր հարուածը, որ իջաւ Բագուի հայ ժողովրդի մէջքին, դա այն անհաշիւ վնասներն ու կորուստներն են, որ կրեց նա նիւթապէս Բագւում Սեպտեմբերեան կոշմար օրերին։

Թալան ու կողոպուտ խօսքերը շատ են հասարակ ու սովորական արտայայտութիւններ, որպէսզի նրանց տակ կարելի լինէր ամփոփել այն բոլոր փաստերն ու գործողութիւնները, որոնք տեղի ունեցան հարուստ, շէն ու փարթամ քաղաքի նիւթական բարիքների և կուլտուրական արժէքների հետ։ Դա մի հեղեղ էր, սոսկալի մի արհաւիրք, որ խղճալ ու խնայել, գթալ ու գիջել չգիտէր, այլ կոյր տարերքների աննահանջ մղումով աւերում ու կործանում, ջարդում ու խորտակում էր ամէն բան, ինչ վերցնել ու իւրացնել չէր կարող, և կողոպտում, թալանում ու յափշտակում էր ամէն բան, ինչ կարող էր հետը տանել և սեփականացնել։ Ես չգիտեմ, ինչով կարող էին աւելի եղած լինել տխուր անցեալի այն սև էջերը թաթարների, սելջուկների արշաւանքների մասին, որոնց գործած աւերումների և պատճառած վնասների վերաբերեալ այնքան զարհուրելի նկարագիրներ են աւանդել մեզ մեր պատմիչները։

Կարելի է համարձակ ասել, առանց որևէ չափազանցութեան, որ 4-5 տարի տևող պատերազմի ընթացքում չի եղել մի երկրամաս կամ քաղաք, որ, յարաբերաբար վերցրած, այն աստիճան տուժած լինէր, ինչպէս Բագուն, աւելացրէք՝ յատկապէս Բագուի հայ ազգաբնակութիւնը։

Երեք օր շարունակ, կոտորածների հետ զուգընթացաբար, կատարւում էր «տարերային» կողոպուտը կամ «անպաշտօն» թալանը, իսկ երկու ամիս շարունակ և սիստեմատիկօրէն տեղի էին ունենում կազմակերպուած յափշտակութիւնը և պաշտօնական իւրացումները։

Ո՞ր երկիրը կամ քաղաքը ենթարկուել է նման վիճակի։

Երեք օր շարունակ ու անդադար տաճիկ ասկեարները, տեղական մուսուլման հազարաւոր բանդաները և շրջակայքից թափուած թուրք գիւղա-

իները կողոպտում, յափշտակում ու տանում էին այն բոլորը, ինչ ցանկանում էին և ինչ կարող էին տանել հայերի տներից, խանութներից, գրասենեակներից, հաստատութիւններից և եկեղեցիներից։ Երկու ամիս շարունակ տաճկական հրամանատարութիւնը և ադրբէյջանեան ադմինիստրացիան՝ վերջին ոստիկանից սկսած մինչև մինիստրները, ռեկվիզիցիայի անուան տակ հայ ունևոր ընտանիքների կահ-կարասիքները, զարդարանքներն էին յափշտակում, քաղաքային շտեմարաններն և պահեստներն էին դատարկում, դուրս տանելով դէպի Գանձակ և այլուր, քաղաքի սեփականութիւնը, ինչքն ու գոյքը։

Նման դրութեան չի կարող ենթարկուած լինել մի այլ քաղաք հէնց այն պատճառով, որ ուրիշ տեղերում արտաքին թշնամին չի ունեցել տեղում կամ ներսում այնքան մեծաթիւ աջակիցներ վրիժառութեան աւելի մեծ տենչանքով և աւերող ծարաւով վառուած բանդաներ, ինչպէս ունեցել է տաճիկ հրամանատարութիւնը Բաքւում յանձին տեղական մուսուլմանութեան։ Բաքուի պատերազմի և պաշտպանութեան այդ առանձնայատկութիւնների մասին մենք խօսել ենք արդէն ներածութեան մէջ։

Ի՞նչպէս, ում միջոցով և ինչ պայմաններում են տեղի ունեցել թալանի փաստն ու գործողութիւնը։

Ինչպէս սպանութիւնների դէպքերն են եղել, այնպէս էլ թալանի ու կողոպուտի փաստերն ու գործողութիւնները կատարուել և արտայայտուել են քաղաքի զանազան մասերում, փողոցներում, տներում, և՛ զանազան ու զանազան, և՛ նման եղանակներով։ Բոլոր զանազանութիւններով հանդերձ, մի քանի փաստեր ընդհանուր են եղել ամեն տեղ։ Չի եղել մի տուն, մի բակ և նոյն իսկ մի ընտանիք, որտեղ կողոպտիչների միայն մի խումբ մտած լինի. ամեն տեղ եղել են մի քանի խմբեր մէկը միւսից առանձին, մէկը միւսից անկախ պահանջներով. բայց եղել են նաև շատ դէպքեր, երբ միևնոյն խմբերը «այցելել» և թալանել են միևնոյն տներն ու բակերը մի քանի անգամ։ Այնուհետև չի եղել մի տուն, բակ կամ ընտանիք, որտեղ մուտք կոխած թիւրքն ու թաթարը առանց թալանի դուրս գնային։ Եղել են, ճիշտ է, թեթև, «երեսանց» կողոպուտի դէպքեր, բայց առանց մի բան յափշտակելու չեն հեռացել անգամ այցելուները։ Եթէ եղել են սակաւաթիւ բնակարաններ, որոնք բախտաւոր բացառութեամբ զերծ են մնացել կողոպուտից, ինչպէս մենք յետոյ կը տեսնենք թուական տուեալներով, ապա ոչ այն պատճառով, որ նրանք խնայուել են թալանչիներից, այլ շնորհիւ միայն այն հանգամանքի, որ նրանք չեն նկատուել իրարանցման ժամանակ և չեն ենթարկուել разгромъ-ի—զգատուել են բախտաւոր թիւրիմացութեամբ։

Ահա այս շեշտած վերջին երկու մոմենտները—միևնոյն տեղը մի քանի խմբերի «այցելութիւնը» և ամեն մի «այցելած» բնակարանը անխուսափելիօրէն թալանելու փաստը մի ընդհանուր երևոյթ է, որ տեղի է ունեցել առաւել կամ պակաս տարբերութեամբ ամենուրեք։

Ո՞վքեր են եղել թալանչիները։

Դրանք եղել են կոչման, ծագման ու հասակի, դիրքի ու զբաղմունքի մի խառնիճաղանճ հասարակութիւն։ Ե՛ւ տաճիկը, և՛ թաթարը, և՛ թիւրք

ասկեարը, և՛ մուսուլման ամբոխը, թէ փոքրահասակ փողոցային լակոտները և թէ բարձր տարիքաւորները, թէ բեռնակիր համշարինները, մանրավաճառները և թէ ղոչիների բոլոր գաղտնի ու ակնյայտնի տեսակները—բոլորն էլ անխտիր թաթախուել ու խեղդուել են թալանով։ Նրանք պտտում էին խումբ-խումբ, խառը կամ զատ-զատ, մէկը միւսին ուղեկցելով կամ մէկը միւսից անկախ։

Վերյիշելու է այն ակնյայտնի փաստը, որ թիւրք ասկեարներն իրանց թալանի եղանակով զգալի կերպով տարբերւում էին տեղական մուսուլման բանդաներից. Ասկեարները գլխաւորապէս պահանջում և յափշտակում էին դրամ, ոսկի, արծաթ, թանկարժէք իրեր ու զարդարանքներ։ Մինչդեռ թաթարները ինչ պատահում էր, ինչ գտնում էին փակ պահարաններում, կողպած սնդուկներում ու արկղներում—բոլորը անխտիր, մինչև վերջին թելը հանում, կողոպտում էին, կացիններով, մուրճերով և երկաթէ ձողերով ջարդ ու փշուր անելով ամեն մի փակ տեղ, ամեն արգելառիթ խոչընդոտ։ Աչքեցուցիչ էր տեսնել разгромъ-ի ենթարկուած բնակարաններում, թէ ինչպէս թուրք պոգրոմշչիկները, չկշտանալով հնարաւոր առատ աւարից, չէին քաշուել անգամ վերջին գեաղայի աւազակային ագահութիւնից. նրանք պոկել, վերցրել էին ոչ միայն նկարների երեսն ու ապակը, այլ և բազկաթոռների և աթոռների վերևի (նստելատեղի) ծածկոցը, չթեղէն կամ ժանեակէ կտորը*)։ Կրկնակի անխնայ է եղել վերաբերմունքը այսպէս անուանուած «անտէր» բնակարանների հետ, որոնց տէրերը թողել, փախել էին քաղաքից։ Շատ տեղեր նկատուել է հետևեալ փաստը. այն բնակարաններում, ուր թալանչիները փող չէին գտել, իրանց զայրոյթը թափել են անշունչ առարկաների վրայ։ Կողոպտելով այն բոլորը, ինչ ցանկանում էին և կարող էին կողոպտել, պոգրոմշչիկները վրէժխնդրութեամբ կատաղած ջարդել, կոտրատել էին պահարաններ, սեղաններ ու աթոռներ, մեծ հայելիներ ու կոմոդներ, կախած ժամացոյցներ։ Գետնին ասեղ ձգելու տեղ չէր լինում, թափթփուած էին փշրտուած ամանեղէններ բոլոր տեսակների, պատառոտուած էին թղթեր ու գրքեր ամենավանդալական եղանակով։

Այն, ինչ տեղի է ունեցել տների, մասնաւոր բնակարանների հետ, նոյնը կրկնուել է խանութների, առևտրական տների և գրասենեակների, գործարանների և այլ ձեռնարկութիւնների, եկեղեցիների, դպրոցների և զանազան կուլտուրական հաստատութիւնների հետ։ Ամեն տեղ նոյն աւերն ու կողոպուտը, թալանն ու կործանումը, աւազակութիւնն ու վանդալիզմը։ Սարսափելի տեսարան էին ներկայացնում այն փողոցները, ուր զետեղուած էին հայերի խանութներն ու առևտրական տները։ Երկաթէ ձողերով և կացիններով ջարդուփշուր արած դռները, դատարկած ողջ բովանդակութիւնը, աւերած ու կործանած ներսի կահաւորութիւնը։ Եկեղեցիները ամբողջապէս կողոպտել էին—բոլոր թանկագին զարդերը, խաչերը, հոգևորականների հանդերձները, սրբութիւնները և նոյնիսկ այն գրքերը, որոնց կազմի

---

*) Տողերիս գրողը կատարածից երեք օր անցած ամեն օր դուրս էր գալիս քաղաք և այցելում շատ ծանօթների և ընկերների, նրանց միջոցով նաև ուրիշ բնակարաններ ստեղծուած դրութեան հետ ծանօթանալու համար։ Դիտածս տեսարանները չեն ենթարկւում ոչ մի նկարագրութեան։

վրայ արծաթէ խաչեր են եղել։ Ի հարկէ, չեն խնայուել նաև առաջնորդարանը, կոնսիստորիան։ Քաղաքի շտեմարաններում ամբարած անհագին քանակով պահեստները, կօօպերատիւ ընկերութիւնների և միութիւնների պարէնի պահեստները, ինչպէս և Քաղաքների Միութեան Բագու մնացած անհագին գոյքը — մի քանի հարիւր միլլիոնների հարստութիւն է դա, որ աւազակային թալանի ու կողոպուտի բաժին է դարձել անխնայ և անխտիր։

Սակայն այդ անբաւ հարստութիւնը ոչ բոլորը բաժին է ընկել նրանց, որոնք անմիջապէս մասնակցել են պոգրոմներին և разгромъ-ներին։ Երևակայեցէք, որ նոյն իսկ կողոպուտի և թալանի մէջ կան գործողի և վայելողի, «վաստակաւորի» և պարազիտի սոցիալական տարբերութիւններ։ Մի՞թէ այն յաղթանդամ բազուկները, որոնք ջարդում, փշրում, կտրում էին դարպասները, դռները, պատուհանները, պահարաններն ու սնդուկները, կամ այն բեռնակիր մշակները, որոնք բոլոր ծանրութիւնները շալակում և դուրս էին տանում կողոպտավայրերից դէպի անյայտ անկիւններ, — մի՞թէ, ասում ենք, դրանք են, որ տէր են դարձել այդ հարստութիւններին և պիտի վայելէին այդ բարիքները։

Բնաւ լիցի։

Դրանք ուրիշի հաշուին վարձուած և չնչին պատառներ իւրացրած բանդաներ էին, որոնց ամբողջ «քրթնաթոր աշխատանքը» յափշտակում, իւրացնում և վայելում էին կուլիսների յետև մեքենայութիւններով պարապող մեծերը, հարուստներն ու ազդեցիկները, ղոչիների ղոչիները։

Ահա ում ձեռքն են անցել միլլիոնները և միլլիոնների հարստութիւնները։

Տիրողներն ու մեծերը գիտէին թալանած հարստութիւնը իրար մէջ բաժանելու եղանակը։

Մեծ պահեստները և առանձնապէս թանկարժէք կարասիներն ու իրերը իւրացնում էր թիւրքական հրամանատարութիւնը և հայրենիք տեղափոխում։ Մնացածը՝ բազմատեսակ իրերի և բարիքների անբաւ պաշարը անցնում էր տեղական մեծերի և ազդեցիկների ձեռքը, որոնք առաջին շաբաթների ընթացքում կամ պահեցին թագցրած կամ տեղափոխեցին շրջակայքի ապահով վայրեր և կամ Գանձակ ու այնտեղ հրապարակային տօնավաճառ սարքեցին։ Յետոյ արդէն, Ազերբէյջանի «օրինական» իշխանութիւնը և քաղաքական կացութիւնը «ամրապնդուելուց», սկսուեց թալանած ապրանքների ազատ վաճառքը Բագւում թէ մասնաւոր կերպով թուրքական թաղերում ու տներում յատուկ յայտարարութիւններով և թէ, մանաւանդ, բազարներում ու թուրքական խանութներում։

Հայի ապրանքը ծախւում էր թուրքի խանութում և թուրքի միջոցով օր-ցերեկով, օրէնքի բոլոր կանոններով։ Աւելին կասենք. հայերի խանութները գրաւել էին թուրքերը և այնտեղ վաճառում էին հայերից կողոպտած ապրանքները։ Իշխանութիւնների կողմից թոյլատրուած թալան ու կողոպուտը վաճառւում էր, որպէս նոր տիրոջ սեփականութիւն, նոյն իշխանութիւնների կարգադրութեամբ, գուցէ և մասնակցութեամբ։ Ուրիշ խօսքով մասսայական աւազակութիւնը պաշտպանւում և հովանաւորւում էր կառավարութեան օրէնքի կողմից։

Ահա դրա մէջ էր կայանում Ադրբէյջանի «նոր պետականութեան» հիմքերից մէկը։

Ստեղծուել էր հայ ազգաբնակութեան համար մի անելանելի դրութիւն։

Մի կողմից Ադրբէյջանի կառավարութեան բազմաթիւ օրէնքներով (Հոկտեմբերի 8-ի օրէնքը 1918 թ.) փողոց էին նետուել հայ բանւորութիւնը, տեխնիկական և գրասենեակային պերսոնալը, իսկ միւս կողմից Թուրքերի անարգել զաւթումներով զրկուել էր իր ունեցուածքից հայ առևտրական դասը, որ այնքան խոշոր էր իր քանակով և պատկառելի իր ունեցած մասնակցութեամբ Բագուի առևտրի մէջ։ Այն դասը, որ առաջ իր ձեռքն էր կենտրոնացրել Բագուի մի քանի յայտնի փողոցների առևտրական տների և խանութների բացարձակ մեծամասնութիւնը (որոշ մասերում անգամ ամբողջութիւնը), ինչպէս են Տելեֆոննի, Բոլշոյ-Մորսկոյ, Տորգովի, Մերկուրևսկի, Կրիվոյ, Բարեատինսկի, Վելիկոկնեաժեսկի փողոցներում,—այդ դասը չքացել է այժմ առևտրական ասպարէզից և նրա փոխարէն հրապարակ են եկել մանրավաճառների, մրգավաճառների և գինեվաճառների խղճուկ թափթփուկներ Ստանիսլաւսկի և Կանիտապինսկի յետընկած փողոցներում։

Այդպէս, Բագուի հայ ազգաբնակութիւնը երբեմնի ամենաշէն ու բարգաւաճ համայնքը, ամենահարուստ ու փարթամ գաղութը Անդրկովկասի ողջ հայութեան մէջ, ենթարկուեց տնտեսական ճնշումների ու հալածանքների անօրինակ հարուածների։ Հայկական չքաւորութիւնը հասել էր ծայրայեղ չափերի, մասսայական պաուպերիզմը դարձել էր տիրապետող երևոյթ. երկու սեռերից փողոց նետուած անգործների թիւը հասնում էր լեգէոնների։ Հասարակական կազմակերպուած օգնութիւն, եթէ չասենք գոյութիւն չունէր, ապա, գոնէ, շատ թոյլ ու անբաւարար էր։ Բագուի Հայոց Ազգային Խորհուրդը այնքան էր ծանրաբեռնուած որբանոցների և հիւանդանոցների վերաբերեալ հարկադրական կարիքներով և ֆինանսական այնպիսի քրոնիկական ճգնաժամ էր ապրում—զուրկ լինելով եկամուտի մշտական աղբիւրներից և դրսի օժանդակութիւնից, որ անկարող էր դէթ մասամբ մեղմել տիրող չքաւորութիւնը։

Առանձին յոյսեր դրուած էին երրորդ ոյժի վրայ։ Սպասւում էր, որ անգլիական հրամանատարութիւնը օգնութեան կգայ քայքայուած, աւերուած, հազարաւոր զոհերով խոցոտուած ու արիւնոտուած ժողովրդին, պաշտպանութեան միջոցներ մատակարարելով գոնէ նրա որբերին և հիւանդներին։ Սպասւում էր, մանաւանդ, այն՝ ինչ ներելի և բնական էր սպասել. այսինքն այն, որ յաղթական մուտքով Բագուն (ինչպէս և ողջ Անդրկովկասը) գրաւած դաշնակիցները կսանձահարէին թաթար բռնակալների ամեն կարգի կամայականութիւններն ու հալածանքները մի անանկ ու տնանկ, գերազանցապէս խեղճացած ժողովրդի դէմ, պաշտպանելով հալածուողի և ճնշուողի արդար իրաւունքները։ Սպասւում էր, որ հայերի բնակարանները խլած, խանութները զաւթած և կուլտուրական հիմնարկութիւնները գրաւած մուսուլմանների դէմ յարուցուած էլեմենտար պահանջն ու բողոքը բաւարարութիւն ստանային անգլիական հրամանատարութեան կողմից։

Սպասւում էր, այո. բայց, աւաղ, չիրա[illegible]ցաւ անգամ մինիմումը այդ սպասելիքների։

Իրականացաւ միայն մի բան, որ ամենից քիչ էր սպասւում, որովհետև անհաւատալի էր թւում։

Դա թալանուած ապրանքների, կողոպտուած տուն ու տեղի, գոյքի և սեփականութեան ցուցակագրման և կրած վնասների ու կորուստների հատուցման հարցն էր։

1918 թ. Նոյեմբերի վերջին անգլիական հրամանատարութեան կողմից տարածւում է մի պաշտօնական յայտարարութիւն տուժած ու փչացուած ազգաբնակութեան հասցէին ուղղուած. վերջինս պէտք է երեք օրուայ ընթացքում տնային կոմիտէների կնքով վաւերացրած ներկայացնէր ցուցակները այն վնասների և կորուստների, որ նրանք կրել էին տաճիկների արշաւանքից և աւերումներից։ Անշուշտ, երեք օրուայ ընթացքում անկարող էր բազմաթիւ հարուածներից շշմուած, տակաւին ուշքի չեկած և, վերջապէս, մեծագոյն մասով անգրագէտ ժողովուրդը վերոյիշեալ յայտարարութեան բաւարարութիւն տալ։ Նոր և մի այլ կարևոր հանգամանք։ Փախըստականները դեռ նոր էին վերադառնում Էնզելիից, որոնք պիտի զրկուէին ցուցակներ ներկայացնելու հնարաւորութիւնից։ Ցենտրոդոմը, որին վերապահուած էր ամբողջ գործի կազմակերպութիւնը, ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները և վերադարձ փախստականների թախանձագին դիմումները, ցուցակների ընդունելութեան նոր ժամանակամիջոց է նշանակում Դեկտեմբերի վերջերին և, վերջին անգամ, Փետրուարի 15—20-ին։

Մեր անկետային յանձնաժողովը, որ, ինչպէս յիշուած էր ներածութեան մէջ, աւելի վաղ էր սկսել իր գործունէութիւնը, օգտւում է հանգամանքից և իր աշխատակիցների միջոցով ժողովում է Ցենտրոդոմի համար պատրաստած ցուցակների պատճէնները։ Ի հարկէ, լինում են այնպիսիները, մանաւանդ «ինտելիգենտ» շրջաններից, որոնք զլանում կամ ուղղակի հրաժարւում էին տալ մեզ իրանց ցուցակների պատճէնները, անելով զանազան տարտամ և տխմար առարկութիւններ։ Մենք գիտէինք, անշուշտ, որ ուր նիւթական հատուցման և վարձատրութեան շահեր կային, այնտեղ պիտի վազէր ժողովուրդը և գլուխ կոտրելով, իրար հրելով հերթի կանգնէր ժամերով՝ ցուցակները ներկայացնելու համար։ Իսկ այնտեղ, ուր խօսքը վերաբերում է անկետային հարց ու փորձերին և ստատիստիկական ուսումնասիրութեան, ինչ որ «վերացական» շահագրգռութեան, այնտեղ ինտերեսներ չեն որոնում չարչիական կշռաչափերով մտածող ու գործող մարդիկ։ Հէնց այդ պատճառով մենք համոզուած էինք, որ մեր աշխատանքը անխուսափելիօրէն կունենար խոշոր թերութիւններ [1], եթէ չձեռնարկէինք ուրիշ միջոցների։ Մտնելով Ցենտրոդոմի և ապա նրա միջոցով կազմակերպուած դաշնակից պետութիւնների վերստուգիչ յանձնաժողովի հետ սերտ

---

1) Հարկաւ, խօսքը վերաբերում է մեր աշխատութեան միայն երկրորդ մասին կամ նիւթական վնասների բաժնին։

կոնտակտի մէջ [1]) մենք հնարաւորութիւն ունեցանք ոչ միայն ստատիստիկօրէն օգտագործելու վերաստուգիչ յանձնաժողովի ձեռքը կենտրոնացած ամբողջ նիւթը, այլև վերջնիս թերութիւնները լրացնելու մեր տուեալներով, որոնց մասին խօսք կլինի յետոյ։ Մի քանի խօսք ևս այն վերաբերմունքի մասին, որ ունեցել է տուժած ժողովուրդը դէպի վնասների և կորուստների հատուցման հարցը։

Անգլիական հրամանատարութեան յայտարարութիւնը՝ վնասների ցուցակներ ներկայացնելու մասին, մի առանձին աշխուժութիւն էր առաջ բերել ժողովրդի ամենալայն խաւերի մէջ։ Շատերի համար ցուցակներ ներկայացնելը և մանաւանդ ցուցակների նոմերներ ստանալը համազօր էր ամենամօտ ապագայում հատուցում, փողեր ստանալու փաստին։ Մանաւանդ հասարակ ժողովուրդը այնքան միամիտ էր, որ նա Ազգային Խորհրդի անկետային յանձնաժողովին ներկայացրած պատճէնների համար ևս նոմերներ էր պահանջում. կարծելով, որ յատուկ վարձատրութիւն պիտի ստանար և՛ Ազգային Խորհրդից։ Նա կարծում էր և միամիտ հաւատով սպասում, որ վնասների հատուցումը կբաժանեն գոնէ զատկական տօներին [2]), ասել է Ապրիլ ամսի կէսերին, ենթադրելով, որ դաշնակիցները կխղճան չքաւոր ազգաբնակութեան թշուառ վիճակին։ Սպասելիքները ապարդիւնանցնելուց յետոյ յուսադրուած և աշխուժացած ժողովուրդը կորցրեց իր հաւատը առհասարակ որևէ բան ստանալու համար։ Բայց երբ Մայիսի 8-ից սկսած վերաստուգիչ յանձնաժողովը սկսեց բաժանել չեկերը՝ վրան նշանակած ստանալիք փողերի գումարները, ժողովուրդը նորից յուսադրուեց և աշխուժացաւ և այնքան հեռու գնաց իր ակնկալութիւնների մէջ, որ չեկերն ընդունելով կանխիկ գումարների էկվիվալենտ, գալիս խնդրում էր Ազգային Խորհրդին, որ վերջինս ընդունէ չեկերը և հատուցանէ դրամը գոնէ կիսով չափ։

Բայց այդ միամիտների հետ բազմութեան կողքին եղել են նաև այնպիսի սկեպտիկներ—անհամեմատ փոքրաթիւ քանակով—որոնք սկզբից էլ, չհաւատալով ձեռնարկած գործին և կամ հատուցման խոստումներին, կամ հրաժարուել են որևէ ցուցակ ներկայացնելուց (այդպիսիների թիւը շատ չնչին է) և կամ վերաբերուել են անփոյթ ու անտարբեր, ներկայացնելով անհամեմատ աւելի փոքր գումարների ցուցակներ, քան կորցրել են. Նրանք գնահատել են կորուսած իրերը նախկին էժանագին նորմաներով։

---

[1]) Բացի մեր սեփական աշխատանքներից և պարտականութիւններից, անկետային յանձնաժողովը պատկառելի ծառայութիւն մատուցել է նաև վերաստուգիչ յանձնաժողովին կամ, աւելի շուտ, հայ վնասուած ժողովրդին, և իրաւ նրանով, որ մեր յանձնաժողովն ընդունել է նորանոր վերադարձող հայ փախստականներից Ցենտրողոմի համար պատրաստած ցուցակները և երբ վերսկսուել է կարճ ժամանակով վերաստուգիչ յանձնաժողովի ընդունելութիւնը, մենք հաւաքած ցուցակները տարել ներկայացրել ենք, տրամադրելով նրան նաև մեր աշխատակիցներից հարկաւոր թւով մարդիկ գործին օգնելու համար։ Այդ եղանակով մենք վերաստուգիչ յանձնաժողովին ներկայացրել ենք մօտ 4000—5000 ցուցակներ։

[2]) Զատկական տօների առիթով փորձեր են եղել Ցենտրողոմի նախագահութեան և մեր Ազգային Խորհրդի կողմից դիմելու և խնդրելու անգլիական հրամանատարութեան, որ նա ի հաշիւ ապագայ հատուցման բաց թողնէ սովալլուկ ազգաբնակութեան գոնէ 10—15 միլիոն ռուբլի կանխավճար։ Տարաբաղդաբար եղած դիմումները ոչ մի հետևանք չեն ունեցել։

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ մնում է մեզ այժմ անցնել հարցի զուտ փաստական կողմին։

XIII. ԳԼՈՒԽ

ՎՆԱՍՆԵՐԻ ԵՒ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԹԻՒԸ

Հետաքրքիր է ամենից առաջ պարզել այստեղ թուական պատկերը ներկայացրած ցուցակների, առ այժմ մի կողմը թողնելով վնասների գումարները։ Ո՞րքան է վնասների ցուցակների ընդհանուր թիւը. դա նշանակում է որքան ընտանիքներ և բնակչութիւն է տուժել տաճկական արշաւանքից և թաթարական պոգրոմներից։ Այնուհետև ինչպէս է դասաւորուած այդ ցուցակների թիւը ըստ թաղամասերի. վերջապէս ինչ ազգութիւններ ինչ թուական յարաբերութիւններով են մասնակցում վնասների ցուցակների ընդհանուր քանակի մէջ։

Այդ բոլոր հարցերի փաստական պատասխանն է տալիս հետևեալ աղիւսակը։

Ա. ԱՂԻՒՍԱԿ

Ընդունած վնասների ցուցակների թիւը ըստ թաղամասերի եւ ըստ ազգութ

Թաղամաս.	I Ցուցակների ընդհանուր թիւը	II Հայերի ցուցակների թիւը	III Ռուսն., հրէան. և այլ ազգ. ցուց. թիւը	IV Վրացիների ցուցակների թիւը	V Մուսուլմանների ցուցակների թիւը	VI Ձեռնարկ. և հաստատութ. ցուցակ. թիւը	Հայերի ցուցակների տոկոսը	Ռուսն. և այլոց ցուցակների տոկոսը	Վրաց. ցուցակների տոկոսը	X Մուսուլման. ցուցակների տոկոսը	XI Հաստատութ. ցուցակների տոկոսը
I Թաղ.	1205	881	283	6	15	20	73,11	23,56	0,49	1,24	1,66
II »	921	514	317	43	20	27	55,81	34,42	4,77	2,17	2,93
III »	797	306	438	16	22	15	38,39	55,00	2,08	2,76	1,88
IV »	945	225	646	44	12	18	23,70	68,36	4,66	1,27	1,91
V »	1537	1083	334	48	14	58	70,46	21,73	3,12	0,91	3,77
VI »	2176	1443	591	74	27	41	66,31	27,16	3,40	1,23	1,88
VII »	5379	4841	445	58	9	27	90,00	8,27	1,08	0,16	0,50
VIII »	9556	8582	883	62	6	23	89,81	9,24	0,65	0,06	0,24
IX »	6301	5510	729	35	7	20	87,44	11,57	0,55	0,11	0,31
X »	1963	971	953	8	12	19	49,46	48,54	0,41	0,60	0,96
Բալախանի	1669	747	718	26	72	106	44,76	43,02	1,56	4,31	6,34
Անյ. փող.	368		259	15	—	94	—	70,40	4,08	—	25,54
Ընդամենը.	32817	25103	6596	434	216	468	76,50	20,10	1,32	0,66	1,42

Այս աղիւսակը կարիք ունի մի շարք բացատրութիւնների։

Առաջին հարցը, որ երևի ոչ առանց զարմանքի կարող է տալ ընթերցողը, պիտի լինի այս. մի՞թէ բացի հայերից տուժել են նաև ուրիշ ազգութիւնների պատկանող բնակիչներ։ Որ թալանուել ու կողոպտուել են անոնիմ ձեռնարկութիւններ, հասարակական և կուլտուրական հաստատութիւններ, քաղաքային և ընկերակցական պահեստներ—դա հասկանալի է. իւղոտ ու մեղրոտ կարասներ էին դրանք, ուր պիտի լողային համեղ պատառներ որոնող գամփռները։ Որ թալանի շրջափը պիտի դիպչէր նաև ռուսներին, դա ևս որոշ չափով հասկանալի է. վերցրել են ռուսի քաղաքը և բնական էր սպասել թիւրքի ու թուրքի կողմից որոշ լարուած տրամադրութիւն ու կատաղութիւն նաև ռուս բնակիչների դէմ ուղղուած, թէև, հարկ է աւելացնել, հրամայազօր պետերի կողմից կարգադրուած է եղել ռուսներին չդիպչել։ Բայց ինչո՞վ բացատրել, որ թալանի զոհեր են դարձել նաև «չէզոք» ու լոյալ հրէաները, թիւրքերի և թաթարների դաշնակից վրացիները և—ապշանքով տեսէք ու կրկնեցէք—անգամ ջերմեռանդ բարեկամ ու ֆանատիկ հաւատակից մուսուլմանները։ Ի հարկէ, շատ չնչին է դրանց, մանաւանդ մուսուլմանների ներկայացրած ցուցակների թիւը, բայց և այնպէս փաստը աչքի է զարնում։

Այդ կատարուած փաստի մէջ կայ թիւրիմացութեան խիստ խոշոր բաժին։ Եւ այդ թիւրիմացութեան վրայ հարկ է մատնացուցել հէնց այստեղ։

Երեք օր կոտորածի և կողոպուտի կարգադրութիւն ստացած զօրքին ու բանդաներին չի տուած ընդհանուր առմամբ, որ քաղաքը թողնւում է նրանց տրամադրութեան երեք օր շարունակ, այլ միայն եւ բացառապէս քաղաքի հայ բնակչութիւնը. հակառակ դէպքում զոհեր ու վնասներ համապատասխան չափերով կըկրէին նաև միւս ազգութիւնները։ Նշանակում է այդ իմաստով—ըստ սկզբնական հրամանի կամ կարգադրութեան—բացի հայերից ուրիշ բնակիչների թալանուելը թիւրիմացութիւն է։ Ուստի և այդ «սխալը» պիտի բացատրել մասամբ նրանով, որ խառը բնակչութիւն ունեցող տներում թալանչիները հայ բնակարանների հետ «հաշիւներ» վերջացնելուց չեն խնայել նաև ոչ-հայ հարևանի բնակարանը։ Աւելի մեծ չափով պիտի բացատրել փաստը նրանով, որ հայերի խանութներն ու գրասենեակները կողոպտելիս, առանց տարբերելու, հետը կողոպտել են նաև նրանց կից խանութները, ոչ-հայերին պատկանող։ Այս վերջին բացատրութիւնը վերաբերում է մանաւորապէս մուսուլմաններին։ Անկարելի է, յամենայն դէպս, ենթադրել, որպէս զի մուսուլմանների բնակարանները ենթարկուած լինէին կողոպուտի տաճիկ զօրքի և մուսուլման բանդաների կողմից։ Այդպիսի դէպքեր եղել են միայն բնակարաններից դուրս սխալմամբ և թիւրիմացութեամբ կատարուած. դրան կդառնանք մենք յետոյ։ Բայց հէնց այստեղ պէտք է աւելացնել այն հանգամանքը, որ տուժած մուսուլմանների մէջ եղել են այնպիսիները, որոնց գոյքը թալանուել է Մարտի անցքերի ժամանակ և ոչ Սեպտեմբերի. նրանք օգտուել են հանգամանքից և ցանկացել են «նաղդել» իրանց հին վնասը. այդպիսի կեղծիքներից միայն քչերն են բացուել։

Դառնանք այժմ մեր աղիւսակին և տանք զատ-զատ բացատրութիւններ ըստ թաղամասերի և ըստ ազգութիւնների։

Մեր աղիւսակում բերուած են 11 սիւնակներ. նախ ներկայացրած և ընդունած ցուցակների ընդհանուր թիւը, այնուհետև հայերի, ռուսների, հրէաների և այլ ազգութիւնների[1]), վրացիների, մուսուլմանների, զանազան ձեռնարկութիւնների և հաստատութիւնների ցուցակների թիւը և բոլորի տոկոսները. առանձին-առանձին։

Բոլոր ներկայացրած և ընդունած ցուցակների ընդհանուր թիւը, ինչպէս երևում է 1-ին սիւնակից, հաւասար է 32817-ի[2])։ Այդ պատկառելի թուի մէջ ամենախոշոր տեղը, ինչպէս և պէտք էր սպասել, բռնում է VIII-րդ թաղամասը, այսինքն ամենից շատ տուժած հայ ժողովրդի բնակութեան կենտրոնավայրը. այդ թաղամասի ցուցակների թիւը հասնում է 9556-ի կամ բոլոր ցուցակների ընդհանուր թուի 29,12%։ Այնուհետև յաջորդաբար հետևում են մնացած հայաշատ թաղամասերը. IX-րդը՝ 6301 ցուցակներով կամ 19,20%, VII-րդը՝ 5379 ցուցակներով կամ 16,39%-ով, և այդպէս շարունակ. Ամենից թեթև շօշափուել է III-րդ թաղամասը, որտեղից ներկայացուած են ընդամենը 797 վնասների ցուցակներ կամ ընդհանուր թուի 2,42%. այնուհետև յաջորդում են II թաղամասը 921 ցուցակներով կամ 2,81%-ով, IV թաղամասը 945 ցուցակներով կամ 2,88%-ով, ուրիշ խօսքով՝ այն թաղամասերը, որոնք ամենից սակաւահայ բնակութիւն ունեն։ Վնասների ցուցակների ընդհանուր թուի բացարձակ գերիշխող մասը, ինչ ասել կուզէ, պատկանում է հայ բնակիչներին (2-րդ սիւնակ)։ Սրանց ներկայացրած և ընդունուած ցուցակների քանակը հասնում է 25103-ի[3]) կամ միջին թւով բոլոր ցուցակների ընդհանուր թուի 76,50%-ը։ Բայց այդ տոկոսական մասնակցութիւնը շատ աւելի է բարձրանում (7-րդ սիւնակ) զուտ հայկական թաղամասերում, այսինքն ամենից շատ կողոպտուած և թալանուած վայրերում։ Այսպէս, օրինակ, հայերի ցուցակների տոկոսական յարաբերութիւնը IX թաղամասում հասնում է 87,44% (կամ 5510 ցուց.), VIII թաղամասում աւելի բարձր 89,81% (կամ 8582 ցուցակներ), իսկ VII թաղամասում անգամ 90,00% (կամ 4841 ցուցակներ)։ Առանձին յիշատակութեան արժանի է այդ փաստը. այն թաղամասերը, ուր կենտրոնացած է հայութիւնը ամենախիտ կուտակումներով, այնտեղ հայ բնակչութեան կրած վնասների և կորուստների տոկոսը հասնում է մօտ 90-ի։ Ինչպէս մարդկային զոհերի դէպքում, այնպէս էլ կողոպուտների և թալանումների մէջ ամենածանր, մահացու հարուածները

---

1) «Այլ ազգութիւններ» տակ հասկացւում են բացի յիշուածներից ուրիշ ազգութիւնների (օր. լեհ., չեխ, յոյն և այլ եւրոպացիներ) պատկանող սակաւաթիւ ընտանիքներ կամ անհատներ. Պէտք է աւելացնել, որ այդ թուի մէջ (6596 ցուց.) ամենից շատ տուժողները եղել են հրէաները, ապա ռուսները և այնուհետև ուրիշները։

2) Հարկ է նկատել, որ տուժած ազգաբնակութիւնը ներկայացրել է շատ աւելի մեծ քանակով ցուցակներ. 32817 ցուցակները միայն ընդունուած և բաւարարութիւն ստացածների թիւն է. Մնացածների մասին կը խօսենք մենք յետոյ։

3) Կողոպտուած հայ ընտանիքների կամ բնակիչների թիւը շատ աւելի է, քան 570 ցուցակների թիւն է ցոյց տալիս։ Դրա մասին ես աւելի մանրամասն կը խօսեմ իր տեղում։

իջել են այդ թաղամասերի բնակչութեան, ասել է—հայութեան վրայ։ Մնացած թաղամասերից աչքի են ընկնում նրանք, ուր հայերի ձայների ցուցակներն ընդհանուր թուի կէսից աւելի են. այդպէս են, օրինակ, I-ին թաղամասում՝ 73,11%, II-րդում՝ 55,81%, V-րդում՝ 70,46%, VI-րդում՝ 66,31%. իսկ X-րդ թաղամասում հայերի ցուցակների տոկոսական բաժինը հասնում է գրեթէ կէսին—49,46%-ի։ Միայն երկու թաղամասեր կան—ինչպէս չէշտեցինք վերև, ամենից թոյլ շօշափուած վայրեր—ուր հայերի ձայների ցուցակները մնում են փոքրամասնութեան մէջ. այդ III թաղամասն է, ուր հայերի ցուցակները հաւասար են 306-ի (ընդհանուրը 797) կամ 38,39%-ի և մանաւանդ IV թաղամասը, ուր հայերի ցուցակների թիւը էլ աւելի համեստ է—225 հատ (ընդհանուրը 945) կամ 23,70%-ի։ Ինչ վերաբերում է Բալախանուն, ապա այստեղ ևս հայերի տոկոսական մասնակցութիւնը պատկառելի է, այն է 44,76%, իսկ դա կազմում է յարաբերական մեծամասնութիւն մնացածների հանդէպ։ Հայերի ցուցակների դասաւորութիւնը ըստ թաղամասերի (2-րդ սիւնակ) տալիս է այն թուական պատկերը, ինչ տեսանք մենք հայ ազգաբնակութեան և սրա տուած մարդկային զոհերի թուական դասաւորութեան ժամանակ։ Անշուշտ այստեղ ևս VIII-րդ թաղամասը բռնում է առաջին տեղը իր ցուցակների քանակով. 25103 հայկական ցուցակներից 8582 ցուցակ. կամ 34,18% տուել է միայն VIII թաղամասը։ Այնուհետև շարքով հետևում են IX-րդ թաղ. 5510 ցուց. կամ 21,95%, VII-րդ թաղ. 4841 ցուց. կամ 19,28%, VI-րդ թաղ. 1443 ցուց. կամ 5,75%, և այդպէս շարունակ։ Ամենանուազ տոկոսն ունեն անշուշտ III-րդ և մանաւանդ IV-րդ թաղամասերը. առաջինը 306 ցուց. կամ 1,22%-ով, իսկ երկրորդը 225 ցուց. կամ մօտ 0 90% ով։

Հայերից յետոյ անմիջապէս, բայց շատ հեռաւոր տարբերութեամբ, երկրորդ տեղն է բռնում հրէաների, ռուսների և այլ ազգութիւնների կաթեգորիան (3-րդ սիւնակ), որոնց ներկայացրած և ընդունուած ցուցակների թիւը հաւասար է 6596-ի, որը կազմում է ընդհանուր թուի 1/5 մասը կամ 20,10%։ Ասել է՝ հայերից յետոյ նիւթական երկրորդ ուժեղ հարուածը իջել է յիշեալ կաթեգորիային պատկանող բնակիչների գլխին։ Նայելով դրանց ցուցակների թաղամասային դասաւորութեան, մենք գտնում ենք հետևեալ ուշագրաւ փաստը։ Եթէ մի կողմ թողնենք X-րդ թաղամասը, այսինքն Սև և Սպիտակ Քաղաքների ռայոնը, ուր բնակւող հայ և ռուս աշխատաւորութիւնը գրեթէ հաւասարապէս տուժել է (առաջինը 971 ցուց. կամ 49,46%, իսկ երկրորդը 953 ցուց. կամ 48,54%), մնացած թաղամասերի նկատմամբ ռուս-հրէայ և այլ տարրերը ամենամեծ չափերով տուժել են հայկական ամենամեծ թաղամասերում. VIII-րդ թաղամասում 883 ցուցակ կամ այդ կաթեգորիայի (ռուսների, հրէաների և այլն) ցուցակների ընդհանուր թուի 13,39% և VII-րդ թաղամասում 729 ցուց. կամ 11,05%։ Բացի յիշուած X-րդ թաղամասից, այդ երկու հայկական թաղամասերում ռուսութիւնն ու հրէութիւնը տալիս են յարաբերաբար ամենամեծ թիւն ու տոկոսը իրանց ներկայացրած ցուցակների։ Այդ փաստը գալիս է աւելի հաստատելու մեր այն իրաւացի ենթադրութիւնը, որ թիւրք-թաթարական պոգրոմշչիկների կողմից չի եղել յատուկ արշաւանք ռուսութեան, հրէու-

թեան և ուրիշ ոչ-հայ բնակչութեան դէմ, այլ որ ոչ-հայերը տուժել են գլխաւորապէս հայկական թաղերում հայերի տներին ու բնակարաններին կից—ենթարկուելով սրաժանիք բանդաների գրգռուած ախորժակի կողոպտային արտայայտութիւնների իներցիային, ասել է մեծ՝ մասամբ թիւրիմացութեամբ: Աւելի համոզեցուցիչ կդառնայ այդ փաստը, եթէ ի նկատի ունենանք հետեւեալը. բոլոր այն թաղամասերում, ուր հայութիւնը տուժել է ամենախոշոր թուերով ու տոկոսներով (իր ցուցակների թւով կազմելով մեծամասնութիւն), այդ թաղամասերում տուժած ռուսութեան, հրէութեան և այլոց ներկայացրած ցուցակների թիւը հաւասար է 5253 ի, որ կազմում է 79,64% նրանց ներկայացրած և ընդունած բոլոր ցուցակների ընդհանուր թւի: Մինչդեռ այն թաղամասերում (ոչ-հայկական), ինչպիսիք են II-րդ, III-րդ, IV-րդ, ուր խոշոր քանակով ռուսութիւն և հրէութիւն է ապրում, այդտեղ թալան ու կողոպուտ ամենից քիչ չափերով են տեղի ունեցել: Միայն երկու թաղամասերում՝ III-րդում և IV-րդում, ռուս և հրէայ բնակիչների ներկայացրած ցուցակները թուական ու տոկոսական բացարձակ մեծամասնութիւն են կազմում. առաջնում 438 ցուց. և 55,00%, իսկ երկրորդում 646 ցուց. և 68,36%: Մնացած տեղերում (բացի «անյայտ փողոցներից», ուր ռուսների և հրէաների ցուցակների տոկոսը հասնում է 70,40-ի) նրանց տոկոսական բաժինը (տես 8-րդ սիւնակ) փոքրամասնութիւն է կազմում:

Ինչ վերաբերում է վրացիներին և մանաւանդ մուսուլմաններին՝ նրանց կողոպտումը էլ աւելի մեծ չափերով պիտի թիւրիմացութեան և պատահականութեան արդիւնք համարել:

Վրացիների ներկայացրած ցուցակների թիւը հասնում է 434-ի (տես 4-րդ սիւնակ), որ, իր հերթին, կազմում է քաղաքի բոլոր ցուցակների ընդհանուր թւի 1,32%: Եւ շատ բնորոշ է, որ տուժող վրացիներ ամենամեծ չափով եղել են դարձեալ հայկական թաղամասերում. VI-րդում 74 ցուցակ, VII-րդում 58 ցուց., VIII-րդում 62 ցուց.: Հայկական երեք թաղամասերում միասին վրացիների կրած վնասների ցուցակները կազմում են 194 հատ կամ նրանց բոլոր ցուցակների թւի ոչ պակաս քան 44,70%-ը: Նշանակում է այս դէպքում ևս գտնում է իր արդարացումը մեր այն եզրակացութիւնը, որը տուինք տուժած ռուսների և հրէաների նկատմամբ: Մնացած թաղամասերում առանձին-առանձին վերցրած չնչին է վրացիների ներկայացրած ցուցակների թուաբաժինը. քիչ թէ շատ աչքի են ընկնում IV-րդ 44 ցուցակներով և V-րդ 48 ցուց. թաղամասերը (4,66 3,12 տոկոսներով): Անյայտանալու չափ չնչին են վրացիների կորուստները I և X թաղամասերում՝ 6 ցուցակ. կամ 0,45%-ով և 8 ցուց. կամ 0,41%-ով:

Շատ աւելի չնչին են, հարկաւ, մուսուլմանների կրած կորուստները (տես սիւնակ 5-րդ): Նրանց ներկայացրած ցուցակների ընդհանուր թիւն է 216 հատ կամ քաղաքի բոլոր ցուցակների ընդհանուր թւի 0,66%: Մուսուլմանների վնասների ցուցակների յարաբերաբար ամենամեծ թիւը տալիս է Բալախանին 72 ցուցակներով կամ 33,33%-ով մուսուլմանների ներկայացրած բոլոր ցուցակների թւի: Նշանակում է մուսուլմանների կորուստների 1/3 մասը տեղի է ունեցել տներից դուրս՝ Բալախանի, այսինքն

մի տեղ, ուր պօգրոմշչիկ թիւրքը կամ թաթարը չէին կարող հաշիւ տալ, թէ ում գոյքն են կողոպտում կամ աւերում։ Մնացած ցուցակներից յարաբերաբար ամենամեծ թիւ տալիս է VI-րդ թաղամասը 27 ցուց. կամ ամբողջի 12,50$^0/_0$-ով, ասել է մի հայաշատ վայր։ Այսպէս ուրեմն, ինչպէս վերև շեշտեցինք, մուսուլմանների կորուստները կամ վնասների ներկայացրած ցուցակները կարելի է վերածել մի շարք հանգամանքների. Նախ այդտեղ կան բաւականաչափ հին հաշիւներ—կորուստներ տեղի ունեցած Մարտի անցքերի օրով, երկրորդ՝ մուսուլմանների թալանուած գոյքի մեծագոյն մասը կատարուել է դուրսը՝ ձեռնարկութիւնների և խանութների մէջ, որոնց տէրերի ազգային ծագումը անյայտ է եղել կողոպտիչներին։

Մի առանձին տեղ է բռնում ձեռնարկութիւնների և հաստատութիւնների ունեցուածքի յափշտակման և ոչնչացման փաստը. այդ տեղը աչքի է զարնում ոչ այնքան ցուցակների թւով, որքան այն հսկայական գումարների հասնող վնասներով, որ ունեցել են այդ ձեռնարկութիւնները։ Այդ սիւնակի մէջ (սիւնակ 6 րդ) ամփոփուած են այն բոլոր ընկերական (ակցիոներական), քաղաքային, պետական, հասարակական-կուլտուրական, դպրոցական, եկեղեցական (հայոց եկեղեցիները), արհեստակցական միութիւնների և կօօպերատիւների, կուսակցութիւնների, Քաղաքների Միութեան ձեռնարկութիւնները, հաստատութիւններն ու հիմնարկութիւնները, որոնք այս կամ այն չափով ու եղանակով ենթարկուել են թալանի, կողոպուտի և այսպէս անուանուած տաճկական ռեկվիզիցիայի, ասել է անվերադարձ յափշտակման կամ պաշտօնական աւազակութեան։ Այդ բոլոր ձեռնարկութիւնների և հաստատութիւնների ներկայացրած ցուցակների թիւը հասնում է 468-ի կամ բոլոր ցուցակների ընդհանուր թւի 1,42$^0/_0$-ի, ուրեմն այդ բաժինը իր ցուցակների թւով բռնում է երրորդ տեղը հայերից և ռուս-հրէաներից յետոյ։ Ձեռնարկութիւնների և հաստատութիւնների ցուցակների պատկառելի մասը վերաբերում է քաղաքից դուրս եղած կորուստներին՝ Բալախանում, ուր տուժած ձեռնարկութիւնների նկատմամբ ներկայացուած են 106 ցուցակներ կամ ամբողջի 22,65$^0/_0$։ Այնուհետև յաջորդում են «անյայտ փողոցների» տակ ամփոփուած ցուցակները՝ 94 հատ կամ 20,09$^0/_0$։ Ըստ թաղամասային դասաւորութեան աչքի են ընկնում V-րդ և VI-րդ թաղամասերից ներկայացրած ցուցակները, առաջինը 58 հատ կամ 12,60$^0/_0$ ըստ ամբողջի և 3,77$^0/_0$ ըստ թաղամասի ցուցակների թւի, իսկ երկրորդը 41 հատ կամ 8,76$^0/_0$ և 1,88$^0/_0$։ Ամենից նուազ թւով ցուցակներ տուել է III-րդ ամենից քիչ տուժած թաղամասը՝ 15 ցուցակ կամ ամբողջի 3,34$^0/_0$ և ըստ թաղ. ցուց. ընդհ. թւի 1,88$^0/_0$։

Ահա թւական և տոկոսական պատկերը վնասների և կորուստների ներկայացրած և ընդունուած ցուցակների, դասաւորուած թէ ըստ թաղամասերի և թէ ըստ ազգութիւնների։

Սակայն մենք ասացինք, որ դրանք բոլորը չեն։ Տուժող ազգաբնակութիւնը շատ աւելի մեծ քանակով է ներկայացրել իր վնասների ցուցակները, քան ընդունուել են վերստուգիչ յանձնաժողովի կողմից։ Կայ այսպէս կոչուած մերժուած ցուցակների կաթեգորիա, որոնց դասաւորութեան հետ, որքան էլ նրանք փոքրութիւն լինեն, պէտք է ծանօթանալ։

Բայց ինչ են նշանակում, ամենից առաջ, մերժուած ցուցակներ։

Վերստուգիչ յանձնաժողովը, առաջնորդուելով դաշնակիցների հրամանատարութեան ցուցմունքներով, պաշտօնական օրգանների միջոցով քննել և ստուգել է ամեն մի ցուցակի նկատմամբ կողոպուտի փաստը և գտել է, որ որոշ թւով ցուցակներ չեն համապատասխանում իրանց ցուցմունքներին և կամ ունեն այնպիսի թերութիւններ, որոնց շնորհիւ չէին կարող նրանք բաւարարութիւն ստանալ։ Մերժման դրդապատճառների կամ մոտիվիրովկայի հետ կը ծանօթանանք յետոյ. առայժմ տեսնենք, թէ ինչ թիւ են ներկայացնում մերժուած ցուցակները և ինչպէս են դասաւորուած նրանք ըստ թաղամասերի և ազգութիւնների։

Դա ցոյց է տալիս մեզ հետեւեալ աղիւսակը.

Բ. ԱՂԻՒՍԱԿ

Վնասների մերժուած ցուցակների թիւը ըստ թաղամասերի եւ ազգութիւնների

Թաղամասեր	Ցուցակների ընդհանուր թիւ	Հայերի ցուցակների թիւ	Ռուս-հրէան. ցուց. թիւ	Վրացի ցուցակն. թիւ	Մուսուլման. ցուցակների թիւ	Ձեռնարկ. և հաստատ. ցուցակների թիւ
I *Թաղամաս*	59	51	3	—	1	4
II „	26	17	4	1	1	3
III „	20	13	5	—	2	-
IV „	30	16	8	3	2	1
V „	62	24	26	1	5	6
VI „	41	26	10	2	1	2
VII „	45	27	14	1	1	2
VIII „	55	42	8	1	1	3
IX „	76	64	6	1	1	4
X „	33	15	17	—	—	1
Բալախանի . .	31	6	14	—	1	10
Անյայտ. փող. .	20	—	1	2	—	17
Ընդամենը .	**498**	**301**	**116**	**12**	**16**	**53**

Այսպէս ուրեմն, մերժուած ցուցակների ընդհանուր թիւն է 498 (ընդունուածների հետ միասին 32817+498=33315), որոնցից հայերի բաժինն է 301 ցուցակ (ընդունուածներով 25103+301=25404), ռուսհրէաների և այլոց 116 (ընդունուածներով 6596+116=6712), վրացիներինը 12 (միասին 434+12=446), մուսուլմաններինը 16 (միասին 216+16=232) և, վերջապէս, ձեռնարկութիւններին ու հաստատութիւններինը 53 (միասին 468+53=521)։

Բացարձակ իմաստով վերցրած, հայերի թուական մասնակցութիւնը, բնական է, խոշոր չափերով գերազանցում է ինչպէս ընդունուած ցուցակների, այնպէս էլ մերժուած ցուցակների մէջ հանդէպ միւս բոլոր ազգութիւնների։ Բայց բնորոշ է այն հանգամանքը, որ հայերի ընդունուած ցուցակների տոկոսը ցուցակների ընդհանուր թուից աւելի խոշոր է, քան նրանց մերժուած ցուցակների տոկոսը. մինչդեռ միւս ազգութիւնների, ինչպէս և ձեռնարկութիւնների տոկոսները դասաւորուած են հակառակ յարաբերութեամբ։ Հետեւեալ տոկոսները հաստատում են մեր ասածը շօշափելի տուեալներով.

Ընդունուած	*ցուցակներ։*	*Հայերի տոկոսը*	*76,50*
»	»	*Ռուս-հրէան.* »	*20,10*
»	»	*Վրացիները* »	*1,32*
»	»	*Մուսուլմ.* »	*0,66*
»	»	*Ձեռնարկ.* »	*0,42*
»	»	*Բոլորը միասին*	*100,00%*
Մերժուած	*ցուցակներ,*	*Հայերի տոկոսը*	*60,44*
»	»	*Ռուս հրէան.* »	*23,30*
»	»	*Վրացին.* »	*2,41*
»	»	*Մուսուլմ* »	*3,21*
»	»	*Ձեռնարկ.* »	*10,64*
»	»	*Բոլորը միասին*	*100,00*

Ի՞նչ են ցոյց տալիս այս տոկոսական համեմատութիւնները։ Այն, որ յարաբերաբար վերցրած ամենաքիչ թւով հայերի ցուցակներ են մերժուել, իսկ միւս ազգութիւնների և մանաւանդ ձեռնարկութիւնների ցուցակները աւելի մեծ տոկոսով մերժուել են, քան ընդունուել են։ Իսկ դա նշանակում է, իր հերթին, որ, յարաբերաբար վերցրած, անկանոն կամ կեղծ ցուցակներ աւելի շատ են գտնուել ոչ-հայերի, քան հայերի մօտ։

Բնորոշ է նկատել այն փաստը, որ ամենահայաշատ վայրը՝ VIII-*րդ թաղամասը, որ անխտիր բոլոր դէպքերում իր թուական մասնակցութեամբ առաջին տեղն էր բռնում, այս անգամ, մերժուած ցուցակներում, նա զիջում է իր առաջնութիւնը ուրիշ թաղամասերին՝* I-*ին և* IX-*րդին։* VIII *րդ թաղ. մերժուած ցուցակների թիւը հասնում է 42-ի, իսկ* I *թաղ. 51-ի,* IX-*րդ թաղ. 64-ի։ Երկու թաղ.՝* V-*րդում և* X-*րդում, ռուսների և հրէաների մերժուած ցուցակների թուերը գերազանցում են հայերի ցուցակներից նոյն թաղամասերում։*

Բայց հարց է ծագում, ինչո՞ւ են մերժել, ինչ պատճառաբանութիւններով չեն ընդունել վերոյիշեալ ցուցակների գումարները։

Պէտք է նկատել, որ մերժումները հիմնաւորող գոհացուցիչ պատճառաբանութիւններ շատ քիչ կան։ Մերժուած ցուցակների մեծագոյն մասի համար չկայ ոչ մի պատճառաբանում. գրուած է ուղղակի «մերժել» և ուրիշ ոչինչ։ Այնուհետև կան մերժման մոտիւներ հետեւեալ իմաստով. 1. որ կողոպուտի փաստը ապացուցուած չէ, 2. որ վնասները պայմանաւորուած են պատերազմական ժամանակով («убытки военнаго времени»), *3. որ վնասները եղել են Բագուի շրջանից դուրս, 4. որ վնասները տեղի*

են ունեցել հրդեհի պատճառով, 5. որ ընկվիզիցիայի դէպքերը չեն հաշւում և 6. որ, վերջապէս, կողոպուտը տեղի է ունեցել տեղական թաթարների ձեռքով։

Ահա ինչ պատճառաբանութիւններով մերժել են բաւարարութիւն տալու մի քանի հարիւր ցուցակների։ Կան և ուրիշ, աւելի երկրորդական պատճառաբանութիւններ։ Թուածս կէտերից, օրինակ, միանգամայն անհիմն և անիմաստ են թւում մեզ 5-րդը և 6-րդը։ Տաճկական հրամանատարութիւն և Ադրբէյջանի կառավարութիւնը անխնայ կերպով ընկվիզիցիայի են ենթարկել—կամ, աւելի ճիշտ, անվերադարձ յափշտակել կամ պաշտօնապէս կողոպտել են բազմաթիւ հայ բնակարանների թանկարժէք կարասիները, զարդարանքները և այդպէս ընդմիշտ իւրացրել։ Ի՞նչ հիման վրայ մերժել են այդպիսի վնասներին բաւարարութիւն տալու—անհասկանալի է։ Նոյնքան տարօրինակ է և 6-րդ կէտի պատճառաբանութիւնը. ըստ երևոյթին վերաստուգիչ յանձնաժողովը կամ նրան հրահանգներ տուող վերին մարմինը առաջնորդուել են ֆորմալ իրաւաբանական տեսակէտով և ոչ տեղի առանձնայատուկ դրութեամբ։ Նրանց համար կարևոր և ընդունելի են եղել միայն արտաքին թշնամու հասցրած հարուածները և սրանց պատճառած վնասները, մոռանալով, որ ներկայ դէպքում (և առհասարակ մուսուլմանական վայրերում) չկայ տարբերութիւն արտաքուստ արշաւող թիւրքի և ներքուստ ճանապարհ հարթող թաթարի միջև ըստ նրանց ունեցած վերաբերմունքի դէպի ռուս պետականութիւնը մի կողմից և դէպի հայկական տարրը միւս կողմից։ Դրսի տաճիկը և ներսի թաթարը կատարել են իրանց թալանն ու պոգրոմները միևնոյն ձեռների հրամանով ու կարգադրութեամբ։ Դա ակներև փաստ է բոլորի համար և ամենից լաւ յայտնի իրան՝ անգլիական հրամանատարութեան, այնպէս որ ի զուր վերաստուգիչ յանձնաժողովը ձևական առարկութիւններով մերժել է տնտեսապէս վերջին ծայր քայքայուած բազմաթիւ ընտանիքների արդար պահանջները։

Բայց վերաստուգիչ յանձնաժողովի գործունէութեան թերութիւնները միայն դրանով չեն վերջանում։ Կայ մի աւելի զգալի ու ցաւալի բաց, որը մենք գոնէ մասամբ լրացնելու հնարաւորութիւն ունենք։

Տարաբաղդաբար պէտք է նկատել, որ թէ վերաստուգիչ յանձնաժողովում և թէ նրա հրահանգներով գործող ստորադաս օրգանների մօտ—թաղամասային և տնային կոմիտէներում—կորել են հազարների հասնող ցուցակներ, ի հարկէ մեծագոյն մասով հայերի պատկանող, իբրև ամենից շատ տուժած ժողովրդի։ Մեր անկետային յանձնաժողովը, որ, ինչպէս ասացինք, հաւաքում էր հայ տներից ներկայացրած ցուցակների պատճէնները, հնարաւորութիւն է ունեցել համեմատելով պատճէնների ռեգիստրացիան վերաստուգիչ յանձնաժողովից ստացած իսկականների ռեգիստրացիայի հետ, ցոյց տալու քանակը այն ցուցակների, որոնք պակասում էին վերաստուգիչ յանձնաժողովի ռեգիստրացիայի մէջ։ [1])

[1]) Ազգ. Խորհրդի մուտքը պաշարում էին բազմաթիւ հայեր, որոնք դառնապէս գանգատւում էին, որ իրանց համարներ չեն տալիս վերաստուգիչ յանձնաժողովում, ասելով որ նրանց ցուցակները չկան, կորել են։ Դրանք խնդրում էին մեզ պատճէնով հաստատել, որ նրանք որոշեալ ժամանակին ներկայացրել են ցուցակ, որպէսզի կորցրածի փոխարէն նորը ընդունէին։

Մեր համեմատութիւնները տուել են հետեւեալ արդիւնքները.

Վերաստուգիչ յանձնաժողովում (կամ նրա ենթակայ օրգաններում) կորած հայերի փաստերի ցուցակները.

Թաղամասեր	*Հայերի կորած ցուցակների թիւը*
I *թաղամ.*	—
II "	—
III "	33 *ցուցակներ*
IV "	27 "
V "	76 "
IV "	93 "
VII "	475 "
VIII "	777 "
IX "	432 "
X "	— "
	Ընդամենը 1913

Այսպէս ուրեմն, եօթ թաղամասերում հայ կողոպտուած բնակիչներից այդքան մեծ թիւ դժբաղդութիւն է ունեցել ոչ նոմեր և ոչ չեկ ստանալու, որովհետև նրանց ցուցակները կորել են թէ տնային ու թաղամասային կոմիտէներում և թէ վերաստուգիչ յանձնաժողովում։ Բայց պէտք է նկատել, որ մեր համեմատութիւնները հեռու են կատարեալ լինելու սահմանից և որ կորածների թիւը ամենայն հաւանականութեամբ աւելի է եղել, քան մեր համեմատութիւններն են ցոյց տուել։ Եթէ հայերի ցուցակների բոլոր կաթեգորիաները ի մի խմբենք, կստանանք հետեւեալը.

Հայերի ներկայացրած և ընդունուած ցուցակները	*25103*
Հայերի մերժուած ցուցակները . . .	*301*
Հայերի կորած ցուցակները	*1913*
Ընդամենը .	27317

Բայց սրանով դեռ չի վերջանում հայ տուժող ազգաբնակութեան վնասների չափը։ Գարնան ու ամառուայ ընթացքում շարունակում էին մեծ խմբերով վերադառնալ հայ գաղթականները Անդրկասպեան երկրից և Հիւսիսային Կովկասից[1]), մինչդեռ ցուցակների ընդունելութեան վերջին ժամանակամիջոցը եղել է Փետրուարի 15-20-ը։ Դրանից կարելի է պարզապէս եզրակացնել, թէ ինչպիսի մեծ քանակով հայ բնակիչներ են վերադարձել Փետրուարից ի վեր, որոնց տունն ու գոյքը նոյնքան կողոպտուած լինելով Բաքւում, որքան քաղաքում մնացածներինն է եղել, բայց նրանք

---

[1]) *Այդ վերադարձողների մէջ կան, բացի Բաքուի էվակուացիայի ժամանակ փախածներից, նաև մեծ քանակով բաքուաբնակ հայեր, որոնք դեռ աւելի վաղ, Բաքուն ընկնելուց առաջ, հեռացել էին քաղաքից։*

փաստական հնարաւորութիւն չեն ունեցել ժամանակին վերադառնալու[1]) և վնասների ցուցակներ ներկայացնելու։

Մինչև Յունիսի կէսերը Բագու վերադարձած այն հայերի թիւը, որոնց ունեցուածքը այս կամ այն չափով թալանուել ու փչացել է Սեպտեմբերեան անցքերի օրով, հասնում էր 4000 հոգու[2])։ Իսկ որքա՞ն է այն հայերի թիւը, որոնք նոյնպէս վաղուց (Բագուն ընկնելուց առաջ) ահագին խմբերով գնացել էին Ռուսաստան և տեղաւորուել Վոլգայի ափերի քաղաքներում, մանաւանդ Աստրախանում, Սարատովում և այլուր։ Ճիշտ թիւը յայտնել դժուար է, մանաւանդ նրանց նկատմամբ, որոնց տունն ու տեղը կողոպուտի են ենթարկուել Բագւում. այդպիսիների թիւը կարող է առնուազը 2500 լինել։

Բայց դրանով դեռ չի սպառւում հայերի կրած վնասների շարանը. կան դեռ վնասուողների երկու անուշադրութեան թողնուած կարևոր կաթեգորիաներ, որոնց վրայ կարևոր է ծանրանալ այստեղ։

Չմոռանանք նախ, որ անգլիացիների գալուց առաջ, դեռ Հոկտեմբերի կէսերին, թիւրք հրամանատարութեան և ադրբէյջանեան կառավարութեան կարգադրութեամբ Բագւում մնացած շամախեցի և գեօկչայեցի գաղթականներին տեղափոխեցին իրանց հայրենիքը։ Նրանց թիւը եղել է մօտաւորապէս 6000 հոգի։ Այդ գաղթականները լինելով Բագւում կոտորածի և կողոպուտի օրերին, թալանուելով և վնասուելով իրանց հերթին, հնարաւորութիւն չունեցան վնասների ցուցակներ ներկայացնելու, գտնուելով գաւառի խորքերում։ Իւրաքանչիւր ընտանիքին հաշուելով 6 բնակիչ, 6000 բնակիչները տալիս են 1000 ընտանիք, որոնցից ամեն մէկը կրել է իր յատուկ վնասը կողոպուտից ու թալանից և նրանք կը ներկայացնէին վերստուգիչ յանձնաժողովին իրանց ցուցակները, եթէ Բագու գտնուէին։

Երկրորդ՝ չմոռանանք, որ եղել են ահագին թւով սպանուած բնակիչներ, որոնց կողոպտուած բնակարանի և գոյքի մասին ոչոք ցուցակ չի կազմել ու ներկայացրել։ Մեր հաշւով բոլոր սպանուածների ոչ պակաս քան 1/3 մասը, մօտ 3000 հոգին, չեն թողել այնպիսի հարազատներ (գուցէ ամանք անտէր ու անճարակ որբեր են թողել), որոնք կարողանային սպանուածների վնասների համար ցուցակներ ներկայացնել։ Դարձեալ 6 հոգուց հաշուելով իւրաքանչիւր ընտանիքը, 3000 բնակիչները տա-

---

[1]) Միանգամայն անհնարին էր վերադարձած հայերի դրութիւնը։ Նրանք ամիսներ շարունակ բոլշևիկեան սարսափներ ապրելով և ամեն բան կորցնելով, միաժամանակ հնարաւորութիւն չունէին հեռանալու այնտեղից, բոլշևիկեան բռնապետութեան սահմաններից, որպէսզի կարողանային գոնէ Բագւում թիւրք-թաթարների պատճառած վնասների համար ցուցակներ ներկայացնել։ Բոլշևիկեան թալանն ու աւազակութիւնը հիւսիսում, թիւրք-թաթարական հարւածը—յար և նման և մէկը միւսից գերազանցող հարւածներ են դրանք, որոնց ենթարկուել է տեղահանուած հազարաւոր հայութիւնը։

[2]) Այդ 4000 հոգին ոչ թէ վերադարձած հայ բնակիչների թիւն է, այլ տուժած և ցուցակներ ներկայացնող ընտանիքների և կամ մենակեաց անհատների թիւն է։ Նրանք մի առանձին յանձնաժողով էին ընտրել և լիազօրել նրան խնդրամատոյց լինելու անգլ. հրամանատարութեան առաջ, որպէսզի վերջինս ցուցակների ընդունելութեան նոր ժամանակամիջոց նշանակէ նոր վերադարձածների համար։ Դիմումը տարաբախտաբար չի յաջողուել։

լիս են 500 ընտանիքներ, որոնք կարող կլինէին ներկայացնել 500 ցուց.։

Այսպիսով մենք ստանում ենք հայկական վնասների ցուցակների մի շարք կաթեգորիաներ, որոնց ի մի գումարելով կստանանք հետեւեալը.

1) Հայերի ներկայացրած և ընդունուած ցուցակները 25103
2) Հայերի մերժուած ցուցակները 301
3) Հայերի կորած ցուցակները 1913
4) Շամախու և Գեօկչայի հեռացուած գաղթականների ցուցակները 1000
5) Սպանուած ընտանիքների չներկայացրած ցուցակները 500
6) Բագու ուշ վերադարձած հայերի չներկայացուած ցուցակները (4000+2500) 6500

Ընդամենը . 35317

Այսպիսով, Սեպտեմբերեան օրերին տուժող հայ ազգաբնակութեան վնասների և կորուստների չափը արտայայտւում է ոչ թէ 25103 ցուցակներով (ըստ վերստուգիչ յանձնաժողովի հաշիւների), այլ իրապէս 35317 ցուցակներով (մեր բոլոր լրացումներով միասին), ասել է 10214 ցուցակներով աւելի։

Նախ քան վնասների և կորուստների գումարների մասին խօսելը, հարկ ենք համարում, պատկերը աւելի լրիւ ներկայացնելու համար, բերել ստորև վնասների ներկայացուած ցուցակների դասաւորումը ըստ փողոցների։ Մենք կբաւականանանք միայն հայերի ցուցակներով, ցոյց տալով նաև նրանց տոկոսները բոլոր ցուցակների ընդհանուր թուից։ Ահա այդ աղիւսակը.

Ը. ԱՂԻՒՍԱԿ

Վնասների ներկայացրած եւ ընդունուած ցուցակները ըստ փողոցների

№№	*Փողոցներ*	*Ցուցակների ընդհ. թիւը*	*Հայերի ցուցակները*	*Հայերի ցուցակների տոկոսը*
1	*Ազիատսկի փողոց . . .*	201	126	62,18
2	*Արմեանսկի „ . . .*	110	67	60,90
3	*Բալախանսկի փ. և շոսսէ .*	1366	1051	77,00
4	*Բաիլովսկի փ. I-ին . .*	478	162	60,25
5	„ „ II . .		37	
6	„ „ III . .		89	
7	„ „ IV . .			
8	*Բարեատինսկի փողոց . .*	18	18	100,00
9	*Բելվիւ հրապարակ . . .*	22	22	100,00

№№	Փողոցներ		Ցուցակների ընդհ. թիւը	Հայերի ցուցակները	Հայերի ցուցակների տոկոսը
10	Բիրժևոյ փողոց		329	292	88,75
11	Բուդագովսկի փողոց		712	629	88,34
12	Բոնդարնի „		672	522	77,67
13	Բոլշոյ-Մորսկոյ „		877	789	90,00
14	Գիմնազիչեսկի „		303	242	80,00
15	Գորչակովսկի „		54	51	94,44
16	Գուբերնսկի „		51	43	84,31
17	Գոգոլևսկի „		167	116	69,40
18	Եարմարոչնի „		31	31	100,00
19	Զավեդենսկի „		3	3	100,00
20	Զավոկզալնի „	I-ին		67	
21	„ „	II		796	
22	„ „	III		99	
23	„ „	IV		578	
24	„ „	V		169	
25	„ „	VI		147	
26	„ „	VII	2073	42	99,13
27	„ „	VIII		87	
28	„ „	IX		46	
29	„ „	X		13	
30	„ „	XI		5	
31	„ „	XII		3	
32	„ „	XIII		4	
33	Իզվոզչիչի փողոց		11	—	—
34	Լենցովսկի „		42	42	100,00
35	Կամենիստի „		168	103	55,37
36	Կանիտապլինսկի փ.	I-ին		947	
37	„ „	II		257	
38	„ „	III		365	
39	„ „	IV		603	
40	„ „	V		389	
41	„ „	VI	3460	154	91,85
42	„ „	VII		227	
43	„ „	VIII		67	
44	„ „	IX		43	
45	„ „	X		79	
46	„ „	XI		47	

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Ցուցակնե-րի ընդհ. թիւը	Հայերի ցու-ցակները	Հայերի ցու-ցակների տոկոսը
47	Կարանտիննի փողոց .	224	158	70,54
48	Կլադբինչչենսկի " .	37	4	10,81
49	Կիրպիչնի " .	13	13	100,00
50	Կրասնովոդսկի " .	238	179	75,21
51	Կրասնո-Կրեստովսկ. " .	2	2	100,00
52	Կուբինսկի " .	66	—	—
53	Կոլիւբակինսկի " .	127	97	76,38
54	Մագազիննի " .	443	413	93,23
55	Մարիինսկի " .	196	102	52,04
56	Միխայլովսկի " .	7	7	100,00
57	Մալօ-Մորսկոյ " .	242	224	92,56
58	Մերկուրևսկի " .	233	167	71,67
59	Մոլոկանսկի " .	272	272	100,00
60	Միլլիոննի " .	141	141	100,00
61	Միլիտինսկի " .	41	41	100,00
62	Նաբերեժնի " .	82	31	37,80
63	Նիկոլայևսկի " .	102	63	61,76
64	Նիժնէ-Պրիւտսկի " .	555	426	77,00
65	Շեմախինսկի " .	141	—	—
66	Ջադրովի " .	375	273	72,80
67	Պերեվալնի " .	58	58	100,00
68	Պերսիդսկի " .	85	19	22 35
69	Պորոխովոյ " .	618	508	82,20
70	Պարալելնի " .	186	—	—
71	Սարաինսկի " .	39	—	—
72	Ստանիսլաւսկի " .	1383	1281	92,66
73	Սպասսկիյ " .	25	—	—
74	Սլոբոդսկոյ փողոց I-ին .	1955	367	91,66
75	" " II .		1139	
76	" " III .		286	
77	Սուրախանսկի "	472	346	73,26
78	Սադովի "	27	23	85,18
79	Ստ. Պոլիցէյսկի "	69	61	88,41
80	Վորոնցովսկի "	163	76	46,62
81	Վերխնէ-Պրիւտսկի փողոց.	709	584	82,37
82	Վոկզալնի " .	193	151	78,24
83	Վրանգելսկի " .	17	17	100,00

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Ցուցակների ընդհ. թիւը	Հայերի ցուցակները	Հայերի ցուցակների տոկոսը
84	Տորգովի „ .	882	749	84,92
85	Տելեֆոննի „ .	1329	1198	90,14
86	Տատարսկի „ .	79	44	50,69
87	Տրամվայնի „ .	55	55	100,00
88	Տատեանինսկի „ .	217	214	98,61
89	Ռեմեսլեննի „ .	553	512	92,58
90	Ցերկովնի „ .	201	93	46,26
91	Ցիցիանովսկի „ .	37	18	50,00
92	Օֆիցերսկի „ .	11	11	100,00
93	Օլգինսկի „ .	30	27	90,00
94	Ֆաբրիչնի „ .	59	59	100,00
95	Իւրեսկի „ .	37		—
96	Խառն փողոցներ	1014	311	30,67
97	Անյայտ փողոցներ . . .	368	—	—
	Ընդամենը .	**25813**	**20588**	**79,76**
	Արուարձաններ			
1	Բալախանի	1669	747	44,75
2	Բիբի-Հէյբաթ	726	593	81,68
3	Հայկաւան	2227	1872	84,06
4	Սպիտակ-Քաղաք . . .	569	334	58,70
5	Սև-Քաղաք	1383	637	46,06
6	Քիշլի	430	332	77,21
	Ընդամենը .	**7004**	**4515**	**64,48**
	Բոլորը միասին .	**32817**	**25103**	**76,50**

Այս ձիգ աղիւսակի վերջում ստացանք մենք ճիշտ այն եզրակացութիւնը, ինչ ստացել էինք Թաղամասերի տուեալներից կազմուած աղիւսակում, այսինքն այն, որ քաղաքի 97 փողոցներում և 6 արուարձաններում տուժած ազգաբնակութեան ներկայացրած և ընդունուած վնասների ու կորուստների ցուցակների ընդհանուր թիւը հասնում է 32817-ի (դրանցից 25813 ցուց. 97 փողոցներից և 7004 ցուց. 6 արուարձաններից), որոնցից

հայ տուժած ազգաբնակութեան ցուցակների թիւը հասնում է 25103-ի կամ 76,50%-ի (դրանցից 20588 ցուց. կամ 79,76% փողոցներից, իսկ 4515 ցուց. կամ 64,48% արուարձաններից)։ 97 փողոցներից միայն 8 փողոցների նկատմամբ չկան վնասների ցուցակներ հայերից ներկայացուած. այդ ոչ այն պատճառով, որ հայեր չեն տուժել (այդ զուտ թուրքական, երկրորդական) փողոցներում, այլ որ հայեր չեն եղել կամ չեն մնացել այնտեղ էվակուացիայից յետոյ։ Աչքի է ընկնում այն փաստը, որ փողոցների ցուցակների ընդհանուր թուի մէջ հայերի տոկոսական բաժինը -79,76% աւելի մեծ է քան արուարձանների ցուցակների ընդհանուր թուի մէջ—64,48%։ Միասին վերցրած բոլոր ցուցակների մէջ արդէն հայերի բաժինը, ինչպէս մենք գիտենք, հասնում է 76,50%-ի։

Ի հարկէ, հայերի թուական և տոկոսական մասնակցութիւնը առանձին-առանձին փողոցներում և վայրերում տեղի ունեցած վնասների և կորուստների մէջ խիստ տարբեր է. տոկոսական մաքսիմումը և մինիմումը կազմում են բևեռներ, որոնցից վերին ծայրը հասնում է մինչև 100%, իսկ ստորինը իջնում է մինչև 10%։ Մենք կարող ենք մի շարք կաթեգորիաների մէջ ամփոփել տոկոսական այն բոլոր տարբեր աստիճանները, որ ունեն հայերի ներկայացրած վնասների ցուցակները զանազան փողոցների և վայրերի նկատմամբ։ Առաջին կաթեգորիայի մէջ դասում ենք այն թաղամասերը, որոնց տոկոսական մասնակցութիւնը սկսւում է 10-ից և հասնում է մինչև 50-ը (չհաշուած 50-րդը). երկրորդ կաթեգորիայի մէջ ամփոփուած են 50-ից մինչև 75 տոկոս ունեցող ցուցակները. երրորդ կաթեգորիան ընդգրկում է 75-ից մինչև 90%-ը (չհաշուած վերջինս)։ Վերջապէս, չորրորդ կաթեգորիան ամփոփում է իր մէջ մնացած տոկոսները՝ 90 – 100% (մէջ առած և վերջինս)։ Այդպիսով կստանանք տոկոսների հետևեալ դասաւորութիւնը։

Փողոցների և արուարձանների տոկոսները կաթեգորիաներով.

10— 50	տոկոս	ունեցող	փողոցների	թիւը	. 7
50—75	»	»	»	»	. 18
75— 90	»	»	»	»	. 18
90—100	»	»	»	»	. 54

Տոկոսների այս կաթեգորիաները ցոյց են տալիս, թէ որ աստիճան խոշոր տարբերութիւններով գերազանցում են հայերի ներկայացրած վնասների տոկոսները գրեթէ բոլոր թալանուած վայրերում, բացառութեամբ 7 վայրի (5 փող. և 2 արուարձան), ուր հայերի յարաբերական տոկոսը 50-ից ցածր է։ Մնացած բոլոր տեղերում, մանաւանդ 90 – 100 տոկոս ունեցող վայրերում, հայերի տոկոսները գերազանցապէս խոշոր չափերով են արտայայտւում։ Ամբողջ 16 փողոցներում հայերի տոկոսը հասնում է ամենաբարձր աստիճանի՝ 100-ի. դա ասել է, որ 16 փողոցներում ուրիշ ոչ ոք, բացի հայերից, չի տուժել, վնասներ ու կորուստներ չի ունեցել, կողոպուտի ու թալանի չի ենթարկուել։ Այնպիսի գրեթէ զուտ հայկական շրջան, ինչպէս բոլոր Զավոկզալնի փողոցներն են (Թւով 13), հայկական տարրի ունեցած վնասների ցուցակների տոկոսը հասնում է 99,13%-ի, Կանիտապինսկի հայկական փողոցներում (Թւով 11)—91,85%-ի, Ստանիսլաւսկի ամենամեծ հայաշատ փո-

ղոցում -92,66$^0/_0$-ի, Տելեֆոննի փողոցում—90,14$^0/_0$-ի, Հայկաւանում—84,06$^0/_0$-ի, Սլոբոդսկոյ փողոցներում (Թիւ 3)—91,66$^0/_0$-ի և այլն։

Այն 7 փողոցները, որտեղ հայերի ցուցակների տոկոսական մասնակցութիւնը մնում է փոքրամասնութեան մէջ, այնպիսի շրջաններ են հայաբնակութեան տեսակէտից, որ այլ կերպ էլ չէր կարող լինել։ Այդ փողոցներն են Կլադբինշչենսկի (հայերի ցուց. 10,81$^0/_0$), Նաբերեժնի (37,80$^0/_0$), Պերսիդսկի (22,35$^0/_0$), Ցերկովնի (46,26$^0/_0$), խառն փողոցներ (30,67$^0/_0$), Բալախանի (44,75$^0/_0$) և վերջապէս Սև-Բաղաք (46,06$^0/_0$)։

Այդ 7 փողոցներից միայն 2 տեղ է, ուր հայերի ցուցակների տոկոսը գտնւում է ճնշուած փոքրամասնութեան մէջ. Կլադբինշչենսկի փող. հայերի տոկ. 10,81, իսկ մնացածը 89,19$^0/_0$ կազմում են ռուսների և այլոց ցուցակները։ Այնուհետև Պերսիդսկի փող.—հայերի ցուց. հասնում են 22,35$^0/_0$-ի, իսկ ռուսների « այլոց[1]) ցուցակների տոկոսը հաւասար է 77,65-ի։ Անա միայն այդ երկու աննշան փողոցներում հայերի ցուցակների ճնշուած փոքրամասնութեան հանդէպ կանգնած է ռուսների և այլոց ցուցակների բացարձակ մեծամասնութիւնը։ Միւս փողոցներում՝ Նաբերեժնի (հայերի ցուց. 37,80$^0/_0$), Ցերկովնի (46,26$^0/_0$), խառը փողոցներ (30,67$^0/_0$) և Սև-Բաղաք (46,06$^0/_0$) հայերի տոկոսական մասնակցութիւնը պատկառելի է, մանաւանդ Սև-Բաղ. և Ցերկովնի փողոցում։ Միայն Ցերկովնի փող. և Սև-Բաղաքում ռուսները և այլք գտնւում են իրանց ցուց. թւով բացարձակ մեծամասնութեան մէջ, կազմելով 53,74$^0/_0$ և 52,42$^0/_0$, միւս տեղերում նրանց մեծամասնութիւնը սոսկ յարաբերական է. Նաբերեժնում 45,12$^0/_0$-ով, խառը փողոցներում 47,73$^0/_0$-ով, իսկ Բալախանում հայերի տոկոսը՝ 44,75$^0/_0$, կազմում է արդէն յարաբերական մեծամասնութիւն, որի հանդէպ ռուսների և այլոց ցուցակների տոկոսը՝ 43,02$^0/_0$, մնում է փոքրամասնութեան մէջ։

Տուժած ազգաբնակութեան վնասների մասին խօսելու ժամանակ ակամայ վերյիշում եմ այն բնորոշ փաստը, որ տիրապետող մի գիծ էր կազմում կոտորածի օրերին և որի վրայ ես բազմիցս կանգ եմ առել մարդկային զոհերի մասին խօսելու ժամանակ։ Արդեօք կողոպուտն ու թալանը—վնասների ու կորուստների փաստը—տեղի են ունեցել նոյնպէս և նոյնքան անհամաչափ ու անհաւասար ձևով ոչ միայն միևնոյն բաժիններում, թաղամասերում, այլև միևնոյն փողոցի զանազան մասերում և անգամ միևնոյն բակի զանազան բնակարաններում, ինչպէս այդ շատ յաճախ նկատւում էր սպանութեան դէպքերի վերաբերեալ տուեալները դիտելիս, թէ այստեղ երևոյթը տեղի է ունեցել այլ ընթացքով ու եղանակով։ Այդ կէտի վրայ, իբրև անցքերի առաջնորդող մի մոմենտի, մենք հնարաւորութիւն կունենանք կանգ առնելու, երբ կը խօսենք վնասների համար ներկայացրած գումարների մասին։

---

[1]) Մենք նկատեցինք իր տեղում, որ ռուսների վերաբերեալ սիւնակը ամփոփում է իր մէջ բացի ռուսներից, հրէաներից նաև ուրիշ սլաւոն և եւրոպացի քաղաքացիների ներկայացրած (շատ չնչին թւով) վնասների ցուցակները։ Դիւրութեան համար այսուհետև այդ սիւնակի վերնագիրը յիշելու ենք միայն այսպէս՝ ռուսների և այլք.

XIV ԳԼՈՒԽ

ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Վնասների ցուցակների թուական դասաւորութեան պատկերը պարզելուց յետոյ, մեզ մնում է այժմ պարզել, թէ ինչ չափերի են հասնում վնասների գումարները կամ կողոպտած ու թալանած իրերի և գոյքի գնահատումները։

Մեզ հարկաւոր է ամենից առաջ իմանալ ներկայացրած կամ ցուցակների մէջ յայտարարած գումարների քանակը։

Բագուի ողջ տուժած ազգաբնակութեան ներկայացրած գումարների ընդհանուր քանակը հաւասար է 951.700,575 րուբլու, ասել է մի միլիարդից մօտ 50 միլիոն րուբլով պակաս մի գումար։ Բոլոր ցուցակների թիւը, ինչպէս գիտենք, կազմում էր 32,817 հատ։ Նշանակում է իւրաքանչիւր ցուցակին միջին թւով գալիս է 29,000 րուբլի։

Տեսնենք, թէ ինչպէս է բաժանւում այդ գումարը ըստ ազգութիւնների։

Գումարի բաժանումը ըստ ազգութիւնների.

Ընդհանուր գումարը . . .	951.700,575
Հայերի գումարը	660,788,148
Ռուս-հրէաների գումարը . .	86,208,074
Վրացիների գումարը . . .	6,052,901
Մուսուլմանների գումարը . .	6,140,916
Ձեռնարկութիւն. և հաստատութ. գում.	192,510,536

Գումարների տոկոսները ըստ ազգութիւնների.

Ընդհանուրը	100,00%
Հայերի տոկոսը - . . .	69,43%
Ռուս-հրէաների տոկոսը	9,06%
Վրացիների տոկոսը	0,63%
Մուսուլմանների տոկոսը	0,65%
Ձեռնարկութիւն. և հաստատութ. տոկոսը	20,23%

Մենք գիտենք, որ վնասների ցուցակների տոկոսական դասաւորութիւնը ըստ ազգութիւնների բաւական տարբեր է, ինչպէս ցոյց է տալիս հետևեալ համեմատութիւնը.

	Հայերի տոկոսը	Ռուս հրէան. տոկոսը	Վրացիների տոկոսը	Մուսուլմանների տոկոսը	Ձեռնար. և հաստ. %-ը
Ցուցակների տոկոսները	76,50	20,10	1,32	0,66	1,42
Գումարների տոկոսները	69,43	9,06	0,63	0,65	20,23

Բոլոր տոկոսները ենթարկուել են փոփոխութեան։ Ամենամեծ փոփոխութիւնը կրել է ձեռնարկութիւնների և հաստատութիւնների տոկոսը։ Միայն վերջինս է, որի տոկոսական բաժինը գումարների մէջ շատ աւելի մեծ է՝ 18,81%-ով աւելի, քան ցուցակների դասաւորութեան մէջ։ Տոկոսական այն տեղը, որ ռուսները, հրէաները բռնում էին ցուցակների տոկոսների մէջ, նոյնը բռնում է հաստատ. % գումարների տոկոսների մէջ։ Մնացածների նկատմամբ փոփոխութիւնը կատարուել է հակառակ ուղղութեամբ. հայերի մօտ գումարների տոկոսը նուազել է ցուցակների տոկոսից 7,07%-ով, ռուսների, հրէաների և ուրիշների մօտ աւելի մեծ չափով՝ 11 04%-ով, վրացիների մօտ 0,69%-ով, այսինքն աւելի մեծ չափով, քան ինքը գումարների տոկոսն է կազմում. մուսուլմանների մօտ 0,01%-ով։

Այդ փոփոխութիւնը, այս կամ այն ուղղութեամբ, պէտք է բացատրել այսպէս. նայած ինչ թուական մեծութեան են հասնում ամեն մի կաթեգորիայի ներկայացրած գումարները միջին թւով վերցրած, ըստ ցուցակների քանակի. երբ կաթեգորիայի միջին թւով գումարը մեծ է (աւելի մեծ, քան ընդհանուր գումարի միջին թիւն է), նրա գումարի տոկոսն էլ գերազանցում է ցուցակների տոկոսից։ Այսպէս, օրինակ, միջին թւով վերցրած ամենամեծ գումարները ներկայացրել են զանազան ձեռնարկութիւններ և հաստատութիւններ—համեմատաբար փոքր թւով ցուցակներ, բայց անհամեմատ մեծ քանակով գումարներ։ Բնական է, որ այդ կաթեգորիայի գումարների տոկոսը պէտք է գերազանցէր ցուցակների տոկոսից։ Այդ փաստի մէջ աւելի կը համոզուենք շօշափելի տուեալների համեմատութեամբ։

Իւրաքանչիւր ցուցակին միջին թւով գալիս է.

Ընդհանուր գումարից . . .	29,000 ր.
Հայերի գումարից	26,323 ր.
Ռուս-հրէաների գումարից . .	13,070 ր.
Վրացիների գումարից . . .	14,150 ր.
Մուսուլմանների գումարից . .	28,022 ր.
Ձեռնարկութիւն. և հաստատ. գումարից	411,347 ր.

Բոլոր կաթեգորիաները, բացի ձեռնարկութիւններից, իրանց միջին թւով կանգնած են ընդհանուր գումարի միջին թւից ցածր։ Ամենահամեստ տեղը բռնում է ռուսների և հրէաների ներկայացրած գումարների միջին թիւը՝ 13,070 ր. (ըստ իւրաք. ցուցակի). նրանից փոքր աւելի բարձր կանգնած է վրացիներինը՝ 14,150 ր., այնուհետև մեծ տարբերութեամբ յաջորդում են հայերինը՝ 26,323 ր., մուսուլմաններինը՝ 28,022 ր. և այնուհետև միայն ընդհանուր գումարի միջին թիւը՝ 29,000 ր.։ Ձեռնարկութիւնների և հաստատութիւնների գումարների միջին թիւը արդէն տասնեակ անգամներով գերազանցում է բոլորից, հասնելով մի քանի հարիւր հազարի (411,347 ր.)։ Այս համեմատութիւններից պարզւում է, թէ ինչու վերոյիշեալ կաթեգորիաների տոկոսական մասնակցութիւնը գումարների դասաւորութեան մէջ պէտք է հակառակ ուղղութեամբ փոփոխութիւններ կրէր։

Վերոյիշեալները՝ տուեալներ և բացատրութիւններ էին ամբողջ քաղաքի նկատմամբ։ Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած գումարները և նրանց տոկոսները ըստ թաղամասերի։

Ը. ԱՂԻՒՍԱԿ

Ներկայացրած գումարները ըստ թաղամասերի

Թաղամասեր	Ներկայացրած բացարձակ գումարները						Իւրաքանչիւր ցուցակին գալիս է միջին բում					
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	Ընդհանուր գումարը	Հայերի գումարը	Ռուս. հրէայ. գումարը	Վրացիների գումարը	Մուսուլման. գումարը	Զեմստվոյա-կան թղթերի և կառավա-րական թղթ. գում.	Ընդհանու-րից	Հայերի գումարից	Ռուս-հրէա-ների գում.	Վրացիների գումարից	Մուսուլման-ների գում.	Զեմստվոյի և կառավա-րական գումարից
I Թաղամ.	19791468	16997210	1830704	115301	48694	799559	16424	19294	6469	19217	3247	39978
II »	27121908	22290461	3559423	169877	189394	912753	29448	43367	11229	3951	9470	33806
III »	11294588	6309659	4184267	42029	460028	298605	14171	20620	9555	2627	20911	19907
IV »	11473429	3024567	5711687	176128	2135412	425535	12141	13443	8842	4003	177851	23643
V »	96790486	65260728	14628679	595369	1738212	14567498	63000	60260	43799	12404	124188	251146
VI »	92179102	72447535	14822094	1558772	639969	2710732	42361	50207	25080	21065	23703	66116
VII »	175390290	161948927	9282397	1058022	148335	2952609	32606	33454	20860	18562	16482	109356
VIII »	203513346	192730134	9169356	851634	90415	671807	21300	22470	10385	13736	15070	29209
IX »	86938050	81076788	4502268	542081	93252	723661	13798	14715	6176	15488	13322	36683
X »	29732903	23245503	5892539	28974	15636	550251	15147	23940	6184	3622	1303	28960
Բալախանի .	38409895	15456636	9928226	386517	581569	12056947	23014	20706	13828	14866	8078	113745
Անյայտ փող.	159065110	—	2696434	528197	—	155840479	432242	—	10410	35214	—	1657878
Ընդամենը	951700575	660788148	86208074	6052901	6140916	192510536	29000	26323	13070	14150	28022	411347

C. աղիւսակի մէջ, առաջին 6 սիւնակներում, ի մի են խմբուած և ըստ Թաղամասերի դասաւորուած են աբսոլիւտ Թուերը բոլոր կաթեգորիաների—Թէ ընդհանուր և Թէ բոլոր ազգուԹիւնների և հիմնարկուԹիւնների գումարները։ Յաջորդ 6 սիւնակներում (6—12 սիւն.) բերուած են նոյն կաթեգորիաների միջին Թուերը—իւրաքանչիւր ցուցակի վրայ հաշուած գումարները։ Այդ աղիւսակը տալիս է լրիւ ու շօշափելի պատկերը ներկայացրած բոլոր գումարների։ Նայենք բոլոր սիւնակներին և Թաղամասերին առանձին-առանձին։

Ըստ հայ ազգաբնակուԹեան կրած վնասների չափերի, դասաւորուած է նաև ընդհանուր գումարների քանակը Թաղամասերով։ Այն Թաղամասերը—ինչպէս, օրինակ, V, VI և մանաւանդ VII, VIII և IX,—որոնք հայ ազգաբնակուԹեան Թուի և տուած մարդկային զոհերի տեսակէտից գերազանցում են բոլորից, նոյնպիսի տեղ գրաւում են նրանք նաև կրած վնասների ներկայացրած գումարների նկատմամբ։

Անշուշտ, գումարների Թուերի Թաղամասային դասաւորուԹիւնը ունի որոշ տարբերուԹիւն, որի վրայ հարկ է այստեղ ամենից առաջ մատնանշել։

Թէ հայ բնակիչների Թուի, Թէ նրանց տուած մարդկային զոհերի քանակի և Թէ հայերի ներկայացրած վնասների ցուցակների Թուի դասաւորուԹեան տեսակէտից հայկական երեք ամենամեծ Թաղամասերը VII, VIII և IX, իրար յաջորդում են կանոնաւորապէս ըստ Թուական մեծուԹեան. առաջինակը բռնում է միշտ VIII Թաղամասը, երկրորդ տեղը IX Թաղ. և երրորդը VII Թաղ.։ Գումարները, ընդհակառակը, դասաւորուած են փոքր ինչ այլ կերպ։ 1-ին սիւնակում, ուր դասաւորուած են ընդհանուր գումարները, առաջին տեղը, բնականօրէն, բռնում է VIII-դ Թաղ. իր հսկայական գումարով՝ 203,513,346 ր., երկրորդ տեղը բռնում է արդէն VII-րդ Թաղամասը (փոխանակ IX-ի) իր 175,390,290 ր. գումարով, երրորդ տեղը V-րդ Թաղ. իր 96,790,486 ր., չորրորդ տեղը VI-րդ Թաղ. իր 92,179,102 ր. և միայն հինգերորդ տեղը IX-րդ Թաղ. իր 86,938,050 ր.։

Այդ փոփոխուԹիւնը կարելի է բացատրել երկու հանգամանքով. Նախ նրանով, որ V և VI Թաղամասերում, մանաւանդ V-րդում, բաւական պատկառելի մասնակցուԹիւն ունեն նաև ոչ հայերից ներկայացուած գումարները (ռուսներից, հրէաներից և հիմնարկուԹիւններից), որով այդ Թաղամասերի Թուական մասնակցուԹեան աստիճանը բարձրացել է սովորականից աւելի։ Երկրորդ հանգամանքն այն է, որ Թէև IX-րդ Թաղամասը աւելի բազմամարդ է (հայ բնակիչներով) և նոյն իսկ աւելի մեծ քանակով ներկայացրել է վնասների ցուցակներ, բայց և այնպէս նրա ներկայացրած գումարների ընդհանուր Թիւը համեմատաբար ցածր է այն պատճառով, որովհետև այդ Թաղամասից ներկայացուած ցուցակները համեմատաբար փոքր գումարներ են պարունակել իրանց մէջ։ Այդ երկրորդ հանգամանքը աւելի է ուժ ստանում, երբ համեմատում ենք Թաղամասերը 2-րդ սիւնակում (հայերի գումարների բաժնում), ուր հայերով աւելի նօսրաբնակ VII-րդ Թաղամասը ներկայացրել է 161,948,927 ր. գումար, իսկ հայերով աւելի բազմամարդ IX-րդ Թաղամասը գրեԹէ երկու անգամ փոքր գումար՝

1,076,788 ռուբլի։ Այդ Թաղամասը հայկական չքաւորութեան կլասիք վայրն է Բագւում, որտեղից ներկայացրած ցուցակների մեծ բազմութիւնը ունել է համեմատաբար աւելի փոքր գումար։ Միջին թւով վերցրած IX-րդ Թաղամասը ունել է (չհաշուած IV-րդ Թաղամասը) ամենանուազ գումարը (ամեն մի ցուցակին 14,715 ր.)։

Նայելով գումարների դասաւորութեան ըստ ազգութիւնների, գտնում ենք հետեւեալ պատկերը.

Բոլոր Թաղամասերում, բացի երկու տեղից (IV-րդ Թաղ. և Բալախանուց, չհաշուելով այսպէս անուանուած անյայտ փողոցները, որոնց տակ հայերը չունեն ներկայացրած ոչ ցուցակներ և ոչ գումարներ), հայերը իրանց ներկայացրած գումարներով գերազանցում են բոլորից, կազմելով բացարձակ մեծամասնութիւն։ Հայերի ներկայացրած մինիմում գումարը եղել է IV րդ Թաղամասից՝ 3,024,567 ր. (իսկ ընդհանուր գումարներինը III-րդ Թաղամասից)։ Հայերի ներկայացրած մաքսիմում գումարը եղել է VIII-րդ Թաղ. 192,730,134 ր. (ընդհանուր գումարներինը ևս նոյն Թաղ.)։ Ինչպէս տեսնում ենք, մինիմումի և մաքսիմումի տարբերութիւնը խիստ մեծ է. նման տարբերութիւն չենք գտնում մենք միացած սիւնակներից որևէ մէկում։

Հայերի ներկայացրած գումարների թէ մինիմումը և թէ մաքսիմումը կազմում են ամենամեծ գումարները միւս ազգութ. գումարների մինիմումների և մաքսիմումների մէջ։ Միջին թւով վերցրած, հայերի գումարների քանակական յարաբերութիւնները դասաւորուած են արդէն այլ կերպ (տես սիւնակ 8-րդ)։ Այստեղ մինիմումը տալիս է դարձեալ նոյն IV-րդ Թաղամասը (13,443 ր.), իսկ մաքսիմումը գտնում ենք ոչ թէ VIII Թաղ., այլ V-րդ Թաղ. (60,260 ր.)։ VIII-րդ Թաղամասի գումարի միջին թիւը բռնում է միայն վեցերորդ տեղը։ Այդ Թաղամասի ներկայացրած ցուցակների մեծաթիւ բազմութիւնը պիտի, բնականօրէն, աւելի համեստ քանակով միջին թիւ տար, որքան էլ նրա ներկայացրած գումարների ընդհանուր քանակը բացարձակ տուեալներով հսկայական լինէր և գերազանցէր բոլորից։ Ինչպէս են դասաւորուած ռուսների և այլոց գումարները (տես սիւն. 3-րդ և 9-րդ)։ Նրանց գումարները ոչ մի Թաղամասում չեն կազմում բացարձակ մեծամասնութիւն։ Միայն մի տեղ՝ IV-րդ Թաղամասում, նրանց գումարը կազմում է մօտաւորապէս կէսը Թաղամասի ներկայացրած ընդհանուր գումարի և գերազանցում է հայերի ներկայացրած գումարից։ Ռուսների գումարների մաքսիմումը հասնում է 14,822,094 ր. (VI-րդ Թաղամաս), իսկ մինիմումը 1,830,704 ր. (I Թաղ.)։ Միջին թւերի սիւնակում (9-րդ սիւն.), ընդհակառակը, նրանց գումարների մաքսիմումը հասնում է արդէն V-րդ Թաղամասում 43,799 ր., իսկ մինիմումը IX-րդ Թաղ. 6176 ր.։

Ինչ վերաբերում է վրացիների և մուսուլմանների ներկայացրած գումարներին, ապա նրանք ամենուրեք չնչին և ճնշուած փոքրամասնութեան մէջ են մնում և առանձին բացատրութիւնների կարիք չունեն։ Վրացիների ներկայացրած գումարների մաքսիմումը հասնում է 1,558,772 ր. (VI-րդ Թաղ.), իսկ մուսուլմաններինը 2,135,412 ր. (IV-րդ Թաղ.)։ Վրացիների գում. մի-

նիմումը հաւասար է 28,974 ր. (X թաղ.), իսկ մուսուլմաններինը աւելի փոքր՝ 15,636 ր. (դարձեալ X-րդ թաղ.)։

Շատ աւելի խոշոր չափերի են հասնում հիմնարկութիւնների (ձեռնարկութիւնների և հաստատութիւնների) գումարները (տ. սիւն. 6 և 12)։

Եթէ ցուցակների թւով այդ կաթեգորիան բռնում էր երրորդ տեղը հայերից և ռուսներից յետոյ, ապա գումարների քանակով նա բռնում է երկրորդ տեղը հայերից անմիջապէս յետոյ։ Հիմնարկութիւնների ներկայացրած գումարների մաքսիմումը հայկական է 155,840,479 ր. այսպէս անուանուած անյայտ փողոցներում։ [1]) Մինիմումը արդէն անհամեմատ համեստ տեղ է բռնում՝ ընդամենը 298,605 ր. (III-րդ թաղ.)։ Նոյնպիսի խոշոր տարբերութիւններով հեռանում են իրարից հիմնարկութիւնների մաքսիմումն ու մինիմումը միջին թուի գումարների սիւնակում (12-րդ սիւն.)։ Այդտեղ մաքսիմումը հասնում է 1,657,878 րուբլու՝ անյայտ փող., իսկ մինիմումը 19,907 ր (III-րդ թաղ.)։ միջին թուի այդօրինակ խոշորագումար մաքսիմում չունի ոչ մի կաթեգորիան C աղիւսակի մէջ։

Այժմ, նախ քան վերոյիշեալ աղիւսակի աբսոլիւտ թւերը տոկոսական յարաբերութիւններով արտայայտելը, հարկ է մեզ պարզել հայ ժողովրդի կրած տնտեսական հարուածների աւելի մօտաւոր պատկերը։

Մենք գիտենք, որ C աղիւսակում հայերի սիւնակում յիշատակուած ընդհանուր գումարը՝ 660,788,148 ր., հայ բնակիչները ներկայացրել են իրանց 25,103 վնասների ցուցակներով։ Բայց մենք գիտենք նաև, որ կան ցուցակների մի շարք կաթեգորիաներ, որոնք չեն մտնում վերոյիշեալ թուի մէջ, ինչպէս մենք նախընթաց գլխում ցոյց տուինք։ Հայերի մերժուած ցուցակների թիւը հաւասար է 301-ի, իսկ սրանց պարունակած գում. հաւասար են 19,818,009 րուբլու[2])։ Այնուհետև հայերի կորած ցուցակների թիւը հաւասար է 1913 հատի, իսկ սրանց գումարը 54,533,860 րուբլու։ Իսկ հայերի չներկայացրած ցուցակների թիւը, ինչպէս մենք տեսանք, հաւասար էր 8000 հատի, որոնցից իւրաքանչիւրի վրայ հաշուելով հայերի ներկայացրած և ընդունուած գումարների միջին թիւը (26,323 ր.), կստանանք մի գումար հաւասար 210,584,000 րուբլու։ Ի մի գումարելով այդ բոլոր տուեալները, կստանանք հետևեալը.

25,103 ներկայացրած և ընդունուած ցուցակների գումարը	660,788,148 ր.
301 մերժուած ցուցակների գումարը .	19,818,009 ր.

[1]) Անյայտ փողոցների տակ դասաւորուած են այն ցուցակները, որոնք վերաբերուելով հաստատութիւնների, ձեռնարկութիւնների, ֆիրմաների և այլն, չեն յիշատակել փողոցների անունները, ուստի ցուցակներն ու գումարները դասել ենք անյայտ փող. անուան տակ։ Հասկանալի է, որ այդ բաժնում ամենախոշոր տեղը բռնում են հիմնարկութիւնների գումարները։

[2]) Մերժուած գումարների ընդհանուր քանակը հաւասար է 92563,238 ր., որը բաժանւում է ըստ ազգութիւնների հետևեալ կերպով՝ հայեր 19,818,009 ր., ռուսներ և այլք 8,396,906 ր., վրացիներ 299,496 ր., մուսուլմաններ 1,938,725 ր. և հիմնարկութիւններ 62,110,102 ր., ընդամենը 92,563,238 ր., որը ներկայացրած ընդհանուր գումարի (951,700,575 ր.) հետ միասին հաւասար է 1,044,263,813 կամ աւելի քան մի միլիարդ րուբլու

1,913 կորած ցուցակների գումարը	.	54,533,860 ր.
8,000[1]) չներկայացրած ցուցակների գում.		210,584,000 ր.
Ընդամենը 35,317 ցուցակների գումարը .	.	. 945,724,017 ր.

Այսպիսով տեսնում ենք, որ հայերի կրած վնասների և կորուստների չափը հասնում է ոչ թէ 660,788,148 րուբլու (ներկայացրած ցուցակների գումարը), այլ 284,935,965 րուբլով (19,818,009+54,533,860+210,584,000) աւելի, ընդամենը 945,724,017 րուբլու կամ մօտ մի միլլիարդի։

Հայերի հիմնական գումարի փոփոխութիւնը, անշուշտ, համապատասխան չափերով փոփոխութեան է ենթարկում և ընդհանուր գումարը։ Վերջինս, ինչպէս մենք գիտենք, հաւասար էր 951,700,575 ր. (միայն ներկայացրած), իսկ մերժուածով (92,563,238 ր.) միասին հաւասար է 1,044,263,813 րուբլու։ Աւելացնելով վերջինիս հայերի լրացումները (կորած և չներկայացրած ցուցակների գումարները՝ 54,533,860+210,584,000 ր.), ստանում ենք մի շատ աւելի խոշոր գումար՝ 1,309,381,673 ր., որի մէջ հայերի բաժինը (ներկայացրած, մերժուած, կորցրած և չներկայացրած բոլոր գումարներով միասին) կազմում է 945,724,017 ր. կամ ամբողջի 72,23%, ռուսների և այլոց (մերժուած գումարներով միասին) 94,604,980 ր. կամ 7,22%, հիմնարկութիւններինը 254,620,638 ր. կամ 19,44%, մուսուլմաններինը 8,079,641 ր. կամ 0,62% և, վերջապէս, վրացիներինը 6,352.397 ր. կամ 0,49%։

Որպէսզի աւելի շօշափելիօրէն պատկերանան մեզ գումարների դասաւորութեան յարաբերութիւնները ըստ թաղամասերի և ըստ ազգութիւնների, բերենք այստեղ նրանց տոկոսների աղիւսակը։

(Տես աղիւսակը 138 երես)

---

[1]) Այդ թւի մէջ մտնում են, ինչպէս գիտենք, սպանուած ընտանիքների, Բագուից հեռացուած չամախեցիների և Բագուի նոր վերադարձած փախստականների ցուցակները։

D. ԱՂԻՒՍԱԿ

Ներկայացրած գումարների տոկոսները ըստ թաղամասերի եւ ազգութիւնների

Թաղամասեր	Թաղամասերի գումարների տոկոսները ամբողջից						Ազգութիւններ, գում. % % ընդհ. գումարից					
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	Ընդհանուր գումար. տոկ.	Հայերի գումար. տոկ.	Թուրքերի գումար. տոկ.	Վրացիների գումար. տոկ.	Մուսուլման. գում. տոկ.	Հիմնարկ. գում. տոկ.	Հայերի տոկոսները	Թուրքերի տոկոսները	Վրացիների տոկոսները	Մուսուլմ. տոկոսները	Հիմնարկ. տոկոսները	Բոլորը միասին
I Թաղամաս.	2,07	2,57	2,12	1,90	0,79	0,42	85,88	9,25	0,58	0,24	4,04	99,99
II »	2,84	3,38	4,13	2,81	3,08	0,48	82 19	13,12	0,63	0,69	3,37	100,00
III »	1,18	0,95	4,85	0,69	7.49	0,16	55,86	37,05	0,37	4,07	2,65	100,00
IV »	1,21	0,46	6,62	2,90	34,77	0,23	26,37	49,69	1,54	18,62	3,71	99,93
V »	10,18	9,88	16,96	9,84	28,30	7,56	67,43	15,10	0,62	1,79	15,04	99,98
VI »	9,68	10,96	17,19	25,75	10,43	1,40	78,59	16.08	1,69	0,69	2,95	100,00
VII »	18,43	21,51	10,77	17,47	2,41	1,53	92,34	5,29	0,60	0,09	1,68	100,00
VIII »	21,38	29,16	10,63	14,06	1,48	0,34	94,71	4,50	0,41	0,04	0,33	99,99
IX »	9,14	12.27	5,23	8,96	1,52	0,37	93 00	5,17	0,60	1,00	0,80	100,57
X »	3,13	3,52	6,84	0,48	0,26	0,28	78,18	9,80	0,09	0,05	1,85	99,97
Քաղախանի .	4,04	2,34	11,52	6,38	9,47	6,26	40,24	25,84	1 02	1,52	31,38	100,00
Անյայտ փողոց.	16,72	—	3.13	8,73	—	80,95	—	1,70	0,33	—	97,97	100,00
Ընդամենը .	100,00	100,00	99,99	99,97	100,00	99,98	69,49	9,00	0,63	0,65	20,23	100,00

Երկու տեսակ տոկոսաշարքից է բաղկացած D. աղիւսակը։ Առաջին շարքում (վեց սիւնակներում) զետեղուած են առանձին-առանձին թաղամասերի գումարների տոկոսները հանած բոլոր թաղամասերի (ողջ քաղաքի) ամբողջ գումարից (խոզից)։ Երկրորդ շարքում զետեղուած են ազգութիւնների (և հիմնարկութիւնների) գումարների տոկոսները հանած ամեն մի թաղամասի ընդհանուր գումարից։

Այդպիսով D. աղիւսակը պարզում է մեր առաջ երկու կարգի յարաբերութիւններ. 1. Ինչ տոկոսական մասնակցութիւն կամ բաժին ունի ամեն մի թաղամասի կրած վնասների և կորուստների գումարը (թէ ընդհանուր և թէ առանձին ազգութիւնների) բոլոր թաղամասերի գումարների խոզի մէջ. 2. Ինչ տոկոսական բաժին ունեն ամեն մի ազգութեան (և հիմնարկութիւնների) թաղամասերում դասաւորուած գումարները տուեալ թաղամասերի ընդհանուր գումարի մէջ։

Նայելով նախ առաջին տոկոսաշարքից ընդհանուր գումարի տոկոսներին (I-ին սիւնակ), գտնում ենք, որ ամբողջ Բագուի կրած վնասների և ներկայացրած գումարների աւելի քան 1/5 մասը կամ ուղիղ 21,38% ունեցել է, ինչպէս և պէտք է սպասուէր, VIII րդ թաղամասը՝ Բագուի հայութեան օրրանը։ Հայերի մօտ (2-րդ սիւնակ) նոյն թաղամասի տոկոսը հասնում է արդէն 29,16%-ի, այսինքն VIII-րդ թաղամասում հայերի վնասների գումարները շատ աւելի խոշոր բաժին ունեն հայերի ներկայացրած բոլոր գումարների ամբողջութեան մէջ։ Երկրորդ տեղը, թէ ընդհանուրի և թէ հայերի գումարների մէջ (1 և 2 սիւնակներում), բռնում է VII-րդ թաղամասը (1-ին սիւնակ) 18,43%-ով, իսկ երկրորդում 24,51%-ով։ Մինիմում տոկոսը ընդհանուր գումարի մէջ կազմում է 1,18% (III-րդ թաղ.), իսկ հայերի մօտ 0,46% (IV-րդ թաղ.)։ Որ թալանի, կողոպուտի և առհասարակ տնտեսական աւերումների ամենածանր հարուածներն իջել են հայերի գլխին VIII-րդ VII-րդ թաղամասերում, դա ցոյց է տալիս այն հանգամանքը, որ այդ երկուսի տոկոսները միասին վերցրած անցնում են հայերի ներկայացրած բոլոր գումարների կէսից աւելին (29,16%+24,51%=53,67%)։ Երրորդ տեղը բռնում է IX-րդ թաղամասը 12,27%-ով, չորրորդը VI-րդ թաղ. 10,96% ով, հինգերորդը V-րդ թաղ. 9,88%-ով։ Այդ վերջին երեք թաղամասերը միասին վերցրած ներկայացրել են հայերի վնասների ներկայացրած բոլոր գումարների ուղիղ 1/3 մասը կամ 33,11% (12,27%+10,96%+9,88%)։ Մնացած թաղամասերի գումարների տոկոսները չնչին տեղ են բռնում։

Փոքր ինչ այլ պատկեր են ներկայացնում ռուսների, հրէաների և այլոց տոկոսները (սիւնակ 3-րդ)։ Այստեղ նկատւում է որոշ համաչափութիւն գլխաւոր թաղամասերի տոկոսների միջև։ Այստեղ չկան մաքսիմումի և մինիմումի խոշոր տարբերութիւններ երկու ծայրերի։ Նրանց մինիմումը կազմում է 2,12% (I-ին թաղ.), իսկ մաքսիմումը հասնում է ընդամենը 17,19%-ի (VI-րդ թաղ.)։ Երկրորդ տեղը, ըստ տոկոսական մեծութեան, բռնում է V-րդ թաղամասը 16,96%-ով։ VII-րդ և VIII-րդ թաղամասերը տալիս են համարեա միևնոյն տոկոսները (10,77% և 10,63%)։

Վրացիների և մուսուլմանների գումարների տոկոսները որոշ չափով

նման յարաբերութեամբ են դասաւորուել։ Երկուսի մօտ էլ մինիմումը և մաքսիմումը հեռանում են իրարից խոշոր տարբերութեամբ։ Այսպէս, օրինակ, վրացիների տոկոսների մաքսիմումը հասնում է 25,75$^0/_0$-ի VI րդ թաղամասում իսկ մինիմումը 0,48$^0/_0$-ի X-րդ թաղամասում։ Իսկ մուսուլմանների մօտ աւելի՝ մաքսիմումը 34,77$^0/_0$ VI-րդ թաղամասում, մինիմումը 0,26$^0/_0$ X րդ թաղամասում։

Մինչև այստեղ յիշուած օրինակների մէջ չեն եղել այդպիսի մեծ տարբերութիւններ մինիմումի և մաքսիմումի միջև։ Երկրորդ խոշոր բաժինը, որ ունեցել է մուսուլմանների ներկայացրած գումարների մէջ, դա V-րդ թաղամասն է իր 28,30$^0/_0$-ով։ Այդ հանգամանքը նորից գալիս ու հաստատում է մեր այն հիմնական միտքը, որ մուսուլմանութիւնը չի ենթարկուել տնտեսական հարուածների ամենուրեք և միայն որոշ տեղերում՝ թաղամասերում ու րայոններում, թիւրիմացութեամբ կորուստներ են ունեցել թուրքերը։

Հիմնարկութիւնների գումարների տոկոսների խոշորագոյն մասը՝ 80,95$^0/_0$, ամփոփուած է անյայտ փողոցների անուան տակ։ Դա արդէն ամենաբարձր մաքսիմումն է՝ մինչև այստեղ ունեցած օրինակների մէջ, որի հանդէպ մինիմումը 0,16$^0/_0$ (III-րդ թաղ.) արդէն անյայտանալու չափ չնչին է։ Հիմնարկութիւնների այդ մեծ տոկոսի (80,95$^0/_0$) տակ ամփոփուած են այն բազմաթիւ ձեռնարկութիւնները, ֆիրմաները, հաստատութիւններն ու պահեստները, որոնք արձանագրուած են միայն անուններով, որոնց որոշակի հասցէները յայտնի չեն մեզ, ուստի նրանց բոլորին դասաւորել ենք անյայտ փողոցների կաթեգորիայի տակ։ Հիմնարկութիւնների մնացած տոկոսներից յիշատակութեան արժանի են V-րդ թաղ. 7,56$^0/_0$-ով և Բալախանին 6,25$^0/_0$-ով։

Երկրորդ տոկոսաշարքի (սիւն. 7—12) յարաբերութիւններն արդէն ակներև են առանց երկար բացատրութիւնների։ Դրանք ազգութիւնների (և հիմնարկութիւնների) գումարների տոկոսական բաժիններն են ընդհանուր գումարից թաղամասերով վերցրած։ Առաջին հայեացքից աչքի է զարնում հայերի գումարների տոկոսների առիւծի բաժինը կամ, ուրիշ խօսքով, հայերի կրած վնասների ահռելիութիւնը։ Միայն մի տեղ՝ IV-րդ թաղամասում, հայերի տոկոսը մնում է համեստ փոքրամասնութեան մէջ, կազմելով 26,37$^0/_0$, ասել է, յամենայն դէպս, աւելի քան 1/4 մասը։ Այնուհետև միայն մի տեղ՝ Բալախանիում, հայերի տոկոսը կազմում է յարաբերական մեծամասնութիւն, այն է 40,24$^0/_0$։ Մնացած բոլոր թաղամասերում անխտիր հայերի տոկոսները կազմում են բացարձակ մեծամասնութիւն, որի մինիմումը հաւասար է 55,86$^0/_0$-ի III-րդ թաղամասում, իսկ մաքսիմումը հասնում է 94,71$^0/_0$-ի VIII-րդ թաղամասում։ Այդ երկու ծայրերի միջև դասաւորուած են մնացած թաղամասերի տոկոսները։

Ռուսների, հրէաների և այլոց գումարները (8-րդ սիւն.) չեն կազմում բացարձակ մեծամասնութիւն ոչ մի թաղամասում. նրանց մեծամասնութիւնը միայն յարաբերական է, այն էլ միայն մի տեղ—IV-րդ թաղամասում 49,69$^0/_0$-ով։ Դա ամենաբարձր տոկոսը կամ մաքսիմումն է, որի հանդէպ մինիմումը հաւասար է 1,70$^0/_0$-ի անյայտ փողոցներում։ Մի քանի թաղա-

մասերում աչքի են ընկնում ռուսների տոկոսները իրանց պատկառելի մասնակցութեամբ այսպէս, օրինակ. III-րդ Թաղամասում նրանց տոկոսը հասնում է 37,05-ի, Բալախանիում 25,84%-ի, X-րդ Թաղամասում 19,80% ի և այլն։

Վրացիների և մուսուլմանների գումարների տոկոսների մասին արդէն չարժէ խօսել, այնքան չնչին տեղ են բռնում նրանք. մեծագոյն մասով մի միաւորից ցածր են կանգնած նրանց տոկոսները։ Միայն IV-րդ Թաղամասում, ասել է ամենից քիչ շօշափուած ու կողոպտուած վայրում, մուսուլմանների տոկոսը հասնում է 18,62%-ի. միւս նոյնքան սակաւ Թալանուած Թաղամասում (III-րդ Թաղամասում) մուսուլմանների տոկոսը հասնում է 4,07%-ի։ Մուսուլմանների տոկոսական մինիմումը կազմում է 0,04% (VIII-րդ Թաղամաս), իսկ վրացիներինը 0,09% (X-րդ Թաղ.)։

Հիմնարկութիւնների գումարների ամենաբարձր տոկոսը տալիս են, բնականօրէն, անյայտ փողոցները, ոչ պակաս քան 97,97%. Նման մաքսիմում չունեն հայերը ոչ մի Թաղամասում։ Միւս տեղերից աչքի է ընկնում նրանց տոկոսը միայն Բալախանիում, ուր հիմնարկութիւնների ներկայացրած գումարների տոկոսը կազմում է 31,38%, այնուհետև յիշելու է V-րդ Թաղամասը իր 15,04%-ով։ Որքան անօրինակ խոշոր է հիմնարկութիւնների մաքսիմումը, այնքան չնչին է նրանց մինիմում տոկոսը, ընդամենը 0,33%։

Երկրորդ տոկոսաշարքի ընդհանուր եզրակացութիւնը յայտնի է մեզ արդէն։ Ողջ քաղաքի և շրջակայքի (բոլոր կողոպտուած վայրերի) ներկայացրած գումարների ամբողջութեան մէջ հայերի տոկոսական մասնակցութիւնը հաւասար է 69,49%-ի, ռուսներինը, հրէաներինը և այլոց 9,00-ի, վրացիներինը 0,63%-ի, մուսուլմաններինը 0,65%-ի և հիմնարկութիւններինը 20,23%-ի։

Բայց մենք հիմք ունենք պնդելու, որ հայերի գում. տոկոսական մասնակցութիւնը փաստօրէն աւելի է, քան մենք ստացել ենք ձևապէս։

Չպէտք է մոռանալ մի շատ կարևոր հանգամանք։

Եթէ վերջին կաթեգորիան, այսպէս անուանուած հիմնարկութիւնները, իրանց խոշոր գումարներով վերածէինք ըստ ազգային պատկանելիութեան սկզբունքի, կստանանք երկու կարգի ֆօնդեր. մէկը զուտ հայ ազգային և հասարակական-կուլտուրական բնաւորութեամբ, իսկ միւսը միջազգային բնաւորութեամբ։

Ի՞նչ են նշանակում մի կամ միւս կարգի ֆօնդերը, իրանց կոնկրետ բովանդակութեամբ։

Կողոպտուած հիմնարկութիւնների Թւին պատկանում են հայկական եկեղեցիները (Թւով երեք), դպրոցները և մի շարք կուլտուրական ու բարեգործական հաստատութիւններ ու ընկերութիւններ, որոնց ներկայացրած գումարները ընդհանուր առմամբ հասնում են 20 միլլիոն րուբլու (աւելի քիչ գնահատուած ու ներկայացուած, քան նրանք իրապէս տուժել են)։

Ընդհակառակը, միւս հիմնարկութիւնները չունեն սպեցիֆիկ ազգային բնոյթ, ոչ իրանց ծագումով, ոչ իրաւական պատկանելութեամբ և ոչ փաստական շահերով չեն տուժել ոչ մուսուլման մեչիտն ու դպրոցը և ոչ ռուս

եկեղեցին. Մնացած բոլոր հիմնարկութիւնները կամ պետական սեփականութիւններ են, կամ Քաղաքների Միութեան գոյքեր (միայն Քաղաքների Միութեան յափշտակուած գոյքերը գնահատուել են 37 միլ. ր.), կամ Բագու քաղաքի ունեցուածքը, կամ կօօպերատիւ միութիւնների պահեստներ և կամ ակցիօներական ֆիրմաներ ու զանազան կարգի հասարակական ձեռնարկութիւններ։ Այսինքն հիմնարկութիւններ, որոնք իրանց ծագումով, պատկանելութեամբ և շահերով չունեն ոչինչ հարազատ ազգային. այնտեղ շահերը ընդհանուր պետական, քաղաքացիական են, կարճ՝ միջազգային են։

Եթէ ի նկատի ունենանք այդ անուրանալի փաստը և ըստ այնմ դասաւորենք տոկոսները, կստանանք հետևեալը. հայերի ներկայացրած գումարների մասնակցութիւնը ընդհանուր գումարի մէջ հաւասար է $71,59^0/_0$-ի, ռուսներինը, հրէաներինը և այլոց $9,00^0/_0$-ի, վրացիներինը $0,63^0/_0$-ի, մուսուլմաններինը $0,65^0/_0$-ի և հիմնարկութիւններինը $18,13^0/_0$-ի։

Նախ քան Բագուի ազգաբնակութեան վնասների ներկայացրած գումարները ըստ փողոցների դասաւորելը, մենք բերենք ստորև այսպէս անուանուած բաւարարուած գումարները և նրանց նկատմամբ ևս ցոյց տանք նոյն գործողութիւններն ու յարաբերութիւնները։

XV. ԳԼՈՒԽ

ԲԱՒԱՐԱՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Որոշենք ամենից առաջ, թէ ինչ են նշանակում բաւարարուած գումարներ։

Ճիշտ այնպէս, ինչպէս դաշնակից պետութիւնների վերստուգիչ յանձնաժողովը որոշ ցուցմունքների հիման վրայ մերժել է վնասների բաւականաչափ ցուցակների որևէ բաւարարութիւն տալը, այնպէս էլ նոյն յանձնաժողովը քննել և ստուգել է ներկայացրած և ընդունուած ցուցակները և անելով իր կողմից յատուկ գնահատումներ, կրճատելով գումարները, վերջին հերթին ընդունել և բաւարարել է գումարների միայն որոշ մասը։ Մատներով կարելի է հաշուել այն ցուցակները, որոնց գումարները չեն ենթարկուել որևէ կրճատման և թողնուել են անփոփոխ։

Պէտք է ասել և ցաւելով խոստովանել, որ վերստուգիչ յանձնաժողովի պաշտօնեաների կողմից չի կիրառուել որևէ օբիեկտիւ կշռաչափ և գնահատաչափ թալանուած իրերի և արժէքների տէրերից նշանակուած գները փոփոխելու ժամանակ։ Գնահատումը եղել է աւելի շուտ սուբիեկտիւ, կամայական ու մակերեսային, քան օբիեկտիւ, բնական ու կշռադատուած։ Եղել են գումարներ, որոնք կրճատուել են մի քանի հարիւր ռուբլով միայն, եղել են այնպիսիները, որոնք մի քանի հազարով են կրճատուել, բայց եղել են նաև գլխաւորապէս այնպիսի գումարներ, որոնք ոչ միայն $^1/_4$-ով, $^1/_3$-ով, այլ և կիսով չափ և դեռ աւելին քան կէսը կրճատուել են, չնայելով որ գները վերաբերուել են նման կամ նոյն իրերին ու արժէքներին։

Սակայն, ինքն իրեն վերցրած այդ կրճատումները մի աւելորդ աշխատանք և անարդարացի գործ էր։ Համարձակութիւն ունենք պնդելու, որ

միջին թւով վերցրած՝ կողոպտուած իրերի, աւերուած տուն ու տեղի, կործանուած տնտեսութեան արժէքը շատ աւելի մեծ է եղել, քան տուժողներից ամեն մէկը գնահատել և ներկայացրել է։ Մեծամասնութիւնը, մանաւանդ հասարակ ժողովրդից, իրանց վնասները գնահատել են կամ արժէքի վաղեմի նորմաներով, և կամ շատ աւելի արժան գներով, քան կարող էին կորցրածը գնել արդի շուկայական գնահատութեամբ։ Կեանքը աւելի արագ է թանգանում, հետևապէս դրամի արժէքը աւելի արագ է ընկնում, քան հասարակ քաղաքացու հոգեբանութիւնը կարող է հաշտուել և ընտելանալ այն մտքին, որ այսօր ռուբլին այն չէ, ինչ երեկ էր, որ ռուբլին այժմ ռուբլի չէ, այլ կոպէկ և յաճախ նոյն իսկ աւելի պակաս է, քան կոպէկը։ Եւ Սուանխուլսկում կամ Կանիտապինսկի փողոցներում բնակւող հայ քաղքենին, արհեստաւորն ու բանուորը, որոնք իրանց կեանքում հազարների մասին միայն երազել են առանց տեսնելու և ունենալու նրանց իրանց ձեռքում, մխիթարուել են այժմ նրանով, որ իրանց մինչև վերջին թելը կողոպտուած տունն ու տեղը գնահատել են 5—10 կամ 15 հազար ռուբլով[1]), մոռանալով, որ նրանք այդ գումարով չեն կարող ձեռք բերել շուկայում 1/5 մասը այն բոլորի, ինչ կորցրել են։

Այդպիսի պայմաններում դեռ կրճատել ներկայացրած վնասների գումարները, նշանակում է, յիրաւի, անարդարացի վերաբերմունք ունենալ դէպի բիւրաւոր զոհեր տուած, աւերուած, մերկ ու քաղցած ժողովուրդը։

Տեսնենք, թէ ինչպէս են կրճատուել ներկայացուած գումարները և ինչ չափով են բաւարարութիւն տուել այդ ժողովրդին։

Բագուի ողջ տուժած ազգաբնակութեան ներկայացրած վնասների ամբողջ գումարը հասնում էր, ինչպէս գիտենք, 951,700,575 ռուբլու, որից կրճատել են 359,598,933 ռուբլի կամ 37,79% և բաւարարութիւն տուել 592,101,642 ռուբլով կամ 62,21%-ով։ Նշանակում է շատ աւելի, քան 1/3 մասով, կրճատուել են ներկայացրած գումարները. դա չափազանց խիստ է. աններելի եւ անարդար խուզումների են ենթարկուել ազգաբնակութեան համեստ գնահատումները։ Երբ օրուայ պոգրոմները, անխնայ կողոպուտներն ու աւերումները և երկու ամսուայ սիստեմատիկ յափշտակումներն ու իւրացումները մի այնպիսի չէն ու փարթամ քաղաքում, ինչպիսին Բագուն է, ոչ թէ վերոյիշեալ գումարի (951,700,575 ռ.) վնասներ են հասցրել, այլ առնուազը 1 1/2 միլլիարդ ռուբլու վնասներ և կորուստներ են պատճառել նրան (1918 թ. Սեպտ. գնահատումներով)։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս են մասնակցում ազգութիւնները բաւարարուած գումարներին։

---

[1]) Այդ դեռ ոչինչ. ընտանիքների մէջ փաթաթուած, ամբողջապէս թալանուած պառաւ կանայք կամ տղամարդիկ բերում էին իրանց ցուցակները խղճուկ, կոպէկների գնահատումներով—1, 2, 3, 4 հազարի գումարներով։ Անգրագէտ և անիրազեկ մասսաները գաղափար չունէին իրերի արժէքների մասին և մի պարզամիտ երկիւղ են ունեցել, որ եթէ գումարը մեծ լինի, ոչինչ չեն ստանայ. ուստի գերադասել են գոնէ ստանալ աւելի պակաս, քան ոչինչ չստանալ։

	Ընդհանուրը	Հայերինը	Ռուսներինը և այլն	Վրացիներինը	Մուսուլմաններ.	Հիմնարկութիւններինը
Ներկ. գ.	951700575	660788148	86208074	6052901	6140916	192510536
Բաւար. գ.	592101642	453184126	48824531	3995049	2226822	83871114
» գ. %-ը	62,21	68,49	56,63	66,00	36,26	43,56

Ամենամեծ տոկոսով բաւարարութիւն ստացել են հայերի ներկայացրած գումարները, այն է 68,49%-ով, միջին տոկոսից 6,28%-ով աւելի, այնուհետև վրացիների գումարները 66,00%-ով, միջին տոկոսից 3,79%-ով աւելի։ Ամենամեծ տոկոսով կրճատուել և հետևապէս ամենանուազ տոկոսով բաւարարութիւն են ստացել մուսուլմանների գումարները, ընդամենը 36,26%-ով կամ միջին տոկոսից 25,95%-ով պակաս։ Կէսից աւելի կրճատումների են ենթարկուել նաև հիմնարկութիւնների գումարները և բաւարարութիւն ստացել ընդամենը 43,56%-ով կամ միջին տոկոսից 18,61%-ով պակաս։ Ռուսների, հրէաների և այլոց գումարների տոկոսը բռնում է արդէն միջին տեղը. կէսից աւելին կամ 56,63%-ով բաւարարութիւն են ստացել նրանք, որ միջին տոկոսից պակաս է 5,58%-ով։

Իսկ ինչ տոկոսական բաժինն են կազմում ազգութիւնների բաւարարուած գումարները առանձին-առանձին բաւարարուած ընդհանուր գումարի մէջ. դա տեսնում ենք հետևեալ տոկոսներից.

Բաւարարուած գումարների տոկոսները.

Հայերի . .	76,54%
Ռուսների և այլոց	8,25%
Վրացիների .	0,67%
Մուսուլմանների .	0,38%
Հիմնարկութիւնների	14,16%

Իսկ ներկայացրած գումարների տոկոսները, ինչպէս մենք գիտենք, այսպէս էին՝

Հայերի . .	69,49%
Ռուսների և այլոց	9,00%
Վրացիների . .	0,63%
Մուսուլմանների .	0,65%
Հիմնարկութիւնների	20,23%

Ինչպէս տեսնում ենք, կայ տոկոսների զգալի փոփոխութիւն։ Դրական փոփոխութիւն կրել է միայն հայերի տոկոսը. նրանց տոկոսական մասնակցութիւնը բաւարարուած գումարի մէջ աւելի մեծ է (76,54%), քան ներկայացրած գումարի մէջ էր (69,49%)։ Չնչին փոփոխութիւն, աճման իմաստով, կրել է նաև վրացիների տոկոսը բաւարարուած գումարների մէջ՝ 0,67%, մինչդեռ ներկայացրածների մէջ 0,63% էր։ Ընդհակառակը,

ցած երեք տոկոսները՝ ռուսներինը և մանաւանդ մուսուլմաններինն ու հիմնարկութիւններինը փոփոխուել են նուազման իմաստով. ռուսներինը նուազել է 0,75$^0/_0$-ով, մուսուլմաններինը կիսուել է համարեա՝ 0,65$^0/_0$-ից դարձել է 0,38$^0/_0$, իսկ հիմնարկութիւններինը նուազել է ամբողջ 6,07$^0/_0$-ով. այսինքն մօտաւորապէս այնքան է նուազել, որքան հայերի բաւարարուած գումարի տոկոսն աճել է (7,05$^0/_0$)։

Բայց չմոռանանք այստեղ աւելացնելու հետեւեալը. ինչպէս գիտենք, հիմնարկութիւնների ներկայացրած գումարի մէջ 20 միլ. ռուբլին հաշուեցինք մենք հայկական հաստատութիւնների (եկեղեցիների, դպրոցների և այլն) վրայ։ Այդ գումարից բաւարարութիւն ստացել է մօտ 12 միլ. կամ 60$^0/_0$։ Հաշուելով այդ 12 միլ. ռ. տոկոսը ընդհանուր բաւարարուած գումարից, ստանում ենք 2,03$^0/_0$, որը մի կողմից գումարելով հայերի բաւարարուած տոկոսի հետ, ստանում ենք 78,57$^0/_0$, իսկ միւս կողմից հանելով հիմնարկութիւնների բաւարարուած գումարի տոկոսից, ստանում ենք 12,13$^0/_0$։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած բաւարարութիւն ստացած գումարները ըստ թաղամասերի. բերենք ստորև ոչ միայն բացարձակ գումարները, այլ և միջին թուով գումարները ըստ ցուցակների քանակի։

(Տես E *աղիւսակը հետեւեալ երեսում)*

Է. ԱՂԻՒՍԱԿ

Բաւարարուած գումարները ըստ թաղամասերի՝ բացարձակ եւ միջին թւով վերցրած

Թաղամասեր	Բաւարարուած բացարձակ գումարները						Իւրաքանչիւր ցուց. գալիս է միջին թւով					
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	Ընդհանուր գումարները	Հայերի գումարները	Ռուսաց և այլոց գում.	Վրացիների գումարները	Մուսուլմ. գումարները	Հիմնարկութիւն. գում.	Ընդհանուր.	Հայկական.	Ռուսական.	Վրացական.	Մուսուլմ.	Հիմնարկութիւնների
I թաղամ.	12333931	10444515	1381725	86000	39710	381981	10228	11856	4883	14334	2650	19099
II »	16520948	13292400	2330608	72200	142050	683690	17938	25861	7353	1677	7103	25322
III »	8400984	4843963	3041121	24700	198200	293000	10541	15830	6944	1544	9010	19534
IV »	6061088	1554236	3903434	123900	199560	279958	6414	6908	6043	2816	16464	15554
V »	54632017	47004046	4291521	315000	662000	2359450	35544	43402	12939	6563	47286	40681
VI »	56057788	44124058	8940114	988887	390162	1614567	25762	30578	15128	13362	14451	39356
VII »	111067714	105393732	3932111	677125	115050	949696	20649	21771	8837	11675	12784	35171
VIII »	152310626	144724919	6578690	541137	65900	399980	15939	16864	7451	8728	10950	17390
IX »	60588449	56355232	3409942	391570	69350	362355	9616	10228	4678	11188	9908	18118
X »	18001843	13533494	4000448	22200	12330	433371	9171	13928	4198	2778	1028	22809
Բալախանի	26128343	11913531	5077871	371330	332510	8433101	15656	15952	7073	14267	4619	879558
Անյայտ. փող.	69997911	—	1936946	381000	—	67679965	190212	—	7480	25400	—	719999
Ընդամենը .	592101642	453184126	48824531	3995049	2226822	83871114	18042	18053	7400	9205	10309	179212

Է աղիւսակը ցոյց է տալիս բաւարարուած գումարների լրիւ պատկերը. չի եղել մի Թաղամաս, որ այս կամ այն չափով կրճատումների կամ խուզումների ենթարկուած չլինէին նրանց ներկայացրած գումարները։ Ամենամեծ չափով, կէսից շատ աւելին, կրճատուել են խառը փողոցներից ներկայացրած գումարները, ասել է գրեթէ բացառապէս հիմնարկութիւնների գումարները. 159,065,110 րուբլուց բաւարարութիւն տուել են միայն 69,997,911 րուբլի կամ $44^{0}/_{0}$։ Նման խոշոր կրճատում ($56^{0}/_{0}$-ով) չի ունեցել ոչ մի Թաղամաս։ Համեմատաբար մեծ կրճատումների են ենթարկուել նաև IV, V և VI-րդ Թաղամասերը։

Բաւարարուած բացարձակ գումարների համեմատութիւնից տեսանք, որ, յարաբերաբար վերցրած, հայերի ներկայացրած գումարը կրճատուել է ամենաքիչ տոկոսով կամ բաւարարուել է ամենից մեծ տոկոսով։ Այդ նոյն ընդհանուր յարաբերութիւնը անդրադառնում է Թաղամասերի վրայ առանձին-առանձին, ինչպէս մենք կտեսնենք յետոյ տոկոսներով։

Անշուշտ, կրճատումները հաւասար նորմաներով չեն եղել. այնուամենայնիւ որոշ համաչափութիւն, ոչ խոշոր տարբերութիւններով, նկատւում է հայերի բաւարարուած գումարների ամբողջ շարքում։ Չկայ մի Թաղամաս, որտեղ հայերի ներկայացրած գումարները կէսից աւելի կամ նոյն իսկ կիսով չափ կրճատուած լինէին կամ, ուրիշ խօսքով, որտեղ հայերի գումարները կէսից պակաս կամ կիսով չափ բաւարարութիւն ստացած լինէին։ Ամենուրեք բաւարարութիւնը եղել է կէսից աւելին։

Ընդհակառակը, այլ կերպ են դասաւորուած յարաբերութիւնները միւս կաթեգորիաների մօտ։ Այդտեղ կրճատումները եղել են խոշոր չափերով. այդտեղ ներկայացրած գումարները կրճատուել են — ի հարկէ միայն որոշ տեղերում — ոչ միայն երրորդ մասով, այլ և կիսով չափ և կէսից շատ աւելին։ Այդպիսի կրճատումներ տեղի են ունեցել թէ ռուսների, հրէաների և այլոց ներկայացրած գումարների հետ (V և VII Թաղամասերում), թէ վրացիների գումարների հետ (II Թաղ.), թէ մուսուլմանների (III, IV, V Թաղ.) և թէ հիմնարկութիւնների գումարների հետ (I, V, VII Թաղ., Բալախանիում և անյայտ փողոցներում)։

Ինչո՞վ բացատրել արդեօք այդ ըստինքեան ուշագրաւ հանգամանքը։ Չի կարող, ի հարկէ, ոչ մի խօսք լինել կողմնապահութեան կամ միտումնաւոր վերաբերմունքի մասին մի այնպիսի վերստուգիչ յանձնաժողովի կողմից, որի քննիչ օրգանների կազմի մէջ հայերը չնչին փոքրամասնութիւն են կազմել (30 հոգուց 7 հոգի եղել են հայեր)։

Այդ հանգամանքը ունի մի շատ հասարակ բացատրութիւն։ Այսինքն այն, որ փաստերի, կողոպտուած իրերի գնահատումը հայ տուժած բնակիչների կողմից եղել է, en masse վերցրած, չափաւոր, զսպուած, շատ դէպքերում արժէքները ցածր նորմաներով գնահատուած։ Մինչդեռ միւս կաթեգորիաներում գնահատումը, ըստ երևոյթին, եղել է չափազանցրած, անտեղի, կամ պարզապէս մտացածին։

Այլ բացատրութիւն չունի վերև շեշտուած փաստը։

Բացարձակ Թուերի փոփոխուած յարաբերութիւնները ունեցել են իրանց անդրադարձումը միջին Թուերի վրայ (տես սիւնակ 7-12)։

Ի հարկէ, ուրաքանչիւր ցուցակին գալիք այն միջին թուերը, որ ցոյց ենք տուել մենք բոլոր կաթեգորիաների նկատմամբ ներկայացրած գումարների աղիւսակում (C աղիւս.), բաւարարուած գումարների աղիւսակում (E աղ. ւս.) ենթարկւում են համապատասխան փոփոխութիւնների, և իրաւ, ոչ միայն այն իմաստով, որ վերջինի մէջ միջին թուերը կամ գումարները իջնում են իրանց նախկին բարձրութիւնից, այլ և այն իմաստով, որ կաթեգորիաների միջին թուական փոխյարաբերութիւնները այլակերպ են դասաւորւում, ինչպէս տեսնում ենք հետևեալ համեմատութիւնից։

Ուրաքանչիւր ցուցակին գալիս է.

	Ընդհանուրը	Հայերինը	Ռուսն. և այլն	Վրացիներինը	Մուսուլման.	Հիմնարկութիւն.
Ներկայացրած գում.	29000	26323	13070	14150	28022	411347
Բաւարարուած գում.	18042	18053	7400	9205	10309	179212
Բաւար. գում. %	62,23	68,60	56,62	65,05	36,80	43,58

Ամենամեծ տոկոսով բաւարարուած են հայերի միջին գումարները։ Բաւարարուած ընդհանուր կամ աբսոլիւտ գումարների կրած փոփոխութիւնը անդրադարձել է միջին գումարների վրայ։ Ամենից շատ նուազել է մուսուլմանների և ապա հիմնարկութիւնների միջին թիւը։ Ներկայացրած ընդհանուր գումարի միջին թիւը (29,000 ր.) գերազանցում էր հայերի ներկայացրած գումարի միջին թուից (26,323 ր.) մի քանի հազարով. իսկ բաւարարուածի մէջ յարաբերութիւնները փոխւում են. առաջինը իջնում է մինչև 18,042 ր., իսկ երկրորդը՝ 18,053 ր., տեսնել է բաւարարուածի մէջ հայերի միջին թիւը գերազանցում է, թէև փոքր տարբերութեամբ, ընդհանուրի միջին թուից։ Դա նշանակում է, որ միւս ազգութիւնների և հիմնարկութիւնների ներկայացրած գումարները այնքան շատ են կրճատուել, որ բաւարարուած ընդհանուր գումարի միջին թիւը իջել է հայկականից աւելի ցածր։

Այժմ ցոյց տանք E աղիւսակի աբսոլիւտ գումարների տոկոսական յարաբերութիւնները մի քանի կողմից։

(Տես F աղիւսակը հետևեալ երեսում)

Բ. ԱՂԻՒՍԱԿ

Բաւարարուած գումարների տոկոսները ըստ թաղամասերի

Թաղամ.	I						II						III					
	Թաղամասերի բաւարարուած գումարների տոկոսները ամբողջից (իսօգից)						Ազգութիւնների բաւարար. գո մ. % % ընդհ. բաւարար. գումարից						Բա արարուած գումարների % %-ը ներկայացրած գումարներից					
	Ընդհանուր	Հայերը	Ռուսներ և այլ ազգ.	Վրացիներ	Մահմեդականներ	Չնշված ազգութիւնը	Հայերը	Ռուսներ և այլ ազգ.	Վրացիներ	Մահմեդականներ	Չնշված ազգութիւնը	Բոլորը միասին	Ընդհանուր	Հայերը	Ռուսներ և այլ ազգ.	Վրացիներ	Մահմեդականներ	Չնշված ազգութիւնը
I Թաղ.	2,10	2,30	2,83	2,16	1,78	0,45	84,68	11,21	0,69	0,33	3,09	99,98	62,31	64,44	75,47	74,58	81,55	47,77
II »	2,80	2,93	4,78	1,81	6,37	0,80	80,46	14,11	0,44	0,86	4,13	100,00	60,91	59,63	65,47	42,50	75,16	74,90
III »	1,42	1,10	6,23	0,62	8,91	0,34	55,66	36,19	0,29	2,35	3,48	99,97	74,38	76,77	72,67	58,76	43,08	98,12
IV »	1,03	0,34	7,99	3,10	8,96	0,33	25,64	64,41	2,04	3,29	4,62	100,00	52,82	51,38	68,34	70,34	9,34	65.78
V »	9,24	10,40	8,78	7,88	29,73	2,80	86,04	7,85	0,57	1,22	4,32	100,00	54,37	72,20	29,39	52,90	38,08	16,19
VI »	8,07	9,74	18,32	24,75	17,52	1,91	78,72	15,94	1,76	0,69	2,88	99,99	60,81	60,90	60,31	63,44	60,96	59,56
VII »	18,76	23,35	8,06	16,69	5,16	1,12	94,89	3,54	0,60	0 11	0,86	100,00	63,32	65,07	43,44	63,99	77,56	32,16
VIII »	25,73	31,95	13,47	13,54	2,95	0,47	95,02	4,32	0,36	0,04	0,26	100,00	74,84	75,09	71,74	63 54	72,88	59,53
IX »	11,30	12,44	6,98	9,80	3,11	0,42	93,02	5,63	0,64	0,12	6,59	100,00	69,69	69,50	75,71	72,23	74,36	50,07
X »	3,05	2,98	8,19	0,65	0,55	0,50	75,17	23,23	0,12	0,06	2,40	99,99	60.54	58,21	67,92	76,62	78,85	78,75
Բալախանի	4,42	2,72	10,41	9,30	14,93	10,04	45,97	19,43	1,41	1,26	32,09	100,07	68,02	77,07	51,14	96,07	57,17	69,94
Սեւ. քաղ.	12,01	—	3,96	9,64	—	80,68	—	2,76	0,54	—	96,68	99,99	44,00	—	71,46	72,13	—	43,42
Ընդամենը	99,93	99,96	100,00	99,94	99,97	100,06	76,54	8,25	0,67	0,37	14,17	100,00	62,21	68,58	56,63	66,00	36,42	43,56

Միևնոյն գումարների երեք կարգի յարաբերութիւններ որոշող տոկոսներ են, որ զետեղուած են F. աղիւսակում։

1-ին շարքում զետեղուած են այն տոկոսները, որոնք պարզում են մեզ, թէ ինչ տոկոսական բաժինն է կազմում ամեն մի թաղամասի բաւարարուած գումարը ողջ քաղաքի կամ բոլոր թաղամասերի գումարների ամբողջութեան մէջ։ Եւ այդ յարաբերութիւնը ցոյց է տրուած թէ ընդհանուր գումարի և թէ ազգութիւնների ու հիմնարկութիւնների գումարների նկատմամբ։

2-րդ շարքում բերում ենք այն տոկոսները, որոնք ցոյց են տալիս, թէ ազգութիւնների և հիմնարկութիւնների բաւարարուած գումարները ամեն մի թաղամասում ինչ տոկոսական մասն են կազմում տուեալ թաղամասի ընդհանուր բաւարարուած գումարի։

Վերջապէս, 3-րդ շարքում դասաւորուած են այն տոկոսները, որոնք դարձեալ թաղամասերով ցոյց են տալիս, թէ բոլոր կարգի (թէ ընդհանուր և թէ ազգութ. ու հիմնարկ.) բաւարարուած գումարները ինչ տոկոսական բաժինն են կազմում բոլոր կարգի ներկայացրած գումարների։

Նայենք այդ շարքերին առանձին-առանձին։

1-ին շարքում ընդհանուր գումարի տոկոսների թաղամասային դասաւորութիւնը նման է հայերի գումարների տոկոսներին բոլոր այն տեղերում, ուր փաստների մեծագոյն մասը հայկական է։ Եւ այդ տեղերում, բնականօրէն, հայկականի տոկոսները գերազանցում են ընդհանուրի միջին տոկոսներից։ Բացառութիւն կազմում են միայն, ինչպէս գիտենք, III, IV, X-րդ—համեմատաբար ամենից սակաւ տուժած—թաղամասերը և Բալախանին. այդ մասերում միջին տոկոսը չնչին տարբերութեամբ գերազանցում է հայկականից։ Ամենամեծ տոկոսը բաւարարուած գումարի ամբողջութիւնից տալիս է, բնականաբար, VIII-րդ թաղամասը, ինչպէս ընդհանուր գումարի սիւնակում՝ 25,73%, այնպէս էլ հայերի գում. տոկոսների սիւնակում՝ 31,95%։ Այնուհետև յաջորդում են VII-րդ թաղամասը—18,76% ընդհանուրը, 23,36% հայկական, IX-րդ թաղամաս—11 30% ընդհանուրը, 12,44% հայկ., V-րդ թաղ.—9,24% ընդհ., 10,40% հայկ., VI-րդ թաղ.—8,07% ընդհ., 9,74% հայկ. և այլն։

Եթէ համեմատենք իրար հետ ներկայացրած և բաւարարուած գումարների տոկոսները յիշեալ թաղամասերի նկատմամբ, կստանանք հետևեալը (այստեղ խօսքը վերաբերում է 1-ին տոկոսաշարքին).

Թաղամաս.	Ընդհ. գում. տոկոսներ		Հայերի գում. տոկոսներ	
	Ներկայացրած գում. տոկոս.	Բաւարարուած գում. տոկոս.	Ներկայացրած գում. տոկոս.	Բաւարարուած գում. տոկոս.
V թաղ. .	10,18	9,24	9,88	10,40
VI „ .	9,68	8,07	10,96	9,74
VII „ .	18,43	18,76	24,51	23,35
VIII „ .	21,38	25,73	29,16	31,95
IX „ .	9,14	11,30	12,27	12,44

Այստեղ մենք ունենք երկու կարգի համեմատութիւններ. մի կողմից հայերի գումարի և ընդհանուր գումարի երկու կարգի տոկոսական համեմատութիւնը, իսկ միւս կողմից այդ երկու կարգի—ներկայացրածի և բաւարարուածի—տոկոսների համեմատութիւնը իրար հետ՝ թէ ընդհանուրի և թէ հայկականի նկատմամբ։

V-րդ թաղ., ընդհանուր գումարի տակ, ներկայացրած գումարի տոկոսը՝ 10,18%, աւելի մեծ է, քան բաւարարուածինը՝ 9,24%. ընդհակառակը, հայերի տոկոսների մօտ (նոյն V-րդ թաղամասում) նկատւում է բոլորովին հակառակ փոփոխութիւնը, այն է 9,88% և 10,40%։ Դա նշանակում է, որ ընդհանուր ներկայացրած գումարի ոչ-հայկական բաժինները (ռուսներինը, հրէաներինը, վրացիներինը, մուսուլմաններինը և հիմնարկութիւններինը) աւելի շատ են կրճատուել (յարաբերաբար), քան հայերի բաժինը և վերջինս բաւարարուածի մէջ աւելի մեծ տոկոս է տալիս, քան բաւարարուած ընդհանուր գումարի ոչ-հայկական բաժինները։ VI-րդ թաղամասի տոկոսները դասաւորուած են ուղիղ յարաբերական ձևով ընդհանուրը և հայկականը. դա նշանակում է, որ այդ թաղամասում ներկայացրած ընդհանուր գումարի հայկական բաժինը յարաբերաբար աւելի է կրճատուել, քան միւս բաժինները։ Նոյն բացառութիւնը վերաբերում է նաև մասամբ VII-րդ թաղամասին։ Ընդհակառակը, VIII-րդ և IX-րդ թաղամասերի տոկոսները դասաւորուած են բոլորովին հակառակ յարաբերութեամբ նման V-րդ թաղամասին, և ունեն նոյն բացառութիւնը։

Ռուսների և այլոց մօտ (նոյն 1-ին շարքում) ամենամեծ տոկոսը ամբողջից տալիս է VI-րդ թաղամասը, ընդամենը 18,32%, այնուհետև յաջորդում է VIII-րդ թաղամասը՝ 13,47%, իսկ մինիմում տոկոս տալիս է I-ին թաղամասը՝ 2,83%-ով։ Ինչպէս տեսնում ենք, հայերի տոկոսների մաքսիմումի (31,95%) և մինիմումի (0,34%) խոշորաչափ տարբերութիւնը չենք գտնում ռուսների տոկոսների շարքում. վերջինում համեմատաբար համաչափ են դասաւորուած տոկոսները։ Այդ տեսակէտից ռուսների (և այլոց) բաւարարուած գումարների տոկոսներից տարբերւում են նաև միւս կաթեգորիաների տոկոսները իրանց վերին ու ստորին ծայրերով։ Օրինակ, վրացիների մօտ մաքսիմում տոկոսը հաւասար է 24,75%-ի (VI-րդ թաղ.), իսկ մինիմումը 0,62%-ի (III-րդ թաղ.), մուսուլմանների մօտ առաջինը կազմում է 29,73% (V-րդ թաղ.), իսկ երկրորդը 0,55% (X-րդ թաղ.)։ Վերջապէս, հիմնարկութիւնների սիւնակում տարբերութիւնը էլ աւելի խոշոր է. մաքսիմումը 80,68% (անյայտ թաղ.), մինիմումը 0,33% (IV-րդ թաղամաս)։

Ինչ վերաբերում է 2-րդ տոկոսաշարքին, ուր ազգութիւնների (ինչպէս և հիմնարկութիւնների) բաւարարուած գումարների տոկոսներն են դասաւորուած ընդհանուր բաւարարուած գումարից, ապա այստեղ հայերի խոշոր տոկոսների հանդէպ սակաւ բացառութեամբ չքանում են մնացած կաթեգորիաների տոկոսները։ Միայն երկու վայրերում հայերի տոկոսները մնում են փոքրամասնութեան մէջ. IV-րդ թաղ. 25,64%-ով (յամենայն դէպս աւելի քան 1/4 մասով) և Բալախանիում 45,97%-ով (որ յարաբերաբար մեծամասնութիւն է կազմում)։ Մնացած տեղերում ամենափոքր տո-

կոսը համարւում է 57,66$^0/_0$ (III-րդ Թաղամաս)։ Ամենամեծ տոկոսը տալիս է հայկական ամենից շատ տուժած Թաղամասը՝ VIII-րդը՝ 95,02$^0/_0$-ով։ Միջին տոկոսը կամ հայերի բաւարարուԹիւն ստացած ամբողջ գումարի տոկոսը ընդհանուր գումարից հաւասար է 76,54$^0/_0$-ի[1])։ Երկու կարգի ընդհանուր գումարների՝ ներկայացրածի և բաւարարուածի մէջ հայերի տոկոսական բաժինները կրել են որոշ փոփոխուԹիւններ ամենագլխաւոր Թաղամասերում, ինչպէս ցոյց է տալիս հետևեալ համեմատուԹիւնը.

VI Թաղամաս		VII Թաղամաս		VIII Թաղամաս		IX Թաղամաս	
Ներկայաց. տոկոսը	Բաւար. տոկոսը	Ներկայաց. տոկոսը	Բաւար. տոկոսը	Ներկայաց. տոկոսը	Բաւար. տոկոսը	Ներկայաց. տոկոսը	Բաւարար. տոկոսը
78,59	78,72	92,34	94,89	94,71	95,02	93,00	93,02

Իսկ բոլոր Թաղամասերի միջին տոկոսը եղել է՝ ներկայացրած գումարինը 69,49$^0/_0$, իսկ բաւարարուած գումարինը 76,54$^0/_0$։ Ինչպէս տեսնում ենք, տոկոսական փոփոխուԹիւնը կատարուել է ոչ Թէ ի վնաս, այլ յօգուտ հայերի բաւարարուած գումարի։

Վերջինս աւելի մեծ տոկոս է տալիս ընդհանուր գումարի մէջ, քան հայերի ներկայացրած գումարն է տալիս. դա նշանակում է, որ միւս կաԹեգորիաների ներկայացրած գումարները աւելի շատ են կրճատուել եւ աւելի սակաւ են բաւարարուել, քան հայերի գումարները։

Միւս կաԹեգորիաներից յիշելու են ռուսներինը, հրէաներինը, որոնց բաւարարուած գումարի տոկոսը անցնում է կէսից միայն մի Թաղամասում՝ IV-րդ Թաղ. (64,41$^0/_0$). Մնացած տեղերում, բացառուԹեամբ III-րդ Թաղամասի, ուր նրանց տոկոսական բաժինը հասնում է 36,19$^0/_0$-ի, ռուսների տոկոսները համեստ չափերով են արտայայտւում, իջնելով մինչև 2,76$^0/_0$-ի (անյայտ փողոցներ)։ Ռուսների միջին տոկոսը կազմում է 8,25$^0/_0$, մինչդեռ ներկայացրած գումարի միջին տոկոսը եղել է 9,00$^0/_0$։

Ինչ վերաբերում է վրացիների և մուսուլմանների բաւարարուած գումարների տոկոսներին, ապա սրանք չնչին են. վրացիների մօտ ամենամեծ տոկոսը հասնում է 2,04$^0/_0$-ի, իսկ մուսուլմանների մօտ 3,29$^0/_0$-ի, երկուսն էլ միևնոյն IV-րդ Թաղամասում։ Նրանց մինիմում տոկոսները անյայտանալու չափ չնչին են. վրացիներինը 0,12$^0/_0$ (X-րդ Թաղամաս), կամ 0,36$^0/_0$, իսկ

[1]) Առաջին հայեացքից տարօրինակ է Թւում. Թէ ինչպէս ամենամեծ Թաղամասերում 90 և աւելի բարձր տոկոսներ ունեցող հայերի բաւարարուած գումարները տալիս են բոլոր Թաղամասերի կամ ամբողջ քաղաքի վերաբերեալ միայն 76,54$^0/_0$։ Այդ տարօրինակուԹիւնը վերանում է, եԹէ ի նկատի ունենանք հետևեալը։ Այսպէս անուանուած անյայտ փողոցների տակ հայերը չունեն գումարներ, մինչդեռ նրանց տոկոսը հանւում է այն ընդհանուր (բաւարարուած) գումարից, որի մէջ մտնում է 69,997,911 ր. գումարն անյայտ փողոցներից։ Առանց այդ գումարի հայերի բաւարարուած գումարի տոկոսը ընդհանուր բաւարարուած գումարից ոչ Թէ 76,54$^0/_0$ կլինի, այլ 86,80$^0/_0$, իսկ հայերի ներկայացրած գումարի տոկոսը ընդհանուր ներկայացրած գումարից ոչ Թէ կլինէր 69,49$^0/_0$, այլ 83,40$^0/_0$։

մուսուլմաններինը աւելի չնչին՝ 0,04$^0/_0$ (VIII-րդ թաղ.) կամ 0,06$^0/_0$ (X-րդ թաղ.)։ Նրանց միջին կամ ընդհանուր տոկոսն այսպէս է. վրացիների մօտ 0,67$^0/_0$, իսկ մուսուլմ. 0,37$^0/_0$։

Առանձնայատուկ կերպով են դասաւորուած հիմնարկութիւնների տոկոսները։ Շնորհիւ նրան, որ հիմնարկութիւնների գումարի մեծագոյն մասը յիշուած է անյայտ փողոցների տակ, այդ վայրի տոկոսական բաժինը ևս անսովոր բարձրութեան է հասնում—ոչ պակաս, քան 96,68$^0/_0$։ Մնացած վայրերից յիշելու է միայն Բալախանին, ուր հիմնարկութիւնների գումարի տոկոսական բաժինը կազմում է մօտ $^1/_3$ կամ 32,00$^0/_0$։ Մնացած տեղերում շատ չնչին են նրանց տոկոսները, որոնց մինիմումը իջնում է մինչև 0,26$^0/_0$։ Հիմնարկութիւնների գումարների միջին տոկոսը հասնում է 14,17$^0/_0$-ի, որը հայերի տոկոսից յետոյ երկրորդ տեղն է բռնում, թէև խիստ մեծ հեռաւորութեամբ։

Ի՞նչպէս են դասաւորուած 3-րդ շարքի տոկոսները։

Այդ շարքում դասաւորուած են բաւարարուած գումարների տոկոսները ներկայացրած գումարներից ըստ թաղամասերի և ազգութիւնների ու հիմնարկութիւնների։ Ի՞նչպէս են բաւարարուած զանազան թաղամասերի և ազգութիւնների գումարները։ Ահա ինչ է պարզում մեզ F աղիւսակի 3-րդ տոկոսաշարքը.

Տարբեր զետեղուած միջին տոկոսները տալիս են արդէն վերոյիշեալ հարցի ընդհանուր պատասխանը։

Ընդհանուր գումարի միջին տոկոսը հաւասար է 62,21$^0/_0$-ի, որից բարձր են կանգնած միայն հայերի (68,58$^0/_0$) և վրացիների (66,00$^0/_0$) գումարների տոկոսները։ Մնացած կաթեգորիաների տոկոսները կանգնած են ցածր։ Մուսուլմանների (36,42$^0/_0$) և հիմնարկութիւնների (43,56$^0/_0$) մօտ տոկոսները իջնում են անգամ կէսից։ Հայերի սիւնակում չկայ մի թաղամաս, որի բաւարարուած գումարը իջնէ կէսից կամ, ուրիշ խօսքով, որի ներկայացրած գումարը կրճատուած լինէր կէսից աւելի կամ անգամ կիսով չափ։ Հակառակ պատկերն ենք գտնում միւս կաթեգորիաների մօտ։

Ընդհանուր գումարի սիւնակում, անյայտ փողոցների գումարը բաւարարուած է միայն 44$^0/_0$-ով, ուրիշ խօսքով կրճատուած է 56$^0/_0$-ով։ Հայերի սիւնակում բաւարարուած գումարի ամենանուազ տոկոսը հաւասար է 51,38$^0/_0$-ի (IV-րդ թաղամասում)։ Ամենախոշոր գումար ներկայացրել է հայկական թաղամասը՝ VIII-րդը և բաւարարութիւն է ստացել 75,09$^0/_0$-ով, ասել է՝ կրճատուել է նրա գումարի մօտ $^1/_4$ մասը միայն։ Յաջորդ մեծ թաղամասի՝ IX-ի, բաւարարուած տոկոսը հաւասար է 69,50-ի, իսկ VII-րդ թաղամասինը 65,07$^0/_0$-ի։ Հայերի ամենամեծ բաւարարուած տոկոսը հասնում է 77,07$^0/_0$ ի (Բալախանիում)։

Այլ են տոկոսական յարաբերութիւնները միւս կաթեգորիաների մօտ։ Օրինակ, ռուսների և այլոց սիւնակում ամենանուազ բաւարարուած գումարի տոկոսը իջնում է մինչև 29,39$^0/_0$-ի (V-րդ թաղամաս), ասել է՝ այդ թաղամասից ներկայացրած ռուսների և այլոց գումարները ընդհանուր առմամբ կրճատուել են 70,61$^0/_0$-ով։ Այնուհետև VII-րդ թաղամասում ևս ռուսների գումարը բաւարարուած է կէսից աւելի պակաս տոկոսով, այն է

43,44$^0/_0$-ով։ Ամենամեծ տոկոսը ռուսների մօտ հասնում է 75,71$^0/_0$-ի (IX-րդ թաղամաս) կամ 75,47$^0/_0$-ի (I-ին թաղամաս)։

Վրացիների սինակում միայն մի թաղամասում (II-րդում) բաւարարուած գումարի տոկոսը իջնում է կէսից և հասնում 42,50 ի։ Մնացած տեղերում կէսից բարձր են տոկոսները. իսկ մի տեղ՝ Բալախանիում, որտեղից շատ չնչին գումար են ներկայացրել վրացիները, նրանց բաւարարուած տոկոսը արտայայտւում է շատ բարձր նորմայով՝ 96,07-ով։

Շատ աւելի մեծ չափերով է կրճատուած և նուազ բաւարարութիւն տրուած մուսուլմանների ներկայացրած գումարներին։ Ամենամեծ գումարը ներկայացրել են մուսուլմանները IV-րդ թաղամասից և ամենախիստ կրճատման ենթարկուել է. և ամենանուազ բաւարարութիւն ստացել է հէնց այդ թաղամասի գումարը, այն է ընդամենը 9,34$^0/_0$-ով (նշանակում է կրճատուել է 90,66$^0/_0$-ով)։ Դա անօրինակ մի կրճատում էր։ Եւ այդ փաստը ցոյց է տալիս, թէ որքան անտեղի փչուածներ և կեղծ գումարներ են ներկայացրել մուսուլմանները։ Երկրորդ մեծ գումարը, որ ներկայացրել են մուսուլմանները, եղել է V-րդ թաղամասից, որը դարձեալ բաւարարուել է նուազ տոկոսով, այն է 38,08$^0/_0$-ով։ Այնուհետև յաջորդում է III-րդ թաղամասը 43,08$^0/_0$-ով։ Նրանց բաւարարուած գումարի մ քսիմում տոկոսը հասնում է 81,55-ի (I-ին թաղամաս), բայց մի այնպիսի վայրում, որտեղից մուսուլմանները ամենաչնչին գումարներից մէկն են ներկայացրել (48,694 րուբլուց բաւարարուած է 39,710 րուբլի)։

Նոյնքան մեծ խուզումների են ենթարկուել հիմնարկութիւնների ներկայացրած գումարները։ Ոչ պակաս, քան չորս վայրերում նրանց գումարները ստացել են կէսից պակաս բաւարարութիւն. V-րդ թաղ. 16,19$^0/_0$-ով, VII-րդ թաղ. 32,16$^0/_0$-ով, անյայտ փողոցներում 43,42$^0/_0$-ով և I-ին թաղ. 47,77$^0/_0$-ով։ Մնացած տեղերում բաւարարութիւնը արտայայտւում է կէսից բարձր տոկոսներով։ Իսկ III-րդ թաղ. հիմնարկութիւնների գումարի բաւարարութիւնը հասնում է մինչև այժմ չեղած տոկոսական բարձրութեան, այն է 98,12$^0/_0$-ի։ Բայց դա ամենափոքր գումարն է (298,605 րուբլուց բաւարարուած է 293,000 ր.), որ հիմնարկութիւնները ներկայացրել են որևէ թաղամասում։ Թւապէս ամենամեծ կրճատման ենթարկուել է հիմնարկութիւնների ներկայացրած ամենախոշոր գումարը անյայտ փողոցներից (155,840,479 րուբլուց բաւարարած է միայն 67,679,965 րուբլի կամ 43,42$^0/_0$)։

XVI ԳԼՈՒԽ

ՄԵՐԺՈՒԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Մերժուած գումարների էութեան մասին մենք տուել ենք արդէն հարկաւոր բացատրութիւնները ընդհանուր դիտողութիւնների բաժնում։ Այստեղ մեզ մնում է միայն պարզել մերժուած գումարների թւական մեծութիւնը։

Մերժուած ցուցակների ընդհանուր թիւն է, ինչպէս մենք գիտենք, 498

հաս, որոնց մէջ պարունակած գումարը հաւասար է 92,563,238 ր., իսկ միջին թւով իւրաքանչիւր ցուցակին գալիս է 185,870 րուբլի։ Վերածելով յիշեալ գումարը ըստ ազգութիւնների, ստանում ենք մենք հետեւեալ դասաւորութիւնը.

Մերժուած գումարները բացարձակ տուեալներով				
Հայերի գումար.	*Ռուսների և այլոց գումար.*	*Վրացիների գումար.*	*Մուսուլմանների գումար.*	*Հիմնարկութ. գումար.*
19 818,009	8,396,906	299,496	1,938,725	62,110,102
21,30%	9,07%	0,32%	2,09%	67,10%

Մերժուած գումարները միջին թւով				
Հայերինը	*Ռուսներինը*	*Վրացիներինը*	*Մուսուլման.*	*Հիմնարկութ.*
65,841	72,387	24,958	121,170	1,171,813

Ինչպէս տեսնում ենք, մերժուած գումարների մեծագոյն մասը կամ 67,10% պատկանում են հիմնարկութիւններին։ Հայերի մերժուած գումարների տոկոսը աւելի քան համեստ է, ի նկատի ունենալով մանաւանդ ցուցակների այն մեծ քանակը և խոշոր գումարները, որ հայերը ներկայացրել են։ Որքան ներկայացրած և բաւարարուած գումարների մէջ գերազանցում է հայերի տոկոսական մասնակցութիւնը միւսներից, այնքան մօտաւորապէս նրանք զիջում են իրանց տեղը ուրիշներին մերժուած գումարների նկատմամբ։ Մնացած կաթեգորիաները՝ ռուսները, մուսուլմանները, բացի վրացիներից, տալիս են այստեղ աւելի մեծ տոկոսներ, քան բաւարարուած գումարների մէջ։ Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած մերժուած գումարները ըստ թաղամասերի։

(Տես G աղիւսակը հետեւեալ երեսում)

Ե. ԱՂԻՒՍԱԿ

Մերժուած գումարները ըստ քաղաքմասերի

Քաղաքմասեր	Մերժուած բացարձակ գումարները						Իւրաքանչիւր ցուցակին գալիս է միջին թւով					
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	Ընդհանուր գումարները	Հայերի գումարները	Ռուսների և այլոց գում.	Վրացիների գումարները	Մուսուլմ. գումարները	Հիմնարկ. գումարները	Ընդհանուրին	Հայկականին	Ռուսներին և այլոց	Վրացականին	Մուսուլմաններին	Հիմնարկութիւններին
I Քաղամ.	1260860	1019380	12887	—	1580	227013	21370	19990	4296	—	1580	56753
II »	1190346	1017346	52010	2970	11444	106576	45782	59849	13003	2970	11444	35526
III »	591441	438003	112378	—	41060	—	29572	34155	22476	—	20530	—
IV »	2032856	256739	203516	4600	1516000	52001	67762	16044	25440	1550	758000	52001
V »	14526462	1713834	4081908	37055	239860	8453805	234300	17410	156997	37055	47972	1408968
VI »	4175678	2610034	1104910	113102	33000	314632	101846	100386	110491	56551	33000	157314
VII »	6478585	4113118	1213082	78784	10497	1063104	144000	152338	86649	78784	10497	531552
VIII »	5100375	4603802	314569	25685	5784	150535	92728	109615	39322	25685	5784	50179
IX »	3596117	3312607	157013	18820	14160	93517	47317	51760	26167	18820	14160	23380
X »	643773	399045	224992	—	—	19736	19508	26603	13235	—		19736
Բալախանի	2203034	334101	887250	—	65340	916343	71066	55684	63375	—	65340	91635
Անյայտ փող.	50763711	—	32391	18480	—	50712840	2538185	—	32391	9240	—	2583109
Ընդամենը	92563238	19818009	8396906	299496	1938725	62110102	185870	65841	72387	24958	121470	1171813

Ց աղիւսակի մէջ իսկոյն աչքի է զարնում այն մերժուած հսկայական գումարը, որ ներկայացրել են հիմնարկութիւնները «անյայտ փողոցներից»։ Մենք տեսանք, որ նոյն հիմնարկութիւնների ներկայացրած աւելի մեծ գումար՝ դարձեալ անյայտ փողոցներից, կրճատուել կամ անբաւարար է թողնուել վերաստուգիչ յանձնաժողովի կողմից։ Մնացած թաղամասերի մէջ աչքի է ընկնում V-րդը, որտեղից ներկայացրած գումարներից մերժուել է 14,526,462 րուբլի, որը միջին թւով տալիս է 234 300 րուբլի։ Այդ թաղամասը իր կրած զոհերի քանակով և նիւթական վնասներով երկրորդական վայրերի շարքին է պատկանում։ Բայց նրա ներկայացրած գումարները ամենամեծ չափով կրճատուել և մերժուել են։ Ներկայ աղիւսակում V-րդ թաղամասի մերժուած գումարի ամենամեծ մասը (8,453,805 րուբլի) ընկնում է դարձեալ հիմնարկութիւնների վրայ, մնացածից 4,081,908 րուբլի՝ ռուսների և այլոց վրայ, 1.713,834 րուբլի հայերի վրայ, մնացորդը միւս կաթեգորիաների վրայ։ VIII-րդ թաղամասը, ամենամեծ և ամենից շատ տուժած թաղամասը, իր մերժուած գումարներով բռնում է միայն չորրորդ տեղը։ Հայերի մերժուած գումարների մաքսիմումը՝ 4,60[illegible],802 րուբլով, հասնում է հէնց այդ թաղամասում, իսկ մինիմումը իջնում է մինչև 256,739 րուբլին IV-րդ թաղամասում։ Միջին թւով (իւրաքանչիւր ցուցակի վրայ) վերցրած, ընդհակառակը, մաքսիմումը տալիս է VII-րդ թաղամասը իր 152 338 րուբլով, իսկ մինիմումը IV-րդ թաղամասը իր 16,044 րուբլով։ Ընդհանուր գումարի (1-ին սիւնակ) մաքսիմումը, ընդհակառակը, հասնում է (մի կողմ թողնելով անյայտ փողոցները) 14,526,462 րուբլու V-րդ թաղամասում, մինիմումը 591,441 րուբլու III-րդ թաղամասում, իսկ միջին թւով վերցրած (սիւնակ 7-րդ) ընդհանուր գումարի մաքսիմումը տալիս է նոյն V-րդ թաղամասը, իսկ մինիմումը X րդ թաղամասը (19,508 ր.)։

Մենք մինչև այժմ սովոր էինք տեսնել ներկայացրած և բաւարարուած գումարների մասին խօսելու ժամանակ, որ ընդհանուր գումարների չափին ու բովանդակութեան տոն տուողը, մաքսիմումն ու մինիմումը որոշողը եղել են հայերի վնասների գումարները, որոնք իրանց ամբողջութեամբ կազմում են մօտ 80% ընդհանուրի մէջ։ Վերոյիշեալ աղիւսակում, այսպէս անուանուած մերժուած գումարների ցանկում, հայերը տեղի են տուել իրանց աննախանձելի առաջնութիւնը միւս կաթեգորիային՝ հիմնարկութիւններին, որոնց ներկայացրած գումարներից այնքան մեծ քանակով և՛ կրճատուել և՛ մանաւանդ մերժուել են։ Մերժուած գումարների մէջ արդէն հայերի բաժինը իջնում է մինչև 20%, իսկ հիմնարկութիւններինը անցնում է 60%-ից էլ աւելի։ Հիմնարկութիւնները չունեն ուրիշ որևէ թաղամասից ներկայացրած և մերժուած պատկառելի գումար, բացի միայն V-րդից, որի մերժուած բացարձակ գումարը հաւասար է 8,453,805 րուբլու (6-րդ սիւնակ), իսկ միջին գումարը 1,408 968 րուբլու (12-րդ սիւնակ), և ապա, ինչպէս գիտենք, անյայտ փողոցներից, որոնց մերժուած բացարձակ գումարը հասնում է 50,712,840 րուբլու, իսկ միջին գումարը 2,983,109 րուբլու։

Ինչ վերաբերում է միւս կաթեգորիաներին, առանձնապէս աչքի է ընկնում ռուսների մերժուած գումարը V րդ թաղամասում, 4,081,908 րուբլի, իսկ միջին գումարը 156,997 ր.։ Դա նրանց մերժուած գումարների

մաքսիմումն է երկու շարքերում։ Ընդհակառակը, ամենից նուազ չափերով մերժուել է նրանց գումարը I-ին թաղամասում, ընդամենը 12,887 ր., իսկ միջին գումարը 4,296 րուբլի. դա նրանց մերժուած գումարների մինիմումն է միևնոյն թաղամասում և երկու շարքերում։

Վրացիների մերժուած գումարների ընդհանուր քանակը հասնում է 299,496 րուբլու, իսկ միջին գումարը 24 958 ր.։ Դրանք ամենափոքր թուերն են բոլոր կաթեգորիաների մէջ, թէև յարաբերաբար վերցրած նրանց ներկայացրած փչանների նկատմամբ, վրացիների մերժուած գումարները աւելի խոշոր տոկոս են կազմում, քան հայերինը։ Վրացիների մերժուած գումարների ամենամեծ բաժինը ընկնում է VI-րդ թաղամասի վրայ 113,102 րուբլով (5-րդ սիւնակ), իսկ միջին գումարների մէջ ամենամեծ մասը գտնում ենք VII-րդ թաղամասում (78,784 րուբլի)։

Ինչ վերաբերում է մուսուլմաններին, նրանց ինչպէս կրճատուած գումարներն էին, նոյն և մերժուածները անհամաչափ են փչանների համար նրանց կողմից ներկայացրած ընդհանուր գումարին. նրանց մերժուած գումարների ընդհանուր թիւը հասնում է 1,938,725 րուբլու (միջին գումարը 121,170 ր.), մի գումար, որ կազմում է ոչ պակաս քան 23,75% մուսուլմանների «կրած» և ներկայացրած փչանների բոլոր գումարների։ Իսկ հայերի մերժուած գումարները կազմում են միայն 2,91% ներկայացրած փչանների բոլոր գումարների։ Կրճատուած գումարների նկատմամբ ևս մենք ցոյց տուինք նման մի յարաբերութիւն. հայերի ներկայացրած գումարը կըրճատուել է 31,42%-ով (կամ բաւարարուել է 68,58%-ով), իսկ մուսուլմաններինը կրճատուել է 63,58%-ով (կամ բաւարարուել է 36,42%-ով)։ Մուսուլմանների մերժուած գումարների մաքսիմումը եղել է ճիշտ այն թաղամասում (IV-րդում), ուր ամենամեծ չափով կրճատուել են նաև նրանց ներկայացրած գումարները։

Այդպէս ուրեմն, որքան էլ թերութիւններից զերծ եղած չլինի վերստուգիչ յանձնաժողովը՝ իր գործելակերպով, այնուամենայնիւ նրան յաջողուել է, ակնյայտօրէն, բաց անել շատ կոպիտ կեղծիքներ, մտացածին փչանների չինծու գումարներ և անթոյլատրելի չափազանցութիւններ. մի շարք փաստեր, որ ամենամեծ չափով նկատուել և բացուել են մուսուլմանների ներկայացրած ցուցակների և գումարների մէջ։

Այժմ տեսնենք, թէ ինչպէս են դասաւորուած մերժուած գումարների տոկոսական յարաբերութիւնները։

(Տես II աղիւսակը հետևեալ երեսում)

H. ԱՂԻՒՍԱԿ

Մեծուած գումարների տոկոսներ ըստ թաղամասերի

Թաղամասեր	Թաղամասերի մեծուած գումարների տոկոսներ ամբողջից (հսօգից)						Ազգութիւններին մեծուած գումարների տոկոսներ ընդհանուր մեծուած գումարից ըստ թաղամասերի					
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	Ընդհանուր ազգը	Հայկազեան	Ռուսները և այլ ազգ	Վրացիները ազգը	Մուսուլմաններ	Հիմնարկութիւններ	Հայկազեան	Ռուսները և այլ ազգ	Վրացիները ազգը	Մուսուլմաններ	Հիմնարկութիւններ	Միասին
I Թաղամ.	1,36	5,14	0,15	—	0,08	0,36	80,84	1,03	—	0,12	18,01	100,00
II „	1,28	5,13	0,61	0,99	0,59	0,17	85,46	4,36	0,24	0,96	8,96	99,98
III „	0,64	2,31	1,33	—	2,11	—	74,05	19,01		6,94	—	100,00
IV „	2,19	1,29	2,42	1,53	78,19	0,08	12,63	10,01	0,22	74,58	2,56	99,97
V „	15,69	8,64	48,60	12,37	12,37	13,60	11,79	28,09	0,25	1,66	58,19	99,98
VI „	4,51	13,10	13,15	37,76	1,70	0,50	62,50	26,46	2,71	0,79	7,54	100,00
VII „	6,99	20,75	15,63	26 31	0,54	1,71	63,47	18,72	1,22	0,16	16,41	99,98
VIII „	5,52	23,12	3,74	8,57	0,29	0,24	90,26	6,16	0,51	0,12	2,95	100,00
IX „	3,88	16,71	1,36	6,28	0,73	0,15	92,12	4,36	0,52	0,39	2,61	100,00
X „	0,69	2,10	2,67	—	—	0,02	61,99	34,95	—	—	3,06	100,00
Բալախանի	2,38	1,68	10,56	—	3,37	1,46	15,17	40,28	—	2,93	41,59	99,97
Այլայլ փող.	54,85	—	0,38	6,18	—	81,64	—	0,07	0,04	—	99,89	100,00
Ընդամենը	99,98	99,97	100,00	99,99	99,97	100,02	21,30	9,08	0,32	2,09	67,21	100,00

H աղիւսակը իր տոկոսներով աւելի է պարզում G աղիւսակի թուական յարաբերութիւնները. այդ տեսակէտից երկար բացատրութիւնների կարիք չունի նա այստեղ:

Առաջին տողաշարքում զետեղուած են թաղամասերի մերժուած գումարների տոկոսները ամեն մի կաթեգորիայի գումարների ամբողջութիւնից: Ընդհանուր գումարի սիւնակում (I-ին սիւն.) ամենամեծ տոկոսը, ինչ ասել կուզի, տալիս են անյայտ փողոցները՝ 54,85$^{0}/_{0}$-ով. բոլոր մերժուած գումարների ամբողջի ամենամեծ մասը, ինչպէս տեսնում ենք, տալիս են իրենք անյայտ փողոցները: Միւս տոկոսները նոյն սիւնակում չընչին տեղ են բռնում, բացի V-րդ թաղամասից, որի մերժուած գումարի տոկոսը հաւասար է 15,69$^{0}/_{0}$-ի: Ամենանուազ տոկոսը մերժուած գումարի տալիս է III-րդ թաղամասը:

Հայերի սիւնակում (2-րդ սիւն.) արդէն տոկոսի մաքսիմումը տալիս է դարձեալ այն վայրը, որը ամեն բանի մէջ՝ հայկական զոհերի ու վնասների բոլոր տեսակէտների նկատմամբ, մեծամասնութիւն է կազմում. դա VIII-րդ թաղամասն է, որի տոկոսը մերժուած գումարների ամբողջութեան (հայերի) մէջ հաւասար է 23,12$^{0}/_{0}$-ի. Նրան յաջորդում է VII-րդ թաղամասը 20,75$^{0}/_{0}$-ով, ապա IX-րդ թաղամասը 16,71$^{0}/_{0}$-ով և VI-րդ թաղամասը 13,06$^{0}/_{0}$-ով: Մնացած թաղամասերում տոկոսները իջնում են տասից և հասնում մինիմումի՝ 1,29$^{0}/_{0}$-ի: Հայերի տոկոսների մէջ նկատւում է մի համաչափութիւն, որ չենք գտնում ոչ ընդհանուր գումարի և ոչ մնացած կաթեգորիաների սիւնակներում:

Այսպէս, օրինակ, ռուսների և այլոց սիւնակում (3-րդ սիւն.) մերժուած գումարների մաքսիմում տոկոսը ամբողջից հասնում է 48,61$^{0}/_{0}$-ի՝ V-րդ թաղամասում, իսկ մինիմումը 0,15$^{0}/_{0}$-ի I-ին թաղամասում: Վրացիների սիւնակում (4-րդ) համեմատաբար մեղմ են արտայայտւում այդ երկու ծայրերը—37,76$^{0}/_{0}$ VI-րդ թաղ. և 0,99$^{0}/_{0}$ II-րդ թաղամասում.—բայց և այնպէս աւելի մեծ տարբերութեամբ, քան հայերի մօտ գտանք: Մուսուլմանների սիւնակում արդէն այդ ծայրայեղ բևեռները տոկոսական մաքսիմումի և մինիմումի աւելի են իրարից հեռանում—78,19$^{0}/_{0}$ IV-րդ թաղամասում և 0,08$^{0}/_{0}$ I-ին թաղ.: Իսկ հիմնարկութիւնների սիւնակում մաքսիմում տոկոսը աւելի խոշոր չափերի է հասնում—81,64$^{0}/_{0}$ անյայտ փողոցներում, իսկ մինիմումը իջնում է մինչև այն տոկոսը, ինչ մուսուլմանների մօտ էր—0,08$^{0}/_{0}$ (IV-րդ թաղամաս):

Այլ կերպ են դասաւորուած տոկոսները երկրորդ շարքում: Այստեղ բերուած են բոլոր կաթեգորիաների (ազգութիւնների և հիմնարկութիւնների) մերժուած գումարների տոկոսները ընդհանուր մերժուած գումարներից տուեալ թաղամասերում:

Առաջին հայեացքից խաբուսիկ տպաւորութիւն է թողնում այդ տողաշարքը: Այսպէս, օրինակ, հայերի սիւնակում (7-րդ) յայտնի թաղամասերում, բոլորի մէջ, բացի երեքից, մերժուած գումարների տոկոսները (մերժուած ընդհանուր գումարներից նոյն թաղամասերում) հասնում են 60,90 և աւելի տոկոսների և յանկարծ «ընդամենի» տակ, իտօգում, հայերի մերժուած ամբողջ գումարի տոկոսը կազմում է միայն 21,30$^{0}/_{0}$: Փաստի

խաբուսիկ կողմը կայանում է նրանում, որ մերժուած ընդհանուր գումարների մէջ, ինչպէս մի տեղ ևս շեշտել ենք, «անյայտ փողոցները» տալիս են խոշորագոյն մասը, իսկ հայերը չունեն «անյայտ փողոցներից» առհասարակ ներկայացրած կամ մերժուած գումարներ, ուստի հայերի մերժուած գումարները կազմելով մեծամասնութիւն առանձին-առանձին թաղամասերում (բացի IV-րդ, V-րդ թաղամասերից և Բալախանուց), միաժամանակ նրանց ամբողջութիւնը $^1/_5$ *մասը կազմելու չափ համեստ տոկոս ունի* (21,30$^0/_0$) *ընդհանուր իտոգում, ուր «անյայտ փողոցների» մերժուած գումարն է գերազանցում բոլորից։*

Ճիշտ հակառակ պատկերն ենք գտնում միւս բևեռում՝ հիմնարկութիւնների սիւնակում (12-րդ), որի մասին տուած բացատրութիւնները աւելի կպարզեն մեր միտքը։ Այստեղ բացի երկու վայրից՝ V-րդ թաղամասից 58,19$^0/_0$*-ով և մասամբ Բալախանուց 41,59*$^0/_0$*-ով, մնացած բոլոր թաղամասերը տալիս են մերժուած գումարների չնչին տոկոսներ։ Բայց որովհետև «անյայտ փողոցներում» հիմնարկութիւնների մասնակցութիւնը մերժուած գումարների մէջ առիւծի բաժնի է հասնում, արտայայտուելով 99,89*$^0/_0$*-ով—մինչև այստեղ անօրինակ մի տոկոսով—ուստի հիմնարկութիւնների միջին տոկոսը ընդհանուր իտոգում հասնում է 67,20*$^0/_0$*-ի, այսինքն մի տոկոսի, որը աւելի քան երեք անգամ աւելի է հայերի միջին տոկոսից (21,30*$^0/_0$*)։*

Միւս կաթեգորիաները իրանց ընդհանրապէս նուազ տոկոսներով առանձին բացատրութիւնների կարիք չեն զգում։ Ուշադրութեան արժանի է միայն այն փաստը, որ մուսուլմանների մերժուած գումարները, ունենալով բոլոր թաղամասերում չնչին տոկոսներ, IV-րդ թաղ. նրանց բաժինը հասնում է խոշոր տոկոսի՝ 74,57$^0/_0$*-ի, և ապա այն, որ մուսուլմանների տոկոսական մասնակցութիւնը մերժուած գումարների իտոգում անհամեմատ աւելի մեծ է՝ 2,09*$^0/_0$*, քան ներկայացրած և մանաւանդ բաւարարուած գումարների իտոգումն է եղել (0,63*$^0/_0$ *և 0,37*$^0/_0$*)։*

Դրանով կրկին անգամ հաստատուում է այն փաստը, թէ որքան կեղծ, չապացուցուած վնասների ցուցակներ են ներկայացրել մուսուլմանները։

XVII. ԳԼՈՒԽ

ԹԱԼԱՆՈՒԱԾ ԵՒ ՉԹԱԼԱՆՈՒԱԾ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՒԸ

Մենք անցնում ենք այժմ երևոյթի մի այլ հետաքրքրական կողմի լուսաբանութեան։

Մենք երկար խօսեցինք տուժած ժողովրդի վնասների չափի մասին, նրա ներկայացրած ցուցակների և գումարների, ստացած բաւարարումների, ինչպէս և մերժուած գումարների մասին. խօսեցինք տեղի ունեցած թալանի, կողոպուտի, տնտեսական անհուլի աւերումների ծաւալի մասին։ Այժմ մեր ուշադրութիւնը գրաւում է մի այլ, նոյնքան նշանակալից հարց. եղե՞լ են արդեօք հայ ընտանիքներ, որոնք զերծ մնացած լինէին թալանից,

որոնց շօշափած, դիպած չլինի նիւթական կործանարար հարուածներ պատճառող բարբարոս ձեռքը[1]*։*

Այստեղ ամենից առաջ մի հարց է ծագում. ինչպէս է պատահել, արդեօք, որ ընտանիքներ և բնակարաններ ազատուել են թալանից երեք օր ու գիշեր կողոպուտի ենթակայ մի քաղաքում բազմաթիւ ու բազմազան, անխնայ ու սանձակոծ բանդաների կատաղած արշաւի առաջ։ Մենք մի տեղ, այլ կապակցութեան մէջ, առիթ ենք ունեցել շեշտելու, որ եթէ եղել են հայկական բնակարաններ, ուր ոտք չեն դրել տաճիկն ու թաթարը, ապա այդ «հրաշքով» փրկութիւնը եղել է պատահականութեամբ, թիւրիմացութեամբ—անուանեցէք ինչպէս ուզում էք,—յամենայն դէպս մի շարք կողմնակի պատճառների և օբյեկտիւ պայմանների շնորհիւ։

Երկրորդ, պէտք է այստեղ աւելացնենք, որ մեր տեղեկութիւնները, չթալանուած ընտանիքների կամ բնակարանների մասին, վերաբերում են այնպիսիներին, որոնք բոլորովին անձեռնմխելի են մնացել։ Չթալանուածների շարքում չեն ցուցակագրուած այնպիսիները, որոնք կողոպուտի, յամենայն դէպս, ենթարկուել են այսպէս անուանուած միայն թեթեւակի, «երեսանց», ոչ հիմնապէս ու արմատապէս։

Տեսնենք այժմ, թէ ինչ թուական յարաբերութիւններ են ներկայացնում չթալանուած ընտանիքները ըստ թաղամասերի. դա տեսնում ենք մենք հետեւեալ աղիւսակից.

I. ԱՂԻՒՍԱԿ

Չթալանուած հայ ընտանիքները ըստ թաղամասերի

Թաղամաս.	*Բոլոր հայ ընտանիքների թիւը*	*Չթալանուած հայ ընտանիքն. թիւը*	*Թալանուած ընտանիքների տոկոսը*	*Չթալանուած ընտանիքն. տոկոսը*
I *թաղ.*	—	—	—	—
II „	6	2	66,67	33,33
III „	214	21	90.15	9,85
IV „	414	40	90,34	9,66
V „	570	133	76,67	23,33
VI „	1405	125	91,11	8,89
VII „	2237	312	86,06	13,94
VIII „	3900	139	96,44	3,56
IX „	2800	133	95,25	4,75
X „	—	—	—	—
Ընդամենը	**11546**	**905**	**92,17**	**7,83**

[1] *Այստեղ խօսքը վերաբերում է, անշուշտ, միայն հայերին։ Այդ տեղեկութիւնները հաւաքուած են մեր անկետային հարցաթերթերով և ոչ մի կապ չունեն դաշնակից պետութիւնների վերստուգիչ յանձնաժողովի հետ, որին չեն զբաղեցրել և չէին էլ կարող զբա-*

Ըստ այս աղիւսակի բոլոր հայ ընտանիքների թիւը հասնում է 11,546-ի, որոնցից չեն կողոպտուել միայն 905 ընտանիք կամ ամբողջի 7,83%։ Նախ և առաջ ընտանիքների թիւը, նոյնիսկ ութ թաղամասերի վերաբերեալ, բաւականին թերի է ցուցակագրուած. II-րդ թաղ. ցուցակագրուած է միայն 6 ընտանիք։ Մենք գիտենք արդէն աշխատութեանս առաջին մասից, որ ողջ Բագւում հայ ընտանիքների թիւը անցնում էր 22,000-ից, ասել է երկու անգամ աւելի մեր վերոյիշեալ թուից։

Դառնալով I աղիւսակին, մենք տեսնում ենք, թէ ինչպիսի խոշոր չափերով են կողոպուտի ենթարկուել հայ բնակիչները մանաւանդ հայկական ամենամեծ թաղամասերում—VIII-րդում և IX-րդում։ 3,900 ընտանիքից զերծ են մնացել թալանից միայն 139 ընտ. կամ 3,56%. դա չթալանուածների ամենանուազ տոկոսն է ամբողջ աղիւսակում։ Կամ IX-րդ թաղամասում 2,800 ընտանիքից զերծ են մնացել թալանից միայն 133 ընտանիք կամ 4,75%։ Չթալանուածների ամենամեծ տոկոսը տալիս է II-րդ թաղամասը՝ 33,33%, այնուհետև աչքի է ընկնում V-րդ թաղ. իր թալանից փրկուածների 23,33%-ով, որոշ չափով նաև VII-րդ թաղ. 13,94%-ով, վերջինում չթալանուած ընտանիքների բացարձակ թիւը (312 ընտ.) գերազանցում է միւսներից քանակով, բռնելով առաջին տեղը։ Երկու թաղամասեր՝ III-րդը և IV-րդը, ենթարկուել են հաւասար վիճակի. առաջինի մէջ չկողոպտուած ընտանիքների տոկոսը հաւասար է 9,85%-ի, իսկ երկրորդի մէջ 9,66%-ի։ Միջին տոկոսը մենք կարող ենք համարել ողջ քաղաքի թալանուած հայ բնակչութեան մօտաւոր պատկերը. ամբողջ Բագւում հայ ազգաբնակութեան 92,17%-ը թալանուել, կողոպտուել է, նիւթական հարուածների դառն բաժակից ճաշակել է, իսկ փրկուած «բաղդաւորների» թիւը հասնում է մինչև 7,83%-ի [1])։

Թալանուածների և չթալանուածների թուական յարաբերութիւնները մեզ համար աւելի կպարզուեն, եթէ պատկերացնենք նրանց փողոցներով. հետևեալ աղիւսակը տալիս է մեզ աւելի մօտ գաղափար այդ յարաբերութիւնների մասին։

դեցնել նման հարցեր։ Մեր վերստուգիչ աշխատանքի ժամանակ մենք լրացուցիչ հարցեր էինք աւելացրել թերթիկների վրայ այս իմաստով. «քանի՞ հայ ընտանիք կամ բնակարան իւրաքանչիւր բակում. քանիսն են նրանցից թալանուած և քանիսը չթալանուած»։ Պէտք է ասել, որ մեր ստացած տեղեկութիւնները լրիւ չեն գլխաւորապէս այն պատճառով, որ դրանց մէջ չեն մտնում ոչ արուարձանները և ոչ էլ մի շարք երկրորդական, սակաւահայ փողոցներ։ Բայց շնորհիւ այն հանգամանքի, որ տեղեկութիւններ հաւաքուած են ամբողջ 60 փողոցներից, որոնց մէջ մտնում են բոլոր յայտնի և հայաշատ փողոցները, ուստի կարողանում ենք մօտաւոր գաղափար կազմել առհասարակ Բագուի հայ բնակչութեան թալանուած և չթալանուած հատուածների թուական յարաբերութիւնների մասին։

[1]) Հարկ ենք համարում աւելացնել, որ եթէ այդ «բաղդաւորների» գոյքը ազատուել է այսպէս կոչուած տարկայական թալանից, ապա նրանցից շատերը տուժել են գրպանով։ Նրանք հարկադրուած են եղել փրկանք վճարել կամ դրամագանին և կամ տասը հարևաններին փող հատուցանել իրանց անձը և գոյքը որևէ կերպ փրկելու համար։

Յ. ԱՂԻՒՍԱԿ

Չթալանուած հայ ընտանիքների թիւը ըստ փողոցների

№№	Փ ո ղ ո ց ն ե ր	Բոլոր հայ ընտանիք-ների թիւը	Չթալա-նուած ընտ. թիւը	Թալանուած ընտանիքն. տոկոսը	Չթալա-նուած ընտ. տոկոսը
1	Աղիատոկի փողոց . . .	12	4	66,67	33,33
2	Արմեանոկի „ . . .	17	1	94,12	5,88
3	Բալախանոկի փ. և շոսէ.	568	93	86,00	14,00
4	Բիրժևոյ փողոց	237	74	68,78	31,22
5	Բոգարնի „	183	21	88,52	11,48
6	Բոլշոյ Մորսկոյ փողոց. .	361	35	90,31	9,69
7	Բարեատինսկի „ . .	25	10	60,00	40,00
8	Բուդագովսկի „ . .	471	59	87,47	12,53
9	Գիմնազիչեսկի „ . .	115	10	91,40	8,60
10	Գորչակովսկի „ . .	17	12	29,42	70,58
11	Գոգոլևսկի „ . .	75	15	80,00	20,00
12	Գուբերնսկի „ . .	21	—	100,00	
13	Եարմորոչնի „ . .	20	2	90,00	10,00
14	Զավոկզալնի փողոց I-ին .	66	1	98,49	1,51
15	„ „ II .	476		100,00	—
16	„ „ III .	31	—	100.00	—
17	„ „ IV .	357	1	99,72	0,28
18	„ „ V .	65	1	98,47	1,53
19	„ „ VI .	120	2	98,39	1,61
20	„ „ VII .	10	—	100,00	—
21	„ „ VIII .	92	3	96,74	3,26
22	Խարանտիննի փողոց . .	26	3	88,46	11,54
23	Կամենիստի „ . .	42	6	85,70	14,30
24	Կրասնովոդսկի „ . .	101	40	61,40	38,30
25	Կոլիւբակինսկի „ . .	21	4	80,96	19,04
26	Կուզնեչնի „ . .	23	1	95,65	4,35
27	Կանիտապ. փ. I-ին . .	792	11	98,63	1,37
28	„ „ II . .	236	37	84,33	15,67
29	„ „ III . .	271	2	99,27	0,73
30	„ „ IV . .	469	13	97,23	2,77
31	„ „ V . .	371	1	99,73	0,27
32	„ „ VI . .	100	1	99,00	1,00
33	„ „ VII . .	169	1	99,40	0,60

№№	Փողոցներ	Բոլոր հայ բնակարանների թիւը	Չթալանուած բնա. թիւը	Թալանուած բնակարան. տոկոսը	Չթալանուած բնա. տոկոսը
34	Կանիտապլինսկի փ. VIII .	22	—	100,00	—
35	" " IX .	53	-	100,00	—
36	" " X .	64	—	100,00	—
37	" " XI .	75	—	100,00	—
38	" " XII .	32	—	100,00	—
39	Մոլոկանսկի փողոց . .	246	40	83,75	16,25
40	Մարիինսկի " . .	22	19	13,64	86,36
41	Միլիւտինսկի " . .	10	6	40,00	60,00
42	Մերկուրևսկի " . .	99	42	55,79	44,21
43	Մալօ-Մորսկոյ " . .	135	6	95,56	4,44
44	Նիժնէ-Պրիուտ. " . .	441	20	95,49	4,51
45	Նիկոլաևսկի " . .	4	2	50,00	50,00
46	Նաբերեժնի " . .	2	—	100,00	—
47	Զագրովի " . .	80	4	95,00	5,00
48	Պորտխովոյ " . .	479	2	99,58	0,42
49	Ստարօ-Պոլից. " . .	34	32	5,88	94,12
50	Ստանիսլաւսկի " . .	520	30	94,23	5,77
51	Սուրախանսկի " . .	87	2	97,70	2,30
52	Սլոբոդսկոյ " 1-ին.	392	9	97,70	2,30
53	" " II .	393	3	99,24	0,76
54	" " III .	206	3	98,55	1,45
55	Միլիոննի փողոց . . .	142	15	89,44	10,56
56	Վերխնէ-Պրիուտսկի փողոց	592	12	97,98	2,02
57	Տորգովի փողոց	524	89	83,02	16,98
58	Տելեֆոննի "	576	83	85,59	14,41
59	Ռեմեսլեննի "	345	19	94,49	5,51
60	Ցերկովնի "	15	3	80,00	20,00
	Ընդամենը .	11546	905	92,17	7,83

Ինչպէս երեքօրեայ կոտորածն էր, նոյնը և երեքօրեայ թալանն ու կողոպուտը միօրինակ չափերով ու ծաւալով չեն արտայայտուել քաղաքի բոլոր մասերում. կան տարբերութիւններ միմեանց մօտ գտնուող փողոցներում և նմանութիւններ միմեանցից հեռու ընկած փողոցներում—տեղի ունեցած թալանի չափերի, կամ թալանից ազատուած բնակարանների քանակի մէջ։ Եւ ինչպէս սպանութեան դէպքերի, նոյնը և կողոպուտի փաստերի նկատմամբ մենք պիտի մատնանշենք միևնոյն հանգամանքի վրայ՝—նայած ին չ

կազմից բաղկացած և ինչ ժառանգութիւններ ունեցող բանդաներ են շրջել տեւեալ վայրերում:

Եթէ մենք ըստ փողոցների դասաւորած վերոյիշեալ աղիւսակի տոկոսները վերածենք մի շարք կաթեգորիաների, կստանանք հետեւեալ պատկերը.

Առաջին կաթեգորիային պատկանում են այն փողոցները, ուր ամբողջ հայ բնակչութիւնը, հայ բնակարանները կողոպտուած են ամբողջապէս, 100$^{0}/_{0}$-ով, ուր թալանից չի փրկուել և ոչ մի հայ ընտանիք: Այդ վիճակին ենթարկուած փողոցների թիւն է 9—Զավոկզալնի և Կանիտապինսկի փողոցներից՝ զուտ հայաբնակ, հայկական չքաւորութեան վայրերից:

Երկրորդ ամենամեծ կաթեգորիայի մէջ մտնում են այն փողոցները, ուր թալանուած հայ ընտանիքների տոկոսը հասնում է 70—100-ի (չհաշուելով 100-րդ թիւը), մինչև 99,99 տոկոսի: Այդպիսի փողոցների թիւը հասնում է 40-ի, այսինքն J աղիւսակում թուած փողոցների (թւով 60) մեծագոյն մասի: Բնորոշ է, որ այդ 40 փողոցների մէջ միայն 90-ից բարձր (մինչև 99,99) տոկոս ունեցող փողոցների թիւը հասնում է 27-ի: Այդ կաթեգորիայի մէջ մտնում են մեծագոյն մասով հայկական ռայոններ և հայաշատ փողոցներ:

Երկրորդ կաթեգորիայի մէջ մտնում են ընդամենը 5 փողոցներ, որոնց շրջանում հայերի բնակարանների թալանը կազմում է 50—70 տոկոս: Դրանք քաղաքի կենտրոնում ընկած, խառը բնակչութիւն ունեցող փողոցներ են (օր. Մերկուրիևսկի, Բիրժևոյ, Կրասնովոդսկի և այլն), ուր բաւականաչափ հայ ընտանիքներ ազատուել են կողոպուտից ու աւերումներից:

Վերջապէս, չորրորդ կաթեգորիան ընդգրկում է իր մէջ այն փողոցները, ուր տեղի ունեցած թալանը չի բարձրանում 50 տոկոսից և իջնում է մինչև բացառիկ մինիմումը՝ 5,88$^{0}/_{0}$ (Ստարո-Պոլիցէյսկի փող.): Այդպիսի փողոցների թիւը հասնում է 6-ի: Դրանք քաղաքի կենտրոնում գտնուող, գլխաւորապէս ռուսա-հրէաբնակ և առհասարակ օտարաբնակ վայրեր են (Ստարո-Պոլից., Միլիւտինսկի, Մարիինսկի, Գորչակովսկի և այլն), ուր սակաւ են մուտք գործել պոգրոմշչիկ բանդաները (հէնց սակաւահայ լինելու պատճառով) և այդպիսով այնտեղ բնակուող փոքրաթիւ հայ ընտանիքներից շատերին յաջողուել է զերծ մնալ բարբարոս ձեռքի յափշտակումներից:

Այդպէս են ահա դասաւորուած թալանուած հայ ընտանիքների տոկոսները:

Ի՞նչ պատկեր են ցոյց տալիս կողոպուտից զերծ մնացած կամ փրկուած հայ ընտանիքների տոկոսները:

Ի հարկէ, ճիշտ հակապատկերը:

Չթալանուածների նկատմամբ ևս մենք կարող ենք տարբերել տոկոսների մի քանի կաթեգորիաներ:

Առաջին կաթեգորիան ամփոփում է իր մէջ այնպիսի փողոցներ, ուր չթալանուածների տոկոսը իջնում է 1-ից մինչև մօտ $^{1}/_{4}$ մասը (0,27$^{0}/_{0}$, V-րդ Կանիտապինսկի փող.): Այդպիսի փողոցների թիւն է 6:

Երկրորդ կաթեգորիայի մէջ մտնում են 21 փողոցներ, այսինքն նրանք, որոնց չթալանուած ընտանիքների տոկոսը հասնում է 1—10-ի:

Երրորդ կաթեգորիան ամփոփում է իր մէջ 18 փողոցներ. դրանք այն փողոցներն են, ուր հայ չթալանուած ընտանիքների տոկոսը հասնում է 10—50$^{0}/_{0}$-ի:

Չորրորդ կաթեգորիայի մէջ մտնում են 4 փողոցներ, որոնց չթալանուած հայ ընտանիքների տոկոսը անցնում է 50-ի սահմաններից։ Միայն երկու փողոց կայ դրանց մէջ, որ տալիս են չթալանուածների բարձր տոկոսներ՝ Մարիինսկի փող. (86,36%) և մանաւանդ Ստարո-Պոլիցէյսկի (94,12%)։

Վերջապէս, հինգերորդ կաթեգորիան ամփոփում է իր մէջ այն փողոցները (թւով 9), որոնք չեն տալիս չթալանուածների որևէ տոկոս, ուրիշ խօսքով՝ այնտեղ բնակուող հայ ընտանիքները, ինչպէս տեսանք, թալանուել են 100%-ով։

Բոլոր յայտնի հայկական փողոցները թալանուել են ամենախոշոր տոկոսներով. այսպէս, օրինակ, Տորգովի փողոցում հայ բնակչութեան (ընտանիքների) 83,02% կողոպտուել է, Տելեֆոննի փող.—85,59%, Բուդագովսկի փող.—87,47%, Բալախանսկի փող. և շոսսէ—93,00%, Ստանիսլաւսկի փող.—94,23%, Նիժնէ-Պրիւտսկի փող.—97,98%, I Կանիտապինսկի փող.—98,63%, Պորոխովոյ փող—99,58% և այլն և այլն։

Միջին թւով վերցրած, ամբողջ քաղաքում կողոպտուած ողջ հայ ազգաբնակութեան (ընտանիքների) տոկոսը հաւասար է 92,17%-ի, իսկ ոչ կողոպտուածը 7,83%-ի։

XVIII. ԳԼՈՒԽ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՒՍԱԿՆԵՐ

Սրանով աւարտեցինք անկետային ուսումնասիրութեանս երկրորդ մասը ևս։ Մենք աշխատել ենք պայմանները ներածին չափ օգտագործել ստատիստիկօրէն մեր տրամադրութեան տակ կուտակուած նիւթը և ցոյց տալ Բագուի տուժած ազգաբնակութեան վնասների ու կորուստների, կողոպտուած հարստութիւնների չափն ու ծաւալը, նրանց ազգային պատկանելութեան թւական փոխյարաբերութիւնները և այլն։

Սակայն այդ երկրորդ մասը թերի կլինէր, եթէ մենք համամփոփումներով և լրացուցիչ մանրամասներով չպատկերացնէինք բոլոր տուեալները ընդհանուր աղիւսակների մէջ։ Եւ որովհետև մեծագոյն չափերով և ամենածանր հարուածներով տուժել ու քայքայուել է Բագւում բացառապէս հայ ժողովուրդը, ուստի ընդհանուր աղիւսակների մէջ մենք կբաւականանանք թալանուած հայութեան վնասների տուեալներով, անշուշտ յիշելով նաև ընդհանուր տուեալները։

Այդ տուեալները կպատկերացնենք երկու ընդհանուր աղիւսակների մէջ՝ թաղամասերով և փողոցներով։

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՒՍԱԿ

Թաղամ.	I Ընդունուած ցուցակների թիւր			II Մերժուած ցուցակների թիւր			III Ներկայացրած գումարները		
	Ընդհանուր	Հայկական	Հայկական ցուց. ընդհ. նկատմ.	Ընդհանուր	Հայկական	Հայկական ցուց. ընդհ. նկատմ.	Ընդհանուր	Հայկական	Հայկական տոկոսը
I Թաղ.	1205	881	7311	59	51	8644	19791468	16997210	8588
II „	921	514	5581	26	17	6540	27121908	22290461	8219
III „	797	306	3839	20	13	6500	11294588	6309659	5586
IV „	945	225	2370	30	16	5333	11473429	3024567	2637
V „	1537	1083	7046	62	24	3871	96790486	65260728	6743
VI „	2176	1443	6631	41	26	6341	92179102	72447535	7859
VII „	5379	4841	9000	45	27	6000	175390290	161948927	9234
VIII „	9556	8582	8981	55	42	7640	203513346	192730134	9471
IX „	6301	5510	8744	76	64	8421	86938050	81076788	9300
X „	1963	971	4946	33	15	4545	29732903	23245503	7818
